Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

891.81
Ц-13

891.81
Վ-13
19 NOV 2010

ԻՎԱՆ ՎԱԶՈՎ

ԼԾԻ ՏԱԿ

Serovpe S. Gulbenkian
7 - NOV. 1903

ՎԷՊ
ԲՈՒԼՂԱՐՆԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԸՆԹԱՑ ՕՐԸ

ՌՈՒՍԵՐԷՆԻՑ ԹԱՐԳՄԱՆԵՑ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐԱԲԱՋԵԱՆ

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
«Պուշկինեան արագատիպ» Հայկական տպարան
1903

07.08.2013

15881

Дозволено цензурою. С.-Петербургъ, 30 Января 1903 года.

Гос. Библиотека
ЗУОС ССР
им. А. Мясникяна

29023.60

«Пушкинская Скоропечатня», Лештуковъ, 4.

ԻՒՐ ԹԱՆԿԱԳԻՆ ԾՆՈՂԱՑԸ

ԱԼԷՔՍԱՆԴՐ ԵՒ ՎԱՐԴԻՇԱՂ

ԱՐԱԲԱՋԵԱՆՆԵՐԻՆ՝

1930 Թ.

ՈՐԴԻԱԿԱՆ ՍԻՐՈՎ

ՆՈՒԻՐՈՒՄ Է

ԹԱՐԳՄԱՆԻՉԸ

ՌՈՒՍ ԹԱՐԳՄԱՆՉԻ ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ժամանակակից բուլղար բանաստեղծ և վիպասան Իվան Վազովը ծնուեց 1850 թ. Թրակիայի Սոպոտ քաղաքում, որը գտնւում է Հին-Լեռան (Պլանինա) ստորոտի մօտ։ Իւր սկզբնական կրթութիւնը Վազովը ստացաւ տեղական դպրոցում, իսկ յետոյ Կոլօֆիրում, Բոտ ուսուցչի մօտ. սա այն համակրելի բանաստեղծ Բրիստո Բոտևի հայրն էր, որ սպանուեց բալկաններում, թուրքերի դէմ կռուելիս։ Կոլօֆերի դպրոցում դասընթացն աւարտելուց յետոյ Վազովը տեղափոխուեց Ֆիլիպպօպօլի գիմնազիան, որով և վերջացաւ նրա կրթութեան ձևական կողմը։ Այն ժամանակները բուլղարական գրականութիւնը բաղկանում էր մի քանի դասագրքերից և բազաքական բրօշիւրներից, որոնք ո՛չ մի գրական արժէք չունէին։ Նոր Բուլղարիայում (աչքի ընկնող բոլոր միւս բուլղարների նման) Վազովն էլ ստիպուած էր իւր գիտութիւնները քաղել և մշակել օտար աղբիւրներից։ Նա սկսեց սովորել ռուսերէն և ֆրանսերէն լեզուները։ Եւրոպական, մանաւանդ ռուսական, գրականութեան հետ ծանօթանալով, Վազովը իւր առաջին բանաստեղծական փորձերը տպագրում է սկզբում „Բաւարան“ անունով հանդէսի, յետոյ «Պարբերական Գրութեան» մէջ։ Մինչև 24 տարեկան հասակը Վազովը տեղից տեղ էր թա-

փառում իրան յարմար պարապմունք գտնելու համար։ 1875 Թ. նա եռանդով մասնակցում է 1876 Թ. ապստամբութեան նախապատրաստութիւններին և այդ ապստամբութեան (որը և կազմում է «Լծի տակ» վէպի նիւթը) անյաջող հետևանքից յետոյ, Վազովն ստիպուած էր Ռումինիա փախչել, Թուրք իշխանաւորների հալածանքից ազատուելու համար։ Բուխարեստում նա դարձաւ տեղական յեղափոխական մասնաժողովի անդամ։ Հետևեալ երեք տարուայ ընթացքում, որոնք Բուլղարիայի համար սոսկալի տարիներ էին, Վազովի տաղանդը իւր զարգացման գագաթնակէտին հասաւ. այդ ժամանակները հրատարակուեցան բուռն հայրենասիրութեամբ լցուած նրա բանաստեղծութիւնների առաջին երեք ժողովածուները.— «Դրօշակ և Տաւիղ», «Բուլղարիայի Վիշտը» և «Փրկութիւնը Փրկութեան» մէջ Վազովը փառաբանում է Թագաւոր-Ազատարարին և ռուսաց զօրքի հերոսութիւնները։

Նա Բուլղարիա վերադարձաւ 1878 Թ., երբ Սոպոտն աւերուած և իւր հայրը բաշիբոզուկների ձեռքով սպանուած էր։ Սոյն վէպի վերջին գլուխների մէջ, երևում է այն սոսկումի տպաւորութիւնը, որ թողեց նրա վրա արիւնաշաղախ հայրենիքի ողբալի դրութիւնը։ Նոյն տարին Վազովը մտաւ պետական ծառայութեան մէջ, իսկ 1880 Թ. ընտրուեց արևելեան Ռումէլիայի ազգային ժողովի պատգամաւոր։ Ֆիլիպպօպոլ տեղափոխուելով, Վազովը եռանդուն կերպով սկսում է գրականութեամբ պարապել։ Նա տպագրում է մի շարք վէպիկներ, պատմուածքներ, պօէմներ և խմբագրում է մի հանդէս։

Օգոստոսի 9-ի յեղափոխութիւնից (Ալէքսանդր Բատտենբերգի աքսորից) յետոյ Վազովը նորից ստիպուած էր

գաղթել նախ Կ.-Պօլիս, ապա Օդեսա։ Հէնց այստեղ նա գրեց «Լծի տակ» վէպը։ Երկու տարի յետոյ վերադարձաւ Բուլղարիա և ապա «Արշալոյս» անունով զուտ-գրական հանդէսի խմբագիր եղաւ։ «Լծի տակ» վէպը թարգմանուած է անգլիերէն և ֆրանսերէն։

«Լծի տակ» վէպի մասին ,(որը ներկայացնում է բուլղարներին անկախութիւնից առաջ) պէտք է ասել, որ սա նրանց կեանքի իսկական նկարագրութեան առաջին և միակ փորձն է։

Մի քանի խօսք ևս Լևսկի սարկաւագի մասին, որի անունն յաճախ յիշւում է այս վէպի մէջ։

Լևսկին բուլղարական ապստամբութեան ընթացքի վրա մեծ ազդեցութիւն ունեցող մի անձնաւորութիւն էր։ Մինչև 1870 Թ., երբ Լևսկին փախաւ վանքից, Բուլղարիայի յեղափոխական ոյժերը և կորովը բոլորովին իզուր էին կորչում։ Աւելի քաջասիրտ և խիզախ բուլղարները, հայդուկները, խմբերով քաշւում էին լեռները և այնտեղից յարձակում գործում Թուրքերի վրա, կողոպտում-սպանում էին նրանց, մինչև որ իրանք էլ ոչնչանում էին Թուրք զինուորների և ազգաբնակութեան ձեռքով։ Լևսկի սարկաւագը հասկացաւ, որ մի այդպիսի անհաւասար կռիւ ոչ մի օգուտ չի կարող բերել, բացի այն, որ բուլղարական ամենալաւ ոյժերն իզուր ոչնչանում են։ Նա հասկացաւ, որ միայն ամբողջ ազգի ապստամբութիւնը կարող է տապալել ատելի լուծը և արտասովոր եռանդով սկսեց այդ ապստամբութեան համար նախապատրաստութիւններ տեսնել։ Բուլղարիան բաժանուեց մի քանի մասերի և իւրաքանչիւր մասում տեղաւորուեցան մէկ կամ մի քանի յեղափոխականներ, որոնք «առաքեալ» անունն էին կրում։

Ամէն մի առաքեալ իւր մասում քարոզում, ժողովրդին ապստամբելու էր պատրաստում, իւրաքանչիւր գիւղում յեղափոխական յանձնաժողովներ էր կազմում, որոնց օգնութեամբ զէնք էր հոգացւում. հրացանաձգութիւն էին սովորում, կազմակերպւում էին յեղափոխական գնդեր։ Լևսկին մատնուեց Թուրք իշխանաւորների ձեռքը և 1873 թւին սպանուեց։ Սակայն նրանից յետոյ առաքեալներն աւելի եռանդուն կերպով էին ապստամբութեան պատրաստութիւն տեսնում. Նրանց կենտրոնական յանձնաժողովը գտնւում էր Ռումինիայի Բուխարեստ քաղաքում։ Այն ժամանակուայ առաքեալների մէջ աչքի էր ընկնում Ստամբուլովը, որն յետոյ Բուլղարիայի իրական տէրը դարձաւ։

Մինչև 1876 թ. բռնկուած առանձին-առանձին ապստամբութիւններն անօգուտ անցան. «առաքեալների» ընդդիմութիւնը և Թուրքերի տմարդի գազանութիւնը, (որը հետևում էր ապստամբութեան իւրաքանչիւր փորձից յետոյ,) գրաւեցին Եւրոպայի ուշադրութիւնը և առաջ բերին Ռուսիայի միջամտութիւնը, որն ազատեց Բուլղարիան։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

Ա.

ՀԻՒՐԸ

—

Մայիսեան մի զով երեկոյ չորբաջի[1] Մարկօն՝ գլխաբաց, խալաթը հագին՝ տանեցիների հետ սրահում ընթրիքի էր նստած։

Սեղանն ըստ սովորութեան բացած էր մեծ, ոլորուն խաղողենու տակ, քարեայ պատնէշից ոչ հեռու ծիծառի նման գիշեր ցերեկ ուրախ երգեր երգող սառն առուակի և բարձր, ոստաշատ մշտադալար հաճարենու մէջ տեղում։ Ծեփորուկի ճղներից մէկի վրա՝ որի հոտաւէտ ծաղիկները փունջ-փունջ կախուած էին հաջի Մարկոսի տնեցիների գլխավերևը, ամրացրած էր մի լապտեր, որն իւր լոյսը տարածում էր չորս կողմը։

Մեծ ու փոքր երեխաների մի խումբ վխտում էր սեղանի շուրջը՝ Մարկօի, նրա պառաւ մօր և կնոջ այս ու այն կողմը. դանակներով և պատառաքաղներով զինուած մանուկները մի ակնթարթում ոչնչացնում էին բոլոր ներս բերած խորտիկները։

Հայրը ժամանակ առ ժամանակ սիրալիր հայեացքներ էր ձգում այդ վռչացող սրատամ մշակների վրա, ժպտում էր և ասում՝—«կերէք, զաւակներս և մեծացէք՝ Պենա՛, Թասը նորից լցրու»: Եւ աղախինը գնում էր առուակի մօտ, որի մէջ պաղելու համար դրուած էր «ռուսեռն գինու» գաւը, լցնում և բերում էր մեծ չինի Թասը: Բայց [2]) Մարկօն տալիս էր որդոցը՝ բարեսրտաբար ասելով.

—Դէ՜հ, խմեցէք, չարաճճիներ:

Եւ Թասը պտտւում էր սեղանի շուրջը. դրանից յետոյ երեխաների աչքերը, թշերը կարմիր գոյն էին ստանում, և նրանք ախորժանօք լիզում էին շրթունքները: Այստեղ Մարկօն դառնում էր կնոջն, որին այդ բանն ամենևին դուր չէր գալիս, և խրատութեամբ ասում նրան.

—Թող ինձ մօտ խմեն, որ չսովորեն չտեսի նման գինի տեսնելիս վրա պրծնել. ես չեմ ուզում, որ նրանք՝ հասակներն առնելուց յետոյ հարբեցող դառնան:

Կրթութեան վերաբերմամբ Մարկօն իւր սեփական գործնական հայեացքն ունէր: Հին, պակաս կրթութեան տէր մարդ լինելով, նա իւր բնական առողջ խելքով լաւ հասկանում էր մարդկային բնաւորութիւնը և գիտէր, որ արգելուած պտուղը միշտ քաղցր է ու հրապուրիչ: Ուստի իւր որդոց մէջ գողութեան հակումը զսպելու համար, նա շատ անգամ յանձնում էր նրանց իւր փողերի արկղի բանալիները:

—Գօչօ, գնա՛, բաց արա՛ եղևնեայ արկղը և բեր այնտեղից մանր փողերի քսակը,—հրամայում էր նա որդուն. կամ՝—վեր առ, զաւա՛կս, բանալին, քսան ոսկի հանի՛ր և չմոռանաս տուն վերադարձիս ինձ տալ:—Եւ նա ամբողջ օրը տուն չէր գալիս:

Այն ժամանակուայ հայրերի մեծամասնութեան սովորութեան հակառակ, որոնք ստիպում էին իրանց որդոցը ոտքի կանգնած մնալ, մինչդեռ հասակաւորները ճաշի են նստած լինում, որ այդպիսով նրանց մեծերին յարգել սովորեցնեն, Մարկօն իւր զաւակներին միշտ իրան հետ սեղան էր նստեցնում: Այդ սովորութիւնից նա չէր շեղւում նաև հիւրերի մօտ:

—Թող մարդավարի վարուել սովորեն, որ Անկօ Ռասպօպչէի նման վայրենիներ չդառնան:

Անկօ Ռասպօպչէն ամօթից կը մեռնէր, հէնց որ մի՛ սև մահուդի անդրավարտիքով մարդու պատահէր:

Մարկօն մշտապէս առևտրական գործերով զբաղուած լինելով, միմիայն ճաշի ժամանակ կարող էր տանեցիներին միասին հաւաքած տեսնել, և այդ պատճառով հէնց այդտեղ էր պարապում կրթութեամբ՝ իւր բաւականին ինքնուրոյն եղանակով.

—Դիմիտրի՛, մի՛ ձգուիր սեղանի վրա, տատիդ առաջ. այդպիսի փարմասոնութիւն մի՛ անիր:

—Եղիա՛, մսավաճառի նման մի բռնիր դանակը. մի ջարդիր, այլ մարդավարի կտրիր հացը:

—Գօչօ, դարձեալ ախիւացի [3]) Թուրքի նման կոճակներդ քանդեցի՞ր: Չը մոռանաս սեղան նստելիս ֆէսդ վեր առնել. մազերդ Թութրականցու

նման երկարացրել ես, դնա Գինկայի մօտ ղաղախի ձեւով խուզել տուր:

—Օբրահա՛մ, դու առանց խաչակնքելու ես սեղանից վեր կենում, բողոքակա՛ն:—Սակայն սեղանի վրա այսպիսի խօսակցութիւններ լինում էին միմիայն այն ժամանակ, երբ Մարկօն հոգու լաւ տրամադրութեան մէջ էր գտնւում. իսկ եթէ նա մի որ և է պատճառով յուզուած կամ բարկացած էր լինում,—ճաշի ժամանակ տիրում էր խորին լռութիւն:

Զափազանց կրօնասէր և երկիւղած լինելով, Մարկօն մեծ ջանք էր գործ դնում, որ իւր որդոց մէջ էլ կրօնասիրական զգացմունքներ ներշնչէ: Ամէն երեկոյ ընտանիքի հասակաւոր անդամները պէտք է ներկայ լինէին տնային տապանակի (կիօտի) առաջ երեկոյեան աղօթքները կարդալու ժամանակ: Կիւրակէ, տօն օրերը բոլոր տնեցիք պարտաւոր էին եկեղեցի գնալ. սա մի անփոփոխելի օրէնք էր, որի խանգարումն անբաւականութիւն էր առաջ բերում: Մի անգամ, մեծ պասին, նա հրամայեց Կիւրոսին խոստովանուելու գնալ. որովհետև միւս օրը նա պէտք է հաղորդուէր: Կիւրոսը եկեղեցուց շատ շուտ վերադարձաւ. երեւում էր, որ նա տէրտէրի երես էլ չէր տեսել:

—Խոստովանուեցի՞ր,—կասկածանօք հարցրեց հայրը:

—Այո՛, խոստովանուեցի,—պատասխանեց որդին:

—Ո՞ր քահանայի մօտ:

Կիւրոսը շփոթուեց, բայց և այնպէս ինքնավստահ կերպով պատասխանեց:

—Հայր Ենիի մօտ,—նա սուտ խօսեց, որովհետև տէր Ենին դեռ երիտասարդ քահանայ էր և չէր խոստովանեցնում: (Բուլղարիայում ջահիլ քահանաները չեն խոստովանեցնում):

Մարկօն իսկոյն գլխի ընկաւ, որ նա խաբում է, բարկութեամբ վեր թռաւ տեղից, որդու ականջից բռնեց և այդպէս դուրս տարաւ նրան փողոց՝ այնտեղից մինչև եկեղեցի, որտեղ նրան յանձնեց խոստովանահօրը, տէր Ստավրիին, ասելով. «տէ՛ր հայր, խոստովանեցրո՛ւ այս աւանակին»: Եւ մի անկիւնում նստելով, սպասեց մինչև խոստովանութեան վերջը:

Աւելի խիստ էր վարվում Մարկօն նրանց հետ, որոնք չէին կամենում դպրոց գնալ: Թէև ինքն ամենևին կարդացած չէր, սակայն նա սիրում էր ուսում և ուսումնական մարդկանց: Նա այն բաղմաթիւ ժողովրդասէրներից, նոր մտաւոր շարժման նախանձախնդիրներից մէկն էր, որոնց ջանքերով շատ կարճ ժամանակում ամբողջ Բուլղարիան լցուեց դպրոցներով: Մարկօն աղօտ գաղափար ունէր այն բարիքների մասին, որ կարող էին տալ գիտութիւնները երկրագործներից, արհեստաւորներից ու վաճառականներից բաղկացած ժողովրդին: Նա անձկալի սրտով նկատում էր, թէ ինչպէս կեանքն անխնայ կերպով է վերաբերւում դէպի այն անձինքը, որոնք զանազան դպրոցներ են աւարտել, թէ ինչպէս նրանք մնում են առանց

հացի։ Սակայն համոզուած էր, որ ուսման մէջ թաքնուած է մի գաղտնի, խորհրդաւոր ոյժ, որը վաղ թէ ուշ պիտի յեղաշրջէ ամբողջ աշխարհը։ Նա հաւատում էր գիտութեանը, որպէս հաւատում էր Աստուծուն—առանց դատելու։ Այդ պատճառով էլ միշտ աշխատում էր, որքան որ ոյժերը ներում էին նրան, այդ բանին օգտակար լինել։ Նա մի փառասիրութիւն ունէր, այն է—դպրոցի հոգաբարձու ընտրուել։ Եւ Մարկոին միշտ ընտրում էին, որովհետև վայելում էր ընդհանուրի հաւատարմութիւնն ու յարգանքը։ Հասարակական այս համեստ պաշտօնի մէջ Մարկոն չէր խնայում ո՛չ աշխատանք, ո՛չ ժամանակ և միշտ խոյս էր տալիս ուրիշ բարձր ու շահաւէտ պաշտօններից, մանաւանդ՝ կոնակում[4]) ծառայելուց։

Ճաշից յետոյ Մարկոն վեր կացաւ։ Սա յիսուն տարեկան մի մարդ էր, բարձր, մինչև անգամ հսկայական հասակով, թէև քիչ կորացած, բայց և այնպէս դեռ բաւական վայելչակազմ։ Նրա կարմիր երեսը, որ դաշտերում ու տօնավաճառներում արած ճանապարհորդութիւնների ժամանակ արեգակից և քամիներից այրուել, կոշտացել էր, լուրջ, նոյն իսկ սառն արտայայտութիւն ունէր. մինչև անգամ և այն ժամանակ, երբ նա ժպտում էր։ Մոխրագոյն աչքերի վրա կախուած խիտ յօնքերը աւելի ևս զօրեղացնում էին դէմքի արտայայտութեան խստութիւնը, սակայն չափազանց բարեսրտութիւնը, անկեղծութիւնն ու ազնուութիւնը, որոնք կարդացւում էին նրա դէմքի վրա, համա-

կրելի էին դարձնում և ակամայ յարգանք ներշնչում դէպի Մարկոն։

Մարկոն նստեց թաւամազ կարմիր գորգով ծածկուած փոքրիկ բազմոցի վրա, որ դրուած էր գանգրահեր տուսախների մէջ, և սկսեց ծխել։ Տանեցիք շարուեցին մի ուրիշ գորգի վրա՝ քչքչան առուակի մօտ. ազախինը սուրճ բերեց։

Այս երեկոյ Մարկոն լաւ տրամադրութեան մէջ էր. նա հետաքրքրութեամբ նայում էր իւր կուշտ, կարմրաթուշ զաւակների խաղերին, որոնց քաղցրահնչիւն ծիծաղը լցնում էր օդը. ամեն րոպէ երեխաները մի սքանչելի պար էին կազմում, որտեղից լսւում էին բարձր աղաղակներ, բարկութեամբ լի բացականչութիւններ, ճնշուած քրքիչ. նրանք նման էին ծառերի ճղների վրա ցատկող թռչնակներին։ Սակայն այս անմեղ և ուրախ խաղը հետզհետէ ընդունում էր աւելի պատերազմական բնաւորութիւն. թևերն սկսում էին աւելի արագ գործել, մի կողմից բռունցքներ տեղացին, լսուեցան սպառնալի աղաղակներ...և բարձրացաւ մի աներևակայելի խառնաշփոթութիւն — թռչնակների համերգը փոխուեց պատերազմի։ Յաղթողներն ու յաղթւողները—բոլորը միասին վազեցին հօր մօտ. ո՛րը գանգատւում էր, ո՛րը արդարանում։ Մէկն իբրև պաշտպան ցոյց էր տալիս տատին, միւսը մօրն էր դատախազ ընտրում։ Այժմ անաչառ հանդիսատես Մարկոն պարտաւոր էր դատաւոր դառնալ։ Դատաւորը օրէնքի և պարտաւորութիւնների համաձայն ներկայացնում է որպէս վճիռների իրա-

գործող: Բայց նա հակառակ դատաստանական օրէնքներին, չէր ցանկանում լսել ոչ մեղադրանքներ, ոչ արդարացումներ, այլ ուղղակի դատավճիռը կարդաց—մէկի գլուխը շփեց, միւսի ականջից քաշեց, իսկ ամենից փոքրերին, այսինքն գրկուածներին, համբուրեց,—և ամեն ինչ վերջացաւ: Բայց այժմ երեխաներից ամենափոքրը, որ ամբողջ ժամանակ հանդարտ քնած էր Իւանիցա տատի գրկում, աղմուկի ձայնից զարթնեց և սկսեց լաց լինել:

—Քնի՛ր զաւակս, քնի՛ր. թէ չէ Թուրքերը կը գան ու կը տանեն քեզ,—ասում էր տատը երեխային, ծնկների վրա օրօրելով:

Մարկօն յօնքերը կիտեց:

—Բաւական է, մա՛յր, հերիք է վախեցնես դրան Թուրքերի անունով,—ասաց նա.—մանկութիւնից նրա սիրտը երկիւղով կը լցուի:

—Ա՜խ, ես գիտեմ,—պատասխանեց պառաւ Իվանիցան,—մեզ էլ միշտ Թուրքերով էին վախեցնում... Վախենալու էլ բաներ են, Աստուած փրկցնէ նրանից, ես արդէն վաթսուն տարեկան եմ, և կը մեռնեմ առանց տեսնելու մեր ազատութիւնը:

—Տա՜տի, երբ ես, Վասիլը և Գէորգը մեծանանք, մեր սրերը կ՚առնենք ու կը ջարդենք բոլոր Թուրքերին,—բացականչեց Պետարդօն:

—Գո՛նէ մէկին կենդանի թողէք, սիրելիքս:

—Ի՞նչպէս է Ասէնը,—հարցրեց Մարկօն կնոջը, որը սենեակից էր դուրս գալիս:

—Տաքութիւնն անց է կացել, այժմ քնած է,—պատասխանեց նա:

—Եւ նրան ի՞նչ հարկաւոր է հետաքրքրուել այդպիսի բաներով,—խօսեց տատը,—ա՜յ, տես, հիւանդացաւ:

Մարկօն դէմքը խոժոռեց, բայց ոչինչ չպատասխանեց: Հարկաւոր է նկատել, որ այսօր Ասէնը վախից հիւանդացել էր, դպրոցի լուսամուտից տեսնելով Գօչօ Բողդուլեի գլխատուած գլուխն, որին դրել էին դաշտում, քաղաքից ոչ հեռու:

Մարկօն խօսակցութիւնը փոխելով շտապով ուրախ դէմքով ասաց երեխաներին:

—Այժմ հանգիստ կացէք, լսեցէք, թէ ինչ պէտք է պատմէ ձեզ ձեր մեծ եղբայրը.—իսկ յետոյ բոլորդ միասին մի երգ կը երգէք: Վասիլ, ապա պատմիր թէ այսօր ի՞նչ է աւանդել ձեզ ուսուցիչը:

—Ընդհանուր պատմութիւնից:

—Լա՜ւ, դէհ, պատմիր դասդ. ինչի՞ մասին է:

—Սպանական գահի ժառանգութեան պատերազմի մասին:

—Շպանոլների՞, հարկաւոր չէ, նրանք մեր գործին չեն վերաբերում. Ռուսիայի մասին մի բան պատմիր:

—Ո՞րը պատմեմ.—հարցրեց Վասիլը:

—Ա՜յ, օրինակ, Իվան չորրորդի մասին, Բոնապարտի, թէ ինչպէս նա այրեց Մոսկուան...

Մարկօն չը վերջացրեց նախադասութիւնը. կտուրից, բակի խորքում խաւարի մէջ ժամքից ինչ որ բան ընկաւ, աղիւսները շառաչմամբ վայր

29023-60
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Библиотека ՀՍՍՌ им. А. Мясникяна ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Թափուեցան: Անարեկուած հաւերն ու ձագերը կչկչացին և փախան բակի չորս կողմերը: Աղախինը, որ գաւթում կախած սպիտակեղէնն էր հաւաքում, յուսակտուր ձայնով աղաղակեց.

—Աւազակնե՜ր, աւազակնե՜ր...

Զարհուրելի իրարանցում բարձրացաւ, կանայք փախան տուն, երեխաները անհետացան, Մարկօն, որ յայտնի էր իւր քաջութեամբ ու վճռականութեամբ, ուղղեց իւր հայացքը դէպի խաւարը, որտեղից լսուել էր աղմուկը, ներս մտաւ մօտակայ դռնից և քիչ յետոյ ատրճանակները ձեռքին դուրս եկաւ միւսից. այդ բոլորը Մարկօն այնքան արագ կատարեց, որ Մարկովիյան ժամանակ անգամ չգտաւ արգելելու: Երբ նա արդէն սրահումն էր, լսուեցաւ մի կծկտուր, յուսահատ լացուկոծ, որին ձայնակցում էր երկիւղից պատի մօտ անշարժ կանգնած սարսափահար շունը: Իրաւ որ մի մարդ թագնուել էր մթութեան մէջ հաւանոցի և գոմի մէջտեղում, բայց խաւարն այն աստիճան անթափանցելի էր, որ ոչինչ չէր կարելի որոշել: Իսկ Մարկօի համար, որը յանկարծ լոյսից անցել էր դէպի խաւարը, աւելի դժուար էր մի բան որոշելը: Անձայն, անծպտուն, նա մտաւ գոմը, շփեց ձիուն, որ հանդարտացնէ և դուրս նայեց գոմի լուսամուտի վանդակից: Նրա աչքը ընտելացաւ խաւարին և այնպէս թուաց, թէ անկիւնում լուսամտի մօտ մարդկային կերպարանք է նկարվում: Մարկօն ատրճանակը բարձրացրեց, նշան դրեց և կռանալով գոռաց.

—Դաւրանմա[5])...

Նա այդպէս, մատը շնիկի վրայ դրած, մի վայրկեան սպասեց:

—Բայ Մարկօ... լսուեց հանդարտ շշնջոցը: Մի վախենաք... ես ձերոնցից եմ:—Եւ անծանօթը կանգնեց լուսամուտի մօտ: Մարկօն որոշակի նկատեց նրան:

—Ո՞վ ես դու,—ատրճանակը կամաց իջեցնելով կասկածանօք և բարկացած հարցրեց նա:

—Ո՞վ ես, Իւանը, Վիդինցի Մանոլ Կրալիչի որդին:

—Ես քեզ չեմ կարողանում ճանաչել, այստեղ ի՞նչ ես անում, ի՞նչ կերպով դու այստեղ ընկար:

—Ես ձեզ բոլորը կը պատմեմ, բայ Մարկօ, ձայնը աւելի ցածացնելով, պատասխանեց հիւրը:

—Ես մօտենալ չեմ կարողանում... Ո՞րտեղից ես գալիս:

—Կը պատմեմ բոլորը, բայ Մարկօ,—հեռուից...

—Հեռուի՞ց, ո՞րտեղից:

—Շատ հեռուից, բայ Մարկօ,—շշնջեց հիւրը:

—Ո՞րտեղից:

—Դիարբեքիրից[6]),—շշնջեց նա:

Այս խօսքը կայծակի նման խայթեց Մարկօին. նա մտաբերեց, որ Մանոլ պապը մի որդի ունէր Դիարբեքիրի բանտում: Մանոլ պապը նրա հին բարեկամն էր և շատ ծառայութիւններ էր արել նրան առևտուրի ժամանակ:

Շտապով դուրս գալով գոմից, Մարկօն մօտեցաւ իւր գիշերային հիւրին. բռնեց նրա ձեռքից և գոմի միջով մարագը տարաւ։

—Իւան, այս դո՞ւ ես, —յուզուած կերպով ասաց Մարկօն,—ես քեզ ո՞չ այսպէս փոքր ժամանակից եմ յիշում... Դու այսօր այստեղ կը գիշերես, իսկ վաղը կը տեսնենք։

Շնորհակալ եմ, բայ Մարկօ... Բացի ձեզանից այստեղ ես ոչ ոք չեմ ճանաչում, — ասաց Կրալիչը։

—Այդ մասին աւելորդ է խօսել։ Քո հայրը ինձանից աւելի մօտ բարեկամ չէ ունեցել։ Դու այստեղ քո տանն ես։ Ոչ ոք չտեսա՞ւ քեզ։

—Ոչ, կարծեմ ոչ ոք փողոցում չկար, երբ ես ներս մտայ։

—Ներս մտա՞ր... Միթէ, ղուակս, այդ՞պէս են ներս մտնում—կտուրից... Էհ, վնաս չունի։ Մանալ պապի որդին միշտ իմ Թանկագին հիւրն է, մանաւանդ, երբ նա հեռու տեղից է գալիս։ Քաղցած չե՞ս, Իւանչօ։

—Շնորհակալ եմ, բայ Մարկօ, չէ։

—Անկարելի է. դու մի բան պէտք է ուտես։ Ես մի գնամ տանեցիներին հանգստացնեմ և իսկոյն կը վերադառնամ... Այն ժամանակ կը խօսենք։ Օհ, Աստուած պահէ քեզ, ինչ փորձանքի մէջ պէտք է ընկնէի,—և Մարկօն զգուշութեամբ ատրճանակի շնիկն իջեցրեց։

—Ների՛ր բայ Մարկօ, ներիր, ես կատարեալ յիմարութիւն արի։

—Սպասի՛ր, իսկոյն կը գամ։—Մարկօն դուրս գնաց, իւր յետևից գոմի դուռը փակելով։

Նա իւր կնոջը և պառաւ մօրը երկիւղից կիսամեռ դրութեան մէջ գտաւ. հէնց որ նրանք Մարկօին առողջ և անվնաս տեսան, երկուսն էլ ուրախացան, բռնեցին նրա ձեռքերից, կարծես վախենում էին, թէ նա նորից իրենց մենակ կը թողնէ ու կը հեռանայ։

Մարկօն իրեն հանգիստ ձևացրեց. նրանց հաւատացրեց թէ դուրսը կասկածելի ոչինչ չկայ և թէ հաւանականաբար մի կատու կամ շուն է թափել աղիւսները, իսկ յիմար Պենան ահագին աղմուկ է բարձրացրել։

—Միայն դրացիներին վախեցրինք,—աւելացրեց նա, ատրճանակը դնելով պատից կախած պատեանի (ղուպուլի) մէջ։

Տանեցիք հանգստացան. տատը բարկացաւ աղախնի վրայ։

—Էյ, Պենա, գրո՞ղը տանի քեզ, բոլորիս լեղապատառ արիր։ Շուտով դուրս տար երեխաներին և քարի վրայ նստեցրու[7]... գիտե՞ս։

Բայց յանկարծ լսուեց դռան բաղխոցը։ Մարկօն դուրս գնաց։

—Ո՞վ է,—հարցրեց նա։

—Զօրբաջի՛, բաց արա դուռը,—կանչեցին նրան Թուրքերէն.

—Օնբաշի՞ն[8]... անհանգստութեամբ շշնջեց Մարկօն։—Հարկաւոր է նրան մի ուրիշ տեղ պա-

նել։—Եւ ուշադրութիւն չդարձնելով դռան նոր· աւելի խիստ ձայնին, վազեց գոմը։

—Իվա՞ն,—գոչեց նա, նայելով դէպի մարագը։

Ոչ ոք չպատասխանեց։

—Երեւի քնել է։ Իվանչօ,—բարձրաձայն կանչեց նա։ Ոչ մի ձայն։—Ա՜խ, երեւի խեղճը փախել է։—Մարկօն այն ժամանակ միայն նկատեց, որ գոմի դուռը բաց է։

—Ի՞նչ կը լինի այժմ պատանու դրութիւնը։

Նա դարձեալ մի քանի անգամ ձայն տուեց. պատասխան չստանալով, Մարկօն դիմեց դէպի դուռը, որն այնպիսի սաստկութեամբ էին բաղխում, որ կարծես ուզում էին ջարդ ու փշուր անել։

Բ.

ՓՈԹՈՐԻԿ

Դռան առաջին հարուածները լսելուն պէս Իւան Կրալիչը լեղապատառ դուրս վազեց սրահից, թռաւ ցանկապատից և փռուեց փողոցի մէջ։ Մի քանի վայրկեան նա այդպէս ուշաթափ պարկած մնաց։

Ուշքի գալով, նա ուշադրութեամբ չորս կողմը նայեց, սակայն բացի անթափանցելի խաւարից, ոչինչ չտեսաւ։

Սև, մրրկալից ամպերը պատել էին ամբողջ երկինքը. երեկոյեան հանդարտ և զով եղանակից յետոյ սկսուեց մի ցրտաշունչ քամի, որ ողբաձայն

մռնչում էր ամայի փողոցում։ Կրալիչը պատերը բռնելով և փոսից փոս ընկնելով առաջ գնաց հենց առաջին պատահած նեղ փողոցով։ Բոլոր դռները, պարտէզների ճաղերը և լուսամուտները պինդ փակուած էին։ Լուսամուտների ճեղքերից լոյսի, կամ կեանքի ոչ մի նշոյլ չէր երեւում։ Կէս գիշեր էր, միւս բոլոր գաւառական քաղաքների նման այստեղ էլ կեանքը վաղուց դադարել էր։ Ցանկանալով մի կերպ դուրս գալ քաղաքից Կրալիչը երկար ժամանակ գնում էր միշտ մի և նոյն ուղղութեամբ։ Բայց յանկարծ նա ցնցուեց և քարացածի նման կանգ առաւ մի տան պատի տակ։ Իրենից ոչ հեռու նա նկատեց մի քանի մթին կերպարանքներ։ Երիտասարդը յենուեց բակի դռան վրա, որի մօտ կանգնած էր։ Բայց նրա ոտնաձայնից զարթեց պարսպի միւս կողմում քնած շունը, որն սկզբում մռմռաց, իսկ յետոյ մի այնպիսի կատաղի հաչոց բարձրացրեց, որ Կրալիչն շտապով յետ փախաւ դռան մօտից։ Այս շարժումը և շան հաչոցը մատնեցին նրան.—գիշերապահների խումբն առաջ ընթացաւ, լսուեցաւ զէնքի ձայնը և Թրքական «կանգնիր»ը ընդմիջեց քնած փողոցի գիշերային խաղաղութիւնը։ Անխուսափելի վտանգների ժամանակ դաժան բանականութիւնը դաւաճանում է մարդուն և միմիայն ինքնապաշտպանութեան կոյր բնազդը գործում և փոխարինում է հոգեկան ուժերին։ Այն ժամանակ մարդս կորցնում է մտածելու ընդունակութիւնը, մնում են միայն ձեռքերը՝ դիմադրելու և ոտքերը՝ փախչելու համար։ Բա-

ւական էր Կրալիչին միայն յետ դառնալ, և անթափանցելի խաւարը կ՚թաքցնէր նրան գիշերապահների աչքերից։ Սակայն Կրալիչն ուղղակի վազեց դէպի նրանց կողմը, մրրկի պէս անցաւ ոստիկանների միջից և սկսեց սաստիկ արագութեամբ փախչել նրանց առջից։ Բոլոր պահապանները ընկան նրա յետևից և փողոցում մեծ աղմուկ բարձրացաւ։ Միւս ձայների մէջ լսւում էր և Բուլղար պանդուրինի[9]) սուր ձայնը։

—Կանգնի՛ր, քաչ տղա՛յ, թէ չէ հրացան կ՚արձակենք։

Կրալիչն առանց յետ նայելու փախչում էր։

Լսուեց մի քանի հրցանների որոտ, բայց խաւարը փրկեց Կրալիչին,—գնդակներից ոչ մէկը չդիպաւ նրան։ Սակայն երևում էր, որ նրանից արագավազներ էլ կային. Կրալիչն զգաց, որ մէկը իր թևերից բռնեց. նա թափ տուեց իրեն, և դէն ձգելով իրենից վերարկուն, թողեց հալածողների ձեռքում Նրա յետևից դարձեալ երկու անգամ հրացան պարպեցին։ Կրալիչն առաջ էր վազում. առանց իմանալու, թէ ուր. նրա շունչը կտրւում էր, յոգնածութիւնից ոտները ծալւում էին, առաջ չէին գնում։ Իրաքանչիւր քայլափոխում նրան թւում էր, թէ ահա—հիմա կընկնի։ Յանկարծ փայլեց կուրացուցիչ կայծակը և այստեղ միայն Կրալիչը տեսաւ, որ ինքն արդէն դաշտումն է և հալածողներ չկան։

Ուժասպառ լինելով, նա ընկաւ ընկուզենու տակ, փոքր ինչ շունչ քաշելու նպատակով։

Այնինչ ցուրտ քամին հետզհետէ սաստկանում էր. ծառերի խշշոցը խառնւում էր ամպի հեռաւոր խուլ որոտման և հարուածների հետ, որոնք աւելի և աւելի մօտենում էին, և յանկարծակի մի ահեղ որոտ լսուեց հենց փախստականի գլխավերևը և տարածուեց անսահման տարածութեան մէջ։ Կարճատև հանգստութիւնն ու թարմ օդը վերականգնեցրին Կրալիչի ուժերը. նա տեսաւ, որ սաստիկ անձրև պէտք է գայ, այդ պատճառով շտապով ճանապարհ ընկաւ, մօտալուտ փոթորկից պաշտպանուելու մի որ և է ապաստանարան գտնելու նպատակով։ Շրջակայքում ծառերը ողբաձայն աղմկում էին. բարձր կաղնիները կատաղի քամու ճնշումից մինչև գետին էին թեքւում, խոտերը խուլ կերպով սոսափում էին, ամբողջ բնութիւնը կարծես ահաբեկուած ձայն էր տալիս։ Անձրևի խոշոր կաթիլները գնդակների նման թափուեցին տերևների վերայ։ Ժամանակ առ ժամանակ կուրացուցիչ փայլակը լուսաւորում էր Բալկանների գագաթը և ամէն անգամ երկնքից լսւում էր այնպիսի սոսկալի որոտը, որը կարծես երկինքը և երկիրը տակն ու վրայ պիտի լինէր։ Անձրևը սաստկացաւ. կատաղած քամին նրան զանազան կողմեր էր մղում. կայծակը հետզհետէ աւելի և աւելի արագ էր ակոսում կախուած սև ամպերը, ծառերը և լեռները կախարդական ձև էին ստանում։ Այս վայրկենական մոգական պատկերները, որոնց իսկոյն խաւարը ծածկում էր, մի հրաշալի հրավառութեան տեսարան էին ներկայացնում։ Մի առանձին գեղեց-

կութիւն կար տարերքների վայրենի կռուի և բնութեան ահեղ ձայնի մէջ, երբ անհունութեան և խորհրդաւորութեան ահեղ ընդհարումը դիւական համաչափութեան էր վերափոխւում։

Թրջուած տմգկած, կայծակի լոյսից կուրացած, որոտից խլացած՝ Կրալիչն առաջ էր գնում դաշտերով ու ծառաստաններով, ոչ մի պաշտպանութիւն չգտնելով կատաղած տարրերի դէմ։

Բայց ահա՝ այս ընդհանուր աղմուկի մէջ նրա ականջին հասաւ բարձր տեղից թափուող ջրի ձայնը։ Նրանից ոչ հեռու մի ջրաղաց կար։ Կրալիչը վազելով գնաց դէպի այն կողմը. վերջապէս նա կարող էր պաշտպանուել ջրաղացի յարկի տակ։ Պատի մօտ հասնելով և շօշափելով դուռը, նա փորձեց բանալ. դուռը հնազանդուեց և Կրալիչը ներս մտաւ։ Այնտեղ մութն էր և հանդարտ։

Դուրսը փոթորիկը հանդարտուեց. անձրևն ու քամին մի անգամից դադարեցան և երկնքի երեսին լողացող կտոր կտոր եղած ամպերի եզերքներն արդէն արծաթազօծուել էին լուսնի լոյսով. գիշերը պարզուեց։ Մթնոլորտի այս տեսակ փոփոխութիւններն յատուկ են միմիայն մայիս ամսին։

Դեռ Կրալիչը կարգին չէր կարողացել իւր շուրջը դիտել, երբ դրսից ոտնաձայներ լսուեցան. Նա շտապով թագ կացաւ ամբարի և պատի մէջտեղում, ցորենով լի պարկերի յետևը։

—Տես, քամին դուռը բաց է արել.—մթութեան մէջ լսուեց մէկի կոշտ ձայնը և ջրաղացն իսկոյն լուսաւորուեց փոքրիկ ճրագ-լոյսով։

Կրալիչը իւր թագստի տեղից բարձրացաւ և տեսաւ ջրաղացպանին, որը մի ծեր, նիհար գիւղացի էր իսկ նրա հետ կարճ սուկման[10]) հագած մի բոբիկ աղջիկ, որն հաւանականաբար ջրաղացպանի դուստրն էր։ Նա դուռը փակում էր, աշխատելով սողնակը ներս քշել։ Այդ աղջիկը կը լինէր 13—14 տարեկան և հագին ունէր դեռ մանկական շորեր, սակայն նրա վայելչակազմ իրանը, երկար արտևանունքներով մութ շականակագոյն-աչքերը, որոնք քաղցրութեամբ և միամտութեամբ նայում էին շուրջը, ասում էին, թէ մօտիկ ապագայում գիւղական գեղեցկուհիների շարքը կընկնի։ Երևում էր, որ նրանք մի որ և է մերձակայ ջրաղացից էին գալիս. որովհետև երկսի հագուստներն էլ չոր էին։

Ջրաղացպանը շարունակեց.

—Լաւ էր, որ քարերը բարձրացրել էինք, թէ չէ այս փոթորիկն անշուշտ կը փչացնէր ջրաղացը։ Սատանջօ պապի պատմութիւններն անվերջանալի են. դեռ լաւ էր, որ ոչ ոք չէ մտել ներս և եղածչեղածը տարել։—Նա աչքը չորս կողմը դարձրեց։—Մարիչկա՛, դու գնա՛, պառկիր։ Չգիտեմ մայրդ ինչո՞ւ ուղարկեց քեզ այստեղ,—քո պատճառով ինձ ահ ու դողի մէջ ձգելո՞ւ համար...—վերջացրեց ջրաղացպանը և քթի տակ մի ինչ որ երգ երգելով, սկսեց ամրացնել քթոցի փրցած տախտակը։ Մարիչկան նոր հրաւէրի չսպասելով, գնաց դէպի ջրաղացի խորքը, հօր և իրեն անկողինները փռեց և մի քանի ծունր դնելուց յետոյ, շտապով մտաւ վեր-

մակի տակ ու իսկոյն և եթ, անփոյթ քնեց, որպէս բոլոր անմեղ հոգիները

Կրալիչն հետաքրքրութեամբ դիտում էր այս պարզ տեսարանը: Ջրաղացպանի կոշտացած, բայց բարեսիրտ դէմքից երևում էր, որ կարելի էր նրան հաւատ ընծայել. անկարելի էր, որ այն ազնիւ հայեացքի տակ դաւաճան հոգի թաղնուած լինէր: Կրալիչն արդէն որոշել էր դուրս գալ և խորհուրդ ու օգնութիւն խնդրել նրանից. բայց այդ իսկ ժամանակ ջրաղացպանն անսպասելի կերպով ընդհատեց երգը, ուղղուեց և սկսեց մի ինչ որ բանի ականջ դնել: Դուռը սաստկութեամբ բաղխեցին:

—Ջրաղացպա՛ն, բաց արա՛,—ձայն տուին նրան թուրքերէն:

Ծերունին շտապով մօտեցաւ դռանը, սողնակը լաւ պնդացրեց և բոլորովին գոյնը ձգած յետ դարձաւ:

Դուռը նորից ծեծեցին: Նորից լսուեցան ձայներ և շան հաչոց:

—Որսորդներ են,—փնթփնթաց ջրաղացպանը, որսկան շան հաչոցը ճանաչելով:—Այդ անիծուածներն այստեղ ի՞նչ պէտք է անեն: Եմերսիդ Փահլեվանն էլ է այդտեղ:

Եմերսիդ-Փահլեանը — արիւնարբու աւազակ ու գող էր, որ վերջին ժամանակներս սարսափ էր ձգել շրջակայքի վրա: Երկու շաբաթ դրանից առաջ նա Իվանովօ գիւղում Գանչօ Դօ-ալիի ընտանիքը մեծից մինչև փոքրը մորթոտել էր: Նրան էին վերագրում այն երեխայի գլխատումը, որն

երեկ գտնուեց դաշտում և քաղաք բերուեց:

Դուռը ճռճռում էր հարուածների տակ:

Ջրաղացպանը գլուխը ձեռքերի մէջ առնելով խորասուզուեց մտածմունքի մէջ. երևում էր, որ չգիտէ ինչ անել: Նրա ճակատը քրտինքի խոշոր կաթիլներով ծածկուեց: Յանկարծ կռանալով դէպի փոշապատ նստարանը, նա շտապով վեր առաւ այնտեղից կացինը և կանգնեց դռան մօտ, որը կարծես այլ ևս ոյժ չունէր դիմադրելու դուրսը կանգնածների զօրեղ ճնշմանը: Սակայն հէնց որ ծերունու հայեացքն ընկաւ քնած աղջկայ վրա, նրա վայրկենական վճռականութիւնը իսկոյն և եթ չքացաւ: Զարհուրելի վհատութիւնը, յուսահատութիւնն ու տանջանքը պատեցին նրա ծերացած դէմքը...

Հայրական զգացմունքը յաղթեց վրդովուած խղճին: Նա մտաբերեց բուլղարական առածը, թէ «խոնարհուած գլուխը սուրն էլ չի կտրիլ» և վճռեց փոխանակ ընդդիմութեան, անողորմներից գթութիւն հայցել: Կացինն ամբարի յետև ձգելով, որտեղ թաղնուած էր Կրալիչը, և Մարիչկային խնամքով ծածկելուց յետոյ, ջրաղացպանը դիմեց դէպի դուռը և բաց արեց:

Շեմքում երևացին երկու սպառազինուած թուրքեր, որսորդական պայուսակները ուսերին: Նրանցից մէկը բռնած ունէր որսորդական շան շղթան: Դռան մօտ կանգնողը, ճիշտ որ արիւնռուշտ Եմերսիդ-Փահլեանն էր, որը հետաքննին հայեացք ձգեց ջրաղացի ներսը և ապա մտաւ: Նա մի բարձրահասակ, նիհար, փոքր ինչ կորացած և բո-

լորովին լերկ երեսով մարդ էր։ Նրա դէմքն այնքան էլ սարսափ ազդող չէր, որքան սոսկալի էին նրա անունն ու սխրագործութիւնները։ Միայն մանր, գորշ աչքերը դաժան կերպով և նենգաբար խաղում էին իրենց բների մէջ։ Նրա ընկերը, որն ընդհակառակը մի հաստ ու կաղ թուրք էր անասնանման դէմքով, որի վրա կարդացւում էին խստասրտութիւն և անասնային վայրագ հակումներ, ներս մտաւ Փահլևանից յետոյ, հետը շանը քաշ տալով, և իր յետևից դուռը փակեց։

Եմեքսիդը բարկութեամբ նայեց ջրաղացպանին. երկուորները վայր դրին իրենց թրջած եափնչիները։

—Ինչո՞ւ դուռը չէիր բաց անում—հարցրեց Եմեքսիդ Փահլևանը։

Ջրաղացպանը մի-քանի անհասկանալի խօսքերով ներողութիւն խնդրեց խոր գլուխ տալով և անհանգիստ հայեացքներ ձգելով դէպի ջրաղացի խորքը որտեղ քնած էր Մարիչկան։

—Դու մենա՞կ ես այստեղ,—Եմեքսիդը յետ նայեց։

—Մենակ եմ,—շտապով պատասխանեց ջրաղացպանը, բայց մտածելով, որ սուտ խօսելն անօգուտ է, աւելացրեց.—միայն երեխաս է այնտեղ քնած։

Այդ վայրկեանին Մարիչկան բացուեց և դէմքը դարձրեց դէպի լոյսը։ Ճրագի աղօտ շողքը ընկաւ նրա լիք պարանոցի վրա։ Թուրքերը ագահութեամբ նայեցին քնած աղջկան։ Պաղ քրտինքը

պատեց ջրաղացպանի մարմինը. Եմեքսիդը դարձաւ նրան և կեղծ անտարբերութեամբ ասաց.

—Զորբաջի, նեղութիւն քաշիր, գնա՛ մի շիշ արաղ գնելու։

—Փահլևա՛ն աղա, այժմ կէս գիշեր է և քաղաքի բոլոր խանութները փակ են,—պատասխանեց ջրաղացպանը սարսափից դողալով, որ Մարիչկային մենակ պէտք է թողնէր այն մարդկանց հետ։

Կաղը մէջ մտաւ։

—Գնա՛, գնա՛, մեր բաղդից գուցէ մի խանութ բաց լինի։ Դու մեզ պիտի հիւրասիրես—այդպիսով բարեկամութիւն կը հաստատենք։

Այս բոլորը կաղը հեգնելով ասաց, հաստատ հաւատացած լինելով, որ յաղթութիւնն անշուշտ իրենց կողմը կը լինի։

Եմեքսիդը աչքերով ուտում էր քնած աղջկանը։ Տեսնելով որ ջրաղացպանը չի գնում, նա դէմքը խոժոռեց, բայց իսկոյն նորից իրեն հանդարտ ձևացրեց և բարեսրտաբար արտասանեց.

Զորբաջի, ինչ գեղեցիկ աղջիկ ունիս։

—Դէհ թո՛ղ հիւրասիրէ իր հիւրերին... Դէ՛հ, գնա արաղի, հայդա՛, իսկ մենք կը պահպանենք ջրաղացը,—և ապա սպառնալի կերպով աւելացրեց.—ճանաչո՞ւմ ես Եմեքսիդ-Փահլևանին։

Ջրաղացպանը հասկացաւ գազրելի նպատակը։ Նրա պարզ մաքուր հոգին ալեկոծուեց, պարզ տեսնում էր, որ երկու սպառազինուած չարագործների դէմ մենակ կռուելն անխոհեմ, միև-

նոյն ժամանակ և անօգուտ մի քայլ կը լինէր։

Նա դարձեալ փորձեց աղաչելով մարդասպանների գութը շարժել։

—Աղաներ[11]), գթացէ՛ք հիւանդ ծերունուս. սաստիկ յոգնել եմ այսօրուայ աշխատանքից... Թոյլ տուէք ինձ պառկել քնելու... Մի՛ անարգէ՛ք իմ ալեխառն մազերը...

Այս բառերը նա խեղդուած ձայնով արտասանեց։

—Դէ՛հ, դէ՛հ, չելէբի[12]), խստութեամբ գոչեց կաղը,—մենք խմել ենք ուզում, գլուխներս ցաւեցրիր քո շատախօսութեամբ։ Իզուր չէ, որ ջրաղացումն ես ապրում... գնա՛ արաղի,—և նա ծերունուն հրեց դէպի դուռը։

—Գիշեր ժամանակ ես երբեք ջրաղացից դուրս չեմ գալ, թողէք ինձ,—խուլ ձայնով ասաց ջրաղացպանը։

Թուրքերն իսկոյն գինակները վայր ձգեցին և նրանց վայրենի հայեացքները սլաքի նման խոցեցին խեղճ ծերունուն։

—Ա՜, անհաւատարիմ շուն, դու դեռ ատամներդ կրճտացնո՞ւմ ես.., Տեսնո՞ւմ ես,—գոչեց Եմէքսիզը, եաթաղանը հանելով։ Նրա աչքերն արիւնով լցուեցան։

—Թէկուզ սպանէք ինձ, երեխայիս մենակ չեմ թողնիլ,—հլու բայց վճռական կերպով ասաց ջրաղացպանը։

—Թօփալ-Հասան, դուրս ձգիր այս շանը, որ դանակս չկեղտոտեմ դրա արիւնով։

Կաղը վազեց դէպի ջրաղացպանը, դռան մօտ գետին գլորեց և սկսեց ոտներով հրել նրան, որ այդպիսով դուրս ձգէ։ Բայց ջրաղացպանը վեր թռաւ և փախաւ դէպի ջրաղացի խորքը, ինչքան որ ոյժ ունէր, գոչելով.

—Օգնեցէ՜ք, Օգնեցէ՜ք...

Աղմուկը զարթեցրեց Մարիչկային,—նա վախեցած վեր թռաւ տեղից։ Եմէքսիզի ձեռքում դանակը տեսնելով, նա սուր ձայնով ճչաց և վազեց հօր մօտ։

—Ո՜հ, խղճացէք, աղաներ.—կանչում էր դժբաղդ հայրը, գրկելով դստեր գլուխը։

Եմէքսիզի նշանով Թօփալ-Հասանը վագրի նման ջրաղացպանի յետևից վրա հասաւ, բռնեց նրա թևերից և ոլորեց։

—Այդպէ՛ս այդպէ՛ս, Թօփալ Հասան, արի կապենք ջրաղացի ծեր մկանը։ Եթէ նրան հաճելի է, թող մնայ այստեղ և տեսնէ. այդ տեսակ յիմարին այդպէս էլ հարկաւոր է։ Նա կապած մեզ կ՚նայի և կը զուարճանայ իսկ երբ կայրենք ջրաղացը,—մենք կը զուարճանանք։

Աւազակները, ամենևին ուշադրութիւն չը դարձնելով դժբախտ ջրաղացպանի աղաղակներին, քաշ տուին նրան սիւներից մէկի մօտ և ուզեցին թոկերով կապկապել։

Ջրաղացպանը՝ սարսափից խելագարուած՝ վիրաւոր գազանի նման մռնչալով, օգնութիւն էր կանչում. սակայն այս ամայի տեղում ոչ ոքից օգնութիւն չէր կարելի սպասել։ Մարիչկան վազեց

դէպի դուռը, բացեց և հեկեկալով սկսեց աղաղակել, բայց միայն բարձր արձագանքն եկաւ նրա պատասխանը:

—Դուրս մի գնա, աղջիկ,—այժմ մեզ հարկաւոր ես՝ ասաց Եմերսիդ-Փահլեվանը, նրան ջրագացի խորքը տանելով: Իսկ ինքը Թոփալ Հասանի մօտ եկաւ:

—Օգնեցէ՛ք, օգնեցէք: Ոչ ոք չկա՞յ այստեղ, Մարիչկա՛յ, օգնի՛ր, արի՛ այստեղ,—հնչում էր ծերունի ջրաղացպանի յուսակտուր ձայնը, որն անգիտակցաբար թոյլ երեխայից էր օգնութիւն խնդրում:

Մինչև այժմ Կրալիչն անշարժ դիտում էր այն դրաման, որն կատարվում էր նրա դիմաց. Նրա ոտքերը դողում էին, մազերը բիզ-բիզ էին եղել և քրտինքի խոշոր կաթիլները ծածկել էին նրա ամբողջ մարմինը: Այն բոլորը, ինչ որ նա տեսաւ և կրեց այս գիշեր, այնքան անսպասելի էին, որ նրան մի ծանր երազ էր թւում: Գնդակների շաչիւնը, ամպի որոտը—դեռ հնչում էին նրա ականջում: Միտքը շփոթւում էր: Սկզբում Կրալիչը կարծում էր, թէ թուրքերը գտել են իր հետքը և թէ իր բաղդն արդէն որոշուած էր: Իր կատարեալ անզօրութեան համոզմունքը նրա մէջ մեռցրեց ամբողջ եռանդը, մնում էր միայն կամովին անձնատուր լինել թուրքերին և այդպիսով պատասխանատվութիւնից ազատել ջրաղացպանին:

Բայց երբ նա տեսաւ, որ ինքն սխալուած է հանդիսատես լինելու մի ինչ որ աւելի քստմնելի

տեսարանի, երբ լսեց, որ ջրաղացպանը Մարիչկային է օգնութեան կանչում, կատաղի զայրոյթը և յուսահատութիւնը եռացրեց նրա արիւնը: Յոգնածութիւնը, թուլութիւնը և վախթանումը անմիջապէս չքացան: Ձեռքը մեքենայաբար երկարացաւ դէպի կացինը, մեքենայաբար էլ դուրս սողաց նա իր բնից, նոյնպէս մեքենայաբար կռացաւ ցորենի պարկերի յետևից—դուրս գալու համար:

Ուղղուելով, մեռելային գունատութիւնը երեսին, քայլերն ուղղեց դէպի Եմերսիդը, որը կանգնած էր՝ մէջքը նրա կողմն արած, և ուժգնութեամբ կացինը մխեց նրա ծոծրակի մէջ…

Այս բոլորը նա կարծես երազի մէջ կատարեց: Թուրքը առանց ձէն ու ձուն հանելու փռուեց գետին:

Թօփալ-Հասանը, իր այս անսպասելի և վտանգաւոր հակառակորդին տեսնելով, բաց թողեց թոկը, որով կապում էր ջրաղացպանին, շտապով գօտու տակից հանեց ատրճանակը և արձակեց Կրալիչի վրա: Ջրաղացը ծխով լցուեց, լամպարի կրակն անցաւ և բոլորը մթութեան մէջ մնացին: Այն ժամանակ, այս խորին խաւարի մէջ սկսուեց մի կատաղի կռիւ: Կռուողներն, սկզբում երկու հոգի, ապա երեք, փաթթւում էին մութ տեղը, վայրենի աղաղակներ մռնչիւն և ծանր խեղդուած հառաչանքներ արձակելով: Շան յուսակտուր ոռնոցը խառնուել էր այս ճուող- բռռոցի հետ: Կար-Հասանը, որ ցուլի չափ ույժ ունէր, յուսահատ կերպով դիմադրում էր իր երկու հակառակորդներին.

սպանել կամ սպանուել,—ուրիշ ելք չկար երկու կողմերի համար էլ։ Երբ նորից կրակ արին, Թօփալ-Հասանը ջղաձգաբար թաւալւում էր յատակի վրա, մահուան տագնապի մէջ։ Կռուի ժամանակ Կրակիչը, պատահմամբ ձեռք ձգելով նրա դանակը, մինչև կոթը խրել էր Թուրքի կոկորդը։

Ջրաղացպանը վեր կացաւ, ուղղուեց և զարմացմամբ նայեց անծանօթին, որը կարծես երկնքից էր ընկել նրան օգնելու համար։

Նրա առաջ կանգնած էր մի բարձրահասակ երիտասարդ, չափազանց գունատ, սև՝ խորն ընկած աչքերով և երկար փոշապատ ոտներով։ Պատառոտած, ցեխոտ վերնազգեստը, բաց կուրծքով բաճկոնը, որի տակից երևում էր նրա մերկ մարմինը, կտոր-կտոր եղած անդրավարտիքը, մաշուած կօշիկները,—այս ամենը ցոյց էին տալիս, որ այս մարդը կամ հէնց նոր էր փախել բանտից, կամ պատրաստւում էր այնտեղ մտնել։ Այսպէս էլ կարծում էր ջրաղացպանը. բայց նա երախտագիտութեամբ նայում էր անծանօթին և կարեկից ձայնով ասաց նրան.

—պարո՛ն, չգիտեմ ով ես դու կամ ինչպէս ես եկել այստեղ, միայն մինչև կեանքիս վերջը չպիտի կարողանամ վարձահատոյց լինել քեզ։ Դու փրկեցիր ինձ մահից և աւելի ևս վատ բանից… Դու թոյլ չտուիր արատաւորել երեխայիս պատիւը և իմ ալեխառն մազերը։ Թո՜ղ Աստուած օրհնէ և վարձատրէ քեզ։ Ամբողջ ժողովուրդը քեզ «սպոլոյ»[12]) կասի։ Գիտե՞ս թե ով է սա (նա ցոյց տուեց Եմեք-

սիզին)։ Սա այն մարդն է, որը խողխողում էր երեխաներին մօր արգանդում։ Այժմ աշխարհս ազատուեց այս գազանից։ Աստուած երկար կեանք տայ քեզ, որդիս։

Կրակիչն արտասուքը աչքերին լսեց այս պարզ, անկեղծ խօսքերը և դժուարութեամբ շունչ քաշելով ասաց։

—Մեծ բան չարի ես, պապի… Մենք միայն երկսին սպանեցինք, իսկ այսպիսի հարիւրաւոր գազաններ կան… Բուլղարները այն ժամանակ ազատ շունչ կառնեն, երբ կը զինուեն կացիններով և կչարդեն այս թշնամիներին։ Դու այն ասա, հայրիկ, թէ ո՞րտեղ կարող ենք թաղել այս դիակները,—հետքը պէտք է կորցնել։

—Այս աղտեղութեան համար ես պատրաստի փոս ունեմ։ Օգնի՛ր միայն դուրս քաշել դրանց,—ասաց ծերունին։

Եւ այս երկու մարդիկ, որոնց այժմ այս արիւնալից գիշերը ընդմիշտ կապեց միմիանց հետ, դուրս քաշեցին դիակները դէպի ջրաղացի յետևը մի հին փոսի մօտ, ձգեցին այնտեղ և հողով լաւ ծածկեցին, որ ոչ մի հետք չմնայ։

Երբ որ նրանք բահն ու թիակը ձեռքերին մօտենում էին ջրաղացի դռանը, մի ինչ որ սպիտակ բան երևաց նրանց առաջ։

—Ա՛, շունը,—բացականչեց Կրակիչը.—այս կողմերը կրպտըտի և կրմատնէ մեզ։—Եւ նա մի հարուած տուեց նրա գլխին. շունը ցաւալի ճչինով սողաց փորի վրա ջրի եզերքին շատ մօտ։

Կրալիչը խփեց փորին և նա կորաւ ջրի տակ:

—Պէտք էր այդ շանն էլ միւսների հետ թաղել,—անհանգստութեամբ նկատեց ջրաղացպանը:

Վերադառնալով ջրաղացը, նրանք մաքրեցին իրենց շորերից արեան հետքերը և գետնի փոսերն էլ, որտեղ արիւնը լճացել էր, աւազով ծածկեցին:

—Օ՜հ, այդ ի՞նչ է հոսում ձեռքիցդ,—բացականչեց ջրաղացպանը, նկատելով, որ Կրալիչի ձեռքից արիւն է կաթկաթում:

—Ոչինչ. անիծածն ինձ կծեց, երբ ես նրա կոկորդից բռնեցի:

—Թող շուտով կապեմ վէրքդ,—ասաց ջրաղացպանը, մի կեղտոտ թաշկինակով նրա ձեռքը կապելով: Երբ գործը վերջացրեց, երախտապարտ աչքերի մէջ նայեց և ասեց նրան.

—Ներիր, զաւակս. ո՞րտեղից ես գալիս:

—Յետոյ կը պատմեմ, պապի. այժմ այսքանը միայն կասեմ, որ ես բուլղար եմ և լաւ բուլղար: Մի՛ կասկածիր ինձ վրա:

—Աստուա՜ծ պահէ... Մի՞թէ ես չեմ տեսնում: Դու ազգային մարդ ես, պարո՛ն, իսկ այդպիսիների համար ես կեանքս կտամ:

—Այժմ ես ո՞րտեղ կարող եմ շորերս փոխել և գիշերել:

—Գնանք վանքը՝ Տիկէնաի սարկաւագի մօտ, նա իմ ազգականն է: Ո՜րքան լաւութիւններ է արել նա քեզ պէս մարդկանց: Նրա երակներումն էլ հին բուլղարական արիւն է հոսում, պարո՛ն:

Գնանք, մենք այնտեղ կը գիշերենք Լաւ էր, որ ոչ ոք չտեսաւ:

Սակայն Ստոեան պապը սխալւում էր: Մի կողմում փաղեմի ընկուզենու բնի մօտ լուսինը լուսաւորեց մի բարձր մարդկային կերպարանք, որը բոլոր ժամանակ անշարժ հանդիսատես էր թուրքերի թաղմանը: Նրան ոչ ոք չնկատեց:

Կէս ժամ յետոյ՝ ջրաղացպանը, Կրալիչը և Մարիչկան, որը կռուի ժամանակ փախել և թաղնուել էր մօտակայ կաղնու տակ և երկիւղից հեկեկում էր, մօտենում էին հինաւուրց վանքին որի բարձր պատերը լուսնի աղօտ լոյսի տակ մթին սօսիների և ընկուզենիների մէջ սպիտակին էին տալիս:

Մեր ճանապարհորդների հետքով յամրաքայլ գնում էր և անծանօթը:

Գ.

ՎԱՆՔԸ

Նրանք անցան մեծամեծ քարերով և բազմաթիւ հարիւրամեայ ընկուզենիներով ծածկուած հովիտը և հասան վանքի քարեայ բարձր պարսպի մօտ: Վանքը՝ լուսնի խորհրդաւոր լոյսի տակ՝ հսկայական ամրոցի էր նմանում, ֆանտաստիքագծագրուած գագաթներով:

Մի քանի տարի դրանից առաջ վանքի պարսպի պարծանքն էր կազմում մի հսկայական եղևնի,

որի թաւոտ կատարը, որտեղ բոյն էին դրել և երգում էին հազարաւոր թռչնակներ, ծածկում էր վաղեմի հինաւուրց եկեղեցին։ Սակայն փոթորիկն արմատահան արաւ և տապալեց եղևնին, իսկ նոր վանահայրը նոր եկեղեցի շինեց։ Այժմ նոր եկեղեցին իւր բարձր, նոր ձևով շինած գմբէթով չափազանց տարբերւում էր միւս շինութիւններից— անցեալի յիշատակներից և փչացնում ընդհանուր տպաւորութիւնը, որպէս նոր թղթի կտորը հին մագաղաթի մօտ։

Մեր երեք ծանօթները մի պտոյտ գործեցին վանքի շուրջը և մօտեցան նրա ցած պատին, որն ամենահեշտն էր ներս մտնելու համար և միևնոյն ժամանակ ամենամօտը Վիկենտի սարկաւագի խցին։

Այստեղից պահապան շներն էլ նրանց չէին նկատիլ և իրենց հաչոցով չէին զարթեցնիլ վանական ծառաներին։

Պէտք է երեքից մէկը պարսպից ներս թռչէր՝ միւսներին սանդուխ տալու համար։ Կրալիչը, որն այդ գիշերը յարձակմամբ էր սկսել, յանձն առաւ այդ գործը։ Շուտով երեքն էլ անց կացան, իրենց անձը ենթարկելով ռազմասէր վանահօրից գնդակահար լինելու վտանգին, եթէ վերջինս նկատէր նրանց լուսամուտից։ Նրանք իջան յետին փոքրիկ գաւիթը, որն հաղորդակցութիւն ունէր մեծ գաւթի հետ մի պինդ փակուած դռնով։ Սարկաւագի խուցը գտնւում էր ներքին հարկում և նրա լուսամուտները նայում էին այդ գաւթին։ Ջրաղաց-

պանը մօտեցաւ լուսամուտին, որտեղից դեռ լոյս էր երևում։

—Վիկենտին կարդում է,— ասաց նա թաթերի վրա բարձրանալով և լուսամուտից ներս նայելով։

Նա խփեց ապակուն. լուսամուտը բացուեցաւ և մի մարդ հարցրեց.

—Այդ դո՞ւ ես, Ստոյեան հօրեղբայր, ի՞նչ ես ուզում։

—Սարկաւա՛գ, տուր խնդրեմ դռան բանալին, յետոյ կը պատմեմ։ Դու մենա՞կ ես։

—Մենակ եմ, բոլորը քնած են։ Ահա՛ առ։

Ջրաղացպանը չքացաւ խաւարի մէջ և փոքրինչ յետոյ վերադարձաւ Կրալիչի և Մարիչկայի մօտ և տարաւ նրանց ներսի գաւիթը, իրենց յետևից դռները փակելով։

Մեծ գաւթում ամեն ինչ հանդարտ էր. շատրուաններից ջուրը միապաղաղ և ողբաձայն թափւում էր և նրա աղմուկը նմանում էր մեռելների թաղման երգի. սև նոճիները, հսկայական ուրուականների նման՝ խորհրդաւոր կերպով շարժում էին իրենց կատարները. երկար, խուլ ու անկենդան պատշգամբների մի մթին շարք էր երևում ամբողջ գաւթի շուրջը։ Սարկաւագի խուցը բացուեց և գիշերային հիւրերը ներս մտան։

Դեռ երիտասարդ՝ ազդու դեմքով, թուխ, խելացի աչքերով և նորաբոյս փափուկ մօրուքով մի սարկաւագ մտերմաբար դիմաւորեց Կրալիչին։ Ստոյեան պապը շտապ և յուզուած կերպով պատմեց

ջրաղացում տեղի ունեցած դէպքը՝ ամէն խօսքի վրա օրհնելով իր ազատարարին:

Վիկենտին վերջապէս նկատեց հիւրի դէմքի սաստիկ գունատութիւնն ու յոգնածութիւնը և առաջարկեց առաջնորդել նրան մի ուրիշ սենեակ գիշերելու և հանգստանալու համար: Հիւրն ուրախութեամբ համաձայնեց: Նախասենեակների և սանդուխների մի ամբողջ շարք անցնելուց յետոյ, նրանք վերջապէս հասան հակառակ կողմի եռայարկ շինութեանը, որտեղ գտնւում էր Կրալիչի համար նշանակուած խուցը: Նրանց քայլերը խուլ ձայն էին հանում յատակների վրա, թէև նրանք աշխատում էին կամաց քայլել: Այն խուցը, ուր նրանք մտան, տխուր էր և դատարկ. Նրա ամբողջ կարասիներն էին—մի նստարան ծղօտեայ դօշակով և ջրով լի մի կուժ. այս օթևանն աւելի նման էր բանտի, սակայն Կրալիչին այժմ դրանից լաւն էլ հարկաւոր չէր: Մի քիչ ջրաղացում պատահած անցքի մասին խօսելուց յետոյ, Վիկենտին պատրաստուեց գնալ:

—Դուք ջարդուած էք և պէտք է շուտով հանգստանաք,—ասաց նա.—չեմ ձանձրացնիլ ձեզ զանազան հարցերով. ասենք, դրանք հարկաւոր էլ չեն, որովհետև այս գիշեր ձեր ցոյց տուած հերոսութիւնն արդէն շատ բան ասաց ինձ... Վաղը դարձեալ կպատահենք միմեանց, իսկ այժմ ամենևին հոգս մի անէք—Վիկենտի սարկաւագը լիովին ձեր տրամադրութեան տակ է: Բարի գիշեր,—և նա

տուեց իւր ձեռքը: Կրալիչը բռնեց այն և առանց թողնելու ասաց.

—Ո՛չ, դուք ինձ հիւրասիրութիւն ցոյց տուիք առանց ոչինչ գիտնալու իմ մասին և ձեր անձը իմ պատճառով վտանգի ենթարկեցիք: Հարկաւոր է ուրեմն, որ դուք իմանաք, թէ ով եմ ես: Իմ անունս է—Իվան Կրալիչ:

—Իվան Կրալի՞չ, այն աքսորուածը... Ե՞րբ են ձեզ արձակել,—զարմացած հարցրեց սարկաւագը:

—Արձակել ե՞ն... Ես փախայ Դիարբեքիրի բանտից...

—Վիկենտին պինդ սեղմեց նրա ձեռքը:

—Բարի լինի ձեր գալուստը. Կրալի՛չ դուք այժմ իմ աւելի ևս թանկագին հիւրս և եղբայրս էք: Բուլղարիային հարկաւոր են իւր լաւ որդիքը: Մենք այժմ շատ ու շատ գործեր ունինք կատարելու. Թուրքերի բռնակալութիւնն անտանելի է դարձել. ժողովրդի դժգոհութիւնը երբ և իցէ պէտք է բռնկուի: Հարկաւոր է պատրաստուել... Մնացէ՛ք մեզ մօտ, պարոն Կրալիչ, այստեղ ձեզ ոչ ոք չի ճանաչիլ, միասին կը գործենք, ցանկանու՞մ էք,—եռանդով խօսում էր ոգևորուած սարկաւագը:

—Ես էլ նոյն դիտաւորութիւնն ունիմ, հա՛յր Վիկենտի:

—Վաղն աւելի մանրամասնօրէն կը խօսենք: Դուք բոլորովին անվտանգ տեղ էք գտնվում: Այս խուցի մէջ ես թաքցրել էի և Լևսկուն: Այստեղ աւելի շատ ուրուականներ կարելի է տեսնել քան

թէ մարդիկ։ Բարի գիշեր,—կատակով վերջացրեց իւր խօսքը սարկաւագը և հեռացաւ։

—Բարի գիշեր, հայր—ասաց Կրալիչը, նրա յետևից դուռը փակելով և սկսելով սարկաւագի բերած սպիտակեղէնը հագնել։

Շտապով ընթրելուց յետոյ՝ նա պառկեց և մոմը հանգցրեց, բայց դեռ երկար ժամանակ շուռ էր գալիս անկողնու մէջ... Գիշերուայ յուզիչ յիշողութիւնները վրդովում էին նրա երևակայութիւնը. Նրա մտքովը նողկալի և չարատանջ մանրամասնութեամբ անցնում էին սրտաշարժ տեսարաններն ու արիւնալից պատկերները։ Այս տանջող դրութիւնը շատ երկար տևեց։ Վերջապէս բնութիւնն յաղթող հանդիսացաւ—վերին աստիճան սպառուած ֆիզիքական և հոգեկան ոյժերը խոնարհուեցան քնի անյաղթելի պահանջի առաջ և և—նա քնեց։ Բայց յանկարծ նա ցնցուեց և նորից բաց արաւ աչքերը. Նրան թուաց, թէ մի մարդ ծանր ու յամրաքայլ ման էր գալիս նախասենեակում. կարծես երգի ձայն էր լսւում, որը սակայն աւելի նման էր ոռնոցի։ Քայլերը մօտենում էին և երգեցողութիւնն աւելի և աւելի լսելի էր դառնում։ Դա նմանում էր մերթ թաղման աղօթքներին, մերթ հեկեկանքի ու լացի։

Կրալիչը մտածեց, թէ երևի ձայները հեռուից են գալիս և շինութեան դատարկութիւնը խեղաթիւրում է դրանց։ Բայց ո՛չ։ Նախասենեակից քայլերը որոշակի էին լսւում։ Յանկարծ նրա լուսամուտի մօտ մի մթին կերպարանք երևաց և սկսեց

ներս նայել։ Կրալիչը դողալով հայեացքն ուղղեց դէպի ստուերը և սարսափով նկատեց, որ նա ձեռքով ինչ որ օտարոտի նշաններ է անում, կարծես կանչում է նրան։ Կրալիչն աչքերը լուսամուտից չէր հեռացնում։ Նրան արդէն թւում էր, թէ խորհրդաւոր կերպարանքը—սպանուած Եմեքսիդ-Փահլէվանի գծագրութիւններն ունի... «Էհ, տեսիլ է այդ»,—մտածեց նա, աչքերը սրբելով, և նորից նայեց—ստուերը դարձեալ կանգնած էր և ներս էր նայում։

Կրալիչը սնապաշտ չէր, սակայն անծանօթ տեղը, այս դատարկ, խուլ շինութիւնն ու գերեզմանային լռութիւնը նրան ակամայ սարսափի մէջ ձգեցին, որից նա ոչ մի կերպ չէր կարող ազատուել Նրա միտքն ընկաւ սարկաւագի զուարճամիտ նկատողութիւնը ուրուականների մասին, և աճեց նրան անպատմելի սարսափը։ Բայց և իսկոյն նա ամաչեց։ Շօշափմամբ ատրճանակը գտնելով, նա վեր կացաւ, կամացուկ բացեց դուռը և դուրս եկաւ պատշգամբ։ Խորհրդաւոր բարձրահասակ կերպարանքը ման էր գալիս և երգում։ Կրալիչը համարձակ մօտեցաւ նրան։ Երգող ուրուականը փոխանակ աներևոյթանալու, ինչպէս այդ պատահում է հեքիաթների մէջ, յանկարծ սարսափահար ճչաց, որովհետև Կրալիչն էլ իւր նոր, մաքուր սպիտակեղէնով ոչ պակաս նման էր ուրուականի։

—Ո՞վ ես դու,—հարցրեց նոր ուրուականը հնին, նրա օձիքից բռնելով։ Սակայն երկիւղը կաշկանդել էր դժբաղդի լեզուն—նա միայն խաչակն-

քում էր, անմտաբար չռել էր աչքերը և խելագարի նման գլուխը չորս կողմն էր պտտեցնում։ Կրալիչը հասկացաւ, որ իւր նման մէկի հետ գործ ունի, և հանգիստ թողեց նրան։

Վիկենտին մոռացել էր զգուշացնել հիւրին հեգաբարոյ ապուշ Մունչօի գիշերային սովորութիւնների մասին։ Նա արդէն մի քանի տարի էր, որ ապրում էր այդ վանքում։ Հէնց այդ մարդն էր այն անծանօթը, որ տեսաւ Թուրքերի դիակների թաղումը։

Դ.

ՆՈՐԻՑ ՄԱՐԿՕԻ ՏԱՆԸ

Երէկ, երբ Մարկօն համոզուեց որ Կրալիչն իրօք անյայտացել է, բաց արաւ դուռը, շէմքում պատահեց օնբաշուն և ժանդարմներին, որոնք զգուշութեամբ՝ մէկը միւսի յետևից ներս մտան։

—Ի՞նչ է պատահել ձեր տանը, չորբաջի Մարկօ,—չորս բոլորը նայելով հարցրեց օնբաշին։ Մարկօն հանդարտ կերպով բացատրեց, թէ ոչինչ չէ պատահել, այլ միայն փախկոտ ազախնու երևակայութեան ծնունդ էր այդ և նա էր աղմուկ բարձրացնողը։ Օնբաշին բաւականացաւ այդ բացատրութեամբ և հեռացաւ, մտքում ուրախանալով, որ մի որ և է անախորժ դէպքի չպատահեց։ Մարկօն ոստիկանի յետևից դուռը չէր փակել, երբ փողոցից մի ձայն լսուեց.

—Բարի երեկոյ, բայ Մարկօ, ներս մտնելով ասաց մի բարձրահասակ երիտասարդ։

—Ա՛, բժշկապե՛տ, ներս եկ, ներս, միասին սուրճ խմենք։

Մարկօն հիւրին տարաւ ընդունարանը, որն իսկոյն լուսաւորուեց երկու՝ մաքուր սրբուած բրօնզեայ մոմակալների մէջ դրած մոմերով։ Սա մի փոքրիկ, բայց ուրախ և յարմար սենեակ էր. պատերը, յատակը և այնտեղ գտնուած երկու բազմոցները ամբողջովին ծածկուած էին գորգերով, համաձայն այն ժամանակուայ պարզ և ինքնուրոյն ճաշակին, որը մինչև օրս էլ տիրում է մի քանի ուրիշ գաւառական քաղաքներում։ Պատերից մէկի մօտ դրուած էր երկաթէ վառարանը։ Վառարանի դէմուդէմը գտնվում էր կիոտը, որի տապանակի առաջ կախուած էր մի փոքրիկ կանթեղ, կիոտի մօտ դարձեալ սրբերի և աֆոնեան կեղևի վրա փորագրուած պատկերներ—ուխտաւորների բարեպաշտական ընծաները։ Կիոտի վերևը ցցուած էր շուշանների մի փունջ և ուռենու մի ճղնիկ, որոնք՝ ծերերի ասելով, ընտանիքին առողջութիւն էին բերում։ Լուսամուտների դէմուդէմի պատը նկարների թանգարանի դեր էր կատարում։ Այնտեղ Ռումինիայից բերուած ոսկեզօծ շրջանակների մէջ կախուած էին վեց վիմատիպ պատկերներ։ Մէկի վրա նկարուած էր գերմանացոց ընտանեկան կեանքը, միւսի վրա—սուլթան Աբդուլ-Մէջիդը՝ շքախմբով։ Մնացածները ներկայացնում էին Ղրիմի պատերազմից զանազան դէպքեր—Ալմայի

պատերազմը, Եւպատորիայի ճակատամարտը, Սիլիստրիայի պաշարման վերջը 1852 Թուականին: Այս պատկերի տակ ռուսիներէն գրուած էր՝ «Rasboul Silistrice» (Սիլիստրիայի կռիւը), իսկ մի ինչ որ խելացի մարդ դրա տակ բուլղարերէն գրել էր «Ազատութիւն Սիլիստրիայի մօտ»: Ամենավերջինը —այդ պատերազմի ռուս զօրապետների պատկերն էր, որոնք նկարուած էին մինչև ծնկները: Որովհետև հայր Ստավրին բացատրել էր, թէ անգլիական ռումբերն են կտրատել նրանց ոտքերը, ուստի Իւանիցա տատը նահատակ էր անուանում դրանց:—«Ո՞վ է դարձեալ ձեռք տուել նահատակներին»—բարկութեամբ հարցնում էր նա երեխաներին: Նահատակների պատկերի վերևում կախուած էր մի մեծ պատի-ժամացոյց, որի շղթաներն ու քարերը հասնում էին մինչև բազմոցի բարձերը: Այդ ժամացոյցը վաղուց արդէն վերջացրել էր իւր ծառայութիւնը և նմանում էր մի իսկական աւերակի, բայց Մարկօն մեծ ջանքով և ճարտարութեամբ պահպանում էր նրա կեանքը—ինքն էր քակում նրա մասերը, իւղոտած փետուրներով մաքրում, Թելերով կապոտում անիւների առանցքը և այսպիսի ջանքերով մի առժամանակ՝ մինչև նորից կանգնելը, հոգի էր տալիս նրան: Մարկօն կատակով նրան «իմ Թոքախտաւորս» էր անուանում, բայց Թէ նա և Թէ տանեցիք այն աստիճան սովորել էին այդ հիւանդին, որ հէնց որ նրա զարկերակը—այսինքն ճօճանակը—կանգ առնէր, տունը կարծես ամայի և անմարդաբնակ կը դառնար:

Երբ Մարկօն գնդերը բարձրացնելու համար շղթաներից քաշում էր, այդ մահամերձի հիւանդ կուրծքից մի այնպիսի բարձր և զայրացած խռխռոց էր դուրս գալիս, որ սարսափած կատուն լեղապատառ սենեակից դուրս էր վազում: Այդ պատից կախուած երկու ընտանեկան լուսանկարները լրացնում էին նկարների Թանգարանի գանձարանը, որը, հինաւուրց ժամացոյցն աչքի առաջ ունենալով, կարելի էր նաև «հնութիւնների Թանգարան» անուանել: Պատերի շուրջը կային նաև դարակներ յաղճապակեայ սկուտեղներով, որոնք պատուաւոր համարուած տան պարտաւորական զարդարանքն էին կազմում. իսկ անկիւններում դրուած էին եռանկիւն տախտակներ՝ ծաղկամաններով: Այսպէս էր զարդարուած չորբաջի Մարկոի հիւրասենեակը:

Հիւրը—բժշկապետ Սոկոլովը, որ 28 տարեկան մի վայելչակազմ երիտասարդ էր՝ փայլուն խարտեաշ մազերով, կապոյտ աչքերով և շիտակ, պարզ դէմքով,—Թեթևամիտ և վստահ բնաւորութեան տէր և արտասովոր մարդ էր: Նա մի ժամանակ ծառայում էր Չերնագորիայի սահմանագլխի Թուրքաց բանակում՝ որպէս օգնական բժշկի, լաւ իւրացրել էր Թրքական լեզուն և Թրքական սովորութիւնները. մի բաժակ արաղ խմելու համար ընկերանում էր օնբաշու հետ, իսկ գիշերը հրացանով վառարանների խողովակներին նշան էր դնում՝ նրան ահ ու դողի մէջ ձգելու համար, և իւր բաւականութեան համար մարզել էր մի արջի քոթոթ: Զորբաջիները, որոնք աւելի հաւատ

էին ընծայում յոյն բժշկին, Սոկոլովին խէթ աչքով էին նայում, բայց երիտասարդութիւնը նրա պարզ, ուրախ բնաւորութեան և բուռն հայրենասիրութեան համար շատ էր սիրում նրան. Նա միշտ առաջինն էր լինում ընտանեկան քէֆեր և յեղափոխական ժողովներ կազմելու մէջ,—այդ բաներին նա նուիրում էր իր ամբողջ ժամանակը։ Սոկոլովը բժշկական ոչ մի ֆակուլտէտ աւարտած չէր, բայց երիտասարդութիւնը, ցանկանալով նրան յոյն բժշկից աւելի բարձր դասել, «բժշկապետ» անունն էր տալիս նրան, իսկ Սոկոլովը հարկ չէր համարում այդ բամբասանքի դէմ բողոքել։ Իսկ ինչ վերաբերում է յատկապէս հիւանդների բժշկութեանը, Սոկոլովն այդ բանն աւելի իւր երկու հաւատարիմ օգնականների կամքին էր թողնում—Բալկանների առողջարար կլիմայի և հիւանդի կազմուածքի։ Այդ պատճառով նա սակաւ էր դեղագրքի դիմում, որի լատինական տերմիններին նա այնքան էլ ծանօթ չէր, և նրա ամբողջ դեղատունը տեղաւորուած էր մի փոքրիկ դարակի վրայ։ Դժուար չէ ենթադրել, որ նա շուտով բոլորովին յաղթեց իւր յոյն հակառակորդին։

Սոկոլովը Մարկօի տանը բժիշկն էր և այժմ եկել էր այցելելու հիւանդ Սաէնին։

—Սա՛ս խնդրեմ, բայ Մարկօ,—խօսեց բժշկապետը, հանգիստ նստելով բազմոցներից մէկի վրայ.
—քիչ առաջ քեզ մի երիտասարդ մարդ գտա՞ւ։

—Ի՞նչ մարդ։

—Մի ինչ որ օտարոտի, շատ վատ հագնուած երիտասարդ, բայց խելացի դէմքով, որքան ես կարողացայ նկատել։ Հարցնում էր, թէ ո՛րտեղ է ձեր տունը։

—Ո՞րտեղ դու տեսար նրան։ Ինձ մօտ ո՛չ ոք չէ եկել,—պատասխանեց Մարկօն նշմարելի կերպով շփոթուելով, բայց հիւրը չնկատեց այդ։ Նա հանգարտ շարունակեց.

—Մթնշաղին՝ հաջի Պաւլովի վարդենիների պարտիզի մօտ յետևիցս մի երիտասարդ մօտեցաւ ինձ և հարցրեց—«չէ՞ք կարող արդեօք, պարո՛ն, ցոյց տալ ինձ Մարկօ Իվանովի տունը. Նա ինձ հարկաւոր է, իսկ ես, ասում է, առաջին անգամն եմ այստեղ լինում»։ Ես պատահմամբ այս կողմն էի գալիս և առաջարկեցի նրան ինձ հետ գալ։ Ճանապարհին ես նրան նայեցի… խեղճը համարեա մերկ էր։ Բարակ, պատառոտուած մի բաճկոն կար հագին, իսկ ինքը սարսափելի մաշուած ու թոյլ էր և հազիւ էր կարողանում ոտքի վրայ կանգնել… Եղանակը շատ ցուրտ էր։ Ես չհամարձակուեցայ հարցնել, թէ որտեղացի է նա և ինչու է այդ դրութեան մէջ, բայց չափազանց խղճացի դժբաղդի վրայ… Նայեցի իմ վերարկուիս, ո՞րտեղ չէ գնացել, ասացի ինքս ինձ։—Չէ՞ք բարկանայ ինձ վրայ, պարո՛ն, հարցրի, եթէ ես ձեզ տամ վերարկուս։—«Շնորհակալ եմ»—ասաց ու վեր առաւ։ Այժմ ես ցանկանում էի հարցնել ձեզ, թէ ո՛վ էր նա։

—Արդէն ասացի ձեզ, թէ ինձ մօտ ո՛չ ոք չէ եկել։

—Զարմանալի է, ճշմարիտ, զարմանալի.—մտախոհ կերպով ասաց բժշկապետը։—Չլինի թէ, բայց Մարկօ, այդ մարդն էր, որ բարձրացել էր ձեր կառքը,—կատակ արաւ նա։—Բայց չէ՛։ Այդպիսի մարդկանց կարելի է դէմքից էլ ճանաչել,—անկարելի է, որ այդ երիտասարդը գող լինէր։

Խօսակցութիւնն անախորժ եղանակ էր ստանում և Մարկոն խօսքը փոխելու համար դարձաւ Սոկոլովին։

—Բժշկապե՛տ, լրագրներ կարդացե՞լ էք, ի՞նչպէս է գնում հերցեգովինցոց ապստամբութիւնը։

—Խնկի հոտ է գալիս, բայց Մարկօ։ Այդ հերոս ժողովուրդը հրաշքներ է գործում։ Բայց ի՞նչ կարող է անել նա այդպիսի ույժի դէմ։

—Աստուա՜ծ իմ, մի բուռ մարդիկ են, իսկ որքա՜ն ժամանակ է դիմանում են։ Մենք մի՞թէ կարող ենք այդպիսի բանի վրայ մտածել անգամ։

—Բայց փորձե՞լ ենք։ Մեր ազգը հինգ անգամ աւելի է հերցեգովինցիներից, այն ինչ դեռ ես չէ փորձել ցոյց տալ իւր ույժը։

—Այդ մասին, բժշկապե՛տ, մի էլ մտածի՛ր։ Հերցեգովինցիք ուրիշ են, մենք—ուրիշ. մենք գտնւում ենք դժոխքի մէջ տեղը—արժէ միայն շարժուել և այն ժամանակ մեզ ոչխարների նման կը մորթեն։ Ո՛չ մի տեղից օգնութիւն ստանալու յոյս չկայ։

—Իսկ ես հարցնում եմ—փորձե՞լ ենք մենք,—կրկնեց իւր խօսքը բժշկապետը։—Որքան աւելի մենք հանդիստ մնանք և անխօս հպատակուենք, այնքան աւելի սաստիկ կը խփեն մեզ։ Ի՞նչ էր արել

նրանց Գանչօի խեղճ երեխան, որին երէկ գլխատուած գտան... Մեզ կը շղթայեն, եթէ մտածելու անգամ լինինք բողոքել, իսկ Եմերսիդ-Փահլեւաններին թոյլ են տալիս օրը-ցերեկով անպատիժ գազանութիւններ անել։ Ա՞յդ է արդարութիւնը։ Անշունչներն անգամ չեն կարող տանել այդպիսի տանջանքներ։ Մարդն էլ սիրտ ունի,—ասում են մարդիկ։

Ներս մտաւ Իվանիցա տատը։

—Գիտէ՞ք,—ասաց նա, Պենան անծրեւից առաջ հրացանի ձայն է լսել, ինչ որ մարդու յետեւից են արձակել... Ի՞նչ բան է, տեսնես, Սուրբ Աստուածածին։ Դարձեալ գուցէ մի քրիստոնէի հոգի կորցրին։

Մարկօի մարմնով մի սարսուռ անցաւ և նա բոլորովին գունաթափուեց. մի ինչ որ նախազգացում ասում էր նրան, որ Կրալիչին մի բան է պատահել։ Նրա սիրտը տրորւում էր վշտից, որը թաքցնել անկարող էր։

—Ի՞նչ պատահեց ձեզ, բայց Մարկօ,—կարեկցաբար հարցրեց բժշկապետը, բռնելով նրա զարկերակը և փոխուած դէմքին նայելով։

—Ո՛չինչ, երեւի փոթորկից է, իսկոյն կ՚անցկենայ։

Անծրեւը դադարելուն պէս՝ հիւրը վեր կացաւ։ Վերջին նորութիւնը—հրացանների ձայնի մասին—շփոթել էր նրան։

—Էհ, գուցէ մի տեղ չփակուած փեղկերը դիպել են լուսամուտին, իսկ պառաւը սխալմամբ հրացանի ձայնի տեղ է ընդունել։ Բարի գիշեր։

Ե.

ՉԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Տուն հասնելով, բժշկապետը դուռը բաղխեց: Շէմքում երևաց մի պառաւ կին, որին նա շտապով հարցրեց.

—Ի՞նչ է անում Կլէօպատրան:

—Քեզ է հարցնում,—պատասխանեց պառաւը ժպտալով:

Անցնելով երկար գաւիթը, բժշկապետը իւր սենեակը մտաւ: Սա մի մեծ, առանց որևէ զարդարանքի, պահարանները պատերի մէջ և մեծ խոր վառարանով մի սենեակ էր, որը նրան ծառայում էր՝ որպէս ընդունարան, առանձնասենեակ, դեղատուն և ննջարան: Մի փոքրիկ դուռ տանում էր այդտեղից դէպի նկուղը: Պատերից մէկի մօտ, փոքրիկ դարակի վրայ դանւում էին բոլոր բժշկական դեղերը, իսկ սեղանի վրայ—մի հաւանք, մի քանի դզգզուած բժշկական գրքեր և տարեճանակը: Մահճակալի վերևը կախուած էր մի երկփող հրացան, նրա բոլոր սարքով: Երկու նկար միայն զարդարում էին բժշկապետի սենեակը—Չերնոգորիայի իշխանի պատկերը և մի ինչ որ հօլանդի երգչուհու լուսանկարը: Ամէն ինչ ցոյց էր տալիս, որ սա գործով զբաղուած մի ամուրի մարդու բնակարան էր—անպաճոյճ, անյարմար, բայց դրա փոխարէն արձակ:

Անհոգութեամբ մի կողմ ձգելով վերարկուն ու ֆէսը, բժշկապետը մօտեցաւ նկուղի դռանը և կանչեց.

—Կլէօպատրա՛, Կլէօպատրա՛:

—Ոչ ոք ձայն չտուեց:

Կլէօպատրա՛, դէհ, դուրս արի, հոգեա՛կ:

Նկուղից մրթմրթոց լսուեց: Բժշկապետը նրստեց սենեակի մէջ տեղը, աթոռի վրայ և աւելի բարձր ձայնով կանչեց.

—Այստե՛ղ, Կլէօպատրա՛:

Նկուղից դուրս եկաւ մի արջ, աւելի ճիշտը—մի էգ քոթոթ: Իւր լայն թաթերը յատակին քսելով և ուրախ-ուրախ մռմռալով, նա մօտեցաւ բժշկապետին: Արջը կանգնեց յետին ոտների վրայ, առաջիները դրեց բժշկապետի ծնկներին և բաց արաւ բերանը, ցոյց տալով իւր սպիտակ և սուր ատամները: Նա շան նման քծնում էր: Բժշկապետը փաղաքշաբար շոյեց նրա փափուկ մազերը և թոյլ տուեց լիզելու իւր ձեռքը, որը նա ամբողջովին բերանն էր առել:

Այս գազանը, որ բռնուած էր Միջին-Լեռան վրայ, մի որսորդ էր նուիրել նրան, որի որդուն Սոկոլովը բժշկել էր վտանգաւոր հիւանդութիւնից: Սոկոլովը սաստիկ սիրում էր այդ կենդանուն և արտասովոր հոգատարութեամբ կրթում էր նրան: Նրա սիրալիր խնամակալութեան տակ Կլէօպատրան յաջող կերպով մեծանում էր, հեշտութեամբ իւրացնում մարմնամարզութեան դասերը և օր աւուր աւելի և աւելի կապւում իւր տիրոջ հետ:

Նա արդէն կարող էր արջի պոլկա պարել, տալիս էր բժշկապետի ֆէսը, ծառայում էր նրան և շան նման պահպանում սենեակը: Այս բոլորն իսկական արջային ծառայութիւններ էին, որովհետև նրա ներկայութիւնը շատ հիւանդների փախցնում էր, բայց բժշկապետը այդ բանի վրայ քիչ ուշադրութիւն էր դարձնում: Պարի տաք ժամանակը Կլէօպատրան սովորաբար զարհուրելի գոռոց էր բարձրացնում և ամբողջ փողոցն այն ժամանակ կ'իմանար, որ Կլէօպատրան պարում էր: Նրա հետ միասին պարում էր և զուարճասէր բժշկապետը:

Այդ երեկոյ Սոկոլովն առանձնապէս տրամադրուած էր դէպի քնքոյշ Կլէօպատրան: Պահարանից մի կտոր միս հանելով, իւր ձեռքով կերակրեց նրան.

—Կե՛ր, իմ հոգեակ, քաղցած արջը պար չի սիրում, ասում են հին մարդիկ. իսկ ես ուզում եմ, որ դու այսօր պարես, ինչպէս իսկական արքայադուստր:

Արջը հասկացաւ նրա խօսքը և մի գոռոց հանեց — իբր թէ, պատրաստ եմ:

Բժշկապետը ձեռքն առաւ թասը, սկսեց թմբրկահարել և ուրախ երգել.

Դիմիտրովկա, շիկահեր ա՜յ աղջիկ,
Դիմիտրովկա՛, ասա քո մօրը...

Կլէօպատրան կանգնեց յետին թաթերի վրայ և ոգևորուած սկսեց պարել ու գոռալ: Բայց յանկարծ նա վազեց դէպի լուսամուտը և կատաղաբար մռնչեց: Բժշկապետը գլխի ընկաւ, որ, երևի,

դրսում օտար մարդիկ կան: Նա ատրճանակը ձեռքն առաւ:

—Ո՞վ կայ այդտեղ,—հարցրեց բժշկապետը, Կլէօպատրային մի կողմ հրելով:

—Բժշկապե՛տ, համեցէ՛ք կոնակը,—լսուեց դրսից:

—Այդ դո՞ւ ես, Շէրի՛ֆ-աղա: Ինչո՞ւ էք այս ժամանակ ինձ կոնակ կանչում: Ո՞վ է հիւանդ:

—Առաջ փակի՛ր արջի՜ն:

Բժիշկը Կլէօպատրային ձեռքով նշան արաւ և սա դժգոհութեամբ մրթմրթալով նկուղը գնաց:

—Մեզ հրամայուած է քեզ կոնակ տանել, դու ձերբակալուած ես,—խստութեամբ ասաց օնբաշին, սենեակ մտնելով:

—Ինչո՞ւ համար եմ ձերբակալուած: Ո՞վ է ինձ ձերբակալողը:

—Այնտեղ դու ամեն բան կիմանաս, հայդա՛, գնանք,—և բժշկապետին տարան: Նրանց յետևից լսուեց Կլէօպատրայի սիրտ կտրատող, ողբանման մռնչիւնը...

Կոնակում մի արտասովոր իրարանցում էր նկատւում: Բժշկապետին տարան ուղղակի բէյի մօտ: Բէյը նստած էր իւր սովորական տեղը, անկիւնում: Նրա մօտ Կիրիակ Սաւֆզովը և կոնակի խորհրդի անդամ Նեզօ Պերօնկովը ինչ որ թերթերի էին նայում: Բէյը, որ վաթսունամեայ մի ծերունի էր, շատ սառն դէմք էր ընդունել, սակայն բժշկապետին քաղաքավարի ընդունեց և հրաւիրեց նրան նստել: Սոկոլովը նրա տանու բժիշկն էր և

բէյը սիրում էր նրան. սակայն Թուրքերն առհասարակ այսպէս են վարւում մեղադրեալների հետ, նպատակ ունենալով անկեղծ խոստովանութեան տրամադրութիւն զարթեցնել նրանց մէջ։

Բժշկապետը շփոթւած նայում էր շուրջը և մեծ զարմանքով բազմոցի վրայ տեսաւ իւր վերարկուն, որը նա նուիրել էր Կրպլիչին։ Այս բանը բաւական էր արկածի պատճառը բացատրելու համար։

—Բժշկապե՛տ, սա քո հագո՞ւստն է,—հարցրեց բէյը։

Բժշկապետը չէր կարող և չէր էլ մտածում ուրանալ։ Նա դրական կերպով պատասխանեց։

—Բայց ինչո՞ւ քեզ մօտ չէ դա։

—Երէկոյեան ես մի աղքատի նուիրեցի։

—Այդ ո՞րտեղ։

—Հաջի Շաղուլի փողոցում։

—Ժամը քանիսի՞ն։

—Մօտաւորապէս 8-ին, երեկոյեան։

—Դու ծանօ՞թ ես այդ աղքատի հետ։

—Ո՛չ, բայց ես խղճացի նրա վրայ— նա բոբիկ էր և մերկ։

—Ինչպէս սուտ է խօսում, պժրո՛ղը,—արհամարանքով ասաց Նիչօն։

—Է՛հ, Նիչօ, ծով ընկնողը ձեռքը չափերին էլ է ձգում,—շշնջեց նրա ականջին հարեւանը։

Բէյն էլ նենգութեամբ ծիծաղեց, որպէս թէ բժշկապետի աշխարայ սուտը բռնելով։ Նա այժմ հաստատ համոզուած էր, որ վերարկուն նոյն իսկ

բժշկապետի վրայից էր խլուած։ Գիշերապահներն էլ այդպէս էին հաւատացնում նրան։

—Կիրիակ-էֆէնդի՛. առ՛ւր թերթերը։ Իսկ այս թղթերը ճանաչո՞ւմ ես։

Բժշկապետը տեսաւ «Անկախութիւն» լրագրի մի համար և մի տպագրուած յեղափոխական յայտարարութիւն։ Նա ուրացաւ։

—Ուրեմն ո՞վ է դրանք քո գրպանը դրել։

—Ես արդէն ասացի ձեզ, թէ վերարկուս ուրիշին եմ նուիրել. գուցէ այս թղթերը նրանն են։

Բէյը նորից ժպտաց։ Սոկոլովը տեսաւ, որ գործը վատ ընթացք է ընդունում—նրան ամենայն իրաւամբ մեղադրում են խռովարարների հետ յարաբերութիւն ունենալու մէջ։

—Ա՜յ թէ ով էր երեկուայ անծանօթը... Եթէ ես գիտենայի, նրան էլ, ինձ էլ վտանգից կազատէի, —ափսոսալով մտածում էր բժշկապետը։

—Այստե՛ղ բերէք վիրաւորուած Օսմանին,— հրամայեց բէյը։

Ներս մտաւ վիրաւորուած ոստիկանը, որի թեւը, արմունկից վերև, կապած էր։

Սա այն մարդն էր, որը Կրպլիչի վրայից կարողացել էր խլել վերարկուն, բայց այդ ժամանակ վիրաւորուել էր իւր ընկերներից մէկի գնդակով։

Օսմանն ուղղակի մօտեցաւ բժշկապետին։

—Հէնց սա՛ էր. էֆէնդըմ,—վստահութեամբ ասաց նա։

—Սրանի՞ց դու խլեցիր վերարկուն, ճանաչո՞ւմ ես։

—Սա ինքն է. սա էր և ինձ վիրաւորողը Պեռկանչեան փողոցում:

Սոկոլովը շուարած նայեց Օսմանին:

—Այս ժանդարմն անխիղճ կերպով սուտ է խօսում,—գոչեց նա սաստիկ զայրացած, այդ անսպասելի ծանր զրպարտութիւնը լսելով:

—Օսման-աղա՛, դուրս գնա... Չելեբի՛,—դարձեալ լուրջ դէմքով սկսեց բէյը,—դու ուրանո՞ւմ ես այս ամէնը:

—Այս բոլորը զրպարտութիւն և սուտ է... Ես ինձ հետ երբեք ատրճանակ չեմ առնում և այս երեկոյ Պեռկանչեան փողոցում ամենևին չեմ եղած:

Օնբաշին մօտեցաւ կրակին և սկսեց քննել բժշկապետի ատրճանակը, որը նա վեր էր առել ձերբակալութեան ժամանակ:

—Չորս գնդակ կայ, իսկ հինգերորդն արձակած է,—բազմախորհուրդ կերպով ասաց օնբաշին: Բէյը գլուխը շարժեց:

—Դարձեալ կրկնում եմ, որ սխալւում էք,—այս երեկոյ ատրճանակ չկար ինձ մօտ:

—Բայց, չելեբի, ո՞րտեղ էիր ժամը 9-ին, այս դէպքը պատահած ժամանակը:

—Այս հարցը կայծակի նման հարուածեց Սոկոլովին: Նա սաստիկ կարմրեց, բայց և այնպէս ինքնավստահ կերպով պատասխանեց.

—Ժամը 9-ին ես Մարկօ Իվանովի մօտ էի, որի երեխան հիւանդ է:

—Ժամը մօտաւորապէս 10-ն էր, երբ դու մտար չորբաջի Մարկօի տունը, մենք այն ժամանակ դուրս էինք գալիս նրա մօտից,—ասաց օնբաշին, որը պատահել էր բժշկապետին, երբ սա Մարկօի մօտ էր գնում:

Բժշկապետը, բոլորովին ինքն իրեն կորցրած, խօսք չէր գտնում պատասխանելու. հանգամանքները դրա դէմ էին բարդուել և բոլորովին շփոթել:

—Կամ աւելի լաւ է, այս ասա՛ դու մեզ,—ո՞րտեղ էիր սկսած այն ժամանակից, երբ առիր քո վերարկուդ, մինչև չորբաջի Մարկօի մօտ գնալդ,—խորամանկութեամբ շրջեց բէյը իւր հարցը: Այսպէս պարզ կերպով տրուած հարցին պէտք էր և նոյնպիսի պարզ պատասխան տալ:

Սակայն բժշկապետ Սոկոլովը այդպէս չ'արեց: Նրա դէմքի վրայ կարելի էր կարդալ ներքին սաստիկ կռիւ և բարոյական տանջանք: Շփոթմունքն ու լռութիւնը ամեն խօստովանութիւնից բարձր էին: Բէյը իւր առաջ կանգնած էր տեսնում մի յանցաւոր և վերջին անգամ հարցրեց նրան.

—Չելեբի, ասա՛, ո՞րտեղ էիր այն բոլոր ժամանակը:

—Չեմ կարող ասել,—ցած և վճռաբար ասաց բժշկապետը:

Այդ պատասխանը ապշեցրեց բոլորին: Խորհրդական Նիչօն հեգնօրէն աչքով արաւ Սաեֆչովին, կարծես ուզում լինէր ասել՝ «խեղճն ընկաւ թակարդի մէջ»:

—Դէ՛հ, տօս, չէլէբի՛․ ո՞րտեղ էիր դու այդ ժամանակ։

—Ո՛չ մի կերպ չեմ կարող ասել... Դա մի դաղտնիք է, որը իմ բժշկական և մարդկային պատիւս թոյլ չի տալիս ինձ բանալու... Սակայն այս երեկոյեան Պետկանչեան փողոցում ես չեմ եղել,—հաստատ և յամառ կերպով խօսեց բժշկապետը։

Բէյը դեռ երկար ժամանակ պնդում էր, որ Սոկոլովը խոստովանուի բոլորը, նկարագրելով նրան այդ յամառութեան բոլոր սոսկալի հետևանքները։

—Նշանակում է, ուրիշ ոչինչ չե՞ս ասիլ,—աւելացրեց բէյը։

—Ես բոլորը ասացի, էֆէնդըմ։

—Այն ժամանակ, չէլէբի՛, այս գիշեր դու մեր հիւրը կը լինիս... Ձէյէբուն բանդ տարէք,—խըստութեամբ հրամայեց նա։

Այդպիսի բազմաթիւ ապացոյցների տակ ճընշուած, որոնք նա չէր կարող հերքել,—և ինչպէս ասել էր, ոչ մի կերպ չյայտնեց, թէ որտեղ էր ժամը 9-ին,—բժշկապետ Սոկոլովը ժանդարմների ուղեկցութեամբ գլխակոր դուրս եկաւ բէյի մօտից։

Ձ․

ՆԱՄԱԿԸ

Մարկօն վատ քնեց։ Գիշերուայ պատահմունքները զրկեցին նրան հոգեկան հանգստութիւնից։ Առաւօտեան նա սովորականից վաղ դուրս եկաւ

տանից՝ Գանկօի սրճատանը սուրճ խմելու նպատակով։ Ղայվեճին հէնց նոր էր բաց արել իւր սրճարանը և կրակ վառել։ Մարկօն նրա առաջին այցելուն էր։

Բոլոր ղայվեճիները շատախօս մարդիկ են, և Գանկօն, մի քանի պարտաւորական կատակներից յետոյ, որոնք նա գործ էր ածում միշտ սուրճ տալու ժամանակ, շտապեց հաղորդել բայ Մարկօին բժշկապետին պատահած դէպքը Պետկանչեան փողոցում և նրա բոլոր հետևանքները։ Իւր պատմութիւնը համեմելով բազմաթիւ անմիտ և վայրենի առասպելներով։ Այս բոլորը Գանկօն արտասովոր ոգևորութեամբ էր պատմում։

Մարկօն զարմանքից չէր կարող ինքն իրեն ժողովել․ երեկոյեան նա այնքան երկար ժամանակ խօսել էր բժշկապետի հետ և նրա դէմքից, խօսակցութիւնից առանձին ոչինչ չէր նկատած։ Եւ վերջապէս, հաղիւ թէ բժշկապետը նրանից այդպիսի բաներ թաղցնէր։

Ցանկարծ օնբաշին սրճատուն մտաւ և Մարկօն կարող էր նրանից ճիշտ տեղեկութիւններ իմանալ։ Նրա ասածներից տեսաւ, որ բժշկապետը ամբաստանութեան սարսափելի սխալմունքի զոհ էր դարձած, նմանապէս և այն, որ Կրալիչն ազատուել էր նրա ճանկերից։ Մարկօն անպատմելի կերպով ուրախացաւ։

—Գլուխս կը տամ, եթէ բժշկապետը անմեղ չէ այդ գործում,—դարձաւ նա օնբաշուն։

—Տա՛յ Աստուած, թէպէտ չգիտեմ, թէ կը կարողանա՞յ արդարանալ,—ասաց օնբաշին:

—Այո՛, այո՛, միայն թէ մինչև այն ժամանակ չչարչարեն խեղճին: Բէյը ե՞րբ կոնակ կը գնայ:

—Մի ժամ յետոյ. նա միշտ շուտ է գնում:

—Դուք պէտք է բաց թողէք բժշկապետին, ես կը լինիմ նրա երաշխաւորը. դրա համար ես դրաւ կը դնեմ տունս և որդիքս,—նա անմեղ է:

Օնբաշին զարմացած նայեց հաջի Մարկոյին:

—Երաշխաւորութեան կարիք չկայ,—ասաց նա.—Նրան արդէն տարել են:

—Ե՞րբ, ո՞ւր,—գոչեց Մարկոն:

—Գիշերը մենք նրան ոստիկաններով Կարլովօ ուղարկեցինք:

Մարկոն սաստիկ զայրացաւ և այս բանը Թուրքի ուշադրութիւնից չխուսափեց: Օնբաշին, որն յարգում էր նրան, բարեկամաբար, բայց ազդու կերպով ասաց.

—Ձորբաջի Մարկո՛, աւելի լաւ կ'անէր, որ այս մութ գործի մէջ չխառնուէր: Ձե՞զ ինչ: Այս ժամանակները, գիտէ՞ք, չափազանց լաւ է հեռու մնալ բոլորից, ո՛չ ոքի հետ ծանօթ չլինել:—Եւ վերջացնելով իւր սուրճը, օնբաշին աւելացրեց:—Կէս ժամ յետոյ ես էլ եմ գնում Կարլովօ, բէյի նամակը և բժշկապետի խառնակիչ թղթերն եմ տանում: Եթէ ուզում ես իմանալ, այս թղթերը շատ կարևոր թղթեր են և հէնց սրանք պիտի լինին նրա կորստեան պատճառը... որովհետև միւսը, Օսմանի վիրաւորուելը... Այստեղ մենք սխալուած ենք եղել,

վերքից երևաց... սակայն իշխանութիւնն այնտեղ ամեն բան կը քննէ... Գանկո՛, մի կտոր անպէտք թուղթ չկա՞յ, տուր խնդրեմ բէյի նամակը փաթաթելու համար, որ չկեղտոտուի:

Եւ ծոցից կարմիր դմուռսով կնքուած մի մեծ ծրար հանելով, օնբաշին զգուշութեամբ փաթաթեց ղայվճու տուած թղթի մէջ: Մի պապիրոս էլ ծխելուց յետոյ, ոստիկանը մնաս բարև ասաց Մարկոյին և սրճատնից դուրս եկաւ:

Մարկոն մտածմունքի մէջ ընկղմուած, դեռ նստած էր իւր տեղում: Ղայվճին մէջքը նրան արած սպասում էր Պեակա Բազունեակի գլուխը ածիլելու համար: Վերջապէս Մարկոն վեր կացաւ և շտապով տան ճանապարհը բռնեց:

—Բարով երթաք, բա՛յ Մարկո: Ինչո՞ւ էք այդպէս շուտ գնում,—գոչեց նրա յետևից սափրիչը, Բազունեակի գլուխը սապոնի մէջ կորցնելով.—կամ, ո՞վ գիտէ, գուցէ գնում էք բժշկապետի համար մի բան անելո՞ւ: Ով որ խաշին եփել է, թող նա էլ խպշտի: Ինչո՞ւ բէյը չի գալիս Պեակա Բազունեակին ձերբակալելու: Հը՞, Բազունեա՛կ, ինչպէս ես կարծում:

Գլուխը մի բան մրթմրթաց փրփուրի տակից, բայց ոչինչ չհասկացուեց: Սափրիչը լուաց, յետոյ սրբեց Բազունեակի երեսն ու գլուխը մի երեսսրբիչով, որի մաքրութիւնը կասկածելի էր, և ճեղքուած հայելին տալով նրան, ասաց—«առողջութիւն» և դուրս գնաց կեղտոտ ջուրը թափելու: Շէմքում նա դէմ դիպաւ բայ Մարկոյին:

—Ծխախոտս տուփն այստեղ եմ թողել,—ասաց Մարկօն, նստարանին մօտենալով, որտեղ գտնւում էր նրա տուփը: Բաղունեակն այդ ժամանակ իւր վճարը դրեց հայելու վրայ և հեռացաւ: Գանկօն ներս մտաւ:

—Գանկօ, քանի ժամանակ ունիս, հաշիւդ տուր և փողերդ ստացի՛ր: Դու լաւ գիտես, որ ես սիրում եմ ամսի վերջին պարտքերս վճարել:

Գանկօն մատով ցոյց տուեց առաստաղը, որտեղ կաւիճով բազմաթիւ գծեր էին քաշուած:

—Ահա իմ առևտրական գիրքս, հաշուի՛ր և վճարի՛ր:

—Բայց այստեղ անունս նշանակուած չէ:

—Դա աւելորդ բան է, առանց դրան էլ շատ պարզ է:

—Այդպիսի հաշուապահութեամբ դու շուտով ստիպուած կը լինիս փակել խանութդ: Էհէ՜, էն կողմ նայի՛ր, նա նամակը մոռացել է,—ասաց նա, ցոյց տալով նստարաններից մէկի վրայ:

—Ա՜խ, օնբաշու նամակն է...—Բացագանչեց շուարած Գանկօն, հարցական դէմքով նայելով Մարկօին, կարծես նրա կարծիքն ուզում էր իմանալ:

—Ուղարկի՛ր դա, շուտով հասցրու նրան,—ասաց Մարկօն, յօնքերը կիտելով:—Ստացի՛ր 28 գրօշ և մի բուպ [15]). քանդեց ինձ այս դայվէճին:—Գանկօն մոլորուած շուրջը նայեց և շշնջեց. «Զարմանալի մարդ է այս բայ Մարկօն. իւր տունն ու որդոցը դրաւ է դնում արջ խաղացնողի համար, իսկ չի ուզում նամակը կրակը ձգել,—մի ակնթար-

թում ամեն ինչ կը վերջանայ»: Բայց այդ ժամանակ նոր այցելուներ ներս մտան և շուտով սրճարանը լցուեց ծխի ամպերով և անվերջ խօսակցութիւններով—բժշկապետին պատահած դժբաղդութեան մասին:

Է.

ԿՐԱԼԻՋԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Արեգակն արդէն բաւական բարձրացել էր և իր ճառագայթները ձգել վանքի գաւթում բուսած խաղողի տերևների վրայ: Այս գաւիթը, որն այնքան դաժան ու նսեմ էր երևում գիշեր ժամանակ, երբ բոլոր առարկաներն ուրուականների ձև են ընդունում, այժմ ներկայացնում էր մի ուրախ և քաղցրահամբոյր տեսարան: Մինչև անգամ մթին պատշգամբներն կոպիտ խցերի հետ այժմ աւելի ուրախ և սիրալիր կերպով էին նայում. ամեն կողմից լսւում էր ծիծեռնակների ծլվլոցը, որոնք այդտեղ հիւսել էին իրենց բները:

Գաւթում, միմեանց փաթաթուած խաղողի որթերի տակ ճեմում էր մութ-սրճագոյն պատմուճան հագած, բաց գլխով և սպիտակ, մինչև գօտիկը հասած ալէնման մօրուքով մի վսեմ ծերունի: Սա 95-ամեայ հայր Երոթէյն էր, անցեալ դարի փառահեղ բեկորը, որն այժմ համարեա աւերակ էր դարձած, բայց հզօր և պատկառելի: Նա իւր երկարատև կեանքի վերջին օրերը խաղաղ ապրում

էր Սպիտակ-Եկեղեցու [16]) վանքում։ Ամէն առաւօտ նա զբօսանքներ էր կատարում այստեղ՝ լեռնային թարմ օդ ծծելով, և երեխայի նման ուրախանում արեգակին և երկնքին նայելիս, որոնց ճանապարհի վրայ էր գտնւում ինքը։

Նրանից ոչ հեռու, որպէս անցեալի այս յիշատակարանի մի իսկական հակապատկեր, գիրքը ձեռքին կանգնած էր Վիկենտի սարկաւագը (նա պատրաստւում էր ռուսաց ճեմարաններից մէկը մտնելու և սովորում էր ռուսաց լեզուն)։ Երիտասարդութեան և յուսոյ հուր էր փչում սարկաւագի պատանեկական դէմքից. կրակ և կեանք էին փայլում նրա խոհուն աչքերում։ Այս երիտասարդն ամբողջովին յափշտակուած էր ապագայով և սպասում էր դրան նոյն անդարձ յուսով, որով ծերունին նայում էր յաւիտենականութեան վրայ։

Միայն վանական փակուած անդորր կեանքը կարող էր ստեղծել երկու, միմեանցից այս աստիճան տարբեր բնաւորութիւններ։

Եկեղեցու քարեայ աստիճանների վրայ նստած էր գնդաձև հայր Գեղէոնը և յափշտակուած դիտում էր շուրջը։ Կրօնասիրական խորհրդածութիւնների մէջ խորասուզուած, հայր Գեղէոնը հանդարտ սպասում էր ճաշին, որի քաղցրութեան համը առել էր, խոհանոցից բուրող անուշ հոտը կուլ տալով։

Խոհանոցի շէմքում, արեգակի տակ, կանգնած էր վանքի շէկ յիմարը, Մունչօի ընկերը։ Նա էլ ոչ պակաս փիլիսոփայական խորամտութեամբ

դիտում էր հնդկահաւերի ընտանեկան կեանքը. սակայն աւելի ճիշտն ասած, դիտում էր ամբողջ հորիզոնը, որովհետև նրա մի աչքը նայում էր դէպի արեւմուտք, իսկ միւսը—արեւելք։

Նրա մօտ կանգնած էր Մունչօն և ձեռքերը օրօրելով ու գլուխը պտտելով վախեցած նայում էր դէպի վերին յարկը։

Ինչո՞ւ։ Միայն ինքը գիտէր այդ։

Յանկարծ իւր ձին հեծած գաւիթ մտաւ վանահայրը և սանձը շէկ յիմարին տալով, յօնքերը կիտած դարձաւ Վիկենտիին.

—Քաղաքից եմ գալիս և վատ լուրեր եմ բերում։—Եւ վանահայրը պատմեց բժշկապետ Սոկոլովին պատահած դժբաղդութեան բոլոր մանրամասնութիւնները։—Խեղճ Սոկոլով, խեղճ Սոկոլով, —վերջացրեց նա հառաչելով։

Վանահայր Նաթանաէլը խոշոր, ուժեղ, քաջարի դէմքով և թեթևաշարժ մի տղամարդ էր։ Եթէ հանելու լինէր վարդապետական վերարկուն, նրա մէջ վարդապետութեան յարմար շատ քիչ բան կը մնար։ Նրա խցի պատերից կախուած էին բազմաթիւ հրացաններ, ինքն ամենաճարպիկ հրացանաձիգ էր, գիտէր բժշկել, յաջող կերպով հրացանի գնդակով վէրքեր բանալ և քաջարար հայհոյել։ Նա, փոխանակ բալկաններում զօրապետ դառնալու, պատահմամբ վանահայր էր դարձել։ Սակայն ասում էին, թէ նա առաջ զօրապետ էր եղած, իսկ այժմ վանքում ապաշխարում է մեղքերը։

—Ո՞ւր է հայր Գեղէոնը,—հարցրեց վանահայրը շուրջը նայելով։

—Անա՛ ես,—ձայն տուեց հայր Գեղէոնը, դուրս թռչելով խոհանոցից։

Նա գնացել էր այնտեղ տեսնելու, թէ վերջապէս շո՞ւտ կը հասնէր ճաշը։

—Դու դարձեա՞լ խոհանոցն ես մտել, հայր Գեղէոն. չգիտե՞ս, որ որովայնամոլութիւնը մահացու մեղք է։

Եւ վանահայրը հրամայեց նրան բեռնաւորել աւանակը և գնալ Վոյնեակովօ գիւղը վանքի մարգագետնում աշխատող հնձուորներից տեղեկութիւն բերելու։

Հայր Գեղէոնը մի գեր, կլոր և փայլուն դէմքով վարդապետ էր, կարծես իւղոտած տիկ լինէր։ Մինչև խոհանոցն արած կարճատև ճանապարհորդութիւնը նրա ճարպոտ դէմքը ծածկել էր առատ քրտինքով։

—Հա՛յր,—աղերսալի կերպով և շնչասպառ խօսեց նա, իւր կարճ թևերը դասաւորելով կլորիկ փորի վրայ, որն ամենևին կամք չունէր ճանապարհորդելու մեղսալից աշխարհում,—հա՛յր, արդեօք թոյլ չէ՞ք տալ, որ ձեր խոնարհ եղբօրից անցնէր այդ դառն բաժակը։—Եւ նա խոնարհութեամբ գլուխ տուեց։

—Ի՞նչ դառն բաժակ. մի՞թէ ես քեզ ոտքով եմ ուղարկում. դու կը հեծնես աւանակը և քո ծանր գործն այն կը լինի, որ գիւղերով անցկենա-

լիս մի ձեռքով սանձը պէտք է բռնես, իսկ միւսով—խաչակնքես։

Եւ վանահայրը զուարճամիտ հայեացքով չափեց նրան ոտքից մինչև գլուխ։

—Հա՛յր Նաթանաէլ, գործի ծանրութեան մասին չէ խօսքս. էլ ինչո՞ւ ենք այս սուրբ վայրում ապրում, եթէ ոչ աշխատանքների և շրջագայ կեանքի համար... ժամանակը վա՛տ է...

—Մի՞թէ այժմ վատ ժամանակ է։ Քո առողջութեան համար շատ օգտակար է շրջագայութիւններ անել մայիս ամսին։

—Ժամանակնե՜րը, հա՛յր, ժամանակները...—շտապով ընդհատեց նրան հայր Գեղէոնը։—Տեսէք, բժշկապետին արդէն կապել են և գուցէ մի քրիստոնեայ հոգի կորստեան մատնուեց։ Հազարացի ցեղը անողորմ է.. Աստուած ազատէ, կը կասկածեն և կը մեղադրեն, թէ ես խռովութիւն եմ սերմանում ժողովրդի մէջ. այն ժամանակ վանքն էլ կը տուժէ... վտանգը մեծ է։

Վանահայրը քրքիջ բարձրացրեց, կողերը բռնելով և հայր Գեղէոնի գնդաձև մարմնին նայելով։

—Մի՞թէ թուրքերը քեզ վրայ կը կասկածեն... Հայր Գեղէոնը—քաղաքական ագիտատոր... Հա՛, հա՛, հա՛։ Ի զուր չեն ասում, «թէ ստիպիր ծոյլին աշխատել, որ նա քեզ խելք սովորեցնի»։ Մեղք քո հոգուն, բաւական ծիծաղեցրիր, այն ինչ ամենևին տրամադրութիւն չկար ծիծաղելու։ Վիկենտի սարկաւագ, Վիկենտի սարկաւագ, արի՛, տես ինչ է ասում Գեղէոնը... Մունչօ, կանչիր Վիկենտիին։

Հրամանը լսելով, Մունչօն, որի բներից դուրս եկած աչքերի մէջ կարդացւում էր չիմար, անասնային երկիւղ, աւելի զարհուրելի կերպով սկսեց գլուխը պտտել:

—Ռուս-սի-ացին... — ղողղողալով կանչեց նա և ցոյց տալով պատշգամբը, ուր գնացել էր սարկաւագը, շտապով հակառակ կողմը փախաւ:

—Ռուսիացի՞ն. այդ ի՞նչ ռուսիացի է:

—Ուրուական է, արժանապատիւ հա՛յր— խորհրդաւոր կերպով խօսեց հայր Գեդէոնը:

—Վաղո՞ւց է, որ Մունչօն այսպէս փախկոտ է դարձել. նա մինչև այժմ բուի նման աւերակների մէջ էր ապրում:

—Յիրաւի, հա՛յր Նաթանայէլ, գիշերային ոգի է շրջում պատշգամբների վրայ: Այս գիշեր Մունչօն կիսամեռ եղած իմ սենեակս ընկաւ—նա մի սպիտակ հագստով ուրուական էր տեսել, որը դուրս է եկած եղել ապակեայ խցից... Նա ինձ ուրիշ բաներ էլ պատմեց, բայց նրան միայն Տէրը կը հասկանայ: Հարկաւոր է օրհնած ջուր սրսկել վերին պատշգամբում:

Մունչօն հեռու կանգնելով, աչքերը նորից յառեց դէպի վերին պատշգամբը:

—Բայց ի՞նչ է տեսել նա այնտեղ: Հայր, գնանք պտտենք բոլոր տեղերը, —ասաց վանահայրը, կարծելով որ այնտեղ գողեր մտած կը լինին:

—Աստուա՛ծ ազատէ,—պատասխանեց Գեդէոնը յետույետ քաշուելով և խաչակնքելով: Վանահայրը ձեռքը թափահարեց և ինքը դիմեց դէպի հեռու պատշգամբը:

Վիկենտի սարկաւագը հէնց-որ վանահօրից լսեց Սոկոլովի գործի պատմութիւնը, աննկատելի կերպով հեռացաւ և գնաց Կրալիչի մօտ:

—Ի՞նչ կայ, հա՛յր սարկաւագ,—նրա այլայլուած դէմքը տեսնելով, հարցրեց Կրալիչը:

—Վտանգաւոր ոչինչ չկայ,—շտապեց հանգստացնել նրան սարկաւագը:—Վանահայրը քաղաքից վատ լուր է բերել: Այս գիշեր Սոկոլովին բռնել և Կարլովո են տարել:

—Ո՞վ է այդ Սոկոլովը:

—Բժշկապետը, մեր քաղաքի ամենալաւ երիտասարդն է: Նրա վերարկուի գրպանում, ասում են, յեղափոխական հրատարակութիւններ են գտել: Ես գիտեմ—կատաղի հայրենասէրներից է: Երբ գիշերը պահապանների խումբն ընկել է նրա յետևից, նա ատրճանակ է արձակել և վիրաւորել այն ոստիկանին, որը հասած է եղել նրան և խլել է վերարկուն: Կորա՜ծ է խեղճ բժշկապետը: Փառք Աստուծոյ, որ դուք ազատուել էք: Ձեր մասին երևում է, որ քաղաքում ոչինչ յայտնի չէ, որովհետև ոչ մի խօսք չի լսւում:

Պատմութիւնն աւարտելով, սարկաւագը զարմացած նկատեց, որ Կրալիչը գլուխը ձեռքերի մէջ առած, խելագարի նման վազվզում է սենեակի մէջ:

Անսահման յուսահատութեան այս նշանները տեսնելով, սարկաւագը սարսափահար կանգնած չգիտէր թէ ինչ անէր:

—Ի՞նչ պատահեց քեզ, հոգի՛ս, ի՞նչ։ Փառք Աստուծոյ, ոչինչ չկայ,—ասում էր մոլորուած սարկաւագը։

Կրալիչը, որի դէմքը ներքին ցաւից սոսկալի արտայայտութիւն էր ստացել, կանգնեց նրա հանդէպ և համարեա կատաղութեամբ գոչեց.

—Ոչինչ չկա՞յ, ոչինչ չկա՞յ, հա՞... Հեշտ է ասել,—և նա սաստկութեամբ խփեց իւր ճակատին։ Մի՞թէ դու չհասկացար, թէ գործն ինչումն է։ Ա՜խ, Աստուած իմ։ Ես մոռացել էի քեզ ասել, որ այդ անիծուած վերարկուն իմ հագին էր։ Երեկ երեկոյեան, քաղաքի ծայրում մի բարեխիղճ երիտասարդ, որը և ցոյց տուեց ինձ բայ Մարկօյի տունը, ինձ նուիրեց իւր վերարկուն, որովհետև ես համարեա մերկ էի. իսկ յետոյ այդ վերարկուն մնաց ոստիկանի ձեռքում։ Ճանապարհին իմ բաճկոնիս պատառոտուած գրպանից վերարկուի գրպանը գրեցի «Անկախութեան» համարը և մի յայտարարութիւն, որը ինձ տուել էին Տրնեանի գիւղերից մէկում, որտեղ ես գիշերեցի։ Դա դեռ քի՜չ է. նրան դեռ ամբաստանում են, թէ իբր վիրաւորել է ոստիկանին, այն ինչ ես ձեռք անգամ չեմ տուել ատրճանակիս։ Ո՜հ, անիծուածնե՛ր։ Հասկանո՞ւմ ես այժմ,—այդ մարդը զոհուել է իմ փոխարէն... Ո՛չ, երևի իմ բաղդն անիծուած է և ես դատապարտուած եմ Թշուառութիւն բերել այն մարդկանց գլխին, որոնք ինձ բարերարութիւն են արել։

—Սարսափելի դժբաղդութի՜ւն,—վշտահար կերպով մրմնջաց Վիկենտին։—Աւելի ես ցաւալի

է այն պատճառով, որ նրան ոչնչով օգնել չի կարելի... Հանգամանքներն այնպէս են բարդուել...

Կրալիչը բորբոքուած դէմքով դարձաւ նրան.

—Ի՞նչպէս թէ չի կարելի օգնել։ Մի՞թէ ես թոյլ կը տամ, որ այդպիսի մի մարդ, և ինչպէս դու ասում ես, մի լաւ հայրենասէր իմ փոխարէն կորստեան մատնուի։ Դա արդարութի՞ւն կը լինի։

Սարկաւագը զարմացած նայում էր նրան։

—Ո՛չ, ես կազատեմ նրան, թէկուզ գլխիցս էլ զրկուելու լինիմ։

—Ի՞նչ կարելի է անել, ասա՛, ամեն բանի պատրաստ եմ,—բացագանչեց Վիկենտին։

—Ես ինքս կազատեմ նրան։

—Դո՞ւ։

—Այո՛, ե՛ս, ե՛ս կազատեմ նրան, միայն ե՛ս կարող եմ և պարտաւոր եմ ազատել նրան,—կատաղաբար գոչում էր Կրալիչը, արագ-արագ քայլելով խցի մէջ՝ անզրդուելի վճռականութեան արտայայտութիւնը դէմքին։

—Դու մտադիր ես բանտի վրա՞յ յարձակուել, հարցրեց Վիկենտին զարմացած, կամ աւելի լաւ ասած—սարսափած կերպով։ Նրա մէջ միտք ծագեց—չլինի՞ Կրալիչը խելքը կորցրել է։

—Պարո՛ն Կրալիչ, ինչպէս ես մտադիր ազատել բժշկապետին,—հարցրեց նա։

—Մի՞թէ դու ինքդ չես հասկանում։ Կը գնամ և ինքս ինձ կը մատնեմ ժանդարմների ձեռքը։

—Ինչպէ՞ս... Մատնուե՞լ... Ի՞նքդ...

—Կամ դուցէ դու կարծում ես, թէ ես ուրիշի՞ն կը խնդրեմ այդ անելու... Լսիր, հայր Վիկենտի. ես ազնիւ մարդ եմ և չեմ ուզում կեանքս մարդկային տանջանքների գնով գնել: Ես նրա համա՞ր վեցհարիւր ժամուայ ճանապարհ կտրեցի, որ ցածութիւն անեմ: Եթէ անկարող եմ փառքով զոհել կեանքս, գոնէ պատուաւոր կերպով կարող եմ այդ անել: Հասկացա՞ր այժմ: Ես հէնց այսօր կը կանգնեմ թուրք իշխանաւորների առաջ և կասեմ. «այդ մարդն անմեղ է, ես նրա հետ ոչ մի յարաբերութիւն չեմ ունեցել, վերարկուն ինձանից են խլել, թերթերն իմն են, ես եմ յանցաւորը. մինչև անգամ, եթէ ձեզ հաճելի է, ես եմ ժանդարմին վիրաւորողը: Ինչ ուզում էք, արէ՛ք ինձ»: Այսպէս բժշկապետ Սոկոլովը կորած է, ի նկատի առնելով մանաւանդ այն, որ նա չի ցանկանում կամ չի կարող արդարանալ: Մի՞թէ մի ուրիշ միջոց կայ, ասա:

Սրկաւագը լուռ էր: Իր հոգու խորքերում նա խոստովանում էր, որ Կրալիչն իրաւացի էր ասում: Նրան դէպի ինքնազոհութիւն դրդողը պատուի և ճշմարտութեան զգացմունքն էր: Վիկենտիի աչքում Կրալիչն այժմ աւելի բարձր, աւելի գրաւիչ էր երևում: Նրա դէմքին փայլում էր այն ազնիւ և մեղմ լոյսը, որը միմիայն արժանավայել քաջութիւնը կարող է առաջ բերել: Կրալիչի ճըշմարիտ, համարձակ, զգացուած խօսքերը հաճելի և հանդիսաւոր կերպով տպաւորուեցին Վիկենտիի հոգու մէջ: Նա ցանկանում էր Կրալիչի տեղը լինել, ցանկանում էր անել այն, ինչ որ Կրալիչն էր

մտածում անել: Արտասուքները ծածկեցին նրա աչքերը:

—Ցոյց տուր ինձ Կարլովոի ճանապարհը,— դարձաւ Կրալիչը Վիկենտիին: Բայց այդ ժամանակ անսպասելի կերպով լուսամուտի մէջ երևաց վանահօր թաւամազ գլուխը. սաստիկ զբաղուած լինելով տաք խօսակցութեամբ, նրանք չէին լսել հայր Նաթանայէլի քայլերի ձայնը: Կրալիչը շփոթուեց և հարցական դէմքով նայեց սարկաւագին:

Սարկաւագն շտապով դուրս թռաւ բակը, վանահօրը տարաւ դէպի պատշգամբի ճաղերը և երկար ժամանակ՝ յուզուած, ձեռքերի սաստիկ շարժումներով խօսում էր նրա հետ, սակայն հայեացքներ ձգելով դէպի այն խուցը, որտեղ անհամբերութեամբ սպասում էր Կրալիչը: Երբ դուռը նորից բացուեց և խուցն մտան սարկաւագն ու հայր Նաթանայէլը, Կրալիչը մօտեցաւ նրա աջը համբուրելու:

—Կա՛ց: Ես արժանի չեմ, որ դու համբուրես իմ ձեռքը,— արտասուքն աչքերին բացագանչեց վանահայրը և իր ձեռքերի մէջ առնելով Կրալիչի գլուխը, ջերմագին կերպով համբուրեց նրա շրթունքները, որպէս երկար անջատումից յետոյ հայրը փարում է իր որդուն:

Ը.

ՉՈՐԲԱՋԻ ԻՒՐԴԱՆԻ ՏԱՆԸ

—

Տան մեծ սօնախմբութեան առթիւ, չորբաջի Իւրդանի մօտ առաւօտից հիւրեր էին հաւաքուել— նրա բոլոր ազգականները և բարեկամները։

Իւրդան Դիմանդիեւ, որ տարիքն առած, ցաւագար և մաղձոտ մի մարդ էր, այն տեսակ չորբաջիներից էր, որոնք այդ անունը զզուելի են դարձրել ժողովրդի աչքում։ Նրա հարստութիւնն օրէցօր աճում էր, բազմանդամ ընտանիքը երջանիկ կեանք էր վարում և նրա խօսքերը կշիռ ունէին. բայց ո՛չ ոք նրան չէր սիրում։ Իւրդանի հին անիրաւութիւններն ու ձգտումները, նրա մօտ-բարեկամութիւնը Թուրքերի հետ—այդ մարդուն ատելի են արել մինչև այժմ, երբ նա արդէն վատութիւն չէր անում և չէր էլ կարող անել։ Նա անցեալի մարդ էր... Միակ չարիքը, որ նա դեռ թոյլ էր տալիս իրեն գործելու—ուսուցիչներին հալածելն էր, որոնք նրան պատահելիս գլուխ չէին տալիս։ «Գայլը փոխում է մազը և ո՛չ ատամները», ասում է առածը։

Սակայն չնայած Իւրդանի մաղձոտութեանը, սօնախմբութեան ճաշն ուրախ էր անցնում։ Գինկան—նրա դեռ գեղեցկադէմ, կամակոր, լեզուանի պսակուած աղջիկը—որն առիթ եղած ժամանակ ծեծում էր իր հնազանդ ամուսնուն, զբաղեցնում էր հիւրերին կատակներով ու սրախօսութիւննե-

րով, որոնք անընդհատ տեղում էին նրա անխօնջ բերանից։ Ամենից շատ ծիծաղում էին երեք կոյսերը։ Նրանցից մէկը—հաջի Րովոաման—Իւրդանի քոյրը—այս կաղ չարահոգին և բամբասասէրը, օգնում էր իր եղբօրաղջկան և ժամանակ առ ժամանակ կծու սրախօսութիւններ էր անում բացակաների հասցէին։ Հաջի Սմիոնը, տանտիրոջ փեսան, բացի ծիծաղելուց, ուրիշ ոչինչ չէր անում. հաջի Պավելը, խնամին, որը նոյնպէս խառնուում էր ընդհանուր խօսակցութեան և ծիծաղին, անուշադրութիւնից իւր դրացու—Միխալակի Ալաֆրանկայի—պատառաքաղն էր գործածում. հարևանը այդ անհոգ վարմունքից իրեն վիրաւորուած էր համարում և փքուած նայում էր իւր շուրջը։ Միխալակին ամենայն իրաւամբ կրում էր «Ալաֆրանկա» մականունը. նա առաջինն էր, որ երեսուն տարի առաջ հագել էր եւրոպական անդրավարտիք և իւր քաղաքում առաջին անգամ արտասանել էր ֆրանսերէն խօսքեր։ Նրա վերարկուի ձևը Ղրիմի պատերազմի ժամանակից փոփոխութեան չէր ենթարկուել, իսկ ֆրանսերէն բառարանի մէջ նոր խօսք չէր մուտ գործել։ Այնուամենայնիւ, գիտնականի փառքը փաղաքշական մականուան հետ միասին երբեք չզարձրին նրանից, և Միխալակին չափազանց հպարտանում էր դրարով—նա ծանր էր պահում իրեն, խօսում էր դանդաղ և ոչ ոքի թոյլ չէր տալիս «բայ Միխալ» ասել իրեն, որովհետև մի Միխալ անունով ոստիկան էլ կար, որի հետ նա ամենևին չէր ուզում խառնուել։

Սլաֆրանկայի գէմուգէմը նստած էր Դամեան Գրիգորը, որ 50 տարեկան, երկար գէմքով չոր ու ցամաք, սեւ, սատանայական-խորամանկ հայեացքով, բայց լուրջ գէմքով մի մարդ էր. Նրան նաեւ քաղաքագէտ էին համարում, սակայն նա Սլաֆրանկայի կատարեալ հակապատկերն էր. այս շատախօս, անխոնջ պատմաբանը ունէր նուրբ, խորին խելք եւ երեւակայութիւն—հարուստ, որպէս «Հազար ու մի գիշերների» Հալիֆի գանձարանը. Նա ընդունակ էր մի կաթիլ ջրից ծով կազմել, մի հատիկից—լեառ, իսկ եթէ հատիկ էլ չլինէր, առանց դրան էլ եօլայ կը գնար: Գլխաւորն այն էր, որ նա իր վրայ վստահ էր,—միակ միջոցը ուրիշներին էլ հաւատ ներշնչելու: Այս բոլոր յատկութիւնների հետ միասին նա քաղաքի առաջնակարգ վաճառականներից էր եւ պատրաստ էր իւրաքանչիւր մարդու օգտաւէտ խորհուրդ տալ:

Ֆինկայի ամուսինը հանդարտ կերպով, աչքերը պնակից առանց բարձրացնելու, ուտում էր. ամէն անգամ, հէնց որ նա թոյլ էր տալիս իրեն մի բան ասելու կամ բարձրաձայն ծիծաղելու, կինը կատաղի հայեացքներ էր ձգում նրա վրայ, որոնք իսկոյն մեռցնում էին խեղճի բոլոր վստահութիւնը: Թոյլ բնաւորութեան տէր եւ անզօր լինելով, նա միշտ քաշւում էր: Նրա մօտ—խորհրդական Նիչօ Պիրոնկովը ժամանակ առ ժամանակ ինչ որ բան էր փսփսում տնկօղ հագնուած Կիրիակ Ստեֆչովի ականջին, որը ցոյց էր տալիս, թէ լսում է նրան. բայց իսկապէս սիրալիր հայեացքներ էր ձգում

Իւրդանի երկրորդ դստեր—Լալկայի վրայ: Այդ անուշադրութեան համար նա պատժուեց, որովհետեւ Նեչօի խելքին փչեց իր բաժակը նրանին խփել եւ կարմիր գինին թափեց Ստեֆչովի նոր անդրավարտիքի վրայ:

Այս երիտասարդը, որին մենք արդէն տեսանք բէյի մօտ եւ որը դեր պէտք է խաղայ մեր յետագայ պատմութեան մէջ, Դիամանդիեան ցեղի մի չորբաջու որդի էր: Նա սնուել էր փթած գաղափարներով եւ անմատչելի մնացել Բուլղարիայի փրկարար հոսանքի գաղափարներին: Գուցէ հէնց այդ պատճառով էլ Թուրքերի մօտ լաւ յարգ ունէր եւ այս բանը ստիպում էր միւս երիտասարդներին հեռու մնալ Ստեֆչովից, որը «Թուրքի ականջներ» մականունն էր ստացել: Դրան աւելի եւս նպաստում էր նրա հպարտ բնաւորութիւնը, քար սիրտն ու չար, նախանձոտ հոգին: Չնայած այս բանին, կամ աւելի ճիշտն ասած այդ բոլորի շնորհիւ նա չորբաջի Իւրդանի սիրելին էր, որը ոչ մի տեղ չէր թաքցնում իր համակրութիւնը եւ լաւ կարծիքը Ստեֆչովի մասին:

Այդ հիման վրայ քաղաքում—ճիշտ թէ սխալ—Ստեֆչովին Իւրդանի ապագայ փեսան էին համարում:

Երբ սեղանը վեր քաղեցին, մի բարձրահասակ, կարմրադէմ, ամբողջովին սեւ հագած աղջիկ սուրճ բերեց. Նրա վրայ ոչ ոք ուշադրութիւն չդարձրեց: Ճաշի ժամանակ սկսուած խօսակցութիւնները շարունակւում էին եւ ճաշից յետոյ,

շնորհիւ Գինկայի անսպառ շատախօսութեան: Շուտով խօսք բացուեց և օրուայ չարիքի—Սոկոլովի արկածի մասին: Այս նիւթն իսկոյն կենտրոնացրեց ընդհանուրի ուշադրութիւնը և նոր, հաճելի կենդանութիւն տուեց հաւաքուած խմբին:

—Ի՞նչ է անում այժմ բժշկուհին,—ծիծաղեց Սերաֆիմա տիրուհին—կոյսերից մէկը:

—Ի՞նչ բժշկուհի,—հարցրեց խնամին:

—Կլէօպատրա՛ն, մա՛յրիկ:

—Հարկաւոր է գնալ և խորհուրդ տալ նրան բժշկապետին նամակ գրելու. նա երևի իւր տիրուհու կարօտը քաշում է,—մէջ ընկաւ Գինկան:

—Միխայլակի՛,—դարձաւ խնամին Ալաֆրանկային.—սա ի՞նչ բառ է—«Կլէօպատրա»: Կունա տատը ոչ մի կերպ չի կարող այդ բառն արտասանել և ասում է «Կալեվրա» (կօշիկ):

—«Կլէօպատրա» հելլենական, այսինքն յունական բառ է. «Կլէօպատրա» նշանակում է «լալիս եմ որ և է մէկի վրայ»:

—«Լալիս եմ բժշկապետի վրայ» ուղղակի ասա՛,—ժպտաց հաջի Սմիոնը և առանց մի որ և է կարիքի սկսեց խառնել բաճկոնի գրպանները:

—Հա՛, մազին յարմար մականուն,—խօսեց տիրուհի Բոլոտման.—բայց կայ մի ուրիշը, որն աւելի շատ պէտք է լաց լինի նրա վրայ:—Եւ թեքուելով դէպի հաջի Սմիոնովայի և մի ուրիշ կնոջ կողմը, կամացուկ մի բան շշնջաց նրանց ականջին: Երեքն էլ խորամանկութեամբ ծիծաղեցին: Այս ծիծաղը միւսներին էլ վարակեց:

—Հերի՛ք խօսես, Գինկա՛: Մի՞թէ բէյի կինը...—զարմացաւ Մաչօն:

—Ո՛չինչ. գայլը գիրացածին էլ է ուտում,—պատասխանեց Գինկան: Նորից ընդհանուր ծիծաղ:

—Կիրիա՛կ, ի՞նչ թղթեր են գտել Սոկոլովի մօտ,—հարցրեց Իւրդանը, որն ի զուր աշխատում էր հասկանալ կանանց ծիծաղի պատճառը:

—Խռովարար—առաջին տողից սկսած մինչև վերջինը: Բէյը գիշերն ինձ կանչել էր թարգմանելու: Դրանց մէջ, բայ Իւրդանչօ, այնպիսի այլանդակ բաներ, այնպիսի պղտոր ջրեր կան, որոնք կարող են միայն դատարկագլուխների խելքից դուրս գալ: Դա դարձեալ Բուխարեստի մասնաժողովի յայտարարութիւնն է, որով հրաւիրում է մեզ ամեն ինչ հող ու մոխիր դարձնել, միայն թէ ազատուել:

—Մեռնենք բոլորս, միայն ազատուենք,—հեգնօրէն մէջ բերեց Նիչօ Պերօնկովը:

—Այդ թափառաշրջիկները այրում, հող ու մոխիր են դարձնում ամեն ինչ, բայց ո՞ւմը—օտարինը: Նրանք մի ցից, մի դատարկ սրահ էլ չունին, ի հարկէ, իրենց համար լաւ է: Հող ու մոխի՛ր—հեշտ բան է, անպիտանների անպիտան,—բարկացած ասաց չորբաջի Իւրդանը:

Իսկական աւազակներ են,—մէջ ընկաւ և հաջի Սմիոնը:

—Եթէ նրանք ցանկանում են ամեն ինչ այրել, ուրեմն վանքերն է՞լ կայրեն,—հարցրեց կոյս Սերաֆիման:

—Երկնային կրա՛կը թո՛ղ այրէ նրանց,—բարկացած մրթմրթաց հաջի Րովոաման:

—Երևակայեցէք,—նորից մէջ ընկաւ Սաեֆչովը.—մի՞թէ դա մի սոսկալի անառակութիւն է—տարածել այսպիսի այլանդակ մտքեր: Դա փչացնում է մեր երիտասարդութիւնը, նրան անզգամութիւն է սովորեցնում կամ տանում դէպի կախաղան: Ահա՛ Սոկոլովը ձեզ օրինակ: Մի՞թէ ափսոս չէր նրան...

—Այո՛, շատ ափսոս,—ընդմիջեց հաջի Սմիոնը: Խօսեց նաև Ալաֆրանկան.

—Դեռ երէկ, բժշկապետի հետ իմ ունեցած խօսակցութիւնից ես արդէն տեսայ, թէ ինչ Աստուած է պաշտում նա. նա գանգատւում էր, որ մենք Լիւբոբրատիչներ [17] չունենք:

—Իսկ դու նրան ի՞նչ պատասխանեցիր:

—Պատասխանեցի, թէ՝ եթէ չկան Լիւբոբրատիչներ, կայ կախաղան:

—Սքանչելի՜ պատասխան,—գոչեց տանտէրը:

—Ասացէք խնդրեմ, այդ ի՞նչ Լիւբոբրատիչներ են,—հարցրեց հետաքրքիր խնամին:—Գինկօ Գինկինը, որը կանոնաւոր կերպով կարդում էր «Իրաւունք» լրագիրը և քաղաքականութեան au courant էր, բաց արաւ բերանը պատասխանելու, բայց կինն իսկոյն մի հայեացքով արգելեց նրան. և նրա փոխարէն ինքը պատասխանեց.

—Զօրապետ է Հերցեգովինայում, Դանա՛ տատի: Հա՛, եթէ մենք էլ գոնէ մի Լիւբոբրատիչ ու-

նենայինք, առաջինը ես կը կանգնէի նրա դրօշակների տակ և հայդո՛ւ կազմը չարդելու:

—Եթէ մենք Լիւբոբրատիչ ունենայինք,—ուրիշ բան է... Այն ժամանակ ես էլ նրա զօրքերի շարքը կը մտնէի,—ասաց հաջի Սմիոնը:

Իւրդանը խստութեամբ նայեց նրանց:

—Այդպիսի բաներ, Գինա՛, կատակով անգամ չպիտի խօսուին, իսկ դու՛, հաջի՛, դատարկ-դատարկ գլխիցդ դուրս ես տալիս:—Եւ դառնալով դէպի Ալաֆրանկան, հարցրեց.—Ի՞նչպիսի պատժի կենթարկուի այժմ բժշկապետը:

—Համաձայն օրինաց,—նրա փոխարէն պատասխանեց Սաեֆչովը,—կայսերական մարդու կեանքի վրայ սպանութեան փորձ անողին սպասում է կամ մահ, կամ ցմահ բանտարկութիւն Դիարբէքիրում:

Եւ նա յաղթական կերպով նայեց բոլորին, ցանկանալով տեսնել իւր ձեռքերի ազդեցութիւնը:

Գինկան այդ ժամանակ աչքերով որոնում էր իւր փոքրիկ քրոջը, Լալկային:

—Ո՞ւր է Լալկան, Րադա՛,—հարցրեց նա սեւագգեստ աղջկան:

—Գնա՛, կանչի՛ր նրան,—հրամայական կերպով դարձաւ Րադային Հաջի Րովոաման:

Լալկան, Սոկոլովի մասին Սաեֆչովի խօսքերը լսելով, որոնք այնպիսի սառնասրտութեամբ էին արտասանուել, կամացուկ դուրս եկաւ և թաքնուեց հեռաւոր սենեակներից մէկում. այստեղ նա ընկաւ բազմոցի վրայ և բարձրաձայն հեկեկաց: Արտա-

սուքների աղբիւրներ էին հոսում նրա աչքերից։ Շունչ քաշելու ոյժ չունենալով, խեղճ աղջիկը շատ լաց լինելուց միմիայն հեկեկում էր։ Տանջանքն ու կարեկցութիւնը գրաւել էին նրա սիրտը։ Այդ մարդիկ, որոնք այդպէս զզուելի կերպով ծաղրում էին բժշկապետին պատահած դժբաղդութիւնը, մինչև հոգու խորքը վրդովել էին նրան։

—Աստուա՜ծ իմ, Աստուա՜ծ իմ... Որքա՜ն անխիղճ են դրանք,—կրկնում էր նա։

Արտասուքները թեթևացնում են և անյուսալի վիշտը, իսկ բժշկապետի ճակատագիրը դեռ յայտնի չէր և դեռ յուսոյ մի փոքր նշոյլ կար, և Ղալկան բաւական լաց լինելուց յետոյ վերջապէս վեր կացաւ, սրբեց իւր գեղեցիկ սպիտակ երեսն ու նստեց լուսամուտի մօտ, որ արտասուքների հետքերը շուտով կորչէին։ Նա անփոյթ, ոչինչ չտեսնող հայեացքով նայում էր դէպի փողոց, որտեղից անցնում էին անտարբեր և անհոգ մարդիկ. այդ անգութ աշխարհն այլ ևս գոյութիւն չունէր նրա համար և նա չէր ուզում ոչ ոքի տեսնել. Նրան ամբողջովին գրաւել էր մի միտք...

Յանկարծ մի ձիու արագ ոտնաձայն նրան ուշքի բերեց։ Ղալկան նայեց և զարմանքից արձանացած մնաց իւր տեղում—բժշկապետ Սոկոլովը սպիտակ ձի հեծած տուն էր վերադառնում... Նա քաղաքավարութեամբ բարևեց օրիորդին և մօտով անց կացաւ։ Ղալկան չափազանց ուրախացած դրանից, մինչև անգամ նրա բարևին չպատասխանեց և

կարծես մի անըմբռնելի ոյժից մղուած վազեց ներս հիւրերի մօտ և յուզուած կերպով բղաւեց։

—Բժշկապետ Սոկոլովը վերադարձաւ։

Մեծամասնութեան դէմքին տհաճելի զարմանք դրոշմուեց։ Հաջի Բովսաման չարասրտութիւնից կրճտացրեց ատամները, իսկ Ստեփչովը գունաթափուեց և իբր թէ անփոյթ կերպով ասաց.

—Երևի նոր հարցափորձի համար են բերել։ Նրան հեշտ չէ Դիարբէքիրից կամ կախաղանից ազատուել։—Այդ ակնթարթում նրա աչքովն ընկաւ Բաղայի թափանցիկ հայեացքը, որը նրան սաստկութեամբ խայթեց և զայրոյթ առաջ բերեց դէմքի վրայ։

—Մի՛ ասիր, Կիրիա՛կ, գուցէ ազատուի խեղճը, ափսոս է նրա ջահելութեանը,—զգացուած կերպով ասաց Գինկան։ Նրա սկզբնական ծաղրը բժշկապետի վրայ լոկ լեզուի գործ էր և ոչ սրտի։ Լուսաւոր աննշան կայծը միշտ պատրաստ է բոցավառուիլ մարդկային հոգու մէջ՝ եթէ միայն նա այնտեղ գոյութիւն ունի։ Ի պատիւ հաջի Սմիոնի պէտք է ասել, որ նա էլ անկեղծօրէն ուրախացաւ բժշկապետի ազատուիլը լսելով, բայց չէր համարձակւում այդ բանը բարձրաձայն յայտնել Իւրդանի մօտ, ինչպէս այդ արաւ նրա երես առած աղջիկը—Գինկան։

Թ.

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

—

Տուն հասնելով, բժշկապետը ձին այնտեղ թողեց և դուրս եկաւ փողոց։ Շտապ անցնելով Գանկօի սրճատան մօտից, որտեղից շատերը շնորհաւորում էին նրա ազատութիւնը, իսկ բոլորից աւելի և եռանդագին ինքը—դայվէճին, Սոկոլովը քայլերն ուղղեց դէպի Մարկօի տունը։ Ճանապարհին նա պատահեց նաև Սաեֆչովին, որը Իւրդանի տանից էր դուրս գալիս։

Ա՜, ողջոյն ձեզ, պարո՛ն Թարգման,—կանչեց բժշկապետը արհամարհական ժպիտը դէմքին. բայց Սաեֆչովը նրան չնայեց անգամ։

Մարկօն, ճաշն արդէն վերջացրած լինելով, չինարի ծառերի տակ իւր փոքրիկ բազմոցի վրայ նստած սուրճ էր խմում։ Նա ցնծութեամբ ընդունեց բժշկապետին։ Ուրախ-ուրախ բարևելով բոլորին և շնորհակալութիւն յայտնելով շնորհաւորութեան համար, Սոկոլովն սկսեց.

—Մի ահագին պատմութիւն պէտք է անեմ քեզ, բա՛յ Մարկօ։

—Ի՞նչպէս պատահեց այդ բանը, հոգիս։

—Ես ինքս էլ եմ զարմանում... Այս բոլորն ինձ մի հէքիաթ է թւում, որին դժուարութեամբ կարելի է հաւատալ։ Հազիւ էի ձեր մօտից տուն վերադարձել, որ ինձ գիշերը բռնեցին և տարան կօնակ։ Դու, կարծում եմ, լսած կը լինիս, որ ինձ

ամբաստանում էին և հարցափորձի ենթարկեցին։ Ո՞վ կարող էր ենթադրել, որ իմ հին վերարկուն մի այդպիսի աղմուկ կը բարձրացնէ։ Ինձ բանտարկում են։ Կէս ժամ անցած—ինձ մօտ ներս են մտնում երկու ժանդարմ։ «Պատրաստուէ՛ք, բժշկապետ»։—«Ո՞ւր.—«Կարլովօ պէտք է գնաս, բէյի հրամանն է»։—Լա՛ւ. դուրս ենք գալիս, գնում ենք,—մի ժանդարմ առաջևից, միւսը՝ յետևից, երկուսն էլ հրացաններով։ Լուսաբացին Կարլովօ ենք հասնում։ Այստեղ էլ ինձ փակում են մի սենեակում, որովհետև շատ վաղ էր, դատարանը դեռ փակ էր։ Փակուած մնացի չորս ժամ, որոնք ինձ տարի թւացին։ Վերջապէս ինձ տանում են դատաւորի առաջ. այստեղ նրա հետ նստած էին միքանի խորհրդականներ և պատուաւոր քաղաքացիք։ Կարդում են մի ինչ որ արձանագրութիւն, որից ես բոլորովին ոչինչ չհասկացայ։ Եւ նորից հարցափորձ, նորից այն բոլոր յիմարութիւնները, միշտ նոյն չարաբաղդ վերարկուի մասին, որը այնտեղ էր։ Այնտեղ էլ կանաչ սեղանի մօտից խղճալի կերպով նայում են ինձ... Ղադին (դատաւոր) բաց արաւ մի ինչ որ ծրար, երևի մեր իշխանութեան—բէյի կողմից ուղարկուած, դուրս հանեց այնտեղից թղթերը և հարցնում է. «այս թղթերը քո՞նն են»։—«Ես դրանք առաջին անգամն եմ տեսնում»։—«Բայց ի՞նչ կերպով դրանք քո վերարկուիդ գրպանն են մտել»։—«Իմ ձեռքս չէ դրել դրանց այնտեղ»։—Նա շարունակում է կարդալ նամակը։ Բայ Տիշկօ Բալտօգլուն վերցնում է լրագիրը և նայում։—

«Էֆէնդըմ,—կամացուկ ասում է նա դատաւորին:— Այս լրագրի մէջ ոչինչ հակաօրինական բան չկայ, սա Պոլսում է հրատարակւում»—և ժպտալով նայում է ինձ: Ես ոչինչ չեմ հասկանում և փայտի նման կանգնած եմ: Դատաւորը հարցնում է. «Ռումինիայից ուղարկուած մասնաժողովի լրագիր չէ՞»: —«Ո՛չ, էֆէնդըմ, պատասխանում է Բալտոգլուն, —սրա մէջ քաղաքականութեան մասին կէս խօսք անգամ չկայ. սա խօսում է հաւատի մասին, սա բողոքական լրագիր է»: Ես նայում եմ, բայց Մարկօ, և աչքերիս չեմ հաւատում—«Զօրնիցա» 18): Տիչկօ Բալտոգլուն առնում է յայտարարութիւնը, կարդում է, նայում է ինձ դարձեալ ծիծաղում:— «Էֆէնդըմ, սա էլ հակակառավարչական թուղթ չէ—սա հասարակ յայտարարութիւն է»: Եւ սկսում է բարձր ձայնով կարդալ. «Բժշկապետ Իվան Բոգորովի գործնական բժշկական»:—Դատաւորը զարմացած չորս կողմն է նայում, բոլորը ծիծաղում են: Ծիծաղեց նա էլ, ծիծաղեցի ես էլ, և մի՞թէ կարելի է ծիծաղը զսպել: Գլխաւորն այն է, թէ ինչպէս էր պատահել այս հրաշալի փոփոխութիւնը: Ինչ կերպ էլ որ դա եղած լինէր, բէյը իւր խորհրդականների հետ քիչ խորհրդակցելուց յետոյ ասաց ինձ. «Բժշկապե՛տ, այստեղ ինչ որ սխալմունք է եղել. նեի՛ր քեզ անհանգիստ անելու համար («անհանգիստ անել» նա համարում էր գիշերով ինձ կոնակից կոնակ տանելը և բանտարկելը). ներկայացրու, ասում է, մի որ և է երաշխաւոր և

ողջութեամբ տուն վերադարձիր»: Ես արձանի նման կանգնած էի:

—Իսկ վիրաւորուած ժանդարմի մասին հարց չբարձրացրի՞ն:

—Դրա մասին չհարցրին անգամ: Որքան ես կարողացայ հասկանալ, մեր բէյը—մի ոք ասե՞լ էր նրան, թէ՞ ինքն էր գլխի ընկել,—աւելի լաւ քննելով գործը, նամակի մէջ աւելացրել էր, թէ ոստիկանին վիրաւորելու մէջ ինձ յանցաւոր չի համարում: Երևի ինքը՝ վիրաւորուողը խոստովանուել է, թէ սուտ է խօսել:

Մարկօի դէմքն ուրախութիւնից փայլեց. նա համոզուած էր, որ Մանալ պապի որդին ատրճանակ արձակած կը լինէր և չափազանց անհանգիստ էր լինում հետևանքների մասին:

—Դէ՜հ, փառք Աստուծոյ, որ դու այժմ ազատ ես:

—Ինչպէս տեսնում ես: Բայց դեռ սպասի՛ր, մի աւելի արտասովոր բան կայ,—ասաց բժշկապետը շուրջը նայելով, համոզուելու համար, որ տանեցիներից ո՛չ ոք չկայ մօտը.—Տուն էի վերադառնում իմ երաշխաւոր բայ Նիկոլչօի ձիով, դուրս եկայ Կարլովօից և հազիւ հասել էի հրէաների գերեզմանը, տեսնեմ, Բալկանի կողմից երկու հոգի ցած են իջնում—մի անծանօթ մարդ և Վիկենտի սարկաւագը, որը ձեռքով ինձ նշան է անում և բղաւում, որ ես կանգնեմ: «Այդ ո՞ւր, պարո՛ն Սոկոլով»—ինձ ազատ տեսնելով, զարմանում է Վիկենտին: Տո՛ւն, ասում եմ, ամեն բան վերջացաւ:

Նա աչքերն ահա՛ այսպէս է բաց անում։ Ես սկըսում եմ պատմել նրան ամենը, ինչ որ եղել էր, իսկ նա փաթաթւում է վզովս և սկսում համբուրել ինձ։

—«Թոյլ տուէք ծանօթացնել ձեզ պարոն... Բոյչօ Օգնեանովի հետ»։ Եւ ցոյց է տալիս իւր ճանապարհորդակցին։ Ես նայեցի նրան—այդ նա էր... Ճանաչեցի։ Այն իսկ մարդն էր, որին ես երեկոյեան վերարկուս տուել էի։

—Ի՞նչպէս, Մանոլ պապի որդի՞ն,—ընդմիջեց Մարկօն։

—Իսկ մի՞թէ դու ծանօթ ես նրա հետ,— զարմացած հարցրեց բժշկապետը։ Մարկօն յանկարծ շփոթուեց։

— Շարունակի՛ր, կը տեսնենք,—յուզուած կերպով ասաց նա։

—Է՜հ, մենք ձեռք խփեցինք միմեանց հետ, բարևեցինք։ Նա նորից սկսեց շնորհակալութիւն յայտնել վերարկուի համար և ներողութիւն խընդրել։—Ոչինչ, պ. Օգնեանով, ես երբեք չեմ զղջացած այն փոքրիկ բարիքների համար, որ անում եմ մարդկանց։ Դո՞ւք ուր էք գնում,—հարցնում եմ։—«Օգնեանովը գալիս էր ձեզ այստեղ գտնելու»,—պատասխանում է սարկաւագը։—«Ի՞նձ։ Ինչո՞ւ համար»։—«Նա կամենում էր ձեզ ազատել»։ —«Ինձ ազատե՞լ»։ -«Այո՛, ձեզ, իրեն մատնելով իշխանութեան ձեռքը և խոստովանելով, որ ինքն է ամեն բանում յանցաւորը»։—«Մի՞թէ դուք դրա համար էիք գնում Կարլովօ... Օ՜, պ. օգնեանով,

ինչպիսի վտանգի պէտք է ենթարկէիք դուք ձեզ»...
—«Դա իմ պարտքս էր»—լոկ պատասխանեց նա։ Ես չկարողացայ արտասուքներս զսպել և հենց այնտեղ, ճանապարհի մէջտեղը գրկեցի նրան, որպէս հարազատ եղբօրս։ Ա՜յ, ինչպէս ազնւութիւն, բայ Մարկօ, ինչպիսի ասպետութիւն։ Ահա՛, թէ որպիսի մարդիկ են հարկաւոր մեր Բուլղարիային։

Մարկօն լուռ էր։ Արտասուքի երկու խոշոր կաթիլներ գլորուեցան նրա այտերի վրայով։ Նա հպարտանում էր իր հին բարեկամի—Մանոլ պապի փոխարէն։

Ռոմէական լռութիւնից յետոյ բժշկապետը շարունակեց.

—Մենք բաժանուեցանք,—նրանք ուղղակի դաշտերով գնացին, իսկ ես այստեղ եկայ և ահա մինչև այժմ այդ հանդիպումից, ես աւելի թղթերի դէպքից յետոյ չեմ կարող խելքս գլուխս հաւաքել։ Ասեմ քեզ, որ այստեղ, կոնակում, ես իմ սեփհական աչքերով տեսայ «Անկախութիւն» լրագիրը և իսկական յեղափոխական յայտարարութիւնը։ Իսկ յետոյ դուրս է գալիս «Զօրնիցա» և Բոգրովի յայտարարութիւնը։ Ի՞նչպէս է այդ բանը պատահել, ո՞վ է դրանք փոխել, բէյի սխալմո՞ւնքն է արդեօք... Ես մտածում եմ, գլուխ եմ ջարդում, ոչինչ եզրակացութեան չեմ կարող գալ։ Քո կարծիքդ ի՞նչ է, բայ Մարկօ՛.—և բժիշկը պատասխանի սպասելով, ձեռքերը խաչաձև բռնած, սկսեց յետ ու առաջ անել։

—Չե՞ս կարծում, որ այդ բանը բարեկամներիցդ մէկն արած լինի։ Ի՞նչ սխալմունք պէտք է լինի դա, կամ բէյլին ո՞րտեղից «Զորնիցան» և Բոգրովի յայտարարութիւնը։

—Բայց ո՞վ է այդ անյայտ բարեգործը, որն ինձ ազատեց վտանգից, իսկ Օգնեանովին—անյայտ կորստից։ Օգնի՛ր ինձ գտնել... չէ՞ որ ես պարտական եմ շնորհակալութիւնս յայտնել նրան։

Մարկօն թեքուեց դէպի բժշկապետը և ցած ձայնով ասաց.

—Լսի՛ր բժշկապետ։ Այն, ինչ որ ես քեզ կ'ասեմ, դու պարտական ես մինչև գերեզման իջնելդ գաղտնի պահել։

—Ազնիւ խօսք եմ տալիս։

—Թղթերը ես եմ փոխել։

—Ի՞նչ, դո՞ւ, բայ Մարկօ...—գոչեց բժիշկը տեղից վեր թռչելով։

—Նստի՛ր և համբերի՛ր... Լսի՛ր, թէ ինչպէս եղաւ այդ։ Այսօր առաւօտեան վաղ ես գնացի Գանկօի սրճատունը և դայվենուց առաջին անգամ լսեցի քո ձերբակալութեան մասին։ Ես բոլորովին մոլորուեցի։ Հէնց այդ ժամանակ սրճատուն է մտնում օնբաշին և ինձ յայտնում, որ քեզ այս գիշեր ուղարկել են Կարլովօ, ուր պէտք է գնար և ինքը բէյի նամակը տանելու, որի մէջ գտնւում էին և քո վտանգաւոր թղթերը։ Ես չգիտէի, թէ ի՞նչ անեմ։ Օնբաշին սուրճ խմեց և գնաց։ Տեսնե՞մ—նա մոռացել է նամակը։ Գանկօն մի մարդու գլուխը լուանալով էր զբաղուած։ Իսկոյն իմ

մտքովս անցկացաւ—պահել, պատռել նամակը. բայց այդ բանը քեզ քիչ կօգնէր,—քեզ այնուամենայնիւ կը չարչարէին, որովհետև կասկածը կը մնար։ Ի՞նչ անէի։ Երկար մտածելու ժամանակ էլ չկար։ Այն ժամանակ գլխումս մի այնպիսի միտք ծագեց, որպիսին իմ ամբողջ կեանքիս մէջ մտքովս անգամ չէր անցկացած։ Ահա՛, տեսնո՞ւմ ես, բժշկապետ, մազերս սպիտակել են առևտուրի մէջ, բայց ուրիշի նամակ բնաւ չեմ բաց արել։ Թո՛ղ ներէ ինձ Աստուած... Ես այս արի այսօր առաջին և վերջին անգամ... Վազում եմ տուն, փակւում գրասենեակումս, զգուշութեամբ պոկում եմ ծրարի կնիքը, դուրս հանում այնտեղից թղթերը և դրանց փոխարէն դնում եմ այնտեղ ուրիշ թղթեր, որոնք ձեռքս են ընկնում։ Թուրքերը, քեզ յայտնի է, դժուար գլխի ընկնող մարդիկ են։ Յետոյ նամակը տարայ, դրի առաջուայ տեղը, այնպէս որ դայվեճին չնկատեց էլ... Փառք Աստուծոյ, ամէն բան վերջապէս յաջող վերջացաւ։ Այժմ, գոնէ խիղճս ինձ այնքան էլ չի տանջիլ։

Զմայլած և զգացուած բժշկապետը անշարժ նստած էր։

—Բայ Մարկօ, ամբողջ կեանքումս քեզանից պէտք է շնորհակալ լինիմ։ Դու երկու մարդ դուրս քաշեցիր անդունդից, ինքդ քեզ մեծ վտանգի ենթարկելով։ Մի այդպիսի բարերարութիւն հայրը իւր որդուն անգամ չի անիլ...

Բժշկապետն յուզմունքից չկարողացաւ իւր խօսքը շարունակել։ Մարկօն շարունակեց.

—Երէկ երեկոյեան ինձ, ճիշտ է, այցելեց Մանալ պապի որդին, բայց կտուրից թռչելով աղմուկ բարձրացրեց, որի ձայնից ոստիկաններ հաւաքուեցան։

—Բոյչօ Օգնեանո՞վը։

—Ի՞նչ է, այդպէ՞ս էք անուանում դուք նրան։ Նա, նա։ Նրա հայրը իմ լաւ բարեկամս էր և խեղճը, որովհետև ոչ ոքի չէր ճանաչում, ուզում էր այստեղ՝ ինձ մօտ թաքնուիլ։ Դու էլ բերել էիր նրան։ Երբէք ես չէի ուզում քեզ ասել նրա մասին։

—Ո՞րտեղից է եկել նա,—հարցրեց բժշկապետը, սաստիկ հետաքրքրուելով այդ արտասովոր անձնաւորութեամբ։

—Նա չասա՞ց քեզ, Դիարբեքիրից է փախել։

—Դիարբեքիրի՞ց…

—Այո… Իսկ նա այժմ ո՞րտեղ է։

—Վանքում, սարկաւագի մօտ է թաքնուել։ Ես պէտք է տեսնուեմ նրա հետ։ Կարելի՞ է նրան պատմել բոլորը։ Նա անշուշտ պէտք է գիտենայ, թէ ումն է պարտական իւր ազատութեամբ. չէ՞ որ նա կը մատնուէր, եթէ ինձ չարձակէին։

—Ո՛չ, ո՛չ։ Երդուեցնում եմ քեզ, քանի կենդանի ես ոչ ոքի չասել։ Աշխատիր մոռանալ այդ ամէնը։ Ես քեզ միայն յայտնեցի այդ, որ խիղճս քիչ թեթևացնեմ։ Բարեւի՛ր իմ կողմից Մանալ պապի որդուն, ասա, թող գայ ինձ մօտ, բայց միայն —գանով։

Բժշկապետը հրաժեշտ տուեց և հեռացաւ։

Ժ.

ԿՈՒՍԱՆԱՑ ՎԱՆՔ

Սպիտակ-Եկեղեցու կուսանաց վանքն ամենևին նման չէր արականին, որը կպած էր լեռների կրծքին և միշտ խուլ էր ու ամայի։ Այստեղ ընդհակառակը 60—70 կոյսեր, ծեր և նորահաս, ամբողջ օրը եռումուռ էին անում բակերն ու լայն գաւիթը, իրենց ուրախ ձայներն ու ծիծաղը տարածելով ամէն կողմ։

Կուսանաց միաբանութիւնն յայտնի էր որպէս քաղաքի նորութիւնների մի ամենագործունեայ անդաստան։ Սա մի որրան էր ամէն տեսակ բամբասանքների, որոնք պտտում և յուզում էին մեղաւոր աշխարհականների օջախները. այստեղ նախագուշակւում էին նշանադրութիւններ և քանդւում պսակներ. այստեղից նաև սկիզբն էին առնում զանազան անմիտ պատմութիւններ, որոնք պտըտելով ամբողջ քաղաքը, նորից վերադառնում էին դէպի իրենց բոյնը ամբողջ և անվնաս, բայց արդէն հսկայական մեծութեան հասած, կամ ընդհակառակը ծղօտի չափով մտնում էին այստեղ և դուրս գալիս ամբողջ լեռներ դառած։ Այսպիսի մի աղմկալից կենդրոն բնականաբար դէպի իրեն գրաւում էր—մանաւանդ տօն օրերը—աշխարհականների խմբեր, որոնց հոգեսէր կանայք պատւում էին քաղաքի անեկդոտներով և «ֆիշնի մուրաբով»։

Տիրուհի հաջի Բովռաման, որի հետ մենք ծանօթացանք նրա եղբօր—Իւրդանի տօնախմբութեան ժամանակ, յայտնի էր իւր՝ քաղաքի ամէն տեսակ գաղտնիքներ իմանալու արտասովոր ծիրքով և ճանաչուած էր որպէս ամենաճարպիկ բամբասող: Մի ժամանակ մայրապետ, յետոյ այդ առանձնայատկութիւնների տէր հասարակապետութեան ապըստամբութեան շնորհիւ գահավէժ եղած հաջի Բովռաման մինչև այսօր էլ պահպանում էր իւր բարոյական հեղինակութիւնը վանքում: Բոլորը և բոլորի մասին աշխատում էին հաջի Բովռամայի կարծիքն իմանալ:

Վերջին ժամանակները կոյս հաջի Բովռամային սաստիկ զայրացրել էր բժշկապետ Սոկոլովի (նրա կարծիքով, վանքերի այս վտանգաւոր թշնամու) ազատուելը: Նա ներքուստ չարանում էր, զարմանալով, թէ ով կարող էր նրան օգնել: Ով զըրկեց այդ կոյսին իւրաքանչիւր օր նրա վիճակի մասին լուրեր ստանալու և նորանոր մանրամասնութիւններ աւելացնելու բաւականութիւնից: Ահա արդէն չորս-հինգ օր էր, որ նա այդ պատճառով հանգստութիւն չունէր և քունը փախել էր նրա աչքերից: Նա ամէն կերպ աշխատում էր գուշակել, թէ ինչո՞ւ բժշկապետը չէր ուզում ասել բէյին, թէ որտեղ էր այն նշանաւոր գիշերը, երբ նրան ձերբակալեցին: Վերջապէս, ո՞վ էր փոխել լրագիրները: Յանկարծ մի լուսաւոր միտք ծագեց հաջի Բովռամայի գլխում այն ժամանակ, երբ նա երեկոյեան աղօթք էր կարդում: Նա չնայելով որ արդէն շո-

բերը հանել էր, իսկոյն վազեց կոյս Սերոֆիմայի մօտ և դողդոջուն ձայնով սկսեց.

—Քո՛յր, գիտե՞ս բժշկապետը որտեղ էր այն գիշերը, որ նա չէր ուզում յայտնել բէյին:

Քոյր սերոֆիման ականջները սրեց.

—Բէյի կնոջ մօտ:

—Մի՞թէ, հաջի:

—Ի հարկէ, այնտեղ էր, Սերոֆիմա: Դրա համար էլ չէր ուզում ասել: Խելագար հօ չէր նա:

Ո՜վ սուրբ Աստուածածին... Ի՞նչպէս որ առաջ ես գլխի չէի ընկնում,—հաջի Բովռաման դարձաւ դէպի Աստուածամօր պատկերը, խաչակնքելով:—Իսկ գիտե՞ս, ով է արձակել բժշկապետին:

—Ո՞վ, ո՞վ, հաջի:

—Նա՛, դարձեալ նա՛, բէյի կինը:

—Ի՜նչ ես ասում, հա՜ջի:

—Ով Տիրամայր Աստուածածին, բայց ախր մինչև այժմ ո՞րտեղ էր անիծուած խելքս:

Հետևեալ օրը, առաւօտեան, արդէն ամբողջ միաբանութիւնն զբաղուած էր միևնոյն խօսակցութեամբ: Բժշկապետի և բէյի կնոջ պատմութիւնն աճում և հետզհետէ ընդունում էր սպառնալի մեծութիւն:

Երկու ժամ անցած՝ պատմութիւնն արդէն շրջեց ամբողջ քաղաքում:

Բայց, աւա՜ղ․․ Իւրաքանչիւր նոյն իսկ ամենահետաքրքրական նորութիւն երեք օրում հնանում է... Կոյսերին, որոնք արդէն ձանձրութիւն էին զգում,

նոր կերակուր էր հարկաւոր։ Քաղաքում Կրալիչի լոյս ընկնելը, որին ոչ ոք չէր ճանաչում,—կենդանութիւն տուեց կանանց ընկերութեանը։ Միաբանութիւնն ալեկոծուեց։—«Ո՞վ է դա։ Ի՞նչպիսի դէմք ունի։ Ո՞րտեղացի է։ Ինչո՞ւ է եկել»։ Ո՛չ ոք ոչինչ չգիտէր։ Աւելի հետաքրքիրները քաղաք գնացին տեղեկութիւններ հաւաքելու, սակայն բացի անունից, միւս բերած բոլոր լուրերը հակասական էին։

Քոյր Ռովոաման լսում էր բոլոր ենթադրութիւնները և ժպտում։ Նա գիտէր, թէ գործն ինչումն է, բայց ուզում էր չարչարել քոյրերին։ Միայն ուշ, գիշերը, պատգամախօսի լեզուն բացուեց։

Յաջորդ օրը առաւօտեան արդէն բոլոր քոյրերը գիտէին, որ այդ անծանօթ Օգնեանովը [illegible] լրտես էր։

Օգնեանովի մասին Հաջի Ռովոամայի տարածած այդ վատ համբաւի գլխաւոր պատճառներից մէկը, կամ գուցէ միակ պատճառն այն էր, որ նորեկը իւր այցելութեամբ չէր պատուել նրան։ Այս բանը ցեղական անպատւութիւն էր Հաջի Ռովոամայի ինքնասիրութեան համար և նա դարձաւ Օգնեանովի ամենավտանգաւոր թշնամին։

Կիւրակի էր։

Պատարագը վերջացաւ։ Ժամաւորների մի ամբողջ հեղեղ դուրս եկաւ եկեղեցուց, տարածուեց գաւթում և ցրուեց կոյսերի խցերը։

Հաջի Ռովոամայի փոքրիկ, յարմար և լաւ կա-

հաւորուած խումբը հազիւ էր տեղաւորւում բոլոր հաւաքուած հիւրերին։ Կոյսը ժպտալով ընդունում և ճանապարհ էր ձգում բոլորին, իսկ Ռադան, մաքուր սև հագուստ հագած և նոյնպիսի թաշկինակը գլխին, կարմիր մատուցարանով սուրճ և քաղցրաւենիք էր առաջ բերում։ Մի ժամ յետոյ հիւրերի թիւը պակասեց։ Հաջի Ռովոաման շուտ-շուտ նայում էր լուսամուտից, կարծես ինչ որ արտասովոր այցելուների սպասում լինէր։ Վերջապէս եկան դարձեալ մի քանի հիւրեր և նրանց թւում Ալաֆրանկան, Ստեֆչովը, տէր-Ստավրին, Նիչօ Պիրոնկովը և մի ինչ որ ուսուցիչ։ Կոյսի դէմքը պարզուեց. երևում էր, որ սրանց էր սպասում, որովհետև նա ջերմաբար բարևեց ներս մտնողների հետ, որոնք ձեռք էին տալիս նաև Ռադային. Ստեֆչովը մինչև անգամ սաստիկ սեղմեց նրա ձեռքը, միևնոյն ժամանակ աչքով անելով։ Այս բանն ամօթահար արաւ նորահաս օրիորդին և նա սաստիկ կարմրեց։

—Կիրիա՛կ, ես ուզում եմ քեզ նորից հարցնել, թէ ի՞նչպէս պատահեց բժշկապետի դէպքը,—բարևելուց յետոյ կոյսը դարձաւ Ստեֆչովին։—Գիտե՞ս, զանազան բաներ են խօսում։

—Ի՞նչ են խօսում,—հարցրեց Ստեֆչովը։

—Որ իբր թէ, դու դիտմամբ բէյի մօտ լրագրները յեղափոխական ես դարձրել, որ վնասես Սոկոլովին։—Ստեֆչովը կատաղեց։

—Ով որ այդ բանն ասում է,—էշ է, խաբեբայ է։ «Անկախութիւն» թերթի 30-րդ համարը

և մի չայտարարութիւն դուրս եկաւ նրա դրպանից։ Թող բայց Նեչօն ասի։—Նեչօն սիրով հաստատեց։

—Հարկաւորութիւն չկայ Նիչօին հարցնել. Նիչօն ի՞նչ գիտէ,—ձայն տուեց տէր-Ստավրին։—Մենք վաղուց գիտենք, թէ նա ինչ բարի պտուղ է։ Ուր էլ որ գնայ բժշկապետը, իրեն հետ իւր օղակն էլ քաշ է տալիս։ Ես դեռ անցեալ օրն այդ միևնոյն Սելեամիդին էլ ասացի։ Ես գնացել էի նրա նոր արաղը փորձելու... այդ Սելեամիդը արաղի մէջ անիսոն խառնելու լաւ վարպետ է... Է՜, հաջի, ողջ-առո՞ղջ ես։

—Ինչպէս տեսնում ես, տէ՛ր-բաբա։ Ջահելների հետ նորից ջահելանում եմ,—պատասխանեց կոյսը և կրկին դարձաւ Ստեփչովին.—բայց ախր ո՞վ փոխեց նրա թղթերը։—Հաջի Րովոամայի լեզուն քոր էր գալիս. նա շտապում էր իւր գիւտի մասին պատմել։

—Ոստիկանութիւնը կը գտնի։

—Ձեր ոստիկանութիւնը գրոշ չարժէ։ Ես քեզ կասեմ, թէ ով է. ասե՞մ,—ծիծաղեց հաջի Րովոաման և թեքուելով դէպի Ստեփչովի ականջը, մի անուն շշնջեց, բայց այնքան բարձր, որ գաղտնիքը բոլորը լսեցին։ Խորհրդական Նիչօն իւր «տէր-ողորմեան» վերև ձգեց և բերանն առաստաղին արած, քրքջաց. ուսուցիչը խորագիտութեամբ նայեց իւր հարևաններին, իսկ տէր-Ստավրին մռմռաց. «փրկեա՛, Տէր ի գայթակղութենէ

ամբարշտաց»։ Րաղան ամօթից թագնուեց միւս սենեակում։

—Ահա՛ նա, ահա՛ նա,—բացագանչեց Ստեփչովը ցոյց տալով Սոկոլովին, որը գաւթի միջով իւր երկու ընկերների հետ անցնում էր։ Նրանցից մէկը Վիկենտի սարկաւագն էր, իսկ միւսը—Կրալիչը։ Բոլորը վազեցին լուսամուտի մօտ։ Այս բանը հաջի Րովոմային առիթ տուեց իւր երկրորդ գիւտն ասել։

—Գիտէ՞ք ով է Սոկոլովի և սարկաւագի հետինը։

—Այդ օտարակա՞նը։ Դա մի ինչ որ Բոյչօ Օգնեանով է,—պատասխանեց Ստեփչովը.—ինձ թւում է, թէ դա էլ նրանցից է, որոնք իրենց օղակը հետներն են ման ածում։

Հաջի Րովոաման բացասական կերպով գլուխը շարժեց։

—Չէ՞,—հարցրեց Ստեփչովը։

—Չէ՛, բոլորովին ուրիշ մարդ է, դրաղ կը պամ։

—Խռովարա՞ր է։

—Չէ՛, լրտես է...—հանդիսաւոր կերպով ասաց կոյսը։ Ստեփչովը քարացած նայեց նրան։

—Խուլ թագաւորն էլ է լսել, միայն դու չգիտես։

—Նզո՛վք,—մրթմրթաց տէր-Ստավրին։

Քոյր Րովոաման չարամտութեամբ հետևում էր, թէ ուր կը գնան բժշկապետը և նրա ընկերները։

—Քոյր Քրիստինէի մօտ,—բացագանչեց նա։

Կոյս Քրիստինէն քոյրերի մէջ վատ անուն ունէր։ Նրան համարում էին յեղափոխական մասնաժողովների հետ յարաբերութիւն ունեցող հայրենասէր։ Նրա մօտ մի անգամ նոյն իսկ գիշերել էր նշանաւոր յեղափոխական—սանկաւադ Լեւսկին։

—Սարկաւագները սիրում է՜լ են քոյր Քրիստինէին,—մաղձոտ կերպով աւելացրեց հաջի Ռովոաման։—Գիտէ՞ք, Վիկենտին ուզում է ձգել վերարկուն։ Եւ լաւ էլ անում է։ Կեցցէ։ Ո՞վ նրան այդպէս ջահել ձեռնադրեց։

—Այդպէս էլ հարկաւոր է,—կամ ջահել պսակուէ՛ր, կամ ջահել ձեռնադրուէ՛ր,—վրայ բերեց տէր-Ստավրին։

—Ինձ թւում է թէ նա առաջինը կանէ, տէր-բաբա։

—Աստուա՜ծ ազատէ։

—Նա ուզում է խնամախօս ուղարկել Օրլեանովի աղջկայ համար։ Եթէ միայն մատանին վերցնեն, սարկաւագը վերարկուն կը թողնի և կը պսակուի Ռումինիայում։ Բայց իմ կարծիքով, նա սխալւում է...—և կոյսը հոգատարութեամբ նայեց երիտասարդ ուսուցչին, որի համար նա նշանակել էր այդ աղջկանը։ Ուսուցիչը կարմրեց։

Այդ ժամանակ դուրսը նոր հիւրեր երևեցան։

—Ախ, եղբայրս գալիս է,—բացագանչեց հաջի Ռովոաման, դէմ վազելով Իւրդան Դիամանդիևին։

Նրա յետևից բոլորը դուրս եկան։ Ստեֆչովը մնաց ամենից վերջը և բռնելով Ռադայի ձեռքը, մնաս

բարև ասելու, համբուրեց նրա կարմրած երեսը։ Վերջինս մի ուժգին ապտակ տուեց նրան և յետ փախաւ։

—Ի՞նչպէս դու չես ամաչում,—արտասուքն աչքերին՝ խօսեց նա խեղդուած ձայնով։ Ստեֆչովն ուղղեց իւր մի կողմ թողած ֆէսը, կատաղի կերպով սպառնաց Ռադային և շտապով դուրս գնաց միւսների յետևից։

ԺԱ.

ՌԱԴԱՅԻ ՏՈՒԺՄՈՒՆՔՆԵՐԸ

Ռադա «Գոսպոժինան»,—նրան այդպէս էին անուանում, ցոյց տալու համար, թէ նա տիրուհի հաջի Ռովոամային է պատկանում,—մի բարձրահասակ, վայելչակազմ, գեղեցիկ աղջիկ էր, պարզ և մաքուր հայեացքով, գեղատեսիլ գունատ դէմքով, որը թաշկինակով աւելի ևս սքանչելի էր։ Մանկութիւնից որբ մնալով, Ռադան արդէն շատ տարիներ ապրում էր հաջի Ռովոամայի հետ մի յարկի տակ, որը նրան որդեգրել էր։ Յետոյ Ռադայի խնամակալուհին նրան «օգնական» արաւ, այսինքն կուսութեան պատրաստուող աղջիկ, և հագցրեց նրան պարտադիր սև հագուստ։ Վերջին ժամանակը Ռադան օրիորդաց դպրոցի առաջին դասատան վարժուհի էր նշանակուած, որի համար հազար գրօշ ռոճիկ էր ստանում։

Ռադան մեծացել էր վանական մթնոլորտում, պառաւ բամբասողի—այս քարասիրտ, մայրական սէրը զգացմունքին բոլորովին անծանօթ կնոջ խիստ հսկողութեան և ճնշման տակ: Հաջի Ռովոամայի մտքովն անգամ չէր անցկենում, թէ կարելի է աւելի մարդավարի վերաբերուել դէպի Ռադան: Ամբողջովին բամբասանքներով և ինտրիգներով յափշտակուած, նա մինչև անգամ ժամանակ չունէր նկատելու, թէ օրէցօր իր բռնակալութիւնը որքա՜ն զգալի և անտանելի էր դառնում Ռադայի համար, քանի որ նրա մէջ աստիճանաբար զարգանում էր գիտակցական և մարդկային արժանաւորութիւնը: Մենք արդէն տեսանք, թէ ինչպէս հաջի Ռովոաման առանց քաշուելու ստիպում էր Ռադային, որն արդէն հասած աղջիկ էր և վարժուհի, ծառայել իր եղբօրը՝ Իւրդանի չորբաջիական սեղանին:

Վերջին օրերը Ռադան սաստիկ զբաղուած էր դպրոցում, որովհետև տարեկան հարցաքննութիւնների օրը մօտենում էր: Վերջապէս այդ օրը հասաւ: Առաւօտը դեռ շատ վաղ օրիորդաց դպրոցը լցուեց աշակերտուհիներով և նրանց մայրերով, որոնք այդ օրուան առթիւ մաքուր սանրուած և թիթեռնիկների նման զարդարուած էին:

Ժամասացութիւնը վերջացաւ և ժողովուրդը, սահմանած սովորութեան համեմատ, լցուեց դըպրոցը, որ տեսնի աշակերտուհիների առաջադիմութիւնները: Գեղեցիկ պսակները զարդարում էին դռներն ու լուսամուտները և ուսուցչական ամբիօնը, իսկ սուրբ Կիրիլլի և Մեֆոդիյի պատկերը նայում էր վարդերից և ուրիշ հոտաւէտ ծաղիկներից ու շիմշիրի և եղևնու կանաչ ճղներից պատրաստուած սքանչելի շրջանակի միջից:

Շուտով աշակերտուհիները գրաւեցին բոլոր նստարանները, իսկ մնացած տեղերը—հանդիսականները. աւելի պատուաւոր հիւրերը տեղաւորւեցան առաջը, մի քանիսները մինչև անգամ աթոռների վրայ: Նրանց մէջ էին և մեր ծանօթները: Մնացին դարձեալ մի քանի աթոռ՝ սպասւող ամենապատուաւոր հիւրերի համար:

Ռադան ամօթխածութեամբ իր աշակերտուհիներին նստեցնում էր տեղերը, ցած ձայնով խրատներ տալով նրանց: Նրա դէմքը, որ կենդանութիւն էր ստացել հանդիսաւոր րոպէի յուզմունքներից և լուսաւորուած էր երկու մեծ, թաց աչքերով, սքանչելի էր. այտերի վրայ խաղացող անհաւասար կարմրութիւնը երևան էր հանում հոգու անհանգստութիւնը: Նա զգում էր, որ հարիւրաւոր հետաքրքիր աչքեր իրեն են ուղղուած—և վատ դրութեան մէջ էր—նա ինքն իրեն կորցնում էր: Բայց հենց որ աւագ վարժուհին սկսեց իր ճառը, և հաւաքուած հասարակութեան ուշադրութիւնն իր կողմը գրաւեց, նա հանգստացաւ և մի աւելի համարձակ հայեացք ձգեց իր շուրջը. Նա ուրախութեամբ նկատեց Ստեֆչովի բացակայութիւնը և սթափուեց: Աւագ վարժուհու ճառը վերջացաւ հանդիսաւոր լռութեամբ:

Հարցաքննութիւնը, ծրագրի համաձայն, սկըսուեց առաջին դասարանի աշակերտուհիներից։ Աւագ ուսուցչի—Կլիմենտի բարեսիրտ և հանդարտ դէմքը, նրա քաջալերական խօսքերը վստահութիւն էին տալիս աշակերտուհիներին։ Բաղան լարուած ուշադրութեամբ հետևում էր օրիորդների պատասխաններին և նրանց պատահական շփոթմունքների վատ ազդեցութիւնն իսկոյն երևում էր նրա դէմքի վրայ։ Այս քաղցրահնչիւն, մաքուր ձայները, այս փոքրիկ վարդագոյն բերաններն այժմ նրա բաղդն էին որոշում։ Նա իւր նուրբ հայեացքով օգնում էր աշակերտուհիներին, ժպիտով քաջալերում նրանց և թւում էր, թէ պատրաստ էր իւր ամբողջ հոգին դնել նրանց դողդոջուն շրթունքների մէջ։

Դռան մօտ ժողովուրդը յետ քաշուեց և ճանապարհ տուեց երկու ուշացած այցելուների, որոնք կամացուկ նստեցին պարապ աթոռներին։

Բաղան աչքերը բարձրացրեց։ Նրանցից մէկը—մեծը—դպրոցի հոգաբարձու՝ չորբաջի Միչօն էր, իսկ միւսը—Կիրիակ Ստեֆչովը։ Թեթև անհաւասար դունատութիւնը ծածկեց վարժուհու դէմքը և նա աշխատեց չնայել այդ ատելի մարդուն, որը վրդովում և վախեցնում էր նրան։

Կիրիակ Ստեֆչովը գլուխ տուեց ներկայ եղողներից մի քանիսին, բայց իւր մօտ նստած բժշկապետին չբարևեց, որը մինչև անգամ չէր էլ նայում նրա կողմը։

Ստեֆչովը ոտքը ոտքին դրեց և գոռոզաբար սկսեց չորս կողմ նայել։ Նա անտարբերութեամբ էր լսում աշակերտուհիների պատասխանները և աչքը չէր վերցնում ժողովրդից, որտեղ գտնւում էր Լալկա Իւրդանովան։ Միայն մի երկու անգամ նա խիստ և արհամարական հայեացքով ոտից մինչև գլուխ չափեց Բաղային։

Ուսուցիչ Կլիմենտը գիրքը ձեռքին մօտեցաւ Միխալակի Ալաֆրանկային, առաջարկելով նրան մի քանի հարցեր տալ աշակերտուհիներին։ Միխալակին յանձն չառաւ, ասելով, որ ինքը ֆրանսերէնից պէտք է հարցաքննէ։ Կլիմենտը դարձաւ դէպի աջ և իւր հրաւէրը կրկնեց Ստեֆչովին։ Ստեֆչովն առաւ գիրքը և իւր աթոռի հետ միասին առաջ շարժուեց։

Ժողովրդի մէջ մի խուլ փսփսոց ընկաւ։ Բոլորն իրենց հայեացքներն ուղղեցին Կիրիակին։ Քննելի առարկան Բուլղարիայի համառօտ պատմութիւնն էր։ Ստեֆչովը գիրքը սեղանին դրեց, մատը դրեց քունքին, կարծես իւր ուղեղն արթնացնելու համար և բարձրաձայն մի հարց առաջարկեց։ Աշակերտուհին լուռ մնաց։ Ստեֆչովի անհամբոյր հայեացքը սարսուռ էր ազդում օրիորդի մանուկ հոգուն և նա այն աստիճան շփոթուեց, որ մինչև անգամ հարցը մոռացաւ և խղճալի կերպով նայում էր Բաղային, կարծես նրանից օգնութիւն խնդրում լինէր։ Ստեֆչովը կրկնեց հարցը։ Դարձեալ լռութիւն։

—Թող գնայ,—սառնութեամբ ասաց նա վարժուհուն,—մի ուրիշին կանչեցէք։

Դուրս եկաւ մի ուրիշ աշակերտուհի։ Նրան էլ մի հարց տուեց։ Օրիորդը լսեց, բայց չը հասկացաւ և լուռ մնաց։ Լուռ էր նաև հասարակութիւնը, որը մի տեսակ ճնշման տակ, մի ինչ որ տանջող դրութեան մէջ էր գտնւում։ Աղջիկը կարծես կաշկանդուած էր իր տեղում. Նրա աչքերը լցուեցան նահատակի արտասունքներով, որոնք կարծես չէին համարձակւում դուրս հոսել։ Նա ջանաց գոնէ մի բան պատասխանել, բայց կակազեց և ձայնը կտրեց։ Ստեֆչովը մի սառն հայեացք ձգեց Ռադայի վրայ և ասաց.

—Ինչպէս երևում է, բաւական անփոյթ կերպով է աւանդուել։ Կանչեցէք մի ուրիշին էլ։—Ռադան խուլ ձայնով արտասանեց դարձեալ մի անուն։ Երրորդ աշակերտուհին բոլորովին ուրիշ բան պատասխանեց—նա հարցը չհասկացաւ։

Ստեֆչովի աչքերի մէջ անհաւանութիւն կարդալով, նա սկզբում զարմացաւ, յետոյ յուսակտուր կերպով շուրջը նայեց։ Շփոթմունքը մթագնեց նրա աչքերը, գունատուած շրթունքներն յանկարծ դողացին և, մէկէն բարձրաձայն լաց լինելով, փախաւ և պահուեց մօր մօտ։

Բոլորի էլ դրութիւնը ծանր էր։

Հասարակութիւնն այլ ևս անկարող լինելով տանել այս լարուած դրութիւնը, անհանդստութեամբ աղմուկ բարձրացրեց։ Զարմացած հան-

դիսականները նայում էին միմեանց, կարծես հարցնում լինէին՝ «բանն ինչումն է»։

Յանկարծ գերեզմանական լռութիւնը նորից տիրեց, և բոլորի հայեացքներն առաջ ուղղուեցան. —մինչև այն ժամանակ մի կողմ կանգնած Բոյչօ Օգնեանովը դուրս եկաւ հասարակութեան միջից, և դառնալով դէպի Ստեֆչովը հաստատուն և հատու կերպով ասաց.

—Պարոն, ձեզ ճանաչելու պատիւը չունիմ, բայց ներեցէ՛ք. ձեր մութ և վերացական հարցերը կը դժուարացնեն հինգերորդ դասարանի աշակերտուհիներին անգամ։ Պէտք է խնայել երեխաներին։

—Յետոյ դառնալով դէպի Ռադան, հարցրեց.—Օրիո՛րդ, թոյլ կըտա՞ք։—Առանց նստելու Օգնեանովը խնդրեց դուրս կանչել հարցրած աշակերտուհիներից մէկին։

Օգնեանովը նրան հարցրեց նոյնը, ինչ որ Ստեֆչովն էր հարցրել, բայց շնորհիւ հարցի ուրիշ տեսակ խմբագրութեան, աղջիկն իսկոյն պատասխանեց։ Մայրերն ազատ շունչ քաշեցին և գոհունակութեամբ նայեցին անծանօթին։ Նրա անունը պտըտեց հասարակութեան մէջ և տպաւորուեց իւրաքանչիւրի յիշողութեան մէջ։

Կանչեցին և երկրորդ կտրուած աշակերտուհուն. սա էլ նոյնպէս բաւարար կերպով պատասխանեց։ Դրանից յետոյ բոլոր երեխաները, որոնց Ստեֆչովը յիմարացնելու չափ վախեցրել էր, կենդանացան հոգով և սկսեցին մինչև անգամ վիճել միմեանց հետ, թէ առաջ ով պէտք է դուրս գայ

այդ բարի մարդու հարցերին պատասխանելու համար։

Ռադան մի ծայրայեղութիւնից միւսի մէջ ընկաւ։ Յուզուած, զարմացած, որովհետև այդպիսի բան ամենևին չէր սպասում, նա գոհունակութեամբ նայում էր այդ մեծահոգի մարդուն, որը մի այդպիսի կրիտիքական րոպէում նրան օգնութեան հասաւ։ Նա առաջին անգամն էր տեսնում, և այն՝ մի բոլորովին անծանօթ մարդու կողմից՝ այդպիսի եղբայրական կարեկցութիւն դէպի ինքը։ Եւ այդ մարդը լրտե՞ս է,—նա, որ ճմլեց Ստեֆչովին, որպէս մի երեխայի և կանգնած էր այժմ նրա հանդէպ, որպէս պահապան հրեշտակ... Ռադան յաղթանակեց։ Նա դարձեալ բարձրացաւ իր և ուրիշների աչքում, և հպարտութեամբ ու երջանկութեամբ նայում էր բոլորին և բոլորի դէմքերին էլ համակրելի, բարեկամական հայեացքներ էր տեսնում։ Նրա սիրտը երախտագիտութեամբ լցուեց դէպի այդ մարդը,—և նա պատրաստ էր լաց լինել ուրախութիւնից։

Ստեֆչովի հարցաքննած աշակերտուհիներից երրորդին Օգնեանովը հետևեալ հարցն առաջարկեց.—«Ռայնա՛, հապա՛, ասա մեզ, բուլղարական ո՞ր իշխանի ժամանակ ժողովուրդը մկրտուեց և քրիստոնեայ դարձաւ»։ Եւ նա սիրալիր կերպով նայեց օրիորդի աչքերին, որոնք արտասուքներից դեռ չէին չորացել։ Օրիորդը քիչ մտածեց, բաց արաւ շրթունքները և այնտեղից լսուեց նրա ձայնը,

որը բարակ, մաքուր և քաղցրահնչիւն էր, որպէս արտուտիկինը։

—Բուլղարական Բորիս Թագաւորը մկրտեց բուլղարներին։

—Լա՛ւ, շա՛տ լաւ։ Իսկ այժմ ասա, ո՞վ գտաւ բուլղարական այբուբէնը։

Այս հարցը քիչ դժուարացրեց փոքրիկ աղջկան. նա մտածեց, յետոյ ուզեց պատասխանել, բայց նորից կանգ առաւ—անվստահ և դարձեալ շփոթուելու պատրաստ։

—Մեր ա, բ-էն, Ռանա՛, ո՞վ գրեց առաջին անգամ,—օգնեց նրան Օգնեանովը։

Օրիորդի աչքերը պայծառացան. առանց մի խօսք ասելու, նա իր՝ մինչև արմունկները մերկ թևը մեկնեց դէպի պատկերը, որտեղից Կիրիլլն ու Մեֆոդին քաղցրութեամբ նայում էին նրան։

—Այո՛, այո՛, սուրբ Կիրիլլն ու Մեֆոդին,—ասացին մի քանի հոգի առաջին կարգերից։

—Ապրի՛ս, Ռայնա՛։ Թող սուրբ Կիրիլլն ու Մեֆոդին օգնեն քեզ թագուհի դառնալ [19],—խօսեց զգացուած տէր-Ստավրին։

—Շատ հիանալի, Ռայնա։ Այժմ կարող ես տեղդ գնալ,—արձակեց նրան Օգնեանովը։

Ուրախացած Ռայնան յաղթական կերպով վազեց մօր մօտ, որը գրկեց դստերը, պինդ սեղմեց կուրծքին և համբոյրներով ծածկեց նրա երեսը։

Օգնեանովը կամենում էր դառնալ իր տեղը և գիրքը տուեց ուսուցիչ Կլիմենտին։

—Պարո՛ն, մեր Ստանկային էլ խնդրեմ հարցնէք,—կանգնեցրեց նրան չորբաջի Միչօն: Աշխոյժ, շիկադոյն գանգուրներով աղջիկն արդէն կանգնած էր նրա առաջ և համարձակ կերպով նայում էր նրա աչքերին: Օգնեանովը մնաց:

—Ստանկա՛, Թագաւորներից ո՞ր բուլղարներին յունական լծից ազատեց:

—Թրքական լծից բուլղարներին ազատեց... —սխալմամբ սկսեց աղջիկը: Չորբաջի Միչօն ընդհատեց նրան:

—Ստանկա՛, կա՛ց: Դու ասա՛, սիրելի աղջիկս, բուլղարներին յունական լծից ազատող Թագաւորի անունը. իսկ Թրքականից—կայ մէկը, որը կազատէ նրանց...

—Ինչ որ Աստուած որոշել է, այն էլ կը լինի, —ասաց տէր-Ստավրին:

Չորբաջի Միչօի աւելացրած պարզամիտ խօսքերը շատերի դէմքին համակրական ժպիտ առաջ բերին: Դահլիճում շշուկ և հազիւ զսպուած ծիծաղ տարածուեց:

Ստանկան, վատ հասկանալով իւր հօր խօսքերը, բարձր ձայնով պատասխանեց.

—Յունական լծից բուլղարներին ազատեց Ասէն Թագաւորը, իսկ Թրքականից նրանց կազատէ Ալէքսանդրը—Ռուսիայի Թագաւորը:

Ստանկայի խօսքերից յետոյ դահլիճում մեռելային լռութիւն տիրեց: Մի քանիսի դէմքերին կասկածի և անհանգստութեան նշաններ երևաց: Բոլոր հայեացքները մեքենայաբար դարձան դէպի

Ռադան, որը բոլորովին կարմրած և շփոթուած կախել էր գլուխը. յուզմունքից նրա կուրծքը սաստկութեամբ բարձրանում և ցածանում էր: Մի քանիսները կշտամբալից կերպով էին նայում նրան, ուրիշները—գովասանքով, բայց բոլորի դրութիւնն էլ ծանր էր: Ստեֆչովը, որ քիչ առաջ ստորացած և յաղթուած էր, նորից գլուխը բարձրացրեց և յաղթական կերպով էր նայում: Բոլորն էլ լաւ գիտէին նրա մօտիկ յարաբերութիւնները բէյի և մտերմութիւնը Թուրքերի հետ և այդ պատճառով աշխատում էին նրա դէմքի վրայ կարդալ, թէ ինչ է մտադիր անելու: Ընդհանուր համակրութիւնը դէպի Ռադան և Օգնեանովը հետզհետէ սկսեց թուլանալ և մինչև անգամ խառնուել խուլ տրտունջի հետ: Ստեֆչովի բարեկամները չարամտութեամբ ուրախանում էին և բարձրաձայն յայտնում իրենց անբաւականութիւնը, իսկ վարժուհուն համակրողները երկչոտութեամբ լուռ էին կացել: Տէր-Ստավրին վախենում էր իւր չմտածած խօսքերի համար և մտքում «Ողորմեա՛ ինձ, Աստուած»-ն էր կրկնում: Կանանց բաժնում աւելի սուր կերպով էին յայտնում իրենց կարծիքները: Ամենից բարձր աղմուկ էր անում հաջի Ռովոաման, որը դեռ առաջ կատաղած էր Ստեֆչովի ամօթահար անելու պատճառով, և այժմ կրակ դարձած շանթեր էր արձակում Ռադայի և Օգնեանովի կողմը: Նա մինչև անգամ բարձր ձայնով Օգնեանովին ապստամբ էր անուանում, բոլորովին մոռանալով, որ մի քանի օր դրանից առաջ նրան Թըր-

քական լրտես էր հռչակել։ Բայց կային և այնպիսիները, որոնք ոչ պակաս բարձր ձայնով խօսում էին յօգուտ Ռադայի և Օգնեանովի։ Գինկա Դիմանդիևան, առանց քաշուելու, բոլորին լսելի ձայնով գոչում էր․

—Ախր ինչո՞ւ այդպէս վախեցաք։ Աստծուն խաչեց խեղճ աղջիկն, ի՞նչ է։ Ճիշտն ասաց—ուրիշ ոչինչ։ Ես էլ ահա հաստատում եմ, որ մեզ Ալէքսանդր Թագաւորը պէտք է ազատէ և ոչ ուրիշը։

—Լռի՛ր, խելագնո՛ր,—շշնջեց նրա ականջին սարսափած մայրը։ Խեղճ Ստանկան գլուխը կորցրածի նման կանգնած մնացել էր։ Նա իւրաքանչիւր օր հօրից և նրանց տանը եղած հիւրերից լսում էր այդ միևնոյն բանը, ինչ որ նա ասաց այստեղ, այնինչ բոլորն այսպէս արտասովոր աղմուկ բարձրացրին։

Ստեֆչովը վեր կացաւ, ուղղուեց և դառնալով դէպի առաջին կարգերը, ազդու կերպով արտասանեց․

—Պարոնա՛յք, այստեղ յեղափոխական գաղափարներ են տարածւում նորին մեծութեան սուլթանի իշխանութեան դէմ։ Ես այստեղ այլևս մնալ չեմ կարող, ուստի և հեռանում եմ։

Նէչօ Պիրօնկովը և դարձեալ մի երկու-երեք հոգի հետևեցին նրան։

Շփոթութեան առաջին րոպէներից յետոյ, բոլորն էլ տեսան, որ գործն այդքան մեծ ուշադրութեան արժանի չէ։ Երեխան անփորձութիւնից ասել է մի քանի անտեղի, թէպէտ և ճշմարիտ խօսքեր—դրանից ի՞նչ։ Դահլիճում նորից լռութիւն տիրեց, իսկ դրա հետ միասին վերադարձաւ և նախկին համակրանքը դէպի Օգնեանովը, որը դարձեալ նկատում էր բոլորի դէմքերին բարեկամական հայեացքներ,—բոլոր մայրերը և ազնիւ սրտերը նրա կողմն էին և Օգնեանովը օրուայ հերոսն էր։

Քննութիւնները շարունակուեցին և վերջացան խաղաղ կերպով։ Աշակերտուհիները երգեցին հրաժեշտի երգը և հասարակութիւնն սկսեց ցրուել։

Երբ Օգնեանովը մօտեցաւ Ռադային մնաս բարև ասելու, նորատի վարժուհին յուզուած կերպով ասաց նրան․

—Սրտագին շնորհակալութիւնս եմ յայտնում ձեզ, պարո՛ն Օգնեանով, իմ և իմ աշակերտուհիների կողմից։ Ես երբէք չեմ մոռանալ այդ բարեբարութիւնը։—Եւ նա իւր խոր, գեղեցիկ աչքերի հայեացքները ձգեց Օգնեանովի վրայ։

—Օրիո՛րդ, ես ինքս էլ ուսուցիչ եմ եղած և այդ պատճառով մտայ ձեր դրութեան մէջ,—ուրիշ ոչինչ։ Շնորհաւորում եմ ձեզ ձեր աշակերտուհիների յառաջադիմութեան համար,—ասաց նա, պինդ սեղմելով օրիորդի ձեռքը։

Օգնեանովը հեռացաւ։ Նրա գնալուց յետոյ Ռադայի աչքերին արդէն չէին երևում ոչ մէկը այն հիւրերից, որոնք մօտենում էին նրան մնաս բարև ասելու։

ԺԹ.

ԲՈՅՉՕ ՕԳՆԵԱՆՈՎ

—

Կրալիչի նոր ընկերների ընդհանուր խորհրդակցութեան ժամանակ որոշուեց, որ նա բացարձակ բնակուի քաղաքում, պահպանելով «Բոյչօ Օգնեանով» անունը, որ ակամայ նրան տուել էր Վիկենտին: Ընկերներն սկզբում չէին համաձայնւում. բայց Օգնեանովը շուտով փարատեց նրանց երկիւղը: Նա հաւատացրեց, որ հեռաւոր Վիդինում, ուր բացի Մարկօ Իվանովից ոչ ոք չէր գնում, հազիւ թէ մէկը լսէր նրա մասին, կամ, որն աւելի դժւար է, ճանաչէր նրան.—ութնամեայ բանտարկութիւնը Ասիայում, տանջանքներն ու կլիման ծերացրել էին նրան և անճանաչելի դարձրել: Բանտը և տանջանքները չսառեցրին Օգնեանովի մէջ այն գաղափարի սէրը, որի համար նա չարչարուեց, այլ, ընդհակառակը, նրան դարձրին աւելի յափշտակուած իդէալիստ—համարձակ մինչև ինքնամոռացութիւն, Բուլղարիան սիրող՝ մինչև մոլութիւն և ազնիւ՝ մինչև անձնազոհութիւն: Նա եկել էր Բուլղարիա, որ անձնատուր լինի նրա ազատութեան գործին: Մի մարդու, որ փախել էր բանտից, ապրում էր այստեղ կեղծ անուան տակ՝ առանց մի որ և է հասարակական և ընտանեկան կապերի, առանց ապագայի, առանց կեանքի արշալոյսի, որին ամեն ժամ կարող էին մատնել կամ ճանաչել,—մի այսպիսի մարդու միմիայն մեծ գա-

ղափարն էր ընդունակ Բուլղարիա բերել և դարձեալ այդ գաղափարը կարող էր նրան կատարած երկու սպանութիւնից յետոյ այստեղ պահել: Ինչո՞վ նա կարող էր օգտակար լինել այստեղ: Ի՞նչպիսի հող կար այստեղ գործունէութեան համար: Իրագործելի՞ էր արդեօք նրա նպատակը—նրան յայտնի չէր: Նա գիտէր միայն, որ մեծամեծ արգելքների և դժուարութիւնների պէտք է հանդիպէր:

Առաջին օրերը հաջի Րովոամայի տարածած լուրի շնորհիւ, Օգնեանովից խոյս էին տալիս բոլոր մարդիկ, որոնց հետ ընկերները կամենում էին ծանօթացնել նրան: Սակայն նրա մեծահոգի վարմունքը քննութեան ժամանակ, որի պատճառը Ստեֆչովի ցածութիւնն էր, մի ակնթարթում նրա առաջ բացուեցան բոլորի տան դռները և սրտերը: Օգնեանովն ամբողջ քաղաքի ցանկալի հիւրը դարձաւ: Նա ընդունեց Մարկօ Իվանովի և Միչօ Բէյզեդէտօի առաջարկութիւնը և ուսուցիչ եղաւ՝ քաղաքում մի որ և է որոշ հասարակական դիրք ունենալու համար: Նրա դպրոցական ընկերներն էին—աւագ-ուսուցիչ Կլիմենտ Բէյլչէվը, Ֆրանգովը, Պոպովը և երգեցողութեան ուսուցիչ Ստեփան Միրզվենչիևը, որն աւանդում էր նաև Թուրքերէն լեզուն: Առաջինը ռուսական սեմինարիստ էր և, դրանց բոլորի նման, բարեհոգի, անգործնական և յափշտակուած մի երիտասարդ. Նա վանահօր մօտ, որը նրան յաճախում էր, միշտ Դերժավինի «Աստուած» օդան և Խոմեակովի բանաստեղծու-

թիւններն էր կարդում՝ հարկաւոր շարժմունքներով։ Բայց Մարկօն դրանցից աւելի գերադասում էր Ռուսիայի մեծութեան և Բոնապարտի պատմութիւնները։ Պապովը մի վստահ, տաք բնաւորութեան տէր երիտասարդ էր և մի ժամանակ Լեհկուբարեկամն էր եղած։ Նա հիացմամբ ընդունեց իւր նոր ընկերոջը և սրտով կապուեց նրա հետ։

Միայն Մերզվինչիեր մի անտանելի մարդ էր իւր բուռն համակրութեամբ դէպի Թուրքերէն լեզուն և Թուրքերը։

Օգնեանովը դասեր էր տալիս նաև օրիորդաց դպրոցում և հետևապէս իւրաքանչիւր օր տեսնւում էր Րադայի հետ։

Ամէն անգամ նա այդ աղջկայ հոգու մէջ նորանոր դրաւիչ յատկութիւններ էր նշմարում և աննկատելի կերպով սիրահարուեց նրա վրայ։

Հարկաւո՞ր է արդեօք ասել, որ Րադան էլ արդէն նրան էր սիրում…

Դեռ այն օրը, երբ նա այնպիսի մեծահոգութեամբ պաշտպանեց Րադային, վերջինս համակուած էր կանացի շնորհակալութեան այն զօրեղ զգացմունքով, որը առաջին վայրկեանում միայն շնորհակալութիւն է, իսկ երկրորդում—նա փոխւում է սիրոյ։ Այդ խեղճ սիրտը, որը քնքոյշ գուրգուրանքի և կարեկցութեան կարիք էր զգում, մաքուր և անսահման կերպով սիրեց Օգնեանովին։ Նրա մէջ Րադան գտաւ իւր ցնորքների և յոյսերի մթին իդէալը․ և այդ կենսատու զգացմունքի ազդեցու-

թեան տակ Րադան գեղեցկանում և աճում էր, որպէս մայիսեան վարդ։

Մի քիչ ժամանակ էր հարկաւոր, որ այդ մաքուր, ազնիւ սրտերը բացուէին միմեանց առաջ։ Իւրաքանչիւր օր Օգնեանովը բաժանւում էր Րադայից աւելի երջանիկ և աւելի յափշտակուած նրանով։ Այս նոր սէրը աճում և զարգանում էր նրա՝ դէպի Բուլղարիայի ազատութիւնը տածած վաղեմի սիրոյ հետ։

Սակայն շատ անգամ ծանր մտածմունքները, մառախուղի նման, ծանրանում էին նրա սրտի վրայ։ Ի՞նչ կը լինի այս անմեղ արարածի դրութիւնը, որին նա կապում է իւր անյայտ ապագայի հետ։ Ո՞ւր է տանում նրան… Ո՞րտեղ նրանք երկսով կարող են ապաւինել… Նա—կռուի ընդհարումների և պատահարների այս մարդը—քաշ է տալիս դէպի իւր զարհուրելի ճանապարհը մի անմեղ, սիրող երեխայի, որը սիրոյ օրհնեալ ճառագայթների տակ նոր էր սկսել ապրել։ Այդ մաքուր հոգին որոնում, սպասում է նրանից երջանիկ և փայլուն ապագայ, ուրախալի և անդորր օրեր․ ի՞նչ իրաւամբ ուրեմն նա դէպի այդ արարածի գլուխն է դարձնում այս հարուածները, որոնք մինչև այժմ բաղդը միմիայն նրա համար է պատրաստել…

Ո՛չ, նա պարտաւոր է յայտնել Րադային բոլորը, պարտաւոր է բանալ նրա աչքերը, որ նա գիտենայ, թէ ինչպիսի մարդու հետ է կապել իւր կեանքը։ Այդ մտածմունքները սոսկալի կերպով

ժանրացել էին Օգնեանովի հոգու վրայ և թեթեւութիւն գտել անկեղծ և ազնիւ խոստովանութեան մէջ։

Նա գնաց Ռադայի մօտ։

Ռադան վանքից տեղափոխուել էր դպրոց, որտեղ նա գրաւել էր մի փոքրիկ, համեստ կահաւորուած սենեակ։ Այս սենեակի միակ հաճելի զարդը, ինքը, նրա մէջ բնակուողն էր։

Օգնեանովը հրեց դուռը և ներս մտաւ։

Ռադան արտասուքների միջից ժպտալով դիմաւորեց նրան։

—Ռադա՛, դու լա՞ց ես եղել։ Ինչո՞ւ համար են այդ արտասուքները, իմ թռչնակ.—և նա քնքշաբար բռնեց օրիորդի գլուխն ու սկսեց փայփայել կարմրած այտերը։

Նա ազատուեց Օգնեանովի ձեռքերից, աչքերը սրբելով։

—Ի՞նչ է պատճառը,—անհանգիստ կերպով հարցրեց նա։

—Տիրուհի Հաջի Ռովոաման հենց նոր այստեղ էր,—պատասխանեց Ռադան ընդհատուող ձայնով։

—Անպատուե՞ց քեզ այդ կոյսը։ Դարձեա՞լ չարչարեց։ Ասա՛ ինձ, Ռա՛դոչկա, ի՞նչ արաւ նա... Հա՛ց, սրանք իմ ստանաւորներս են, ո՞վ է ոտնակոխ արել։

—Տեսնո՞ւմ ես, Բոյչօ, տիրուհի Հաջի Ռովոաման է կոխկրտել դրանց, յատակին ձգել։ «Ապստամբական երգեր» են,—գոչեց նա և այնպիսի

սոսկալի խօսքեր ասաց քեզ համար... Ի՜նչպէս լաց չլինիմ ես...

Օգնեանովը լուրջ դէմք ընդունեց։

—Ի՞նչ սոսկալի խօսքեր կարող էր ասել նա իմ մասին։

—Էլ ինչեր չասաց նա։ Խռովարար, հայդուկ, չարագործ... Աստուա՜ծ իմ, ինչպէս այդ կինը խիղճ չունի...

Օգնեանովը մտախոհ նայեց Ռադային և ասաց նրան.

—Լսի՛ր, Ռադա՛, մենք մտերմացել ենք, բայց միմեանց դեռ չենք ճանաչում... կամ, աւելի ճիշտն ասած, դու ինձ չես ճանաչում... Այդ յանցանքն իմս է... Ասա՛, դու կը սիրէ՞ր ինձ, եթէ ես մի այնպիսին լինէի, ինչպէս նա անուանել է ինձ։

—Մի՛ ասիր, Բոյչօ, ես քեզ լաւ եմ ճանաչում, դու ամենաազնիւ մարդն ես և դրա համար էլ ես քեզ սիրում եմ։—Եւ նա երեխայի նման փաթաթուեց Օգնեանովի վզովը և նայեց ուղիղ նրա աչքերի մէջ։

Ռադայի պարզամիտ խօսքերից զգացուած, նա դառնապէս ծիծաղեց։

—Դու էլ ինձ ես ճանաչում, այնպէս չէ՞, սիրելիս. եթէ ոչ, մենք միմեանց չէինք սիրել,—շշնջում էր Ռադան, իր խոշոր աչքերը նրան ուղղելով։

Օգնեանովը քնքշաբար համբուրեց նրան և ասաց.

—Ռա՛դոչկա, սիրելիդ իմ, ազնիւ մարդ լինելու համար, ինչպէս դու ինձ անուանում ես, ես

պարտաւոր եմ յայտնել այն բաները, որոնք դու չգիտես։ Իմ սէրը թոյլ չի տալիս ինձ վշտացնել քեզ, բայց խիղճս ուրիշ կերպ է ասում։ Դու պէտք է իմանաս, թէ ինչպիսի մարդու հետ ես կապուած... Ես իրաւունք չունիմ այլես լռելու...

—Ասա ինձ բոլորը. նստենք,—ասաց Ռաղան շփոթուած։

Օգնեանովը նստեցրեց նրան և ինքն էլ նստեց մօտը։

—Ռաղոչկա, հաջի Ռոստամն ասել է, որ ես խռովարար եմ։ Նա չգիտէ, նա ամէն մի երիտասարդ և ազնիւ մարդու խռովարար է համարում։

—Այո, այո, Բոյչօ, նա շատ չարասիրտ կին է,—շտապով ասաց Ռաղան։

—Բայց ես ճշմարիտ որ այդպիսի մէկն եմ։

Ռաղան զարմացած նայեց նրան։

—Այո, Ռաղա, ես խռովարար եմ և այն, ոչ լոկ խօսքով. ես այնպիսիներից եմ, որոնք ապստամբութիւն են պատրաստում։

Նա լռեց։ Ռաղան ոչինչ չպատասխանեց։

—Ես մտադիր եմ ապստամբութեան դրօշ բարձրացնել գարնանը։ Դրա համար էլ այս քաղաքումն եմ գտնւում։—Ռաղան լուռ էր։

—Դա իմ ապագան է, մթին, վտանգներով լի ապագան։

Ռաղան շփոթուած նայում էր նրան, բայց ոչինչ չէր ասում։ Այդ սառն լռութեան մէջ Օգնեանովը իւր դատավճիռն էր կարդում։ Իւրաքանչիւր խօսքի հետ յօդս էր ցնդում նրա սէրը դէպի

այդ աղջիկը։ Նա ջանք գործ դրեց իւր վրայ և շարունակեց խոստովանութիւնը։

—Այդ է իմ ապագան։ Այժմ կը պատմեմ քեզ իմ անցեալը։

Ռաղան իւր անհանգիստ աչքերը ձգեց նրա վրայ։

—Դա աւելի մթին է, Ռաղա, եթէ չասեմ փոթորկալից։ Գիտցած եղիր, որ ես ութը տարի բանտարկուած եմ եղել Ասիայում իբրև քաղաքական յանցաւոր և ես, Ռաղա, փախել եմ Դիարբէքիրից։

Ռաղան աւելի ևս շփոթուեց։

—Ասա, Ռաղա, կոյսն այդ է՞լ ասաց քեզ։

—Չգիտեմ,—կարճ պատասխանեց Ռաղան։

Օգնեանովը րոպէաչափ լուռ մնաց. տխուր մտածմունքից յետոյ նա շարունակեց.

—Նա ինձ չարագործ և մարդասպան է անւանել... բայց չգիտէ. առաջ նա ինձ լրտես էր անուանում։ Սակայն լսիր...

Այս անգամ Ռաղան զգաց, որ մի սոսկալի բան պէտք է լսէ, և գունաթափուեց։

—Լսիր, ես երկու մարդ եմ սպանել, և այն —մօտ օրերս։

Ռաղան ակամայ ցնցուեց։

Օգնեանովը չէր համարձակւում նրան նայել. նա խօսում էր երեսը պատին արած։ Նրա սիրտը թրթռում էր, կարծես երկաթէ ունելիքի մէջ լինէր։

—Այո՛, ես սպանել եմ երկու Թուրք—ես, որ ճանճ անգամ չէի վիրաւորիլ... Ես պարտաւոր էի դրանց սպանել, որովհետև նրանք կամենում էին իմ աչքերիս առաջ սոսկալի կերպով անպատուել մի աղջիկ—իմ և նրա հօր աչքերի առաջ, որին նրանք կապել էին։ Այո՛, ես մարդասպան եմ և ինձ նորից սպառնում է Դիարբեքիրը կամ կախաղանը։

Ռադան յետ դարձաւ և օտարոտի կերպով նայեց նրան։

—Խօսի՛ր, խօսի՛ր...—ասաց նա մարած ձայնով։

—Այժմ դու ամէն ինչ գիտես... ես բոլորը ասացի,—պատասխանեց Օգնեանովը։

Նա պատրաստւում էր լսել իր սոսկալի դատավճիռը, որը կարդում էր Ռադայի դէմքի վրայ։

Ռադան ընկաւ նրա վզովը։

—Դու իմն ես, դու ամենաազնիւ մարդն ես,—բացագանչեց նա։—Դու հերոս ես, իմ սիրելիս...

ԺԳ.

ՍԻՐԱՅԻՆ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Աստիճանների վրայ ծանր քայլեր լսուեցան, որից ամբողջ հին փայտեայ շինութիւնը դողդողաց։

Բոյչօն ականջ դրեց և ասաց.

—Դա բժշկապետի քայլուածքն է։

Ռադան վազեց լուսամուտի մօտ և իր այրուած դէմքը կպցրեց ապակուն՝ յուզմունքը թաքցնելու համար։

Բժշկապետն իր սովորութեան համեմատ աղմկալի կերպով սենեակը մտաւ։

—Կարդացէ՛ք,—ասաց նա՝ մի բրօշիւր տալով Օգնեանովին,—կրա՛կ է, եղբայր, իսկ և իսկ կրա՛կ։ Մարդ գժւում է... Պէտք է համբուրել այն ոսկեայ ձեռքերը, որոնք գրել են այս։

Օգնեանովը բաց արաւ բրօշիւրը։ Սա Ռումինիայում ապաստանուածների մի հրատարակութիւն էր։ Այդ տեսակ գրքոյկների մեծամասնութեան նման, սա էլ հայրենասիրական գանակօծ ֆրազներով, դատարկ ճարտասանութեամբ ու յուսահատ բացագանչութիւններով և Թիւրքիայի հասցէին ուղղուած հայհոյանքներով լցուած մի չափաւոր գրուածք էր։ Սակայն հենց իր այդ տեսակ պարունակութեամբ նա գրգռում էր Բուլղարիայում ազատ խօսքի կարօտ ընթերցողների վառ երևակայութիւնը։ Բոլորովին ճմրթուած և կեղտոտուած երեսների ողբալի դրութիւնից երևում էր, որ նա հարիւրաւոր ձեռքեր էր անցել և հազարաւոր սրբտերի սնունդ տուել։

Սոկոլովին արբեցրել էր կարդացածը։ Նոյն իսկ Օգնեանովը, որ Սոկոլովից աւելի զարգացած էր, հիացման մէջ էր և չէր կարող աչքը գրքոյկից հեռացնել։ Բժշկապետը նախանձալից հայեացքով նայում էր նրան և չհամբերելով, գրքոյկը խլեց նրա ձեռքից։

—Կա՛ց, տո՛ւր, ես կը կարդամ քեզ համար,—և սկսեց կարդալ բարձր ձայնով, որն իւրաքանչիւր ֆրազից յետոյ, աւելի և աւելի crescendo էր

գնում. Նա ձախ ձեռքով կտրում էր օդը, ամեն մի զօրեղ ֆրազի ժամանակ ոտքը խփում յատակին և շանթարձակ հայեացքներ էր ձգում Բոյչօի և Ռադայի վրայ, որոնց հոգու նախկին քաղցր յուզմունքը՝ Սոկոլովի ռազմասիրական հրճուանքի շնորհիւ՝ բոլորովին փոխուեց: Սենեակը և ամբողջ դպրոցը թնդում էր նրա ձայնից, որը հասել էր ամենաբարձր նօթաների: Երբ վերջապէս նա հասաւ երկար բանաստեղծութեանը, որով վերջանում էր բրօշիւրը, կանգ առաւ յուզուած, քրտնաթաթախ և դարձաւ Օգնեանովին.

—Կրա՛կ է, կրա՛կ, եղբայր: Ա՛ռ, մնացածը դու կարդա՛... Ես յոգնեցի... Ո՛չ, ո՛չ, տուր այս կողմ, դու բանաստեղծութիւնները կարդում ես այնպէս, ինչպէս տէր-Ստավրին «Հայր մեր»-ն է ասում, տպաւորութիւնը կը փչացնես: Դու ա՛ռ, Ռադկա՛:

—Վեր ա՛ռ, Ռադա, դու լաւ ես ատենաբանում,--ասաց Օգնեանովը:

Օրիորդն սկսեց կարդալ:

Բանաստեղծութիւնն էր, արձակ գրուածքի նման, լիքն էր բացականչութիւններով և ոգեւորութեամբ, սակայն բաւական անշնորհ էր գրուած: Բայց և այնպէս Ռադայի քաղցրահնչիւն ձայնը և յուզմունքը իւրաքանչիւր տանն առանձին ոյժ և կեանք էին տալիս:

Բժշկապետն ագահութեամբ կուլ էր տալիս իւրաքանչիւր խօսքը, միևնոյն ժամանակ շարունակ ոտքը խփելով յատակին: Ամենահետաքրքրական տե-

ղում յանկարծ դուռը բացուեց և ներս մտաւ վանքի աղախինը:

—Դուք ինձ կանչեցի՞ք,—հարցրեց նա:

Բժշկապետը կատաղութեամբ նայեց նրան, առանց մի խօսք ասելու սենեակից դուրս հրեց խեղճ կնոջը և նրա յետևից սաստկութեամբ դուռը խփեց: Խեղճ աղախինը, որը ներքին յարկում էր բնակւում, շփոթուած տուն գնաց և բարկացաւ իւր որդոց վրայ, որ նրանք սուս մնան, որովհետև վարժուհին դաս է տալիս ուսուցչին և բժշկապետին:

Կինը նոր էր դուրս գնացել սենեակից, երբ դուռը դարձեալ բախեցին:

--Ո՞ր սատանան է կրկին գալիս այստեղ,—զայրացած գոռաց բժշկապետը:—Սպասի՛ր, ես այժմ դրան լուսամուտից դուրս կը ձգեմ...—Եւ նա բաց արաւ դուռը:

Ներս մտաւ մի փոքրիկ աղջիկ՝ նամակը ձեռքին:

—Ո՞ւմն է այդ նամակը,—կոպտաբար հարցրեց նա:

Աղջիկը մօտեցաւ Ռադային և նամակը տուեց նրան:

Ռադան նայեց հասցէին, որը գրուած էր իրեն անծանօթ ձեռքով, զարմացած բաց արաւ նամակը և սկսեց կարդալ: Բոյչօն անհանգստութեամբ նրան էր նայում: Նա նկատեց որ մի անհաւասար կարմրութիւն ծածկեց Ռադայի դէմքը և յետոյ ժպիտ երևաց նրա վրայ:

—Այդ ո՞վ է գրել,—հարցրեց Բոյչօն:

—Ահա առ, կարդա։

Բոյչօն առաւ նամակը և հետևեալը կարդաց։

«Իմ գեղեցիկ տիրուհի!

«Ներեցէք իմ յանդգնութեանը, որ համար-
«ձակւում եմ գրել ձեզ սոյն նամակը։ Սակայն,
«թէև մենք դեռ ևս անծանօթ ենք և ես պատիւ
«չեմ ունեցել ձեզ հետ ծանօթ լինելու, բայց,
«աւա՜ղ, գեղեցի՛կ տիրուհիս, ես գիշեր-ցերեկ տանջ-
«ւում եմ ձեզ համար և իմ դիւրազգաց սիրտս
«ձգտում է դէպի ձեզ, որպէս գարնանային ծա-
«ղիկը դէպի արևը։

«Արհամարհանքով երես մի՛ դարձնէք այս նա-
«մակից, որովհետև սա արդիւնք է իմ ունեցած
«սիրոյս առ ձեզ։ Ձեր սքանչելի աչքերի նետերը
«հարուածել են իմ սրտի խորքերը։ Աւա՜ղ... Աւա՜ղ...
«Կը համարձակուի՞մ արդեօք ասել ձեզ, որ մինչև
«անգամ եկեղեցում—Աստուծոյ այս տաճարի մէջ—
«երբ ես Քերովբեականն եմ երգում, նօթաների
«մէջ ձեր գեղեցիկ դէմքն եմ տեսնում. ձայնս եկե-
«ղեցումն է, իսկ միտքս սաւառնում է քո հրա-
«պուրիչ պատկերի շուրջը և դրախտային թագով
«պսակւում։ Ներեցէ՛ք իմ հոգուս համարձակու-
«թեանը և սրտիս թուլութեանը, որով ես խոս-
«տովանւում եմ ձեզ, որպէս մի հոգևորականի։
«Եւ ամբողջ կեանքս ես պատրաստ եմ տալ ձեզ
«համար, զոհուել ձեր սիրոյ համար։ Մինչև ան-
«գամ և այժմ, որպէս ձեր անկեղծ բարեկամը, ես
«պատրաստ եմ անձս զոհ բերել ձեզ. այդ պատճա-
«ռով ես ձեզ նախազգուշացնում եմ, որ դուք

«շրջահայեաց լինիք խօսքերի և վարմունքի մէջ
«ձեզ յայտնի Օգնեանովի հետ, որովհետև նա չա-
«չաձեյչի անձնա—ոյա—նբ—ն (այսինքն—լրտես!!!) է։ Այս
«մասին ձեզ տեղեկութիւն տալը թելադրում է
«իմ մաքուր սրտից բղխած սէրս դէպի ձեզ։ Իսկ
«որպէս զի աւելի ապացուցած լինիմ սէրս, ես
«պատրաստ եմ սովորեցնել ձեզ Արմունդիուս Պա-
«պարիգոպուլօի նոր երգը, որի համար ոչ մի վար-
«ձատրութիւն չեմ ուզում, բացի ձեր ազնուամիտ
«հաչեացքը։ Յոյս եմ տածում, որ դուք ձեր բա-
«րեհաճ նամակով կը պատասխանէք ինձ, և թոյլ
«չէք տալ, որ իմ քնքոյշ սիրտս կորստեան և յու-
«սահատութեան մատնուի...

«Ձեր յաւիտենականստրուկ
Ստեփան Հ. Դ. Մերդվենջիև»։

Բոյչօն ծիծաղից թուլացաւ։

—Ա՜խ, այս Մերդվենջիևը... Ուրեմն նա իմ հակառակորդս է, Ռադա, և այն ի՜նչպիսի զարհուրելի հակառակորդ... Ես զարմանում եմ, թէ այդ յիմար գլուխն ինչպէս կարող էր մի այդպիսի նամակ շարադրել։ Հարկաւոր է նամականին նայել, թէ որտեղից է նա գողացել այդ։

Ռադան ծիծաղելով պատռեց նամակը։

—Ինչո՞ւ ես պատռում։ Պատասխանի՛ր նրան, —բացագանչեց Սոկոլովը։

—Ախր, ի՞նչ պատասխանեմ։

—Գրիր նրան—«Օ՜-օ̃-օ̃-օ̃, դու ամենաքաղցրաձայն սոխակ։ Օ՜-օ̃-օ̃-օ̃, դու երաժշտագէտ գեղձանիկ։ Օ՜-օ̃-օ̃-օ̃, դու ամենաքնքշասիրտ թռչնակ...

Ես ամենաբարձր պատիւ ունեցայ այսօր, ժամը վեցին»,—շարունակում էր Սոկոլովը, ժամացոյցին նայելով, և յետոյ դարձաւ Օգնեանովին:

—Տեսնո՞ւմ ես, ինչպիսի սոսկալի անպիտանն է այդ գոնչը, ինչպիսի զարշելի քսուն: Ախր գուլրտես: Ա՛յ քեզ: Եթէ ես քո տեղը լինիմ, մի լաւ ապտակ կ՚ուտեցնեմ նրան...

—Է՛հ, հօղ այդ չիմարին:

—Ո՛չ, ո՛չ, անպիտաններին չպէտք է արհամարհել, այլ հարկաւոր է պատժել նրանց: Իրաւո՞ւնք տուր ինձ,—ասաց բժշկապետն սպառնալով:

—Ի՞նչ պէտք է անես: Քար մի՛ ձգիր ճահիճը—կը կեղտոտուես...

—Ա՜, կա՛ց,—գոչեց բժշկապետը գլուխը բռնելով, կարծես ուզում լինէր դուրս չթողնել այնտեղից մի նոր ծագած միտք:

—Ի՞նչ կայ:

—Մի բան կայ: Սպասի՜ր,—և նա ծիծաղից թուլացաւ:

Օգնեանովը հարցական դէմքով նայեց նրան:

—Ոչի՛նչ, ոչի՛նչ... Մնաս բարև... Զմռռանաս առաւօտը Սիլիստրա գալ:

—Յետո՞յ, ի՞նչ մտածեցիր անելու:

—Դեռ կը տեսնուենք, մնաս բարև, մնաս բարև:—Բժշկապետն շտապով հեռացաւ:

Տուն հասնելով, նա կանացի գրի ձևով Մերդվենջիևին հետևեալ խօսքերը գրեց.

«Շնորհակալ եմ. գրաւորն անյարմար եմ «գտնում: Երեկոյեան կսպասեմ ձեզ Եակիմի-

«չինա տատի այգում: Դռնակը բաց կը գըտ-«նէք:—Ա՜խ, ա՜խ...»:

«Ձեզ յայտնի N»:

28 սեպտեմբերի 1876 թ.

Երգիչն եկաւ սիրային տեսակցութեան: Սակայն Րադայի փոխարէն նրան կատաղի մռնչիւնով դիմաւորեց Կլէոպատրան, որին Սոկոլովը բերել և կապել էր իւր բնակարանին կպած այգու մութ անկիւնում:

ԺԳ.

ՍԻԼԻՍՏՐԱՅԻ ՄԱՐԳԱԳԵՏԻՆԸ

Այսպէս անուանւում էր վանքական հովտի մէջ մի գեղեցիկ կանաչազարդ դաշտ: Այս սքանչելի անկիւնը, իւր տեղագրութեան շնորհիւ, չնայելով որ արդէն աշուն էր, անձեռնամխելի պահպանել էր իւր կանաչն ու թարմութիւնը և նմանում էր Կալիպսօ կղզուն, որտեղ, ինչպէս յայտնի է, թագաւորում է մշտական գարունը: Գետի միւս կողմում երևում էին բարձր, սպիտակ դարափուլներ, որոնք զարհուրելի կերպով ճեղճղուած և փորփրուած էին հեղեղներից: Սքանչելի զովութիւն և աստուածային շնորհ էր տիրում այս բանաստեղծական անկիւնում:

Մեր նկարագրած ժամանակ այստեղ հաւաքւում էին զուարճութեան սիրահարները, իսկ նրանց թիւը քիչ չէր։

Երբ Սոկոլովը և Օգնեանովը եկան, Սիլիստրայի մարգագետնում արդէն տարածուել էր զուարճասէր խմբի աղմուկը։ Ի միջի այլոց այնտեղ էին—Նիկոլայ Նետկովիչը, հասկացող և զարգացած գլխի տէր մի երիտասարդ. ռուսաց համալսարանի ուսանող Կանդովը, որ Բուլղարիա էր եկել առողջութիւնը կազդուրելու համար. սա մի շատ կարդացած, բայց ծայրայեղ գաղափարախօս մարդ էր. պարոն Ֆրատիւն. Ֆրանգովը—տաք-գլուխ ուսուցիչը. չափազանց վառուած հայրենասէր Պոպովը. Դիմչօ քահանան—նոյնպէս հայրենասէր և հարբեցող. վերջապէս կոյր Կոլչօն։ Սա տեսողութիւնից զրկուած մի երիտասարդ էր. լղար, վշտահար, բայց չափազանց ազդու դէմքով։ Նա գեղեցիկ կերպով սրինգ էր ածում, որի հետ ճանապարհորդել էր Բուլղարիայի բոլոր կողմերը, ուրախ ընկեր և լաւ պատմութիւններ անող էր և այդ պատճառով՝ ամէն տեսակ զուարճալի ժողովների անդամ։

Ճաշը բացած էր ծաղկաւոր սփռոցի վրայ, կանաչապատ գետնին։ Երկու չափ գինի— մէկը կարմիր, միւսը սպիտակ—պաղում էին սառն առուակի մէջ, որն անցնում էր հովտի միջով։ Մի քանի քայլ հեռու տեղաւորուած էր գնչուների երգեցիկ խումբը և բոլոր ոյժով երգում էր թրքական երգեր։ Մի կլարնէտ և երկու թմբուկ իրենց զանգակներով

լրացնում էին այդ խումբը։ Ճաշը շատ զուարճալի էր։ Կենացները հետևում էին միմեանց յետևից և այն ժամանակուայ սովորութեան համաձայն խմւում էին նստած դիրքով։

Առաջին կենացը Իլիա Չետաքրքիրն առաջարկեց.

—Ողջ կացէք, ընկերներ։ Ով ինչ ցանկանում է, թող Աստուած տայ նրան։ Ով որ մեզ վատ է կամենում, թող Աստուած նրան փչացնէ։ Եւ թող մեզ ատողները սողան փոշիների մէջ։

Բաժակներն աղմկալի կերպով խմուեցան։

—Կեցցէ մեր ընկերութիւնը,—բացագանչեց Ֆրանգովը։

—Ես խմում եմ Սիլիստրայի մարգագետնի և նրա երկրպագուների կենացը,—առաջարկեց տէր-Դիմչօն։

Պոպովը վեր առաւ բաժակը և բացագանչեց.

—Եղբայրնե՛ր, խմում եմ բալկանեան առիւծի [20]) կենացը։

Երաժշտութիւնը, որն այն է—լռում էր, նորից սկսեց և իր ձայնով խափանեց կենացները. բայց պարոն Ֆրատիւն, որը դեռ իր կենացը չէր առաջարկել, վեր կացաւ, նշան արեց գնչուներին լռել, չորս կողմը նայեց և բաժակը ձեռքին հրճուանքով ասաց.

—Պարոննե՛ր, ես առաջարկում եմ խմել բուլղարական liberté-ի (ազատութեան) համար։ Vivat! (կեցցէ՛)—և խմեց իր բաժակը։ Բայց ընկերները, որովհետև լաւ չհասկացան նրա առաջարկութիւնը, դեռ բարձր բռնել էին իրենց լիք բաժակները,

նրա ցնծալից դէմքից ենթադրելով, որ նա նոր է պատրաստւում իւր ճառն ասել։ Փրատիւն, զարմանալով, որ ոչ ոքի կողմից համակրութիւն չգտաւ, շփոթուած նստեց։

—Ի՞նչ էիք ուզում ասել,—հարցրեց Կանչովը, որը նստած էր Փրատիւի դէմուդէմը։ Փրատիւն յօնքերը կախեց։

—Կարծեմ, բաւական պարզ ասացի. ես խմեցի բուլղարական ազատութեան համար։—Այս խօսքերը Փրատիւն ցած արտասանեց, կասկածանօք գնչուների կողմը նայելով։

—Ի՞նչ էք հասկանում «ազատութիւն» խօսքի տակ։

Սոկոլովը յետ դարձաւ։

—Ես կարծում եմ, որ պէտք է խմել բուլղարական ստրկութեան համար. որովհետև բուլղարական ազատութիւնը գոյութիւն չունի։

—Գոյութիւն չունի, բայց մենք ձեռք կը բերենք, բարեկամս։

—Ի՞նչպէս կարող ենք ձեռք բերել։

—Հարբելով,—ձայն տուեց մէկը՝ ծաղրելով։

—Ո՛չ, կռուելով,—եռանդագին պատասխանեց Փրատիւն։

—Փրատի՛ւ, խելքդ գլուխդ ժողովի՛ր—եզանը պոզերից են կապում, իսկ մարդուն—լեզուից,—կատակ անելով ասաց Իլիա Հետաքրքիրը։

—Այո՛, սրով, պարոննե՜ր,—գոչեց զայրացած Փրատիւն։

—Եթէ այդպէս է, ես խմում եմ սրի—ստրուկների ազատարարի կենացը,—առաջարկեց Օգնեանովը, բաժակը բարձրացնելով։

Այս առաջարկութիւնը ոգևորեց խմբին։

—Տո՛ւշ,—գոչեց մէկը,—է՜հ. «որոնում էր Նիկիֆորը» ածեցէք։—Սա այն ժամանակուայ բուլղարական մարսէլիեզն [21]) էր։

Երաժշտութիւնը որոտաց և ամբողջ խումբը երգում էր երգը։ Երբ հասան «Խփի՛ր, ջարդի՛ր, հայրենիքդ ազատի՛ր»... խօսքերին, ոգևորութիւնը սաստկացաւ, և բոլոր դանակներն ու պատառաքաղները տատանւում էին օդի մէջ։

Փրատիւն վեր առաւ մի ահագին դանակ և սկսեց սարսափելի կերպով իւր չորս կողմը շարժել։ Նրա կատաղի շարժումներից մէկը դիպաւ կարմիր գինիով լիքը բաժակին և գինին ողողեց Փրատիւի ամառնային վերնազգեստն ու անդրավարտիքը։

—Ս.ւանո՛կ,—գոչեց Փրատիւն այդտեղ այդ չարաբաղդ բաժակը դնող մանուկին։

—Պարոն Փրատի՛ւ, մի բարկանաք,—ասաց նրան տէր-Դիմչօն.—որովհետև այնտեղ, ուր կռւում են, զոհեր էլ պէտք է լինին։

Այդ ժամանակ բոլորը սարսափելի աղմուկ էին բարձրացրել, բայց ո՛չ մէկը միւսին չէր լսում, որովհետև երաժիշտները մի ինչ-որ Թրքական մարշ էին ածում և Թմբուկը խլացուցիչ ձայն էր ձգել։

Վերջապէս երաժշտութիւնը լռեց և աղմուկը դադարեց։ Կոյրն ածեց իւր սրինգը և սքանչելի,

քաղցրաձայն հնչիւնները տարածուեցան շրջակայքում։

Կոյրը դարձեալ, հանդիսաւոր լռութեան տակ, մի քիչ ժամանակ նուագեց, և բոլորը, մինչև անգամ սաստիկ տաքացած գլուխները, զմայլած լսում էին այն գրաւիչ մեղեդին, որը դուրս էր գալիս կոյրի սրինգից։ Յանկարծ նա ընդհատեց նուագը և ասաց.

—Գիտէ՞ք այժմ ես ինչ եմ տեսնում։

Բոլորը ծիծաղեցին։

—Գուշակեցէ՛ք,—ասաց Կոլչօն։

—Ի՞նչ կը տաս, եթէ գտնենք,—ձայն տուին մի քանի հոգի։

—Աստղաբաշխական հեռադիտակս։

—Ո՞րտեղ է դա։

—Լուսնի վրայ։

—Հա՛ց, դու տեսնո՞ւմ ես Միլկա Տուտուրիչկինայի կարմիր թշերը,—ասաց տէր-Դիմչօն։

—Այդ չէ. ես աւելի շուտ կարող եմ համբուրել դրանց, քան տեսնել։

—Դու տեսնո՞ւմ ես պարոն Ֆրատիւին,—ասաց Պոպովը։ Այդ ժամանակ Ֆրատիւն կանգնած էր կոյրի հանդէպ և մատները շարժում էր նրա աչքերի առաջ։

—Ոչ. մի՞թէ կարելի է տեսնել քամին։

—Արեգա՞կը։

—Ջէ՛. մի՞թէ դուք չգիտէք, որ ես նրա հետ կռուած եմ և երդուել եմ մինչև կեանքիս վերջը չնայել նրա աչքերին։

—Դու տեսնո՞ւմ ես գիշերը։

—Այդ էլ չէ. ես տեսնում եմ մի բաժակ գինի, որ ինձ կը տան—դուք մոռացել էք ինձ։

Միքանի հոգի իսկոյն գինի լցրին և ծիծաղելով առաջարկեցին նրան։

—Ողջ լերո՛ւք,—ասաց կոյրը՝ իւր բաժակը դատարկելով։—Իսկ ես ի՞նչ տարայ. չէ՞ որ դուք չկարողացաք գուշակել։

—Մնացած բաժակները, որոնք մենք լցրել ենք։

—Քանի՞ հատ են դրանք։

—Սուրբ եօթնեակ։

—Ես աւելի յարգում եմ քառասուն սուրբ նահատակներին,—նկատեց տէր Դիմչօն։

—Ձեր կենացը։

—Կեցցէ՜։

Vive la Bulgarie, vive la Republique des Balcans! [22]) գոչեց Ֆրատիւն։

Ուրախութիւնը գագաթնակէտին հասաւ։ Արդէն հանդիսատեսներ էլ կային։ Մերդվենջիևը և դարձեալ մի ինչ որ երիտասարդ կանգնած էին գետի միւս կողմը ուռենու կախուած ճղների տակ և հետաքրքրութեամբ նայում էին ուրախ խմբին։

Սոկոլովը տեսաւ դրանց և բարկութիւնը խաղաց նրա դէմքի վրայ։

Ֆրատիւն սկսեց ձեռքով անել Մերդվենջիևին։

—Մերդվենջիև՛, Մերդվենջիև՛, արի մեզ մօտ։

—Ինչո՞ւ ես կանչում այդ յիմարին,—հարցրեց նրան Պոպովը։

Բժշկապետն արմունկով պինդ խփեց նրան և նորից սկսեց նայել երգչի կողմը։

Մերդվենչիևը մի քիչ մօտեցաւ, սակայն դեռ առուակի միւս ափին էր և շփոթուած ու անվճռական կերպով շարժում էր գլուխը, —երևի բարևում էր։

Բժշկապետը գոչեց.

—Մերդվենչիև՛, երգի՛ր Արմոդիուս Պապարիգոպուլոյի նոր երգը։

Մերդվենչիևը, բժշկապետի տաքացած դէմքը տեսնելով, աւելի ևս շփոթուեց և սկսեց շտապով մօտենալ։

Խումբը հասկանալով, որ բժշկապետի կատակները լաւ բան չեն գուշակում, աղմուկ բարձրացրեց։

—Յետ դարձի՛ր, Մերդվենչիև՛, թէ չէ Կուկուրիգոպուլօ կը երգես,—ձայն տուեց մէկը։

Այդ վայրկենին բժշկապետն յովազի նման յարձակուեց Մերդվենչիևի վրայ։ Հասնելով երգչին, Սոկոլովը բռնեց նրա կռնատակերից և ուշադրութիւն չդարձնելով նրա յուսահատ աղաղակներին, գառի նման պառկեցրեց գետնին, առուակի մօտ։

—Այժմ երգի՛ր երգը,— ասաց բժշկապետը հրամայական, հանքակտուր ձայնով։

—Այդպէս, այդպէս, թող երգէ, նա սոխակ է...—կանչեցին մի քանի հոգի։

—Երգի՛ր, հրամայում եմ քո «մաքուր և քընքոյշ սրտին»։

Մերդվենչիևը, լաւ հասկանալով, որ չի կարող ազատուել բժշկապետի երկաթեայ բազուկներից

վերջնականապէս գլուխը կորցրեց։ Նա խղճալի կերպով շուրջն էր նայում։

— Մերդվենչիև՛, երգի՛ր ու գնա՛, Աստուած հետդ, – գոչեց Պոպովը։

—Թո՛ղ դրան, բժշկապե՛տ, աղաչում եմ քեզ, —բացագանչեց Ֆրանգովը։

Թող երգէ մեզ համար Արմոդիուս Պապարիգոպուլոյի նոր երգը և այն ժամանակ գնայ,—յամառութեամբ պնդեց բժշկապետը՝ իւր ուժեղ ձեռքերով սեղմելով երգչին։

Յանկարծ Մերդվենչիևը դուրս պրծաւ և գոչեց—«ես հարբեցողների համար չեմ երգում»։

Այդ ժամանակ միայն Օգնեանովը ուշադրութիւն դարձրեց աղմուկին։ Նա վազեց դէպի հրապարակը, Մերդվենչիևի մօտ։ Բայց այդ իսկ վայրկենին բժշկապետը բռնեց երգչի կռնատակերից և ձգեց նրան գետակի մէջ. լսուեց աղմուկ, ջրի ցայտում և ամբողջ խումբը ծածկուեց ջրի կաթիլներով։

Երգիչը քամուելու չափ թրջած դուրս եկաւ գետակից, ափը բարձրացաւ և որքան ոյժը պատում էր սկսեց փախչել, ընդհանուրի բարձրաձայն ծիծաղը, աղաղակը և կատակները իւր հետ տանելով։

Միմիայն բժշկապետն էր կատաղած և ընկերների թախանձագին հարցերին, թէ գործն ինչումն է, պատասխանեց.

—Նա սոր մարդ է, պարոննե՛ր։

Ուրախութիւնը տևեց մինչև երեկոյ։ Վերջապէս խումբը պատրաստւում էր գնալ քաղաք— ամէն ոք իւր գործին։

Եղբայրնե՛ր, վաղը առաւօտեան դպրոց—կրկնութեան,—գոչեց Օգնեանովը։

—Ի՞նչ պէտք է ներկայացնէք,—հարցրեց ուսանողը Օգնեանովին։

—«Գենովեւան»։

—Ո՞րտեղից էք գտել այդ անթիքան։

—Մենք որոշել ենք «Գենովեւան» գնել երկու պատճառով. նախ որ նա դրդող բնաւորութիւն չունի, այդ բանը չորբաջին էր պնդում։ Երկրորդ՝ որովհետև բոլորը կարդացել են այդ պիեսը և ցանկանում են տեսնել։ Պէտք է յարմարուիլ պահանջներին։ Չէ՞ որ մեր նպատակը աւելի արդիւնք ստանալն է։ Պէտք է գրքեր և լրագիրներ գնել ընթերցարանի համար և մէկ էլ ծխագործին է փող հարկաւոր։

Ուրախ և աղմկարար խումբն ուղղուեց դէպի քաղաք։ Շուտով նա կորաւ այգիների մէջ, որոնք արդէն երեկոյն մթութեան մէջ չէին երևում։ Քառորդ ժամ յետոյ նրանք յաղթական կերպով, յեղափոխական երգեր երգելով մտան քաղաքի մութ փողոցները։ Աղմկարար գնացքը տներից բազմաթիւ կանանց և երեխաների դուրս հրաւիրեց։

Օգնեանովն այդ խմբի մէջ չէր։ Մի տղայ ինչ-որ բան շշնջեց նրա ականջին և Բոյչօն աննկատելի կերպով ընկերներից բաժանուեց։

ԺԵ.

ԱՆԱԿՆԿԱԼ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Օգնեանովն ուղեւորուեց դէպի հիւսիս—Բալկանեան ձորակը։ Արդէն երեկոյ էր։ Արեգակը հանդարտ և փառահեղ կերպով մայր էր մտնում։ Հովիտն արդէն ծածկուած էր խաւարով։ Օգնեանովն անց կացաւ վանքի յետին կողմով, բարձրացաւ խիտ, բազմաճիւղ ընկուզենիներով ծածկուած բլուրը, այդ էլ մի կողմ թողեց, անց կացաւ գետակը, որը հոսում էր ալիքների բերած քարերին դիպչելով, և վերջապէս մտաւ Բալկանեան ձորակը, որտեղից սկիզբն էր առնում այդ գետակը։

Օգնեանովը շօշափելով բարձրացաւ մի փորփրուած շաւղով, որը ցերեկուայ համար միայն կարող էր պէտք գալ, բայց ո՛չ գիշերուայ։ Նա մտաբերեց, որ կէս տարի առաջ այս ճանապարհով ցած էր իջել սարից և թաքուն կերպով գնացել դէպի բայ Մարկօի տունը։ Շուտով խաւարը բոլորովին ծածկեց ձորը և անտեսանելի արաւ Օգնեանովին։ Նա դժուարութեամբ մագլցում էր սրածայր քարերի վրայ, որոնք ցցուած էին նրա ճանապարհին։ Եթէ մի ոք Բոյչօին այդ ժամում այս վայրենի տեղում, ահարկու ժայռերի մէջ մագլցելով տեսնէր, աւելի շուտ գազանի տեղ կը դնէր նրան, քան թէ մարդու։ Յանկարծ մի նոր աղմուկ հասաւ Օգնեանովի ականջին. դա ջրաղացի ձայնն էր։ Նա աւելի համարձակ և ինքնավստահ կերպով գնաց

ուղղակի դէպի այդ աղմուկը։ Շուտով ձորակի մթին խորքում նա որոշեց Ստոեան պապի ջրաղացի տանիքը և մի րոպէի մէջ հասաւ այնտեղ։

Ստոեան պապը դռան մօտ դիմաւորեց նրան։

—Ի՞նչպէս են գործերը, —արագ և անհանգիստ կերպով հարցրեց Օգնեանովը։

—Ո՛չինչ, փառք Աստուծոյ։

Այս պատասխանը մի ակնթարթում հանգըստացրեց Օգնեանովին։ Նա վախենում էր, թէ մի գուցէ Թուրքերի դէպքի հետքը գտել են և այդ պատճառով էլ Ստոեան պապն այս ուշ ժամին կանչել էր նրան։

—Հապա բանն ինչո՞ւմն է,—հարցրեց նորից Օգնեանովը։

—Ոչինչ, նեղի՛ր, վարժապետ, որ քեզ անհանգստութիւն պատճառեցի այստեղ գալու. գործն այդպէս էր։

Եւ Ստոեան պապը ձայնը ցածացնելով՝ աւելացրեց։

—Ես ուզում էի մեր Վիկենտիին կանչել, բայց նա այժմ հիւանդ է—ջերմում է. մեր տղան Քրիստիւն ասաց, որ քեզ տեսել է վանքի մօտերքը.—արի, վարժապետին կանչենք, այն ժամանակ ասացի ինքս ինձ, դա աւելի լաւ կը լինի։ Ուրեմն նեղի՛ր, վարժապետ։

Անհամբերութիւնը տիրեց Օգնեանովին։

—Բայց ինչո՞ւ համար ես կանչել,—հարցրեց նա երկրորդ անգամ։

—Ի՞նչպէս, դու չե՞ս հարցրել տղային։

—Չէ։

—Այդպէս, հա՛։ Բայց, փչանայ նա. չէ՞ որ ես հրամայել էի, որ երբ հարցնես նրան, կամաց ասէ քո ականջին։ Ա՛յ թէ ինչ կայ, վարժապետ։—Նա ձայնն աւելի ցածացրեց։—Բարեկամ է եկել։

—Ի՞նչ բարեկամ։

—Մեր մարդը։

—Մեր մա՞րդը։

—Դէ՞հ, հա՛,—ազգային մարդ։

— Բայց ո՞վ է նա։

—Ես նրան չեմ ճանաչում։ Սարից ցած իջաւ և ուղղակի ինձ մօտ։ Սկզբում ես վախեցայ, կարծեցի թէ աւազակ է... Մէկ տեսնե՜ս նրան... Ոտքերը կարծես մի-մի ծող լինին։ Բայց դուրս է գալիս, որ մեր մարդկանցից է։

—Նա քեզ ասա՞ց, թէ ով է և որտեղացի,—հարցրեց Օգնեանովը՝ սաստիկ զարմացած։

—Ես հարցրի, բայց նա ասաց միայն, թէ Թուրքերի ձեռքից է փախել և իջել է Բալկանից։

—Եւ ոչ մի բան չխնդրե՞ց։

—Խնդրեց։ Նա ինձանից մի կտոր հաց ուզեց. «չորս օր է, ասում է, ոչինչ չեմ կերել», և մէկ էլ խնդրեց, որ մի ազգային մարդ կանչեմ խօսելու։ Ես այն ժամանակ մտածեցի սարկաւագին կանչել։ Բայց մի՞թէ հիւանդութիւնը թոյլ կը տայ նրան։ Սարկաւագը չէր կարող և ես էլ մտածեցի ձեր ողորմածութեանը իմաց տալ։

—Դու շատ լաւ ես արել, Ստոեան պապի։

—Բայց ներիր, որ անհանգստացրի քեզ մի այնպիսի ժամանակ:

—Ո՛չ, ես շնորհակալ եմ քեզանից դրա համար: Տա՛ր ինձ այդ հիւրի մօտ:

—Ես նրան պահել եմ ամբարում. արի յետեւիցս:—Ստոեան պապը Օգնեանովին տարաւ ջրաղաց:

Մութն էր:

Նա ճրագը վառեց, Բոյչօին տարաւ պատի և երկանքի, յետոյ երկու ամբարի արանքով և կանգ առաւ մի դռան առաջ, որի վերեւից կախուած և բըքրուած սարդի ոստայների բազմութիւնը վկայում էր, որ դա երկար ժամանակ փակ էր մնացել:

—Ի՞նչ, նա այստե՞ղ է թաքնուած:

—Ի՞նչ կայ որ. ծածկած կաթը կատուները չեն ուտիլ, այնպէս չէ՞, վարժապետ:

Եւ Ստոեան պապը խփեց դռանն ու կանչեց.

—Պարո՛ն, դուրս արի, ձերդ ողորմածութիւնն...

Դուռը բացուեց և այնտեղից դուրս եկաւ մի մարդ:

Սա կարճահասակ, չորչոր, շիկահեր, չափազանց նիհար, երկար ժամանակ չածելած դէմքով, կենդանի հայեացքով և մանր շարժուածքներով մի երիտասարդ էր: Օգնեանովին սարսափեցրին նրա նիհարութիւնն ու թուլութիւնը: Նրա սպիտակ քաթանէ հագուստը, որ կպել էր դողացող մարմնին, այնքան մաշուած էր, որ թափառաշրջիկի մերկ մարմինը երեւում էր:

Հենց առաջին հայեացքից Օգնեանովը զարմացած ձայն արձակեց.

—Մուրատլի՜յսկի...

—Կրալի՜չ...

Նրանք սեղմեցին միմեանց ձեռք և պինդ համբուրուեցան:

—Ի՜նչպէս, դո՞ւ, ո՞րտեղից,—հարցրեց Օգնեանովը, ճանաչելով իւր շրջանի ընկեր — Մուրատլիյսկուն:

—Ե՛ս: Հապա դո՞ւ, քե՞զ եմ տեսնում. ճի՞շտ որ այս դու ես, Կրալի՛չ:

Կրալիչն յետ դարձաւ, շուրջը նայեց և ասաց Ստոեան պապին, որն անշարժ կանգնած էր նրանց մօտ և ճրագն էր բռնել:

—Ստոեան պապի, կրակը մարի՛ր և փակի՛ր դուռը: Կամ չէ՛, մենք դուրս կը գնանք այստեղից: Ջրի ձայնից միմեանց չենք լսիլ:

Ստոեան պապը կրակը ձեռքին առաջ գնաց և դուռը նրանց յետեւից փակեց, ասելով.

—Խօսեցէ՛ք, ես կը պառկեմ: Երբ դուք էլ կուզենաք քնել, ներս մտէք և պառկեցէք, ինչպէս կարող էք:

Ջուրը բոլորովին խաւարի մէջ էր ընկղմուած, իսկ ժայռն, ընդհակառակը, լուսաւորուած էր լուսնի լոյսով: Օգնեանովը և ընկերները քաշուեցին մի ամենամութ անկիւն և նստեցին մի մեծ քարի տակ, գալարուն և մեղմ ձայնող գետակի մօտ:

—Արի, եղբա՛յր, մի անգամ էլ համբուրուենք,—զգացուած կերպով ասաց Օգնեանովը:

—Դէ՜հ, սաս, Կրալի՛չ, ի՞նչպէս է որ դու այստեղ ես։ Ես քեզ դեռ Դիարբեքիրի զրախտումն էի կարծում։

—Հապա դո՞ւ, Դոբրիչ, դեռ կախաղան չե՞ս բարձրացել,—ծիծաղեց Կրալիչը։

Մտերմութիւնը վերահաստատուեց նրանց մէջ... Միակերպ վիճակը և տանջանքները բարեկամացնում են միմեանց բոլորովին անծանօթ մարդկանց անգամ։ Իսկ Բոյչօն և Մուրատլիյսկին եղբայրներ էին—զէնքի և գաղափարի կողմից։

———Դէ՜հ, պատմի՛ր, տեսնենք,——շարունակեց Մուրատլիյսկին.—դու աւելի հեռաւոր երկրից ես եկած, ուրեմն առաջին հերթը քոնն է։ Դիարբեքիրից ե՞րբ վերադարձար։

—Ուզում ես ասել, թէ ե՞րբ փախայ։

—Ի՜նչպէս, դու փախե՞լ ես։

—Դեռ մայիս ամսին։

—Եւ քեզ յաջողուեց անվտանգ մինչև այստե՞ղ հասնել։ Բայց ի՞նչ ճանապարհով։

—Դիարբեքիրից ես ոտքով ուղևորուեցի դէպի ռուսական Հայաստան, այնտեղից Կովկասի վրայով Ռուսիա—Օդեսսա. այս բոլորը—ռուսների շնորհիւ։ Օդեսսայի շոգենաւով՝ Վառնա։ Այնտեղից լեռներով—Տրոեանի գիւղերը և վերջապէս Հին-Լեառն անցնելով՝ հասայ Սլիւաք-Եկեղեցի։

—Բայց ինչո՞ւ դու անպատճառ Սլիւաք-Եկեղեցին ընտրեցիր։

Ես վախենում էի գնալ այնպիսի տեղ, ուր ոչ ոքի չէի ճանաչում։ Իսկ այն տեղերը, որտեղ

ծանօթներ ունէի, ես չգիտէի, թէ ինչ է պատահել և մէկ էլ նրանց չէի հաւատում։ Յանկարծ ես մտաբերեցի, որ Սլիւաք-Եկեղեցում ապրում է հօրս ամենալաւ բարեկամը—մի շատ ազնիւ մարդ։ Ես համոզուած էի, որ բացի նրանից այստեղ ինձ ոչ ոք չի ճանաչում. մինչև անգամ նա էլ չէր ճանաչիլ, եթէ ես նրան չասէի։

—Բայց ինչպէս ես քեզ միանգամից ճանաչեցի՜... Դու այստե՞ղ պէտք է մնաս։

—Այո։ Հօրս բարեկամն օգնեց ինձ ուսուցիչ դառնալ և մինչև այժմ, փառք Աստուծոյ, ամեն ինչ լաւ է գնում։

—Ուրեմն դու ուսուցի՞չ ես դարձել, Կրալի՛չ։

—Պաշտօնապէս—ուսուցիչ, գաղտնի կերպով—նախկին պարապմունքս։

—Առաքելութի՞ւն։

—Այո, յեղափոխութիւն։

—Իսկ գործերն ի՞նչպէս են ձեզ մօտ։ Մենք ընկանք։

—Այժմ լաւ են։ Ցուցմունքը մեծ է, հողը—հրաբխային։ Սլիւաք-Եկեղեցին Լևսկու բներից մէկն է եղած։

—Է՜, ի՞նչ ծրագիր ունիք դուք։

—Ծրագիր դեռ չունինք։ Մենք դեռ միայն տեսականաբար ենք պատրաստւում, իսկ յետոյ ժամանակը ցոյց կը տայ, թէ ինչպէս պէտք է վարուել։ Բայց յուզմունքն օր-աւուր աճում է—թէ այստեղ և թէ մօտակայ տեղերում. վաղ թէ ուշ, մենք ապստամբութիւն կունենանք...

— Բրա՜վօ. Կարլի՛չ, կեցցե՜ս դու։

— Իսկ այժմ, դու պատմիր քո մաքսաւորութիւնները։

— Քեզ արդէն բոլորն յայտնի է... Հին-Զագորում մենք բոլորովին յաղթուեցինք, այնպէս որ ամօթ է անգամ մարդկանց երեսը նայել...

— Ո՛չ, ո՛չ, սկզբից սկսի՛ր — այն ժամանակից, երբ մեր խումբը բաժանուեց և մենք անջատուեցանք։ Ութ տարի Դիարբէքիրում մնալով, ես ոչինչ չեմ լսել ո՛չ քո և ո՛չ միւսների մասին։

Մուրատլիյսկին ձգուեց քարի վրայ, ձեռքերը գլխի տակ դրեց և այս հանգիստ դիրքով երկար ժամանակ իւր պատմութիւնն էր անում։ Նա՝ Դիմիտրի Ընդհանուր անունով մասնակցել էր Սոֆիայի ապստամբութեանը և Օրքանիի փոստի կողոպտմանը։ Դրանից յետոյ բանտարկուել և հրաշքով միայն ազատուել էր Դիարբէքիրից կամ կախաղանից։ Ապա անցնելով Ռումինիայի սահմանը, մէկ և կէս տարի թափառել էր և կռուել է քաղցի և չքաւորութեան դէմ. իսկ այնտեղից յատկապէս քարոզչութեան համար Բուլղարիա էր վերադարձել, որ նորից դիմադրէ այն վտանգներին և արհաւիրքներին, որոնք միշտ հետամուտ են լինում ազատութեան սերմանողներին։ Այս գարնանը նա անցել էր Հին-Զագորա և եռանդով աշխատել ապստամբութեան պատրաստութեան համար։ Այդ շարժման տխրալի վախճանից յետոյ, որի ժամանակ նա թեթև կերպով վիրաւորուել էր Ելխովոյի մօտ թուրքերի հետ տեղի ունեցած փոքրիկ կռւում,

հալածուած թուրք խուզարկուներից և իւր բուլղար գիւղացիներից, որոնցից նա հացի և իւր յեղափոխական հագուստի [23]) փոխարէն—գիւղական շորեր էր խնդրում, բարձրացել էր Հին-Լեառը։ Տասն օր նա այսպէս թափառել էր Բալկանների մէջ՝ հազարաւոր վտանգների ու տանջանքների ենթարկելով իւր անձը։ Զարհուրելի քաղցածութիւնն ստիպեց նրան ցած իջնել լեռներից և հաց խնդրել առաջին պատահողից։ Բարեբաղդաբար նա պատահել էր Ստոեան պապին։ Եւ Մուրատլիյսկին յուզուած ձայնով խօսեց այն լաւ ընդունելութեան մասին, որը ցոյց էր տուել նրան ջրաղացպանը, որովհետև սա առաջին մարդն էր, որ եղբայրաբար էր վերաբերուել նրան սկսած այն օրից, երբ վերջինս ստիպուած էր թափառել Բալկանների մէջ։

Մուրատլիյսկին լռեց։ Գետակն աղմկում էր նրա ոտքերի մօտ։ Բայց շրջակայքում ամայի էր և լուռ։ Միւս ափի ահագին ժայռերը, որոնք լուսաւորուած էին լուսնի լոյսով, կանգնած էին որպէս լուռ վկաներ։ Միմիայն գիշերային հանդարտ քամին նրանց վերևը խորհրդաւոր կերպով շարժում էր վայրի խոտերն ու մացառները։

Օգնեանովն յուզմունքով լսեց Մուրատլիյսկու պատմութիւնը նրա արկածների և վտանգների մասին։ Նա Մուրատլիյսկու հետ միասին կրում էր բոլոր վրդովմունքները, տանջանքները, դառն հիասթափումը և ամօթից մեռնում, տեսնելով ժողովրդի մէջ այն ստորութեան նշանները, որոնք հետևում են իւրաքանչիւր անյաջող ապստամբութեան։ Եւ

Նա եղբայրական կարեկցութեամբ լցուած այժմ Մուրատլեյսկու վիճակի վրայ էր մտածում։

—Ի՞նչ ես մտադիր անել այժմ,—հարցրեց նրան Բոյչօն։

—Նորից Ռումինիա գնալ. միայն դու ինձ համար հագուստ և անցագիր ձեռք բեր։

Օգնեանովը մտածմունքի մէջ ընկաւ։

—Ի՞նչ ես անելու այնտեղ։

—Կը սպասեմ մի ժամանակ... յետոյ դարձեալ յեղափոխութեան յետևից կը լինիմ... դու գիտես... սովորութիւն է...

—Հարկաւոր չէ՛, դու հազիւ շունչ ես քաշում, քեզ հարկաւոր է կազդուրուել։ Կա՛ց այստեղ։

—Թաքո՞ւն ապրելու համար... Կապերով կապես— չեմ մնալ։ Կամաւոր բանտարկութիւն ես չեմ ցանկանում։

—Քեզ հարկաւոր չէ՛ թաքնուել,—ասաց Օգնեանովը կարճատև մտածմունքից յետոյ։

—Ի՞նչպէս։

—Դու ինձ նման ազատ ման կը գաս քաղաքում և կաշխատես ինձ հետ միասին։

—Ուրախութեամբ կանէի այդ... Բայց խելքդ հօ չե՞ս կորցրել, Կրալիչ։ Հենց առաջին օրը ես Թակարդը կընկնեմ։ Ինձ լապտերներով են որոնում։

—Նրանք որոնում են միայն խռովարարների և այն—բուլղար խռովարարներին։

—Իսկ ե՞ս ով եմ.—և նա ծիծաղեց։

—Դու կը լինիս մի պատուաւոր և խաղաղ լուսանկար, և այն էլ աւստրիացի։

—Ես քեզ չեմ հասկանում։

Օգնեանովը ժպտաց և, մթութեան մէջ Մուրատլեյսկու երեսը նայելով, շարունակեց.

—Քո մազերը կապկի մազերի նման երկարացել են։ Վաղը երեկոյեան ես քեզ իմ տունը կը տանեմ և մենք քեզ կածելենք։ Կը թողնենք միայն բակենբարդներ։ Համաձա՞յն ես։

—Համաձայն եմ։

—Յետոյ մենք կածելենք նաև քո բեխերը։

—Այդ զոհն էլ կը բերեմ.—ծիծաղելով ասաց Մուրատլեյսկին։

—Յետոյ մենք քեզ կը եւրոպականացնենք. մեր մի բարեկամից, որն երեկ Ռումինիայից եկաւ, կը վերցնենք նրա գերմանական հին հագուստը. մեզ մօտ կայ նաև երկաթուղային կոնդուկտորի մի գլխարկ—ոսկեթել ժապաւէնով,—և այն ժամանակ՝ «գուտ մորհեն, մէյին հեռ»։

—Լա՜ւ «աւստրիացի» կը դառնամ. բայց ինչ կերպով ես մտադիր ինձ լուսանկար դարձնել։

—Դու ֆոտոգրաֆիա կը բանաս։ Սրանից երեք տարի առաջ այստեղ յեղափոխութիւն առաջ բերելու նպատակով ապրում էր լուսանկար... X-ովը։ Այստեղից հեռանալիս նա իւր լուսանկարչական փչացած գործիքը թողել է իմ լաւ բարեկամի—Նեկտովիչի մօտ։ Մենք կիսատ-պռատ կը նորոգենք, կը գնենք հարկաւոր իրեղէններ և դու կը սկսես նկարել մեր Սպիտակ-Եկեղեցու ազնուաբարոյ բնակիչներին։

—Բայց ես երազումս էլ լուսանկարչութիւն չեմ արած:

—Կը սովորես: Աչքերը կը փչացնես, քթերը կաւելացնես, բերանները կը ծռես, շատերի դէմքերը կայլակերպես և վերջ ի վերջոյ վարպետ կը դառնաս:

—Բայց գիտցած եղի՛ր, որ ամենից առաջ փորձս քեզ վրայ կանեմ:

—Շատ գեղեցիկ:

—Եւ ես պարտաւոր եմ մոռանա՞լ բուլղարերէնը:

—Բուլղարերէն դու չգիտէիր էլ... Դու պէտք է միայն գերմաներէն կամ չեխերէն խօսես. չեխերէնը մօտ է մեր լեզուին և դրա տասը խօսքերից մէկը կը հասկանան. յետոյ երբ ժամանակ կանցնի, դու մի քանի բուլղարերէն խօսքեր կը ծամծմես: Կարծում եմ որ չեխերէնը դեռ չես մոռացել:

—Քեզանից յետոյ ես մի տարի Պիսեկումն եմ ապրել...

—Դա լաւ է, որովհետև մեր մօտ եղած աւստրիական անցագիրը մի ինչ որ Երոսլավ Բրզոբէզունեօկ անունով չեխի է տրուած:

—Ինչպէ՞ս, Երոսլավ Բրզոբէզունեօ՞կ:

—Այս շատ սքանչելի չեխական անուն է և բոլորովին քեզ համար, որովհետև դու ճիշտ որ Բրզոբէզունեօկ (արագավազ) ես—ոտքով անցել ես Բալկանեան Թերակղզու կէսը: Ուրեմն Դոբրից Մուրատլիյսկին այսուհետև ու ընդմիշտ Թող լինի

պան [24]) Երոսլավ Բրզոբէզունեօկ, աւստրիացի չեխ, որը ծնուել է լուսանկարչական գործիքը մէջքին:

Եւ Օգնեանովը գլխարկը վեր առնելով, ասաց.

—Ցաէնի պանէ Եարօսլավէ, պրօսիմ վաս աբիստէ ֆօտօգրաֆօվալի մնէ [25]):

—Վէլ'մի դօբժէ, պանէ Եանէ [26]),—նոյն զուարճալի տօնով պատասխանեց Մուրատլիյսկին:

—Կա՛ց: Ես այլևս Իվան Կրալիչ չեմ. այստեղ ինձ Բոյչօ Օգնեանով անունով են ճանաչում: Լա՛ւ միտդ պահիր այս:

—Դու այնուամենայնիւ շահուած ես... Ինձ նման չպէտք է օտարի մորթու տակ լինիս: Ա՜խ պանէ Եանէ, պանէ Եանէ...

—Պանէ Բոյչօ... հենց նոր ասացի քեզ,—ընդհատեց նրան Օգնեանովը.—դու քո անուշադրութեամբ կարող ես մատնել ինձ... Լա՛ւ յիշիր դերդ, պանէ Եարօսլավէ:

ԺԶ.

ՄԵՌԵԱԼՆԵՐՆ ՍԿՍՈՒՄ ԵՆ ԽՕՍԵԼ

Լուսադէմին Օգնեանովն ուղևորուեց դէպի տուն: Նա անցաւ Բալկանեան ձորակը և գնում էր վանքի մօտով: Վանքի հանդէպ, դաշտում մեծամեծ ընկուզենիների տակ բաց գլխով զբօսնում էր վանահայրը: Նա զուարճանում էր այս միջավայրի առաւօտեան գեղեցկութեամբ՝ Բալկանի Թարմ և

կազդուրիչ օդը ծծելով: Աշնանային բնութիւնը—ծառերի ոսկեգոյն տերևներով, Բալկանի թաւշեայ լանջերով և դողորիկ թարշամութեամբ ու մելամաղձոտութեամբ—մի առանձին գեղեցկութիւն ունի:

Օգնեանովը և վանահայրը ողջունեցին միմեանց:

—Սքանչելի տեղեր են, հա՛յր,—ասաց Օգնեանովը:—Դուք երջանիկ էք, որ կարող էք ապրել բնութեանն այսչափ մօտ և զուարճանալ նրա աստուածային չքնաղութեամբ: Եթէ երբ և իցէ իմ մէջ ցանկութիւն զարթնի դէպի ձեր կոչումը, այդ բանը դէպի բնութեան այս յաւիտենական գեղեցկութիւնն ունեցած սիրուց կ'առաջանայ:

—Զգոյշ կա՛ց, Օգնեանով, առաքելութիւնը թողած՝ վարդապետութիւն ընդունել—դու մի քանի ամսիեան ցած կ'իջնես: Պարապի՛ր քո գործով: Բացի դրանից, ես քեզ իմ վանքս չէի ընդունիլ. դու, որպէս անաստուած, անհաւատ կը դարձնես հայր Երոթէյին անգամ,—կատակ անելով աւելացրեց վանահայրը:

—Ի՞նչ պտուղ է այդ ծերունին,—յանկարծ հարցրեց Օգնեանովը:

—Մի շատ հոգեսէր և պատուարժան միաբան է, շատ նման Սաբաովթ ասածուն. սակայն մի պակասութիւն ունի—իւր փողերը գետնի մէջ է թաղում, որտեղ դրանք փթում են... Քանի անգամ նրան ասել ենք, որ ընդհանուր գործին նուիրէ,—նա չհասկացող է ձևանում. այնպէս որ մեր մէջ մի առած կայ, թէ՝ «դմբօ է, հայր Երոթէյի նման»... Բայց դու այսպէս վաղ ո՞րտեղից ես գալիս:

—Ես գիշերել էի Ստոեան պապի ջրաղացում:

Վանահայրը զարմացած նայեց նրան:

—Դու վախենո՞ւմ էիր քաղաքում գիշերել:

—Ո՛չ, ընկերներիցս մէկն այնտեղ էր եկել ինձ տեսնելու:

Եւ Օգնեանովը պատմեց իւր հանդիպումը Մուրատլիյսկու հետ:

—Բայց ինչո՞ւ վանքը չեկաք դուք,—յանդիմանօրէն ասաց վանահայրը.—չէ՞ որ դուք այնտեղ ցորենով լիքը պարկերի վրայ քնեցիք...

—Մեր յեղափոխական ընկերը խստապահանջ չէ. նա ամեն բանի սովորած է:

—Թող Տէրն օրհնէ ձեզ... իսկ ի՞նչ անունով նրան մկրտեցիք:

—Երասլաւ Բրզոբէգունեակ:

Հայր Նաթանաէլը ծիծաղեց:

—Դուք առաքեալներդ յանդուգն մարդիկ էք: Նայեցէ՛ք, «կուժը ջրի ճամբին կը կոտրուի»:

—Մի՛ վախենաք, յեղափոխականներն էլ, ինչպէս և առաքեալները, Աստուած ունին,—իմաստալից կերպով ասաց Օգնեանովը և ծիծաղեց...—Պա՛հ, դու հրացանդ էլ ես վերցրել հետդ,—բացագանչեց նա, տեսնելով ծառի բնին դէմ տուած հրացանը:

—Առաւօտեան գլխումս միտք ծագեց փորձել հրացանս... Վաղուց է ձեռքս չեմ առել... Դու մեր ժողովրդին ուղիղ ճանապարհից հանել ես—ամբողջ օրը վանքի առաջ սրա ձայնն է լսւում... Այդ սէրը մեռեալներին անգամ գրաւում է, ուր մնաց ինձ, հինօրեայ մեղաւորիս...

—Վատ չէ, հայր-սուրբ, որ դու նորից փորձում ես հրացանդ։

Այսպէս խօսելով նրանք մօտեցան այն ահեղ, անմոռանալի գիշերուայ ջրաղացին։

Դրա տեսքը խոր կնճիռներ առաջ բերեց Օգնեանովի դէմքի վրայ։

Ջրաղացն այժմ անմարդաբնակ էր։ Ջրաղացպան Ստոեանը դեռ այն ժամանակ թողել էր այդ և մի նորը վարձել, ինչպէս մեզ յայտնի է, վանքի գետակի մօտ։

Այդ անտէր մնացած և կռատուկներով ծածկուած ջրաղացն այժմ, այս սքանչելի տեղում նմանում էր աւելի շուտ մի գերեզմանի։

Այդ միջոցին գաղտագողի կերպով մօտեցաւ Մունչօն, կանգնեց և իւր անմիտ աչքերն ուղղեց դէպի Օգնեանովը։ Նրա յիմար, ապուշ դէմքի վրայ մի ինչ-որ օտարոտի ժպիտ էր խաղում։ Անմիտ հայեացքի մէջ կարդացւում էին և՛ երկիւղ, և՛ համակրութիւն, և՛ զարմանք, որոնք միշտ դրդւում էին Մունչօի հոգու մէջ՝ Բոյչօին տեսնելիս։ Անցեալ տարի նա մի ժանդարմի առաջ հայհոյել էր Մահմէդին և դրա համար սոսկալի ծեծ կերել նրանից։ Այդ դէպքից յետոյ Մունչօի խամրած գիտակցութեան մէջ միայն մի զգացմունք, մի միտք, մի փայլ էր կենդանի մնացել — զարհուրելի, գիւական արհամարհանք դէպի Թուրքերը։ Երկու Թուրքի սպանութեան և նրանց Թաղման պատահական վկան լինելով, նրա մէջ վառւել էր զարմանք, երկիւղ և համակրութիւն դէպի Օգնեանովը։ Այդ

զգացմունքը հաւասար էր համարեա ծիսակատարութեան։ Նա Օգնեանովին, յայտնի չէ թէ ինչու, «Ռուսիացի» էր անուանում։ Սկզբում, այն գիշերը Օգնեանովից վախեցած լինելով, յետոյ, որովհետև վանքում յաճախ էր տեսնում, Մունչօն ընտելացաւ նրան։ Ապուշը աչքը չէր հեռացնում Օգնեանովից և նրան իւր պաշտպանն էր համարում։ Երբ վանքի ծառաները մի բանով վիրաւորում էին, Մունչօն նրանց «Ռուսիացու» անունով էր վախեցնում.— «Սպասիր, Ռուս-սխ-ացցուն կկասեմ, ննա ձձեզ կրմմորթթէ»։ Բայց բարեբաղդաբար նրան ոչ ոք չէր հասկանում, որովհետև Մունչօն նոյնը կրկնում էր քաղաքում եղած ժամանակ։ Վանահայրը և Բոյչօն ուշադրութիւն չդարձրին Մունչօի վրայ, որը շարունակ գլուխը պտտցնում և բարեկամաբար ժպտում էր։

—Ահա աւագ ժանդարմը գալիս է,—ասաց վանահայրը։

Ճիշտ որ, ժանդարմը, հրացանը ձեռքին և պայուսակն ուսին մօտեցաւ նրանց։ Նա որսի էր գնում։

Սա 35 տարեկան փքուած դեղին դէմքով և մեծ ուռուցիկ ճակատով, մանր գորշագոյն աչքերով և ծոյլ, քնկոտ հայեացքով մի մարդ էր։ Երեւում էր, որ աֆիոն էր գործածում։ Բարեւելով և որսի մասին մի քանի խօսք փոխարկելով, ժանդարմը վանահօր ձեռքից հրացանն առաւ և որպէս հրացանաձգութեան սիրահար, լաւ նայելուց յետոյ ասաց.

—Պատուելի հա՛յր-սուրբ, փառաւո՛ր կարաբին ունիք. ի՞նչ բանի էք ուզում խփել:

—Ինքս էլ չգիտեմ, Շէրիֆ-աղա՛... մի տարուց աւելի է, որ ձեռքս չեմ առել. արի՛, ասացի ինքս ինձ, գոնէ զատարկեմ:

—Բայց ի՞նչ նշան ես ընտրել,—հարցրեց ժանդարմը և ձեռքն առաւ իւր հրացանը, ճարպիկութիւնը ցոյց տալու յայտնի ցանկութեամբ:

—Բլուրը,—պարզ ասաց փանահայրը.—այնտեղ տեսնո՞ւմ ես այն կռատուկի գլխարկանման տերեւը, փորուած կաւի մօտ:

Ժանդարմը զարմացած նայեց նրան:

—Չէ՞ որ դա չափազանց հեռու է:

Եւ նա ծունկ չոգեց, հրացանն յենեց քարին և տասը վայրկենաչափ նշան դրեց:

Հրացանը որոտաց: Գնդակը նպատակից մի քանի քայլ հեռու դիպաւ:

Մի թեթև զայրոյթ երևաց Շէրիֆ աղայի յանկարծակի կարմրած դէմքի վրայ:

—Մի անգամ էլ,—ասաց նա և այս անգամ արդէն րոպէաչափ նշան դրեց: Երբ հրացանը որոտաց, նա ցատկեց տեղից և աչքերը տնկեց դէպի կռատուկը: Սակայն այս անգամ գնդակը կռատուկից աւելի հեռու՝ բլրին դիպաւ:

—Անիծուա՜ծ,—ասաց նա բարկացած.—յարգելի հա՛յր-սուրբ, այսպիսի հեռու նշան երբեք չի տրւում: Հապա՜, այժմ դու խփիր: Միայն, ասեմ քեզ, գնդակն ի զուր կը կորչի... Տե՛ս, որ գոնէ բլրին էլ է խփես,—աւելացրեց ժանդարմը ծաղրելով:

Վանահայրը մեկնեց հրացանը, նշան դրեց և խկոյն արձակեց:

Կռատուկն օրօրուեց:

—Հրացանը դեռ ևս հնազանդւում է ինձ,— ասաց վանահայրը:

—Պատահմունք է,—բացագանչեց ժանդարմը.—նորից արձակի՛ր:

Վանահայրը երկրորդ անգամ նշան դրեց և արձակեց: Գնդակը դարձեալ կռատուկին դիպաւ: Ժանդարմը զունատուեց: Նա բարկութեամբ ասաց.

—Հա՛յր սուրբ, դու ուղիղ աչք ունիս, միայն չեմ հաւատում առարկութեանդ, թէ դու մի ամբողջ տարի հրացան չես արձակել... Դու կարող էիր դասեր տալ ձեր երիտասարդներին, որոնք այստեղ իւրաքանչիւր օր հրացանաձգութեամբ են պարապում...

Ցետոյ չարամտութեամբ աւելացրեց.

—Շա՜տ են երես առել: Ինչ-որ բան են նիւթում նրանք... էհ, սատանան դեռ իւր ոտքերն է կոտրատում...

Ժանդարմի ատելութեամբ լի հայեացքն այժմ դարձած էր Օգնեանովի վրայ:

Այդ բոլոր ժամանակ Մունչօն նրանցից բաւական հեռու էր կանգնած. բայց որքա՜ն փոխուել էր նա այժմ: Անմիտ երկիւղը և անասնական ոխը այլակերպել էին նրա դէմքի գծագրութիւնը: Նա այժմ սպառնալի կերպով՝ բերանը բաց և թևերը տարածած նայում էր ժանդարմին, ինչպէս մի մարդ, որը պատրաստւում էր մի ուրիշի վրայ յարձակուել:

Ժանդարմը մեքենայաբար այն կողմը դարձաւ և արհամարհանքով նրան նայեց։ Ապուշի դէմքն աւելի գազանային արտայայտութիւն ստացաւ և նա բղաւեց։

—Ռուս-սի-աջցին քեզ էլ կըսպաննէ՜.—և հայհոյեց նրան։ Ժանդարմը բուլղարերէն քիչ հասկանում էր, սակայն Մունչօի խօսքերից ոչինչ չորոշեց։

—Ի՞նչ է գոռում այդ անասունը,—հարցրեց նա վանահօրը։

—Չարամտութեամբ չէ, պարո՛ն. մի՞թէ չես տեսնում, թէ ինչ դրութեան մէջ է նա։

—Ինչպէ՜ս զայրացած է Մունչօն. քաղաքում եղած ժամանակ նա անհամեմատ հեզ է լինում,—նկատեց Բոյչօն։

—Չգիտե՞ս միթէ, իւրաքանչիւր աքաղաղ իւր սրահումն է կանչում։

Այդ միջոցին մի բծաւոր գեղեցիկ որսկան շուն կաշուէ վզնոցով, որից կախուած էր կորած թռչի մի կտոր, հեռուից երևաց. նա ուղիղ վազում էր դէպի այն կողմը, որտեղ ջրաղացն էր։

Բոլորի ուշադրութիւնը գրաւեց։

—Մոլորուել է շունը. երևի որսորդները հեռու չեն,—նկատեց վանահայրը։

Օգնեանովն ակամայ ցնցուեց։

Շունը հասաւ ջրաղացին, հոտոտեց դուռը և ցաւալի ոռնոցով սկսեց ճանկռոտել շեմքը։

Մի սառսուռ անցաւ Օգնեանովի մարմնով։

—Ա՜հ, կորած Եմեքսիզ Պահլեվանի շունն է,—գոչեց ժանդարմը։

Շունը, որին Օգնեանովն իսկոյն ճանաչեց, վազում էր ջրաղացի շուրջը, թաթերով փորում էր գետինը և ոռնում։ Յետոյ իւր երկար խոնաւ դունչը դէպի վեր բարձրացնելով, կարծես ուզում լինէր, որ իրեն տեսնէին. նա սկսեց զայրացած հաչել։ Այդ հաջոցը զարհուրելի կերպով արձագանք էր տալիս Օգնեանովի հոգու մէջ։ Վանահայրը սարսափահար նայեց նրան։ Ժանդարմը մեծ տարակուսութեամբ հետամուտ էր լինում այդ տեսարանին։

Շունը նրանց կողմը նայելով հաչում էր և ոռնում։ Յանկարծ նա յարձակուեց Օգնեանովի վրայ։ Վերջինը գունատուած յետ քաշուեց, որովհետև շունը գայլի նման կատաղել էր։

Մեքենայաբար նա իւր դաշոյնը հանեց և սկսեց պաշտպանուել կատաղած կենդանուց, որին վանահայրն ի զուր վռնդել էր աշխատում։

Ժանդարմն անխօս նայում էր այս օտարոտի տեսարանին։ Նա կասկածելի և չարագուշակ հայեացքներ էր ձգում Օգնեանովի և նրա փայլփլուն դաշոյնի վրայ։ Բայց տեսնելով որ Օգնեանովը կարող է սպանել իւր վրայ յարձակուող կենդանուն, մէջ ընկաւ և վռնդեց նրան։ Յետոյ դառնալով դէպի Օգնեանովը, որը կարմրել էր և դժուարութեամբ էր շունչ քաշում, հարցրեց.

—Պարո՛ն, ինչո՞ւ շունն այդպէս բարկացած է քեզ վրայ։

—Մի անգամ, չգիտեմ որտեղ, ես նրան քարով խփել եմ,—կեղծ սառնարիւնութեամբ պատասխանեց Օգնեանովը։

Ժանդարմը կասկածելի և հետաքննին հայեացք ձգեց նրա վրայ։ Ակներև էր, որ պատասխանը գոհացում չտուեց նրան։

Մի մթին կասկած ծնեց նրա մէջ։ Սակայն Շէրիֆ-աղան որոշեց յետոյ մտածել այդ մասին։ Ձևացնելով, թէ Օգնեանովի այս պատասխանը հաւանական գտաւ, նա ասաց.

—Այո, շների այս ցեղը չափազանց ոխապահ է։

Յետոյ մնաս բարև ասաց վանահօրը և շուտով կորաւ Բալկանեան ձորակի մէջ։

Շունն արդէն պոչը բարձր բռնած վազում էր դաշտով՝ իւր նոր տիրոջ յետևից հասնելու համար։

—Մի՞թէ, դուք այդ անիծուածին չսպանեցիք, շուարած հարցրեց վանահայրը։

—Ես նրան կիսամեռ ջրտունը ձգեցի, որ այնտեղ խեղդուի, բայց դժբաղդաբար, ինչպէս երևում է, նա նորից կենդանացել է — փնթփնթաց Օգնեանովը։— Ուղիղ էր ասում Ստոեանը, հարկաւոր էր նրան էլ միւս շների հետ թաղել։ Եւ ո՞ր սատանան այստեղ բերեց այդ աւազակ Շէրիֆին։ Դժբաղդութիւնն առհասարակ այն ժամանակ է գալիս, երբ նրան ամենից քիչ ես սպասում։

—Արդեօք միւսներին էլ լաւ սպանե՞լ ես... չլինի թէ նրանցից մէկն էլ շան նման յարութիւն առնի,— յանդիմանօրէն հարցրեց վարդապետը։— Երբ մարդիկ մի որ և է գործի են ձեռք խփում, նախ քան թողնելը, հարկաւոր է մինչև վերջն անել... Դու, Բոյչօ, թերավարժ ես այս գործի մէջ։ Տա՜յ Աստուած, որ մի բան դուրս չգայ։ Թուրքերն

արդէն սկսել էին հաւատալ մեր տարածած լուրին. է՜հ, իսկ այժմ, տեսնենք...

Նոյն միջոցին Օգնեանովի հայեացքն ընկաւ այն տեղի վրայ, որտեղ թաղուած էին թուրքերը։ Քարերի մի ամբողջ բլուր էր երևում այնտեղ։ Ոչ Օգնեանովը և ո՛չ Ստոեանն էին ձգել այդ քարերը։ Նա իւր զարմանքն յայտնեց վանահօրը։ Հայր Նաթանաէլը հանգստացրեց նրան. մի հասարակ դէպք կարող էր լինել այդ քարերի կուտակման պատճառը։ Նրանք երկուսն էլ չգիտէին, որ Մունչօն իւրաքանչիւր օր գալիս էր այստեղ և անէծքով քարեր զարկում թուրքերի գերեզմանի վրայ. այսպիսով հետզհետէ կազմուեց մի բլուր։

Օգնեանովը ձեռքը մեկնեց։

—Ո՞ւր ես գնում։

— Մնաս բարև, շտապում եմ. ներկայացման համար ահագին թուով գործեր կան անելու։ Այդ անիծուած շան պատճառով ես կը մոռանամ դերս։

—Իսկ ի՞նչ դեր ունիս։

—Կոմսի։

—Կոմսի՞։ Բայց ո՞րտեղ է քո կոմսութիւնը,— կատակ արաւ վարդապետը։

—Դիարբէքիրի բերդը, և ես, ով ուզէ, նրան կընծայեմ այդ...

Օգնեանովը հեռացաւ։

Ժե.

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

«Բազմատանջ Գենովեվա» դրաման, որը պէտք է ներկայացնէին երեկոյեան տղայոց դպրոցում, անծանօթ է բազմաթիւ երիտասարդ ընթերցողներին։ Իսկ այն ինչ՝ «Ալեքսանդրիայի», «Խորամանկ Բերդոյլդայի» և «Միխայլի» հետ նա երեսուն տարի սրանից առաջ ճաշակ էր զարգացնում և զմայլեցնում այն ժամանակուայ սերունդին։ Նրա բովանդակութիւնը համառօտակի հետևեալն է։ Մի գերմանացի կոմս, Սիգֆրիդ անունով, գնում է Սպանիա պատերազմելու մավրերի դէմ, անմխիթար վշտի մէջ թողնելով կնոջը—Գենովեվա կոմսուհուն։ Հենց որ նա հեռանում է, փոխանորդը—Գոլոսը—գալիս է կոմսուհու մօտ և սկսում նրան անպատիւ առաջարկութիւն անել, որը Գենովեվան տհաճութեամբ մերժում է։ Քինախնդիր Գոլոսը սպասում է կոմսուհու հաւատարիմ ծառային, Դրակին, նրան բանտ է ձգում,—իսկ կոմսին գրում, թէ նրան Դրակի հետ է բռնել։ Զայրացած կոմսը հրաման է ուղարկում սպանել անհաւատարիմ ամուսնուն։ Սակայն Գոլոսի ուղարկած դահիճները խղճում են կոմսուհու վրայ և տանում նրան լեռները, այնտեղ են թողնում մի այրի մէջ, ճակատագրի կամքին, իսկ Գոլոսին ասում, թէ կոմսուհին սպանուած է։ Եօթը տարի յետոյ, կոմսը վերադառնում է անյաջող վերջացած պատերազմից և պա-

լատում թողած Գենովեվայի մի նամակից իմանում է նրա անմեղութիւնը և ողբում անժամանակեայ կորուստը։ Նա շղթայում է Գոլոսին, որը խղճի խայթերից խելագարւում է։ Յետոյ միտքը ցրելու համար կոմսը գնում է լեռները որսի և պատահմամբ գտնում կոմսուհուն նրա երեխայի և մի վայրի այծի հետ, որը նրանց կերակրելիս է եղել իւր կաթով։ Նրանք ճանաճում են միմեանց և ուրախութեամբ վերադառնում պալատ։ Այս պարզ և սրտաշարժ տեսարանները մեծ տպաւորութիւն էին թողնում քաղաքի բոլոր պառաւ և նորահաս կանանց վրայ և նրանք մինչև այժմ էլ յիշում են Գենովեվայի լեգենդան, իսկ միքանիսը բերանացի գիտեն ամբողջ դրաման։

Ահա թէ ինչո՛ւ առաջիկայ ներկայացումն արդէն միքանի օր յուզում էր հասարակութեանը։ Դրան անհամբերութեամբ սպասում էին որպէս մի դէպքի, որը պէտք է հաճելի փոփոխութիւն մտցնէր Սպիտակ-Եկեղեցու միակերպ կեանքի մէջ։

Բոլորն աշխատում էին թատրոն ընկնել։ Հարուստ տիկինները պատրաստում էին իրենց զարդ ու զարդարանքը. աղքատները ծախում էին իրենց ձմեռուայ գործուածքները և տոմսակ գնում, որ ստացած փողերը աղի կամ սապոնի վրայ չծախսեն։ Ընդհանուր խօսակցութիւնը ներկայացման մասին էր.—և դա մի առ ժամանակ յետ մղեց բոլոր բամբասանքները։ Եկեղեցում պառաւները հարցնում էին միմեանց՝ «Գենո, երեկոյեան պէտք է գնա՞ս Գենովեվայի ներկայացմանը» և պատրաստւում էին

լաց լինել չարատանջ Գենովեվայի վրայ։ Տանը հետաքրքրութեամբ խօսում էին, թէ ով ինչ դեր պէտք է խաղայ և մեծ հաճութեամբ յայտնում միմեանց, թէ կոմսը—Օգնեանովը կը լինի։ Խարդախ, յետոյ խելացնոր Գոլոսի դերը վերցրել էր Ֆրատիւն, որը սիրում էր զօրեղ տպաւորութիւններ առաջ բերել (դրա համար նա դիտմամբ արդէն մի ամսից աւելի մազերը չէր խուզել)։ Իլիա Հետաքրքիրը վերցրել էր ծառայի—Դրակի դերը և օրական քսան անգամ կրկնում էր իր մահը Գոլոսի սրով։ Նա յետոյ պէտք է կատարէր և կոմսի շան դերը և քիչ աշխատանք չէր գործ դնում հաչելու արուեստի վրայ։ Գենովեվայի դերը նախ ենթադրում էին տալ Վիկենտի սարկաւագին, որովհետև երկար հիւս և դէմքի քնքոյշ գոյն ունէր, բայց երբ իմացան, որ հոգևորական անձը չի կարող բեմ դուրս գալ, այդ դերը տրուեց մի ուրիշին, որն ստիպուած էր մի ինչ-որ սպիտակ օծանելիքով բեխերը ծածկել։ Բաժանուած էին նաև միւս երկրորդական դերերը։

Մեծ ջանքերից յետոյ յաջողուեց դեկորացիա կազմել, որովհետև ստիպուած էին մաս-մաս ձեռք բերել այդ։ Ամենից աւելի հոգս էին քաշում վարագոյրի մասին, որը կարմիր կումաչից կարեցին. այդ բանն աւելի գեղեցկացնելու համար, յանձնեցին մի գիւղական պատկերանկարի՝ վրան քնար նկարելու։ Դուրս եկաւ խոտձգելու եղանի նման մի բան։ Կոմսի պալատը զարդարելու համար բերուած էր քաղաքի բոլոր ամենալաւ կահ-կարասիները։

Ինչ վերաբերում է հանդերձներին, դրանք նոյնն էին, որ երեք տարի առաջ գործ էին ածուել «Ռայնա իշխանուհի»-ի ներկայացման ժամանակ։ Կոմսը հագաւ Սվեատոսլավի վերարկուն, իսկ Գենովեվան—Ռայնայինը։ Գոլոսն ուսերին դրեց էպոլէտների նման բաներ և հագաւ երկայնավիզ կօշիկներ։ Գանչօ Պոպովը, որ Խունսի—դահիճներից մէկի դերն էր կատարում, կապեց իր երկար դանակը, որն ապստամբութեան համար էր պատրաստել։ Դրակը գլուխն անցկացրեց Միխալակի Ալաֆրանկայի տրորուած ցիլինդրը։ Բոյչօն իզուր բողոքում էր այդ նաշխունութեան և անպատեհութեան դէմ։ Դերասաններն յամառութեամբ պնդում էին, որ աւելի լաւ է տեսարանները փայլուն դուրս գան, և նա ստիպուած էր լռել։

Հենց որ արեգակը մայր մտաւ, թատրոնն սկսուեց լցուել։ Առաջին նստարանները գրաւեցին ամենամեծերը և բէյը, որին առանձնապէս հրաւիրել էին։ Նրա մօտ նստեցրին Դամեանչօ Գրիգորին, որ նա, ինչպէս կարող է, զբաղեցնէ բէյին։ Մնացած բոլոր տեղերը բռնեց խայտաճամուկ ամբոխը, որն աղմուկ բարձրացնելով սպասում էր վարագոյրի բացուելուն։ Կանանց մէջ ամենամեծ աղմուկ բարձրացնողը Գինկան էր, բերանացի գիտէր ամբողջ դրաման և աջ ու ձախ պատմում էր, թէ ամենից առաջ ինչ խօսքեր պէտք է ասէ կոմսը։ Միւս նստարանի վրայ Հաջի Սմիոնը պատմում էր, թէ որքա՜ն մեծ է Բուքարեստի թատրոնը և բացատրում, թէ ինչ նշանակութիւն ունի եղանը

վարագոյրի վրայ։ Երաժշտական խումբը կազմուած էր թափառաշրջիկ գնչուներից, և նրանք արդէն աւստրիական մարշ էին նուագում, երևի ի պատիւ գերմանացի կոմսուհու։

Վերջապէս հանդիսաւոր րոպէն եկաւ։ Աւստրիական մարշը դադարում է և վարագոյրը, անճռռնի ձայներ կազմելով, բարձրանում։ Ամենից առաջ դուրս է գալիս կոմսը։ Ամբողջ թատրոնը մարում է, կարծես, ո՛չ մի կենդանի հոգի չկայ այնտեղ։ Կոմսն սկսում է խօսել, իսկ Գինկան յուշարարութիւն է անում իւր նստարանից։ Բայց երբ կոմսը բաց է թողնում, կամ փոխում է մի որ և է խօսք, նա կանչում է՝ «սխալուեց»։ Փողը փչում է և ներս են մտնում Կարլոս մեծի դեսպանները, կոմսին մավրերին դէմ պատերազմելու հրաւիրելով։ Կոմսը հրաժեշտ է տալիս Գենովէվային և գնում, ուշաթափուած թողնելով նրան։ Երբ կոմսուհին ուշքի է գալիս և այլ ևս կոմսին չի գտնում, սկսում է լաց լինել։ Լացը ծիծաղեցրեց բոլորին։ Գինկան նորից կանչում է. «Աւելի բարձր լացեցիր. չգիտե՞ս միթէ ինչպէս պէտք է լաց լինել»։ Կոմսուհին բարձր աղաղակեց, իսկ թատրոնն աւելի ևս բարձր ծիծաղեց։ Ամենից բարձր Գինկան էր ծիծաղում. նա բացագանչում էր. «ա՜յ, եթէ ես լինէի այնտեղ, դուք կը տեսնէիք, թէ ինչպէս լաց կը լինէի»։ Հաջի Սմիոնը բացատրում է, թէ լացը և ծիծաղը մեծ արուեստ է. և թէ Ռումինիայում փողով մասնագէտ կանանց են վարձում, որոնք լաց են լինում ննջեցեալների վրայ։ Մի մարդ հրա-

ւիրում է նրան ձայնը կտրել, իսկ ինքը բարկանում է նրանց վրայ, որոնք լսում էին իւր պատմածը... Սակայն բեմի վրայ Գոլոսի երևալը իրերի դրութիւնը փոխում է։ Գոլոսը փորձում է Գենովէվայի ողջախոհութիւնը, որը նրան արհամարհանքով է պատասխանում և կանչում Դրակին, կոմսին նամակ ուղարկելու համար։ Մտնում է Դրակը. բոլորը ծիծաղում են նրա ցիլինդրի վրայ և այս բանը շփոթեցնում է Դրակին։ Գինկան բարձրաձայն ասում է նրան. «Դրակօ, վայր ձգի՛ր Ալաֆրանկայի պուտուկը, գլխաբաց կանգնիր»։ Նա ձգում է ցիլինդրը։ Նոր քրքիջ հասարակութեան մէջ։ Սակայն տեսարանն եղերերգական բնաւորութիւն է ընդունում։ Զայրացած Գոլոսը մերկացնում է սուրը Դրակին խողխողելու համար, բայց նախ քան նրա այդ բանն անելը, Դրակը խուրձի նման մեռած ընկնում է և անշարժ մնում։ Հասարակութիւնը գոհ չէ մնում նրա այդպիսի մեռնելովը և միքանիսը ձայն են տալիս, որ Դրակը շարժուի։ Գալիս են ծառաները և ոտքերից դուրս քաշում նրա դիակը. գլուխը քաշ է գալիս գետնին։ Սակայն Դրակօն հերոսաբար տանում է այս բոլորը և ցոյց տալիս, թէ մեռած է։ Կոմսուհուն բանտ են ձգում։

Գործողութիւնը վերջանում է. աւստրիական մարշը նորից թնդացնում է դահլիճը։ Ամենուրեք քննադատում են խաղը և ծիծաղում։ Կանայք դժգոհ են Գենովէվայից, որի խաղը նրանց դուրը չէր շարժել, այլ մինչև անգամ ծիծաղ էր առաջ բերել հանդիսականների մէջ։ Գոլոսն իւր ապերախտ դերը

բաւական լաւ կատարեց և միքանի տարիքաւոր կանանց ատելութիւնը վաստակեց։ Նրանցից մէկը մօտեցաւ Փրատիէի մօտ և ասաց նրան. «Լաւ բան չարաւ, Տանօ, ձեր Փրատիէն. ի՞նչ յանցանք ունէր այդ նորահաս կինը»։

Առաջին նստարանի վրայ Դամեան Գրիգորը մանրամասն բացատրում էր բէյին առաջին գործողութիւնը։ Նա յափշտակւում է իւր ճարտարախօսութեամբ և պատմում նրան մի ֆրանսիացի կոնսուլի մասին, որն անհաւատարմութեան համար թողել էր իւր կնոջը։ Բէյը մեծ ուշադրութեամբ լսեց նրան և վերջապէս այն եզրակացութեան եկաւ, որ կոմսը — այդ ֆրանսիական կոնսուլն է, և այդպէս էլ համարում էր նրան մինչև վերջը։

—Այդ կոնսուլն ամենամեծ յիմարն է,—ասաց նա խստութեամբ.— ի՞նչպէս կարելի է առանց կանխապէս լաւ հարցափորձի ենթարկելու հրամայել մեռցնել կնոջը։ Ես չեմ բանդարկել փողոցից վերցրած հարբածին, մինչև չհրամայեմ Միխալա ոստիկանին նրա հոգին հանել։

—Պարո՛ն բէյ,—ասաց Դամեանը.—այդ բանը մարդկանց զուարճացնելու համար է գրուած։

—Գրողն էլ է յիմար, կոնսուլն աւելի ևս յիմար է։

Նրանցից ոչ հեռու Ստեֆչովը—նոյնպէս քննադատում էր կոմսի խաղը։

—Օգնեանովը,—ասաց նա խրոխտ և հեղինակաւոր ձայնով,—երբեք աչքովը թատրոն տեսած չէ։

1930 Թ.

—Ինչո՞ւ համար. նա վատ չի խաղում,—ասաց հաջի Սմիոնը։

—Նա կապկի նման է խաղում, չի յարգում հասարակութեանը։

—Ճշմարիտ է, ես էլ նկատեցի, որ չի յարգում... Դուք տեսա՞ք, թէ նա ինչպէս նստեց Բանչօլուի բազմոցին։ Կարծես Կուզա իշխանի եղբայրը լինի...—խստութեամբ ասաց հաջի Սմիոնը։

—Հարկաւոր է նրան շուացնել,—չարամտութեամբ ասաց Ստեֆչովը։

—Հարկաւոր է, հարկաւոր,—հաստատեց հաջի Սմիոնը։

—Այդ ի՞նչ շուացնող է,—ձայն տուեց մէկը նոյն նստարանից։ Խօսակիցները յետ դարձան և տեսան Կաբլեշնիկովին։

Կաբլեշնիկովն այն ժամանակ դեռ յեղափոխական չէր։ Նա պատահմամբ այդ քաղաքը հիւր էր եկել իւր մի ազգականի մօտ։

Հաջի Սմիոնը շփոթուեց. ապագայ առաքեալի հրացայտ հայեացքը տեսնելով, նա մի կողմ քաշուեց, որ Կաբլեշնիկովին հնարաւորութիւն տայ յանցաւորին՝ Ստեֆչովին նկատելու։

—Ի՞նչ էք ուզում,—հարցրեց Ստեֆչովը։

—Ո՞վ է ուզում շուացնել։

—Ե՛ս,—յամառութեամբ պատասխանեց Կիրիակը։

—Կարող էք, պարո՛ն. բայց նախապէս դուք պէտք է դուրս գնաք փողոց։

—Ձեզ ո՞վ է հարցնում։

—Այս ներկայացումը տրւում է բարեգործական նպատակով և խաղացողները սիրողներ են։ Եթէ դուք կարող էք աւելի լաւ խաղալ, գնացէք բեմը,—եռանդով խօսեց Կամբլէշնիկովը։

—Ես այստեղ փող եմ տուել և ոչ ոքից ցուցմունք չեմ ցանկանում լսել,—պատասխանեց Սուեֆչովը։

Կաբլէշնիկովը բորբոքուեց։ Վէճն սպառնում էր լայն ծաւալ ընդունել։ Միչօ Բէյզպաւեսօն շտապեց մէջ խառնուել։

—Կիրիա՛կ, դու խելացի մարդ ես... Թատրչօ, հանդարտուի՛ր...

Այդ միջոցին աւստրիական մարշը դադարում է։ Վարագոյրը բարձրանում է։

Բեմն այս անգամ ներկայացնում է բանտ, որը լուսաւորուած է եկեղեցական կանթեղով։ Գենովէֆան ձեռքն առած իւր երեխան, որը բանտումն էր ծնուել, ցաւալի խօսքեր է արտասանում և լալիս։ Նրա խաղն այժմ աւելի բնական է։ Կէս գիշեր, մթին բանտ, անօգնական և դժբաղդ մօր հառաչանքներ.—այս բոլորը յուզում է հանդիսականների սրտերը։ Շատ կանանց դէմքերին արտասուք երևաց։ Արտասուքները, ծիծաղի նման, վարակիչ են։ Լացողների թիւն աւելանում է, մինչև անգամ տղամարդկանցից մի քանիսն էլ են արտասուք թափում, երբ կոմսուհին նամակ է գրում կոմսին։ Կաբլէշնիկովը—սա էլ յուզուեց և մի ամենասըրտաշարժ տեղում ծափահարեց։ Նրա ծափահարութիւնը միայնակ հնչեց դահլիճում, մեռելային լռու-

թեան մէջ և արձագանք չգտնելով, դադարեց։ Բազմաթիւ բարկութեամբ լի աչքեր ուղղուեցան խռովարարի վրայ, որն ամենալաւ տեղում աղմուկ էր բարձրացնում։ Իվան Սելամլիգը, որն արտասուք թափելով քիթը վեր է քաշում, սաստիկ արհամարհական աչքերով նայեց նրան։ Գենովէվային տանում են լեռները պատժելու համար։ Կաբլէշնիկովը նորից ծափահարում է, սակայն այս անգամ էլ առանց հետևողների մնում։ Ծափահարելու սովորութիւնն այն ժամանակ դեռ մուտ չէր գործել Սպիտակ-Եկեղեցում։

—Անիծուած մարդիկ են եղել այս գործում,—շշնջեց բէյը Դամեանին.—այս բանը ո՞րտեղ է պատահել։

—Գերմանիայում։

—Գերմանիայո՞ւմ։ Ես այդ գեավուրներին դեռ չեմ տեսած։

—Ի՞նչպէս, պարոն բէյ. չէ՞ որ մեր քաղաքում մի գերմանացի կայ։

—Այն անբեխը, երկնակի աչքերովը չէ՞, կապոյտ անկնոցներ կրողը։

—Նա ինքն է, լուսանկարը։

—Նա է՞։ Լա՛ւ գեավուրիկ է... միշտ ինձ պատահելիս գլխարկը վերցնում է՝ եւրոպական սովորութեան համեմատ... Իսկ ես կարծում էի թէ նա ֆրանսիացի է։

—Ո՛չ, իսկական գերմանացի է, Դրանդաբուրգցի...

Սկսւում է երրորդ գործողութիւնը: Բեմը դարձեալ ներկայացնում է պալատ: Կոմսն արդէն վերադարձել է պատերազմից — տխուր, վշտացած, որ չի տեսնում կնոջը: Ծառան տալիս է նրան Գենովէվայի նամակը, որը նա բանտում, մեռնելուց առաջ էր գրել: Կոմսը բաց է անում նամակը և իմանում, որ նա Գոլոսի ստորութեան զոհն է եղել և մեռել անմեղ, ներելով նրա չարութիւնը... Կոմսն այս ամենը կարդում է բարձր և հեկեկալով: Նա լաց է լինում, նա յուսահատութեան մէջ է: Հանդիսականներն էլ կրում են կոմսի տանջանքները, նրանք էլ են լաց լինում—միքանիսը բարձր ձայնով: Լաց է լինում և բէյը, որն այժմ արդէն կարօտութիւն չունի Գրիգորի բացատրութեանը: Այս լարուած դրութիւնն աւելի ևս սաստկանում է, երբ կոմսը հրամայում է բերել խարդախ Գոլոսին, նրա բոլոր դժբաղդութիւնների սկզբնապատճառին: Գոլոսը երևում է գզգզուած մազերով, սովալլի դրութեամբ, խղճի խայթերից տանջուած և շղթայակապ: Հասարակութեան ընդհանուր թըշնամական տրտունջը դիմաւորում է նրան: Զայրացած հայեացքներն ուղղւում են նրա վրայ: Կոմսը կարդում է նրա մօտ նամակը, որի մէջ կոմսուհին նրան էլ է ներում: Կոմսը նորից հեկեկում է, պոկոտում է իւր մազերը, խփում կուրծքին: Հանդիսականների միջից նորից անզսպելի հեծկլտանք է լսւում: Գինկան էլ է արտասուք թափում, սակայն աշխատում է հանգստացնել ուրիշներին:

—Մի լաց լինէ՛ք, ես գիտեմ, Գենովէվան կենդանի է.—լեռներումն է:

Միքանի պառաւ կանայք, որոնք անծանօթ են պիեսի բովանդակութեանը, զարմացած դառնում են նրան.

—Գի՛նկէ, ուղի՞ղ որ կենդանի է. ուրեմն ես կասեմ նրան, դժբաղդին որ լաց չլինի,—ասաց Նետկովիցա տատը, իսկ հաջի Պավլիւվիցա տատը արտասուքն աչքերին դոչեց կոմսին.

—Մի՛ լար, զաւա՛կս, մի՛ լար, քո կինը կենդանի է:

Այն ինչ Գոլոսը խելքը թռցնում է: Նրա հայեացքը զարհուրելի է, գլուխը գզգզուած, աչքերը չռած, նա ձեռքերը թափահարում է, դէմքը ծամածռում, ատամները կրճտացնում: Խիղճը սոսկալի կերպով տանջում է նրան. սակայն նրա տանջանքները դիւր են գալիս հասարակութեանը: Կատաղի չարախնդութիւն է երևում դէմքերի վրայ: «Այդպէս էլ նրան հարկաւոր էր», ասում են կանայք: Նրանք մինչև անգամ տրտունջ են յայտնում, որ Գենովէվան իւր նամակի մէջ ներել է Գոլոսին: Նրա մայրը շղթաների տակ և ընդհանուրի ատելութիւնից ճնշուած Ֆրատիւի ողբալի դրութիւնը տեսնելով, չգիտէր, թէ ինչ անէր:

—Որդուս հոգին հանեցին, խայտառակեցին նրան,—ասում էր նա և ուզում գնալ վար բերելու որդուն բեմից, բայց նրան արգելում էին:

Այս գործողութիւնն ահագին աջողութիւն ունեցաւ: Շէքսպիրի Օֆելիան այդքան արտասուք չէ հանեցրել...

Վերջին գործողութիւնը կատարւում է լեռներում։ Քարայրի մուտքի մօտ երևում է Գենովէվան, գազանի մորթի հագած, իւր երեխայի հետ։ Մի այծ, որին չփախչելու համար նորաբոյս տերևներ էին տուել, ներկայացնում էր այն վայրի այծը, որը իւր կաթով կերակրում էր այրի բնակիչներին։ Գենովէվան ցաւալի ձայնով օրօր է ասում երեխային և պատմում նրան հօր մասին. շան հաչոց լսելով, նա երեխայի հետ մտնում է այրը, իւր յետևից պոզերից քաշ տալով և այծին։ Հաչոցը սաստկանում է, և հասարակութիւնը Իլիա Հետաքրքիրին այդ դերի մէջ աւելի ճարպիկ է գտնում։ Նրա եռանդն այն աստիճան է աճում, որ հաչոցի ձայնին փողոցից պատասխանում են մի քանի շուն։ Ահա և կոմսը, որսորդական շներով մօտենում է իւր շքախմբի հետ։ Հանդիսականները շունչ չեն քաշում. իւրաքանչիւրն անհամբերութիւնից եփւում է՝ տեսնելու համար, թէ նա ինչպէս պէտք է պատժի Գենովէվային։ Իվանիցա տատը երկիւղ է կրում, որ մի՛ գուցէ նա մօտով անցկենայ առանց նկատելու կնոջը, և մատով ցոյց է տալիս կոմսին Գենովէվայի տեղը։ Սակայն կոմսը նկատում է նրան։ Նա գնում է այրի մօտ և կանչում.

—Ո՞վ ես դու, մա՞րդ թէ գազան, դուրս արի այրից։

Բայց այրի փոխարէն դահլիճն է պատասխանում նրան։ Լսւում է մի կամաց շվոց։

Բոլորն ապշած դարձան դէպի Ստեֆչովը։ Նա ամբողջովին կարմրեց։

—Այս ո՞վ է շվացնում,—բարկութեամբ գոչեց Սելեամլիգը։

Թատրոնը դժգոհութիւն յայտնեց։

Օգնեանովն աչքերով սուլողին էր որոնում։ Ստեֆչովին տեսնելով, որը լրբաբար նայում էր նրան, ցած ձայնով ասաց.

—Ես քո երկար ականջներդ կը պոկեմ։

Նոր աւելի զօրեղ շվոց։ Հասարակութիւնը քարացաւ։ Բայց մի վայրկեանից յետոյ ընդհանուր գայրոյթ առաջ եկաւ։

—Տուէ՛ք ինձ այդ բողոքականին, ես նրան լուսամուտից դուրս կը ձգեմ,—գոռաց Անգել Իովկովը, որը սաժենաչափ մի հսկայ էր։ Ամեն կողմից ձայներ լսւեցան։

—Թո՛ղ կորչի սուլողը։—Ստեֆչով, դո՛ւրս.— Մենք չենք եկել այստեղ սուլողներին և ծափահարողներին լսելու,—գոչեց Սելեամլիգը, որը լաւ չէր հասկացել Կաբլեշնիկովի դիտաւորութիւնը։

—Կիրիա՛կ, թոյլ չենք տալ,—բարկութեամբ բացագանչեց նաև Գինկան, որի մօտ արտասուաթոր աչքերով կանգնած էր Ռադան։

Հաջի Սմիոնը կամացուկ շշնջեց Ստեֆչովի ականջին.

—Ի սէր Աստուծոյ, Կիրիակ. ախր ես քեզ ասացի, որ հարկաւոր չէ շվացնել... Այստեղ հասարակ ժողովուրդ է հաւաքուած, չե՞ս տեսնում։

—Ինչո՞ւ է շվացնում այդ պարոնը,—հարցրեց բէյը Դամեանին։

Դամեանն ուսերը վեր քաշեց։ Բէյը ոստիկա-

նի ականջին մի բան փսփսաց, որը գնաց Ստեփչովի մօտ։

—Կիրեա՛կ,—ցած ձայնով ասաց ոստիկանը Ստեփչովին,—բէյը հրամայում է քեզ դուրս գնալ փողոց ծխելու, եթէ ծանր է քեզ այստեղ մնալ։

Ստեփչովը գոռոզ ժպիտը շրթունքներին հեռանում է դահլիճից, գոհ լինելով, որ կարողացաւ փչացնել Օգնեանովի խաղի տպաւորութիւնը։

Նրա հետ միասին անհետանում է և անկարգութիւնը։ Խաղը վերանորոգւում է, կոմսը գըտնում է իւր կորսուած ամուսնուն։ Գրկախառնութիւններ, համբոյրներ, նոր արտասուքներ։ Հասարակութիւնը նորից սրտաշարժւում է... Բարութիւնը պսակւում է կատարեալ յաղթանակով։ Կոմսը և կոմսուհին միմեանց պատմում են իրենց կրած տանջանքները և ուրախութիւնը։ Պետկովիցա տատը ասում է նրանց.

—Գնացէ՛ք, զաւակներս, տուն և խօսեցէ՛ք, ու մի՛ հաւատաք այդ անիծուած Գոլոսին...

—Անիծուածը դո՛ւ ինքդ ես,—շշնջում է նրա ականջի տակ Ֆրատիւի մայրը։ Պետկովիցա տատի խորհուրդը կրկնում է և բէյը, միայն աւելի ցած ձայնով։ Գոհունակութեան և ուրախութեան ընդհանուր զգացմունք։ Կոմսն ամեն կողմ կարեկցական հայացքների է հանդիպում։ Պիեսը վերջանում է մի երգով, որը երգում են կոմսուհին և շքախումբը.—«կոմս Սիգֆրիդ, ուրախացի՛ր այժմ»...

Բայց հազիւ երգել էին այս ուրախալի երգի

առաջին երկու տունը, երբ յանկարծ բեմից լսուեց մի յեղափոխական երգ.

«Վառի՛ր, դու վառի՛ր մեր մէջ, ուժգին սէր,
«Եւ Թուրքին կրտանք մենք մեր զոռ կուրծքեր»...

Սկզբում երգեց մէկը, յետոյ նրան միացաւ խմբի մի մասը, շուտով բոլորը և վերջապէս հանդիսականներն էլ սկսեցին ձայնակցել նրանց։ Անակնկալ հայրենասիրական հիացումը գրաւեց բոլորին։ Այդ երգի զօրեղ եղանակը, անտեսանելի ալիքի նման, բռնել, լցրել էր դահլիճը, տարածուել դուրսը, և կորչում էր հեռու խաւարի մէջ... Երգը կախուած էր օդում, բորբոքում և արբեցնում էր սրտերը։ Այս հզօր ձայները հասարակութեան մի նոր լարին էին դիպչում։ Բոլորը, ով որ գիտէր—տղամարդիկ և կանայք—երգում էին։ Նա ի մի էր ձուլել բոլոր հոգիները, բեմը միացրել էր դահլիճի հետ...

—Երգեցէ՛ք, որդիքս, երգեցէ՛ք. կեցցէ՛ք դուք, —բացագանչեց Միչօն զմայլմունքով։

Միայն ծերերից միքանիսը կամաց քրթմնջում էին, անտեղի գտնելով այս անմիտ դրդումները։

Մինչև անգամ բէյը, որը երգից ո՛չ մի խօսք չէր հասկանում, բաւականութեամբ լսում էր։ Նա խնդրեց Դամեան Գրիգորին թարգմանել իւրաքանչիւր տան բովանդակութիւնը։ Ով լինէր, կը շփոթուէր։ Սակայն Դամեանն այնպիսի մարդկանցից չէր, որոնք չեն կարող դժուար հարցին պատասխան տալ, և նա ցոյց տուեց իւր խելքի ոյժը։ Դատարկաբանութեամբ նա լցրեց բէյի գլուխը։

Երգը, Գրիգորի ասելով, արտայայտում էր կոմսի անհուն սէրը դէպի կոմսուհին. կոմսը նրան ասում է—ես քեզ այժմ հարիւր անգամ աւելի եմ սիրում, իսկ կոմսուհին պատասխանում է—իսկ ես քեզ հազար անգամ աւելի եմ սիրում. կոմսն ասում է, թէ եկեղեցի կը շինեմ այն տեղը, որտեղ քարայրն է, իսկ նա կոմսին պատասխանում էր, թէ բոլոր ալմաստները կը ծախեմ և փողերը աղքատներին կը բաժանեմ. նմանապէս և կը շինեմ հարիւր մարմարեայ աղբիւրներ...

—Ինչո՞ւ է այդքան աղբիւրներ շինում. աւելի լաւ է թող բարութիւն անէ և կամուրջներ շինէ,—ընդմիջեց բէյը Դամեանին:

—Աղբիւրներ է շինում, որովհետև Գերմանիայում ջուր քիչ կայ, այնպէս որ ժողովուրդը չափազանց շատ գարեջուր է խմում,—բացատրեց Դամեանը:

Բէյն, ի նշան հաւանութեան, գլուխը շարժեց:

—Իսկ ո՞ւր է Գոլոսը,—հարցրեց բէյը, Ֆրատիւլին դերասանների մէջ որոնելով:

—Նա այստեղ չպէտք է լինի, գործ չունի:

—Դու ուղիղ ես ասում... Այդ պարոնին հարկաւոր էր կախել: Եթէ մէկ էլ խաղան, ասա՛ կոնսուլին, որ նրան կենդանի չթողնի: Այդպէս աւելի լաւ կը լինի:

Եւ ճիշտ որ—Ֆրատիւն չէր երևում բեմի վրայ: Նա խոհեմաբար հեռացել էր, հենց որ սկսել էին վտանգաւոր երգը երգել, չցանկանալով մինչև անգամ հասարակութիւնից ծափիններ ստանալ:

Երգը վերջացաւ և վարագոյրը «բրա՜վօ» բացագանչութիւնների տակ, իջաւ: Աւստրիական հիմնը նորից որոտաց և հասարակութեանն ուղեկցեց դահլիճից դուրս, որը շուտով դատարկուեց:

Դերասանները վարագոյրի յետևը շորերը հանում էին և ուրախ-ուրախ խօսում բարեկամների հետ, որոնք եկել էին նրանց շնորհաւորելու:

—Բայց դո՛ւ, Կարլէշնիկով, այդ ի՞նչ անմտութիւն էր գլուխդ ծագել: Յանկարծ վազում է բեմը, կանգնում յետևս և սկսում փողի նման գոռգոռալ: Բօշի սիրտ...—ասաց Օգնեանովը, ոտներից Սվետոսլավի կօշիկները հանելով:

—Չկարողացայ համբերել, եղբա՛յր. զզուեցրին ինձ այդ բոլոր արտասուքները և թռչունի գանգատները քո «բազմաչարչարութեանդ» առթիւ: Հարկաւոր էր մի բանով սթափեցնել ժողովրդին: Դրա համար էլ որոշեցի բեմ բարձրանալ... Դու տեսա՞ր, թէ ինչ փառաւոր ազդեցութիւն արաւ...

—Բայց ես շարունակ նայում էի, թէ չլինի՞ մի որ և է ոստիկան բռնէ օձիքիցս...—ծիծաղեց Օգնեանովը:

—Հոգս մի՛ քաշէք. Ստեֆչովն առաջ էր դուրս կորել,—ասաց Սոկոլովը:

—Բէյը նրան դուրս արաւ...—բացատրեց Ֆրանգովը:

—Բայց բէյն ինքը մնաց,—ասաց մէկը:—Ես տեսնում էի, թէ ինչպէս նա ուշադրութեամբ լսում էր... Մենք դեռ ահագին գլխի-ցաւեր ունինք...

—Բէյի կողմից կարող էք ապահով լինել: Ին-

չո՜ւ էր հապա նրա մօտ նստել Դամեանչօ Գրիգորը։ Նա գիտէ, թէ ինչպէս պէտք էր խաբել բէյին։ Այսպէս, մենք հետ կառնենք նրանից քաղաքագէտի դիպլոմը։

— Ես գիտմամբ նրան հրաւիրեցի և նստեցրի բէյի մօտ, որը դատարկաբանութիւն շատ է սիրում։ Անհանգիստ մի՛ լինիք, ամէն բան յաջող կանցկենայ,—նկատեց Նիկոլայ Նետկովիչը, հանելով տէր-Դիմչօի բարակ վերարկուն, որով նա Գենովէվայի հօր դերն էր խաղում։

Սակայն նրանք սխալւում էին։ Հետևեալ օրը Օգնեանովին կոնակ հրաւիրեցին։

Նրան ուղղակի տարան բէյի մօտ, որը չափազանց մռայլ տեսք էր ընդունել։

— Պարո՛ն կոնսուլ, երեկ երեկոյ դուք յեղափոխական երգ էք երգել, ճշմարի՞տ է այդ։

Օգնեանովն ուրացաւ։

— Բայց ժանդարմն ինձ հակառակը յայտնեց։

— Նա սխալ է տեղակացել։

Բէյը կանչեց ժանդարմին։

— Շէրիֆ աղա՛, ե՞րբ են երգել յեղափոխական երգ. իմ այնտեղ եղած ժամանա՞կ, թէ ինձանից յետոյ։

— Ձեր այնտեղ եղած ժամանակ են երգել յեղափոխական երգ, պարոն բէյ. պարոն Կիրիակը սուտ խօսել չգիտէ...

— Ի՞նչ ես դուրս տալիս. Կիրիա՞կն էր այնտեղ, թէ ես։ Մի՞թէ ես իմ սեպհական ականջներով չլսեցի։ Յարգելի Դամեանչօն բառ առ բառ չթարգմանե՞ց երգը։ Ես յետոյ խօսեցի պատուարժան Մար-

կօի հետ. նա էլ եղանակը շատ գեղեցիկ գտաւ... Այդպիսի խայտառակ բաներ ուրիշ անգամ չանէք, —բարկութեամբ մրթմրթաց բէյը, յետոյ դառնալով դէպի Օգնեանովը, ասաց.—Ներէ՛ք քեզ անհանգստութիւն տալու համար, կոնսո՛ւլ. սխալմունք է եղել։ Հա՛, ինչպէս էին կանչում միւսին, որը շղթայակալ էր։

— Գոլոս։

— Հա՜, Գոլոս... Դու լաւ կանէիր, որ հրամայէիր կախել նրան։ Եթէ ես լինէի, այդպէս կանէի։ Չպէտք է լսել կանանց խելքին։

— Սակայն, ամէն ինչ գեղեցիկ էր, իսկ երգն արդէն բոլորից լաւ...—ասաց բէյը՝ ծանրութեամբ վերկենալով։

Օգնեանովը գլուխ տուեց նրան և հեռացաւ։

— Շուտով դու մի ուրիշ երգ կը լսես, որն ինքդ, առանց Դամեանի օգնութեան, կը հասկանաս, —շշնջեց նա, դուրս գալով դռնից։

Սակայն նա չտեսաւ, թէ ինչպէս չարագուշակ կերպով էր նայում նրան այն ժամանակ ժանդարմը։

ԺԸ.

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԹԱՏՐՈՆ

Այս դէպքից միքանի օր յետոյ Գանկօի սրճարանը վաղ առաւօտեանից, ինչպէս միշտ, լցուած էր ժողովրդով։ Սա թէ՛ ծերերի և թէ՛ երիտասարդների հաւաքուելու կենդրոնն էր. այնտեղ խօսւում և քննւում էին հասարակական, արևելեան և ուրիշ ամեն տեսակ խնդիրներ, որոնք վերաբերում էին Եւրոպայի ներքին և արտաքին քաղաքականութեանը,—մի տեղ, որ նման էր փոքրիկ պարլամենտի։ Սակայն այժմ Գենովէվայի ներկայացումը դեռ հերթական խնդիրների մէջ էր և ամենից շատ նիւթ էր տալիս խօսակցութեանը։ Շատ էին խօսում յեղափոխական երգի մասին, որն ամենատաք վէճեր էր առաջ բերել։ Այժմ, երբ կրքերը հանդարտուել էին, շատերը դատապարտում էին Օգնեանովին, որի վրայ մնաց «կոմսի» տիտղոսը, ինչպէս որ այդ պատահում է ընդհանրապէս այն դերասանների—սիրողների հետ, որոնք զօրեղ տպաւորութիւն են անում հանդիսականների վրայ. այդպէս նաև Ֆրատիւի վրայ մնաց «Գոլոս» անունը և մինչև անգամ այս առաւօտ էլ նա զարմացմամբ թշնամական հայացքների էր հանդիպում ծերունիների կողմից, որոնք չէին կարող ներել նրա վարմունքը դէպի Գենովէվան։

Մի պառաւ ճանապարհին կանգնեցրեց նրան և ասաց.

—Սա՛, որդի՛ս, ինչո՞ւ դու այդպիսի բան արիր։ Մեղք չէ՞ հոգուդ։

Սակայն հենց-որ յարգելի Միչօ Բէյզադէօն ներս մտաւ սրճարան, խօսակցութիւնն իսկոյն փոխուեց և քաղաքական անսահման շրջանի մէջ մտաւ։

Միչօ Բէյզադէօն մի ծեր, ցածլիկ, սև երեսով, անդրավարտիք և մահուդի բաճկոն հագած մարդ էր։ Իւր բոլոր հասակակիցների նման, նա էլ պակաս զարգացման տէր էր. սակայն կեանքը և զանազան փորձերը նրան խոհեմ էին դարձրել։ Միչօի սև, կենդանի և շարժուն աչքերը խելացի կերպով փայլփլում էին նրա խոր կնճիռներով ծածկուած դէմքի վրայ։ Այդ մարդը մի առանձնայատկութիւն ունէր, որը նրան առակ էր դարձրել խօսքերի մէջ։ Այս—նրա ծայրայեղ սէրն էր դէպի քաղաքականութիւնը և անխախտելի համոզմունքը դէպի Թուրքերի անկումը։ Բնականաբար, նա վերին աստիճան ռուսասէր էր, ֆանատիկոսութեան, ծայրի հասցրած։ Բոլորն էլ յիշում են, թէ նա ինչպէս զայրացաւ մի անգամ, երբ աշակերտներից մէկը ասաց, թէ ռուսները յաղթուել են Սևաստոպոլի մօտ։—«Դու սխալուեցար, զաւա՛կս, ռուսները չեն կարող յաղթուած լինել. յետ առ ուսուցչից քո փողերը, որ վճարել ես իբրև ուսման վարձ»,—ասաց Միչօն բարկութեամբ։ Բայց որովհետև ուսուցիչը հենց այնտեղ պատմութեան գիրքը ձեռքին ապացուցեց, որ ռուսները յաղթուած են եղել Ղրիմի պատերազմում, Միչօն զօ-

ռաց, թէ պատմութիւնը սուտ է խօսում և որովհետև նա այն ժամանակ գիւղացի հոգաբարձու էր, ուստի ուսուցչին զրկեց պաշտօնից։

Բնութիւնից նեարդային և տաքարիւն մարդ լինելով, նա իսկոյն զայրանում էր, հենց որ համարձակւում էին հակաճառել նրան, խօսել նրա փայփայած համոզմունքների դէմ։ Միչօն բորբոքւում, յարձակւում էր հակառակորդի վրայ, հայհոյում էր։ Այսօր նա ուրախ տրամադրութեան մէջ էր և նստեց թէ չէ, յաղթական կերպով ասաց.

—Դարձեալ մերոնք յաղթել են։

Ինչպէ՞ս,— ուրախ-ուրախ ձայն տուին մի քանի հոգի։

—Լիւբոբրատիչը և Բոժօ Պետրովիչը մի քանի հազար թուրք են ջարդել,—ասաց բայ Միչօն, նորութիւնները մաս-մաս յայտնելով, որ իւր հաճոյքը երկարատև անէ։

—Բրա՛վօ, կեցցէ՛ն,—գոչեցին մի քանիսը։

—Պոդգորիցան էլ է առնուած,—շարունակեց բայ Միչօն։

Ընդհանուր զարմանքն այն աստիճան աճեց, որ կարծես ոչ թէ Պոդգորիցան, այլ Վիեննան էր առնուած։

—Կամաւորներ, զէնքեր, որքան ուզում էք, հասնում են Աւստրիայից։

—Մի՞թէ...

—Բոսնիան էլ նորից կրակ էր դարձել, իսկ Սերբիան շարժւում է և զօրքեր է պատրաստում։ Եւ եթէ Սերբիան վեր կացաւ տեղից, մեզ էլ կը

շարժէ։ Այն ժամանակ—վերջ և մեր տէրերին...

—Սատանա՛ն տանի նրանց։

—Իսկ Աւստրիան պէտք է հանգիստ մնայ, որովհետև Գորչակովը կասէ նրան Պետերբուրգից—կա՛ց, թող սպանեն, մորթոտեն մէկզմէկու, այդ նրանց ընտանեկան գործն է։ Վերջն է նրանց, վերջը...

Բոլորն էլ սրել էին ականջները և երախտագէտ հաճոյքով լսում չորբաջի Միչօի նորութիւնները։

—Իսկ նրանցից քա՞նի հոգի է ջարդուած,— հարցրեց Նիկոդիմոսը։

—Թուրքերի՞ց։ Ես քեզ ասացի, որ հազարներ, կը հաշուիս երկու, երեք, տասը հազար — միևնոյն է, չես սխալուիլ։ Այդ քաջասիրտ հերցեգովինցիք հանաք չեն սիրում։

—Սքանչելի է, եթէ միայն ճիշտ է այդ բանը։

—Ես քեզ ասում եմ, ճիշտ է։

—Իսկ ո՞րտեղից ես լսել դու այդ բոլորը— հարցրեց չորբաջի Մարկօն։

—Հաստատ աղբիւրից, բարեկամ։ Կիր[27]) Գէորգիյ Իզմիրլիատն անցեալ օրը լսել էր Կարլովօի գեղագործ Եանկա Դաֆնիսից, որ այդ բանը տպուած է Տրիեստի լրագրում։

—Ես չեմ հաւատում, որ հերցեգովինցիք այդպիսի մեծ գործ կարող են կատարել։ Կըկռուին, կըկռուին մինչև կը յոգնեն։ Ախր, ընդամենն ո՞րքան ժողովուրդ է — մի բուռը, — ասաց Պավլակին, և շրջապատողները ի նշան հաւանութեան գլուխները շարժեցին։

—Ես էլ եմ ասում քեզ, Պավլակէ, թէ ո՞րքան

են հերցեգովինցիք—մի բուռը մարդիկ։ Թուրքերը նրանցից չեն վախենում,—ձայն տուեց հաջի Սմիոնը, իւր ձախ ոտքի դուլպան շփելով։

Զորբաջի Միչօն տաքացած պատասխանեց.

—Դու, Պավլակէ, ներիր ինձ. դու էլ, հաջի, ոչինչ չգիտես... քաղաքականութեան մէջ «ոչնչից» «մի բան» կը գոյանայ։ Ինքը Գորչակովն է ասել, թէ Հերցեգովինայից մի կայծ կը ձգուի, որը կը հրդեհէ ամբողջ Թուրքաց տէրութիւնը։

—Ես կարծում եմ, որ այդ բանը Դերբին ասած կը լինի,—վսեմաբար մէջ խառնուեց Ֆրատին։

Զորբաջի Միչօն յօնքերը կախեց։

—Դերբին, որպէս անգլիացի, այդպիսի խօսքեր չէր կարող ասել սուլթանի դէմ... Մեզ յայտնի է անգլիական քաղաքականութիւնը — «Թիւրքիայում ամէն ինչ սքանչելի է, Թիւրքիայում ամէն ինչ ծաղկում է»... Ես քեզ ասում եմ, որ Դերբին չէր կարող այդ խօսքերն ասել։

—Ֆրանտիւ, այդպէս է, այդպէս, չէ ասել,—հաստատեց հաջի Սմիոնը։

—Երբ հրդեհը կը բռնկի և կայրէ Կ.-Պօլիսը, այն ժամանակ մենք ընդ միշտ կազատուինք այդ պիղծերից,—նկատեց կօշկակար Իվանչօ Դուդօն, որը, ուղիղն ասած, համբակ էր քաղաքականութեան մէջ։

—Այստեղ խօսքն ուրիշ հրդեհի մասին է, Իվանչօ,—լրջօրէն խօսեց Պավլակէն։

—Իսկական հրդեհը դեռ յետոյ է, երբ Բուլղարիան կը սկսի բոցավառուել,—նկատեց Ֆրատին։

—Բուլղարիա՞ն ինչու բոցավառուի։ Բուլղարիային հարկաւոր չէ կրակի մէջ ընկնել։ Մենք պէտք է հանգիստ նստենք։ Չտեսա՞ք, թէ ինչպիսի խաշիլ եփուեց Զագորում,—մռայլ դէմքով արտասանեց չորբաջի Դիմօն։

—Ֆրատի, դու այն պատճառով ես այդպէս ասում,—ձայն տուեց Դոնչօ Ֆուրանջիատը,—որ երբ այդ բանը կատարուի, Ռումինիա կը փախչես և այնտեղից կը սկսես գոչել. «դիմադրեցէ՛ք»... իսկ այստեղ թող մեր գլուխները կտրատեն...

—Դու այդ ինձ մի՛ ասիր. բայց Դիմօն մարդկանց գինը գիտէ...

—Ընդհակառակը, ես այստեղ կը լինիմ և զոհեր կը բերեմ։

—Թէ պէտք է այրուի, թող այրուի շուտով։ Սա մի՞թէ թագաւորութիւն է։ Այժմս էլ այրւում է սա, բայց չի ծխում։ Սա թագաւորութիւն չէ, այլ աղբ է...

—Անհանգիստ մի՛ լինիք, շատ չէ մնացել սպասելու,—ասաց բայ Միչօն.—գրուած է, ախր, որ Թիւրքիան շուտով կը նկնի։

—Այդպէս էլ է, այդպէս էլ է,—խօսեց տէր-Ստավրին.—ամենուրեք այդ բանը մտքերը պղտորել է։ Որ կողմը նայում ես—թէ՛ մեծ, թէ՛ փոքր, —միշտ միևնոյն են խօսում։ Կանայք, աղջիկներն անգամ այդպիսի խօսակցութիւններ են անում։ Նրանց երգերին ականջ դիր—այլևս չկան նախկին «ախ» ու «վախ»-ները, այլ միշտ հրացանի ու սրի ձայներ են լսւում, Թուրքերին են սպանում և ու-

րիշ այսպիսի բաներ։ Իսկ երիտասարդները հրացանաձգութեան են վարժւում վանքի մարգագետիններում — բոմ-բում, բոմ-բում լսում ես ամբողջ օրը։ Իմ Գանկոն որտեղից ասես, որ ատրճանակներ և հրացաններ չէ հաւաքել և հենց որ երեխաներին զպրոցից արձակում է, ինքը նստում և սկըսում է դրանց հետ խաղալ։ Ի՞նչ հարկաւոր են քեզ, որդի՛, այդ բաները, հարցնում եմ ես։

— Շուտով կը հարկաւորեն, հայրի՛կ, պատասխանում է. շուտով կը գայ այնպիսի ժամանակ, որ ոսկու քաշով հրացաններ պէտք է գնեն...

— Ես ասում եմ, մեր մէջ մնայ, որ այս խառնակ ժամանակից մի բան դուրս կը գայ։ Դու պահես մեզ, Աստուա՛ծ։

Պարզամիտ տէր-Ստավրին ճշմարիտ էր ասում։ Վերջին միքանի ամիսները, Օգնեանովի երեւալու ժամանակից սկսած, Ստեֆչովի կարծիքով, նկատւում էր մտքերի մի տեսակ յուզմունք, որն օրեցօր աւելի և աւելի սաստկանում էր, մանաւանդ Հին-Զագորի սեպտեմբերեան շարժման ժամանակից յետոյ։

Ընկերական շրջաններում, կերուխումի ժամանակ, առաջարկւում էին հայրենասիրական կենացներ և բացարձակ կերպով խօսում ապստամբութեան մասին. վանքի շրջակայքում ամբողջ օրը լսւում էր հրացանաձգութիւն, — երիտասարդներն էին վարժւում այդտեղ։ Յեղափոխական երգերը սովորական էին դարձել և մուտ գործել ամէն տեղ — տները երեկոյթների մէջ, երգւում էին փո-

ղոցներում։ Անցորդը կարող էր լսել, թէ ինչպէս աղջկերքը երգում էին խմբովին.

«Ախ սիրասուն մայր իմ խղճուկ,
«Մի՛ տխրի դու, մի՛ արտասուի,
«Որ դարձայ ես այժմ հայդուկ,
«Հայդուկ դարձայ, մայր, մի՛ տխրի»...

Կամ թէ ինչպէս բազմանդամ ընտանիքի պատուարժան մայրը յափշտակուած երգում էր.

«Վստա՛հ եղէք, զինուորներ, դրօշակի
պաշտպաններ,
«Այժմ էլ մենք չենք խոնարհ և ո՛չ
հլու ստրուկներ»։

Բայց սրանք միայն պլատոնական բացագանչութիւններ էին. սրանց վրայ Թուրքերը մատների արանքով էին նայում։ Հին-Զագորի անյաջող շարժումից յետոյ, սեպտեմբերին, Թուրք ազգաբնակութիւնն ոտքի ելաւ և մի շարք սոսկալի չարագործութիւններ կատարեց, իբրև հատուցում բուլղարների արածներին։

Ձորերում միքանի հրացան արձակելու համար, Թուրքաց գնդակների տարափ տեղաց խաղաղ բուլղարների գլխին. բուլղարացի աղջիկների յեղափոխական երգերին Թուրքերը պատասխանեցին անհամար կանանց բռնաբարութեամբ և երեխաների սպանութեամբ։ Թուրքերն սպանում էին անզէն անցորդներին, այրում, գերի էին վերցնում և աւարի մատնում ոստիկանների հետ միասին։ Ամբողջ Թրակիան հեծում էր Թուրքերի բռնութեան և գազանութիւնների տակ։

Բայ Մարկօն շատ հարցերի մէջ համաձայն էր բայ Միչօի հետ, բայց ապստամբութեան վերաբերեալ հարցի մասին նա ուրիշ կարծիք ունէր։

Նա անմտութիւն էր համարում ապստամբութեան վրայ մտածելն անգամ և իւր ներկայութեամբ Օգնեանովի ասած իւրաքանչիւր վտանգաւոր խօսքի համար, նրան խիստ յանդիմանութիւններ էր անում, թէև սիրում էր Օգնեանովին և ամեն կերպ պաշտպանում էր նրան։

—Ինձ չեն զարմացնում այդ թեթևամիտները, որոնք գնում են կռուելու վանքի քարափներում և միշտ հրաշքների են սպասում, բայց ես չեմ կարող հասկանալ, թէ ինչպէս այս ալևորներն իրենց գլուխները նոյնպիսի անմիտ բաներով են լցնում... Դուք կրակի հետ էք խաղում... Ի՞նչպէս, հնադարեան թագաւորութիւնը, որն ամբողջ աշխարհն է սարսեցրել, յանկարծ կը կործանուի միքանի ստրուկների կայծաքարի հրացանների՞ց։ Մենք գտնւում ենք նոյն իսկ դժոխքում։ Խռովութի՞ւն... Բայց դա, Աստուած ո՛չ անէ, մի այնպիսի բան է, որ ուղղակի մեր բոլորիս կորստեան պատճառը կը դառնայ... Քար քարի վրայ չի մնալ այստեղ...

Գանկօն, սափրիչը, ձայն տուեց.

—Ճշմարիտ է ասում բայ Մարկօն։ Ապստամբութիւնը—կատարեալ կործանում է մեզ համար...—Եւ նա առաստաղին նայեց, որտեղ կաւիճով նշանակուած էին նրա բոլոր պարտապանների հաշիւները։

Բայ Մարկօի յանդիմանութիւնը բարկացրեց Միչօին։

—Դու, Մարկօ՛,—ասաց նա,—խելացի ես դառնում, միայն մեր մէջ քեզանից աւելի խելօք մարդիկ կան և նրանք ասում են, թէ այդ բոլորը պէտք է կատարուի։ Թիւրքիան, այսպէս թէ այնպէս, կը կործանուի։

—Ես չեմ հաւատում ձեր մարգարէներին,—ասաց բայ Մարկօն, Մարտին Զադեկային աչքի առաջ ունենալով, որին Միչօն հաւատում էր, որպէս «Հայր մեր»-ին։—Եւ եթէ քո Զադեկայի տեղ նոյն իսկ Սողոմոն իմաստունը գար ինձ ասելու, ես այն ժամանակ էլ չէի հաւատալ, որ մենք կարող ենք մի բան անել... Իսկ երեխայական խաղեր ինձ հարկաւոր չեն...

—Բայց լսի՛ր, Մարկօ՛, եթէ Աստուծոյ կամքը լինի,—նկատեց տէր-Ստավրին։

—Աստուծոյ կամքն է, որ մենք հանգիստ նստենք, տէր-բաբա։ Եւ եթէ նա վճռել է կործանել Թիւրքիան, կարիք չունի մեզ—ճճուներիս վզին մի այնպիսի գործ դնել։

—Իսկ թէ նա ում է յանձնել այդ գործը կատարելու, այժմ էլ յայտնի է, բարեկա՛մ—ասաց Պավլակին։

—Իվան պապին, Իվան պապին[28]),—բացականչեցին շատերը։

Միչօի դէմքի վրայ բաւականութեան զգացմունք երևաց։ Նա աշխոյժով վրայ բերեց.

—Իսկ ե՞ս ինչ եմ ասում. ես էլ իմ ասածներս այսպէս եմ հասկանում, որ մենք առաջից կը գնանք, իսկ մեր յետևից նա կը գայ մինչև սուրբ

Սօֆիան[29]): Առանց նրա հրամանին մի՞թէ մի որ և է բան կատարուել է: Մի՞թէ Լիւբօբրատիչն էլ կարող էր այդ շներից մի քանի հազարին ջարդել, եթէ ամուր յենարան չունենար: Իմ խօսքն այս է, որ Թուրքաց Թագաւորութեան օրերը հաշուած են, որպէս Թօքախտաւորի օրերը... Եւ այս խօսքը սև գոյնով գրուած է սպիտակի վրայ, այլ ևս ջնջել անկարելի է... Ով որ չի հաւատում, թող նորից լսէ՝ «Կոստանդինուպոլիսը, Թուրքաց սուլթանի մայրաքաղաքը, կ՚առնուի առանց մի որ և է արիւնհեղութեան»...

Բայ Միչօն մինչև այն աստիճան յափշտակուած էր, որ ոտքի էր կանգնել և եռանդով թափահարում էր ձեռքերը:

—Իսկ ե՞րբ պէտք է կատարուի այդ բանը,—հարցրեց հայր Ստավրին:

—Ասում եմ—շուտով, ժամն արդէն խփել է:

Այդ իսկ վայրկենին դուռը բացուեց և ներս մտաւ Նիկոլայ Նեսկովիչը. նա բռնած ունէր «Դար» լրագրի նոր ստացուած համարը:

—Ի՞նչ նորութիւն կայ, Նիկո՛լ,—բացագանչեցին միքանի հոգի.—կարդա՛, տեսնենք, կարդա՛:

—Ա՜, տեսնենք շա՞տ Թուրքերի գլուխներ են ընկել Լիւբօբրատիչի դանակից—անհամբերութեամբ ասացին միւսները:

—Ես ձեզ ասում եմ, որ հազարներ: Այս կողմը նստի՛ր, Նիկո՛լ:—Եւ բայ Միչօն իւր մօտ տեղ բաց արաւ նրա համար:

Նիկոլայ Նեսկովիչը բացեց լրագիրը:

—Ամենից առաջ կարդա՛ հերցեգովինցոց ապստամբութեան մասին,—ասաց նրան Միչօն:

Նեսկովիչը հանդիսաւոր լռութեան մէջ սկսեց կարդալ: Բոլորը լարեցին իրենց ուշադրութիւնը, «Կլիօ»-ում հռչակուած յաղթութիւնների հաճելի նորութիւնները լսելու համար:

Սակայն, աւա՜ղ... այդ լուրերը չէին հաստատւում. ընդհակառակը, կռուի դաշտից շատ վատ տեղեկութիւններ կային. ոչ միայն Պոդգորիցան չէր առնուած, այլ և Լիւբօբրատիչի ամբողջ զօրքը ջարդուել էր և ինքը փախել Աւստրիա:

Բոլոր ունկնդիրների քթերը կախուեցան: Մեծ հիասթափում և վիշտ կարելի էր կարդալ իւրաքանչիւրի դէմքի վրայ: Նեսկովիչն ինքն էլ վրդովուեց և նրա ձայնը թոյլ ու խռպոտ դարձաւ:

Միչօ Բէյզադէտօն, որի դէմքը յանկարծ քըրտինքով ծածկուեց, գունատուեց և բարկութիւնից դողդողալով գոչեց:

—Սուտ է, սո՛ւտ, սո՛ւտ... Թող երեխաներին այդպիսի հէքիաթներ պատմեն. Լիւբօբրատիչը նրա՛նց է ջարդել, նրա՛նց է ոչնչացրել: Մի՛ հաւատաք այս լրագրի ոչ մի խօսքին:

Բայ Միչօի խօսքերը քիչ հանգստացրին հասարակութեանը:

Դրանք համոզեցուցիչ էին, որովհետև բոլորի ցանկութիւնն այդպէս էր: Լուրերը պէտք է որ անճիշտ լինէին. քանի որ դրանք վատ էին, լրագիրն էլ հաւատալու արժանի չէր: Սակայն երբ այդ միևնոյն լրագիրը Լիւբօբրատիչի յաջողութիւն-

ների մասին էր տեղեկութիւն տալիս, ոչ ոքի մտքով անգամ չէր անցնում կասկածել դրանց ճշմարտութեան վրայ։

Զնայելով, սակայն, այս մխիթարութեանը, Գանկօի հիւրերի ուրախ տրամադրութիւնը չքացաւ։ Խօսակցութիւնները դադարեցան. հիւրաքանչիւրի հոգու վրայ կարծես մի քար կար։ Մինչև անգամ ինքը՝ Բայ Միչօն իրեն դժուար կացութեան մէջ էր զգում։ Նա բարկացած էր իւր, լրագրի, ամբողջ աշխարհի վրայ այն բանի համար, որ «Կլիօի» լուրերը չստուգուեցան։ Այս պատճառով նա սաստիկ զայրացաւ, երբ Պետրակի Շիշկովը ընդհանուր լռութիւնն ընդմիջեց և ծաղրելով ասաց.

—Ինչպէս երևում է, բայ Միչօ, քո հերցեգովինական կայծը—կայծ էլ կը մնայ և աւելի ոչինչ... Դու լսի՛ր ինձ, Թիւրքիան ողջ ու առողջ կը մնայ այս տարի էլ, գալ տարի էլ և էլի հարիւր տարի էլ. իսկ մենք մեզ, քանի կենդանի ենք, պէտք է խաբենք այդպիսի մարգարէութիւններով։

—Շէյկա՛,—գոչեց զայրացած Միչօն.—քո փայտեայ գլուխդ չի կարող այդ բանի մասին դատողութիւն տալ, դու լռի՛ր։ Այնպիսի անասուններին, ինչպիսին դու ես, բացատրելու ուրիշ կերպ չկայ, բացի փայտից։

Վէճ ծագեց, բայց Ստեֆչովի երևալը դադարեցրեց թէ վէճը և թէ վտանգաւոր խօսակցութիւնները Թիւրքիայի անկման մասին։

Լռութիւնը նորից տիրեց։ Ստեֆչովի ներ-

կայութիւնը ճնշում էր նրանց։ Նա նստեց բարևեց մի քանիսին և սկսեց հանդիսաւոր կերպով լռել։ Կիրիակը կարծում էր, թէ ընդհատուած խօսակցութիւնը վերաբերում էր Օգնեանովի և Սոկոլովի մասին գրուած երգիծաբանութեանը, որից բազմաթիւ օրինակներ տարածել էր նա այս գիշեր։ Սակայն ոչ ոք ոչ մի խօսք չասաց դրա մասին—այն պատճառո՞վ արդեօք, որ չգիտէին, թէ՞ ուշադրութիւն չէին դարձրել դրա վրայ։

Բայց Միչօն բարկացած դուրս գնաց. Նրանից յետոյ դարձեալ մի քանի հոգի հեռացան սրճատանից։ Միևնոյն ժամանակ ներս մտան երկու նոր այցելուներ—Օգնեանովը և Սոկոլովը։ Հենց որ նրանք նստեցին, հաչի Սմիոնը դարձաւ առաջինին։

—Կո՛մս, մի կատակերգութիւն էլ մտադիր չե՞ս ծննդեան տօներին տալ։

—Գենովէվան կատակերգութիւն չէ, այլ ողբերգութիւն,—նկատեց Ֆրատիւն.—կատակերգութիւն անուանում է մի այնպիսի ներկայացում, որտեղ ծիծաղելի բան կայ, իսկ ողբերգութիւն—երբ լինում են ողբերգական տեսարաններ և տրխրութիւն... Մենք ողբերգութիւն էինք խաղում, իմ դերը ողբերգական էր—մի դե՛ր...—բացատրեց Ֆրատիւն մեծախորհուրդ կերպով։

—Գիտեմ, գիտեմ, ես քա՜նի անգամ տեսել եմ այդպիսի ներկայացումներ Բուխարեստում. է՜հ, լաւ էլ խելադար ներկայացրիր դու։

—Աչք տալ չլինի, Ֆրատիւ. կասեմ քեզ, որ

խնկական խելագար էիր… Քեզ շատ օգնեցին մազերդ,—գովեց նրան հաջի Սմիոնը։

Իվանչօ Իոտան, որը հենց նոր ներս մտաւ, մասնակցեց խօսակցութեանը։

—Ի՞նչ, թատրոնի մասի՞ն էք խօսում դուք,—ձայն տուեց նա։—Մէկէլ տարին Կարլովօում ես թատրոն էի գնացել, խաղում էին… ի՞նչպէս էր անունը, չեմ յիշում… հա՛, «Իվան Հայդուկը»։

—«Իվանկօ Մարդասպանը»,—ուղղեց նրան Ֆրատիւն։

—Այո՛, այո՛… մարդասպանը։ Միայն մերն աւելի լաւ դուրս եկաւ… Մեր Լալան ամբողջ գիշերը քնի մէջ կանչում էր «Գոլոս, Գոլոս» և սարսափից դողում…

Ֆրատիւն հպարտաբար նայեց Իվանչօին, սակայն շողոքորթուեց նրա գովասանքից։

—Այո՛, այո՛, ես էլ նմանապէս ասում եմ կոմսին, որ նա նորից մի կատակերգութիւն տայ մեզ համար… Աստուած վկայ, աւելի լաւ կը խաղաս… Միայն—ուրիշ երգ…—ասաց հաջի Սիմոնը, որն իսկոյն սկսեց բոլոր գրպանները խառնել՝ իւր յանդիմանութեան տպաւորութիւնը կորցնելու համար։

—Գենովէվան կատակերգութիւն չէ, այլ ողբերգութիւն,—խստութեամբ նկատեց նորից Ֆրատիւն։

—Այո՛, այո՛, ողբերգութիւն… մի խօսքով—թատրոն։

—Այո՛, դա կատակերգութիւն էր, որովհետև

ծիծաղ առաջ բերեց,—ձայն տուեց Ստեֆչովը իւր անկիւնից և օձի նման ծիծաղեց։

Օգնեանովն ընդհատեց իւր խօսակցութիւնը Սոկոլովի հետ և ասաց.

—Ես վախենում եմ, եղբա՛յր, որ ինձ դարձեալ ծաղրեն…

Ստեֆչովն աչքերը չբարձրացրեց ձեռքի լրագրից։

—Ո՞վ կը ծաղրէ քեզ. ոչ ոք չի կարող ծաղրել,—խօսեց Նեստոր պապը.—դու մեզ համար նորից կը դնես Գենովէվան… երեխայքը կարօտել են։ Մեր Պէնկան այն ժամանակ հիւանդ էր. այժմ միշտ ասում է, հա՛յրիկ, Գենովէվան եմ ուզում հա՜, ուզում»։

—Լա՛ւ, Նեստո՛ր պապ. միայն ես շվուոցից եմ վախենում,—ասաց Օգնեանովը աչքերը դէպի Ստեֆչովն ուղղելով։

—Մանաւանդ, երբ շվուոցը աղբի կոյտից է դուրս գալիս.—լրացրեց կծու կերպով Սոկոլովը։

Ստեֆչովը զսպուած չարութիւնից կարմրեց, բայց շարունակ նայում էր լրագրին։ Նա իրեն Օգնեանովի սուր հայեացքներից ճնշուած էր զգում։ Օգնեանովի աչքերը օտարոտի փայլ էին արձակում։

—Ես էլ եմ միանում քեզ հետ, Նեստոր պապի, ես էլ եմ ուզում Գենովէվան,—ձայն տուեց Զոնու Դոյչինովը։—Միայն Գոլոսի դերը թող Կիրիակը վեր առնի. նրան աւելի յարմար է։ Ֆրատիւն թէև փքւում է, բայց և այնպէս Աստուծոյ մարդ է—ի զուր են մարդիկ նրան հայհոյում։

Այս պարզամիտ և թունալի հաճոյախօսու-

թիւնից Ստեփչովը մինչև ականջները կարմրեց։ Միևնոյն ժամանակ գովասանքը վիրաւորեց և Ֆրատիւին...

Օգնեանովը և Սոկոլովն ակամայ ժպտացին։ Միևնոյնն արաւ և հաչի Սմիռնը, թէև չգիտէր, թէ գործն ինչումն է։

Ստեփչովն աչքերը բարձրացրեց և գրգռուած նայեց Օգնեանովին ու Սոկոլովին։

—Այո՛,—ասաց նա կեղծ սառնասրտութեամբ, թէև ձայնը զայրոյթից դողում էր.—ես յոյս ունիմ, որ Լ ո ղ ի ն գ ր ա տ ց ի բայ Օգնեանովը շուտով մեզ համար մի ողբերգութիւն կը տայ։ Նա համոզուած պէտք է լինի, որ ոչ ոք չի ծիծաղիլ և ամենից քիչ ծիծաղողը ինքը կը լինի։

Ստեփչովն առանձնապէս շեշտեց «Լողինգրատցի» բառի վրայ (Օգնեանովն իրեն ցեղով այդտեղացի է հռչակել)։ Օգնեանովը նկատեց այդ բանը և նրա դէմքը փոխուեց։ Այնուամենայնիւ հաստատ ձայնով պատասխանեց.

—Երբ մենք բեմի յետևն ունինք այնպիսի ճարպիկ մեքենայավարներ, ուզում եմ ասել—լրտեսներ, ինչպէս Ստեփչովն է, զարմանալի չէ ուրեմն, որ մեզ մօտ ողբերգութիւններ էլ կատարուեն։

Եւ նա արհամարհական հայեացք ձգեց Ստեփչովի վրայ։ Այս անգամ Սոկոլովը քաշեց իւր ընկերոջ թևից։

—Թո՛ղ դրան,—շշնջեց նա։

—Ես չեմ կարող ցած մարդկանց համբերել,—

բարձր արտասանեց Օգնեանովը, այնքան բարձր, որ Ստեփչովը կարող էր լսել նրան։

Այդ միջոցին Բոյչօն նկատեց Մունչօին, որը կանգնած էր սրճատան դռան մօտ։ Մունչօն աչքը չէր հեռացնում նրանից, գլուխը շարժում և բարեկամաբար ժպտում էր։ Ապուշի դէմքի արտայայտութիւնը բարի, հեզ և երջանիկ էր։ Բոյչօն առաջ էլ նկատել էր, որ ապուշը միշտ իրեն ուշադիր ու սիրալիր կերպով է նայում, բայց չէր կարող նրա այդ սիրոյ պատճառը գուշակել։ Երբ նրանց աչքերը պատահեցին միմեանց, Մունչօի դէմքին մի աւելի ևս երջանիկ ժպիտ փայլեց և նրա աչքերն անհասկանալի և անմիտ հրճուանք արտայայտեցին։ Նա կռացաւ դէպի ներս, Օգնեանովի ուղղութեամբ, և իւր դէմքի բոլոր մկանունքները շարժելով, իբր թէ ծիծաղում է, երկարացնելով ասաց.

—Ռուս-սսի-ացցի...,—և սկսեց մատը քսել կոկորդին, կարծես ձևացնելով, թէ ինչպէս են մորթում։

Բոլոր ներկայ եղողները զարմացած նրան էին նայում։

Ապշեց և Օգնեանովը։ Արդէն առաջին անգամ չէր, որ Մունչօն այդպիսի նշաններ էր անում նրան։

—Կո՛մս, ի՞նչ է ասում քեզ Մունչօն,—հարցրին միքանի հոգի։

—Չգիտեմ,—ժպտալով պատասխանեց Օգնեանովը.—Նա ինձ շատ է սիրում։

Մունչօն, ըստ երևոյթին, հասկացաւ նրանց տարակուսութիւնը և նրանց աւելի լաւ բացա-

տրելու համար, թէ ինչով է Օգնեանովը հիացրել իրեն, հանդիսաւոր բթամտութեամբ նայեց բոլորին, մատով Օգնեանովին ցոյց տուեց և աւելի բարձր ձայնով բացագանչեց.

—Ռուս-սսի-ացցին.—յետոյ ձեռքը շարժեց դէպի հիւսիս և սկսեց աւելի եռանդով մատը քսել կոկորդին։

Այս կրկնութիւնն ակամայ շփոթեց Օգնեանովին. Նրա մտքովն անցկացաւ, թէ գուցէ մի որ և է ճակատագրական դիպուածով Մունչօն տեսել կամ գուշակել էր Ստոեան պապի ջրաղացում պատահած դէպքը։ Նա սոսկումով նայեց Ստեֆչովին, բայց հանգստացաւ, նկատելով, որ Ստեֆչովը դարձել և փսփսում է մէկի հետ, ուշադրութիւն չդարձնելով Մունչօի վրայ։

Այդ վայրկենին Ստեֆչովը վեր կացաւ, մի կողմ հրեց Մունչօին դռան մօտից և դուրս գնաց, չարամիտ ու քինախնդիր հայեացք ձգելով Օգնեանովի վրայ։

Ստեֆչովը եռում էր չարութիւնից։ Նրա ինքնասիրութիւնն այնքան հարուածներ էր ստացել Օգնեանովից և ինքը դեռ առիթ չէր ունեցել վրէժխնդիր լինելու։ Նա ցանկանում էր վրէժը լուծել, բայց ծածկաբար, որովհետև վախենում էր բացայայտ կռիւ մղել Օգնեանովի դէմ։ Թատրոնում երգուած յեղափոխական երգը նրա ձեռքը զէնք տուեց, սակայն, ինչպէս մենք արդէն տեսանք, այդ մատնութիւնն յաջողութիւն չունեցաւ։ Բէյը չէր կարող ենթադրել, թէ Օգնեանովը գրգռող երգ

երգած լինի իւր ներկայութեամբ, և չհաւատաց Ստեֆչովին։ Ստեֆչովը խոհեմութիւն չհամարեց պնդել այդ առիթի վրայ։ Սակայն շուտով մի նոր բան գտաւ—երեք օր առաջ նա պատահմամբ ծանօթացաւ Լոզենգրադից եկած մի մարդու հետ և իմացաւ, որ այնտեղ ո՛չ մի ժամանակ ո՛չ Բոյչօ, ո՛չ Օգնեանով է եղած։ Ստեֆչովի համար սա մի թել էր, որի օգնութեամբ նա յոյս ունէր նոր գիւտեր անելու։ Երևի, մտածում էր նա, Բոյչօ Օգնեանովի անուան տակ թագնուած է մի ուրիշ անձնաւորութիւն և այն, ո՛չ առանց պատճառի։ Նա մօտ յարաբերութիւն ունի Սոկոլովի հետ, որը վաղուց արդէն յայտնի էր, որպէս խռովարար մարդ։ Հաւանական է, որ այս երկու մարդիկ մի ինչ որ բան են նիւթում, բայց ի՞նչ իսկապէս։ Ի հարկէ մի անմաքուր բան։ Անցնելով մի ենթադրութիւնից դէպի միւսը, Ստեֆչովը բնազդմամբ զգում էր, որ Օգնեանովն անհաղորդ չէր և Պետկանչեան փողոցի արկածին. իսկ և իսկ այդ ժամանակ քաղաքում երևաց Օգնեանովը և նրա լոյս ընկնելու ժամանակից սկսած նկատելու եղաւ մտքերի սաստիկ յուզումը։ Կիրիակը որոշեց ինչ էլ որ լինի յետամուտ լինել Օգնեանովի յետևը թագնուած գաղտնիքներին, և ամենայն յամառութեամբ ու իւր չար, նախանձոտ հոգու կատաղի ցանկութեամբ անձնատուր եղաւ այդ գործին... Շուտով նոր հանգամանքներ օգնութեան հասան Ստեֆչովին՝ Օգնեանովի դէմ մղած գաղտնի կռուի մէջ։

ԺԹ.

ՎՐԴՈՎՄՈՒՆՔ

Ամպերը կուտակւում էին Օգնեանովի գլխի վերեւ: Բայց նա համարեա ոչինչ չէր կասկածում: Վեցամսեայ անվրդով կեանքը Սպիտակ-Եկեղեցում թեթեւամտութեան չափ սաստկացրել էր նրա ինքնավստահութիւնը: Ամբողջովին ուրիշ տեսակ գործով զբաղուած լինելով, նա ժամանակ չէր գտնում մտածելու մի այնպիսի չնչին բանի վրայ, որպիսին անձնական ապահովութիւնն է: Բոլոր զգացմունքներից, երկիւղի զգացմունքն էր, որ շատ քիչ էր զարգացել նրա մէջ:

Այնուամենայնիւ Օգնեանովն այժմ բոլորովին էլ հանգիստ չէր եւ, սրճատնից դուրս գալով, նա բժշկապետին ասաց.

—Ինչպէս ես կարծում, Ստեֆչովի սպառնալիքների մէջ մի որ եւ է լուրջ բան կա՞յ:

—Ստեֆչովն ատամ է կրճտացնում քեզ վրայ, եւ եթէ որ այդ գարշելին չարիք պատճառել կարողանար, նա մինչեւ այժմ այդ արած կը լինէր: Նա չէր բաւականանալ երգիծաբանութեամբ:

—Իսկ այդ Մունչօ՞ն. ի՞նչ է նշանակում այդ կատակերգութիւնը: Ես սկսում եմ անհանգստանալ:

Բժշկապետը ծիծաղեց:

—Երեխայութիւն մի՛ անիր:

—Այո՛, դա ուշադրութեան արժանի չէ. բայց Ստեֆչովը, Ստեֆչովը... Չլինի՞ մի բան գիտէ նա իմ մասին:

—Ի՞նչպէս կարող էր գիտնալ: Ճիշտ է, հաջի Ռովոաման նոր լուր է տարածել մեր մասին: Քեզ յայտնի է, որ այդ բամբասողը մի ժամ անգամ չի կարող առանց նոր բան հնարելու ապրել:

—Ո՛չ, նա մի վտանգաւոր կախարդ է. նա կարող է գուշակել այն, ինչ որ ուրիշը տեսնելով կամ լսելով միայն կարող է իմանալ: Հենց այդ պառաւն էլ հրահանգներ է տալիս Ստեֆչովին. նմանապէս եւ Ռադային է տանջում միշտ...

—Էհ, նա քո մասին մի լուր էլ էր տարածել, թէ դու լրտես ես, յիշո՞ւմ ես: Ասում եմ քեզ, որ ուղղակի շատախօսի մէկն է:

—Բայց քո մասին ճիշտ լուր էր տարածել... Հա, գիտե՞ս, Ստեֆչովն առաւօտը նշանւում է:

Բժշկապետի դէմքը փոխուեց:

—Լալկայի հե՞տ:

—Այո՛, նրա հետ:

—Դու ո՞րտեղից գիտես:

—Ռադայից իմացայ... հաջի Ռովոաման միջնորդն է, ի հարկէ: Իսկ խնամախօսները—հաջի Սմիոնը, այս մշտական քամելիոնը (գունափոխ մողէս) եւ Ալաֆրանկան են:

Բժշկապետը չկարողացաւ իւր յուզմունքը ծածկել: Նա շտապեցրեց քայլերը, Օգնեանովը զարմացած նրան նայեց:

—Բժշկապե՛տ, դու ինձ չէ՞իր ասում, որ քո սիրտն ազատ չէ:

—Ես սիրում եմ Լալկային,—մռայլ կերպով պատասխանեց Սոկոլովը:

—Եւ նա գիտէ՞։

—Նա էլ նմանապէս ինձ է սիրում... կամ աւելի ճիշտ ասած, նրան ես Ստեփչովից աւելի եմ դիւր գալիս։ Միայն ես չեմ հաւատում, որ նրա զգացմունքը խոր լինի։—Եւ ակամայ կարմրութիւնը ծածկեց Սոկոլովի դէմքը։

—Քո բաղդից, թէ դժբաղդութիւնից, նա քո կարծածից աւելի է սիրում.—այդ բանն ինձ լաւ յայտնի է,—ասաց Օգնեանովը, կարեկցութեամբ նայելով բժշկապետին։

—Բայց դու ո՞րտեղից գիտես,—հարցրեց բժըշկապետն աւելի ևս կարմրելով։

—Ռադայից. քեզ յայտնի է, որ նրանք մօտիկ ընկերուհիներ են։ Լալկան, ինչ որ մտքումը կայ, ասում է նրան։ Դրան չես կարող երևակայել, թէ որքա՜ն արտասուք է թափել նա, երբ քեզ Կարլովօ են տարել, և թէ որ աստիճան մեծ է եղել նրա ուրախութիւնը քեզ ազատ տեսնելով։ Ռադան այդ բոլորը տեսել է։

—Խե՜ղճ երեխայ,—ասաց բժշկապետը խուլ ձայնով.—նրան կորստեան մատնած կը լինին, եթէ տան այդ մարդուն...

—Ինչո՞ւ համար դու չուզեցիր նրան մինչև այժմ.—կարեկցաբար հարցրեց Օգնեանովը։

Բժշկապետը զարմացած նայեց նրան։

—Բայց մի՞թէ դու չգիտես, որ նրա հայրը ինձ տեսնել անգամ չի ուզում։

—Այդ դէպքում առևանգէիր նրան։

—Ա՞յժմ, երբ մենք ապստամբութի՞ւն ենք

պատրաստում, որը կարող է երկու տարի յետոյ, սակայն ո՞վ գիտէ, գուցէ և վաղը բռնկուել։ Այսպիսի խառնակ ժամանակները իմ մտքովս անգամ չի անցնում ամուսնանալ... և մեզ էլ կը լինէր քարշ տալ այդ աղջկան դէպի անդունդ...

—Ճիշտ ես ասում,—մտախոհ կերպով ասաց Օգնեանովը.—այդ միևնոյն միտքն ինձ էլ թոյլ չի տալիս պսակուել Ռադայի հետ. հակառակ դէպքում՝ ես այդ չքնաղ որբին կազատէի անհամար տանջանքներից և կը երջանկացնէի... Նա բարեբաղդութեան արժանի է. սքանչելի սիրտ ունի, եղբա՛յր։ Իսկ այժմ նա տանջւում է և իւր բաղդը կապել է իմիս հետ... Խե՜ղճ։

Մի ամպ անցաւ Օգնեանովի դէմքով։

Բժշկապետի տանջանքները Լակայի վիճակի մասին սաստիկ կարեկցութիւն զարթեցրին նրա մէջ։

—Ես այդ քոսոտին մենամարտի կը հրաւիրեմ։ Հարկաւոր է նրան սպանել... Այլապէս նա ուրիշներին կը սպանէ,—յանկարծ տաքացաւ Օգնեանովը։

Երկու ընկերների դէմքերն էլ տխրութիւն էին արտայայտում։

—Ուզո՞ւմ ես, ես կը գնամ և սրճատան մէջ մի ապտակ կը տամ նրան։

—Նախկինների նման, այդ էլ կուլ կըտայ. նա լիրբ մարդ է... Բացի դրանից, դրանք ոչ մի օգուտ չունին։

—Ապտակը նրան կը խայտառակէ։

—Սպասէր Իւրդան Դիմանդիեւի առաջ չի խայտառակել նրան։

—Բայց աղչկայ առա՞ջ. նա կիմանայ։

—Լալկային չեն հարցնիլ. բացի դրանից նա հօր կամքը յարգում է,—պատասխանեց բժշկապետը մելամաղձոտ կերպով և մեկնեց իւր ձեռքը։

—Գնո՞ւմ ես։ Բայց երեկոյեան մենք գնալո՞ւ ենք տէր-Ստավրիի մօտ։

—Չէ, չեմ ուզում. մենակ գնա։

—Ո՛չ, մենք պէտք է միասին գնանք։ Խօսք ենք տուել։ Տէր-Ստավրին, Աստուած գիտէ, թէ ինչ գլխի տէր է, բայց ազնիւ սիրտ ունի... Մէկ էլ, գուցէ մի բան կը մտածենք։

—Լաւ, կըսպասեմ քեզ։

Եւ ընկերները բաժանուեցան։

Օգնեանովը գնաց դպրոց։ Ուսուցչական սենեակում նա միայնակ գտաւ Մերդվենջիեւին, որը սաստիկ խորասուզուած էր մի ինչ որ Թուրքերէն գրքի ընթերցանութեամբ։ Օգնեանովը չբարեւեց նրան։ Նոյն իսկ սկզբից նա զզուանք էր զգում դէպի այդ մարդը, որի մի ձեռքում երգարանն էր, իսկ միւսում—Թուրքերէն քերականութիւնը։ Ռադային դրած նրա նամակը, ինչպէս նաև շողոքորթութեամբ վերաբերուելը դէպի Ստեֆչովը զօրեղացրին այդ զգացմունքը։ Օգնեանովն յուզուած ման էր գալիս սենեակում, քուլա-քուլա բաց թողնելով պապիրոսի ծուխը. Նա յափշտակուած էր քիչ առաջ բժշկապետի հետ տեղի ունեցած խօսակցութեամբ և ամենեւին ուշադրութիւն չէր

դարձնում երգչի վրայ. բայց ահա նա սեղանի վրայ տեսաւ «Դունայ» լրագրի վերջին համարը—միակ օրինակը, որն ստանում էր Մերդվենջիեւը իւր Թուրք պաշտպաններից։

Նա մի հարեւանցի հայեացք ձգեց լրագրի բուլղարական բաժնի վրայ և արդէն ուզում էր հեռանալ, երբ յանկարծ խոշոր տառերը գրաւեցին նրա ուշադրութիւնը։ Յուզմունքն հազիւ զսպելով, նա կարդաց հետեւեալը.

«Կալանաւորի փախուստ Դիարբէքիրի բերդից։ Իվան Կրալիչ, Դունայի նահանգի Վիդին քաղաքից, 28 տարեկան, բարձրահասակ, սեւ աչքերով, ոլորուն մազերով, թխագոյն դէմքով, 1868 թուականի խռովութիւններին մասնակից լինելու պատճառով դատապարտուած էր ցմահ բանտարկութեան Դիարբէքիրի բերդում և փախել է այնտեղից ներկայ տարուայ մարտ ամսին. այժմ նա թագնուած է նորին սուլթանական մեծութեան կայսրութեան մէջ. Նրան որոնում է կառավարութիւնը, որը և տուել է սոյն տեղեկութիւնները փախստականի մասին։ ուրեմն, Փադիշահի հաւատարիմ հպատակներն անհնազանդութեան համար խիստ պատիժն աչքի առաջ ունենալով, պարտաւոր են ցոյց տալ կամ մատնել յիշեալ յանցաւորին, եթէ կը ճանաչեն նրան, օրինաւոր իշխանութեանը, որ նա՝ կայսերական արդար օրինաց համաձայն՝ արժանի պատիժն ստանայ»։

Ջնայելով իւր գործ դրած բոլոր ջանքերին, Օգնեանովը չկարողացաւ սառնարիւնութիւն պահ-

պանել—Նրա դէմքը փոխուեց, շրթունքները սպիտակեցին։ Զափազանց անսպասելի էր այն, ինչ որ նա կարդաց։ Օգնեանովը մի արագ հայեացք ձգեց երգչի վրայ։ Մերզվենչիեւը նախկին անշարժ դրութեամբ զբաղուած էր իւր գրքերով։ Ըստ երեւոյթին, նա չէր նկատել Օգնեանովի յուզմունքը եւ հազիւ թէ ուշադրութիւն դարձրած լինէր այդ յօդուածի վրայ, որն ինքն ըստ ինքեան մի հետաքրքիր բան չէր ներկայացնում։ Հետզհետէ Օգնեանովի սառնասրտութիւնը վերադարձաւ։ Նախ եւ առաջ նա ցանկանում էր ոչնչացնել այդ վտանգաւոր փաստաթուղթը եւ, զսպելով իւր արհամարհանքը դէպի երգիչը, խօսեց նրա հետ.

—Բայ Մերզվենչիեւ,—ասաց նա հանդարտ ձայնով,—կարդացե՞լ էք այս համարը. տուէ՛ք ինձ, ես ուզում եմ տանը կարդալ։ Ֆրոնիկոնը շատ հետաքրքիր է։

—Չեմ կարդացել, բայց կարող էք վեր առնել,—ծուլութեամբ պատասխանեց երգիչը եւ նորից խորասուզուեց իւր ընթերցանութեան մէջ։

Օգնեանովը հեռացաւ չարագուշակ «Դունայը» դրպանում—միակ օրինակը, որը ստացւում էր Սպիտակ-Եկեղեցում։

Ի.

ՍՐՍԳԱՅԹՆԵՐ

Կիրիակ Ստեֆչովն այսօր սրճատան մէջ հեռացաւ կռուի դաշտից այն նպատակով միայն, որ նորից վերադառնայ եւ յարձակուի հակառակորդի վրայ աւելի իրական զէնքը ձեռքին։

Զարհուրելի ատելութիւնը դէպի այդ մարդը նրա հոգու մէջ խեղդել էր ազնուութեան այն սակաւ մնացորդները, որոնք մինչեւ այդ ժամանակ նրա ստոր պրինցիպների հետ անվնաս էին մնացել մղած կռուի մէջ։ Մատնութեան միտքը բոյն էր դրել նրա գլխում։ Ստեֆչովի ձեռքում կային եւ մի քանի հիմունքներ, մատնութիւնն իրական դարձնելու համար։ Մանր խնտրիգները եւ բամբասանքները, որ նա տարածում էր Օգնեանովի մասին, չօգնեցին. ընդհակառակը, Օգնեանովն յաղթական կերպով ոչնչացրեց դրանց եւ դեռ աւելի զօրացաւ հասարակական կարծիքի առաջ։ Այս բանը մանաւանդ երեւաց Գենովէվայի ներկայացման ժամանակ հասարակութեան ցոյց տուած պաշտպանութիւնից։ Եթէ Միխալակի Ալաֆրանկան լինէր նրա տեղ, հանգիստ խղճով կը կատարէր մատնութիւնը, իւր արածը բարի գործ համարելով։ Սակայն Կիրիակը, չնայած հոգու բոլոր նենգութեանը, դեռ զգում էր այդ վարմունքի զարշելիութիւնը, բայց ոյժ չունէր զսպելու իրեն դրանից։ Վրէժխնդրութեան կատաղի ծարաւը այրում էր

նրան։ Նա որոշեց այդ անել, բայց այնպէս, որ հետքը կորչի…

—Այո՛, այդ թափառաշրջիկն Օգնեանով չէ անուանւում և նա Լօղինգրադցի չէ, այդ առաջին. երկրորդ՝ նա՛ է եղել Պետկանչեան փողոցում հալածուողը և խռովարար թերթերը նրանն էին… Բժշկապետ Սոկոլովը ճիշտ որ այդ ժամանակ բէյլի կնոջ մօտ է եղել… Ուղիղ է ասում հաջի Ռովոաման… Ինձ այդ մասին Ֆիլիպ ոստիկանն էլ մի ինչ որ բան ակնարկեց… Այդ նա՛ էր թղթերը փոխել… Ինչ կերպով—չգիտեմ… Երրորդ՝ բայց մենք այդ շուտով կը տեսնենք… Նրա համար ամենադարհուրելին—ո՛չ թէ Դիարբեքիր ուղարկելն է, այլ կախաղան հանել տալը… Ես կը խորտակեմ այդ դիւրագրգիռ մարդուն…

Նա գնում էր կուսանաց վանքի կողմը, որտեղ տեսակցութիւն էր նշանակել Մերդվենջիևի հետ։

—Դու ուղիղ էիր ասում,—ասաց նա հաջի Ռովոամային, ներս մտնելով նրա մօտ։

—Տէրն օրհնէ քեզ, Կիրիա՛կ, իսկ ես կարծում էի, թէ քիչ սխալուած եմ եղել,—կատակով պատասխանեց կոյսը, լաւ չհասկանալով, թէ ինչի մասին է ասում նա։ Ո՞վ է յետևից ընկել, որ փուքսի նման փչում ես։

—Ես հենց նոր կռուեցի Օգնեանովի հետ…

—Այդ անիծուած տղան մեր թեթևամիտ Ռադայի միտքը շփոթել է…—փշփշաց կոյսը.—նրան ինչ որ ապստամբական երգեր է տուել սովորելու։ Դա իսկապէս խայտառակութիւն է։ Այժմ

թէ մեծ, թէ փոքր այդ երգերն են երգում… Մէկ էլ տեսար, կրակը կ՚բռնէ ամբողջ աշխարհը։ Միքանիսը մրջիւնների նման հաւաքւում, աշխատում են, իսկ միւսները հող ու մոխիր են դարձնում… Եւ դրանք մարդի՞կ են։ Դրանք գլուխ կտրողներ են… և Ռադան էլ դրանց մէջ է… Ո՞վ սուրբ Աստուածածին։ Ա՜յ, այն գիշեր էլ ինչպիսի դարշելի բաներ են երգել թատրոնում. Թուրք իշխանաւորները քնա՞ծ են, ի՞նչ է։

—Ես սաստիկ կռուեցի Օգնեանովի հետ և որոշել եմ, ինչ էլ որ լինի, ոչնչացնել նրան,—բարկացած խօսեց Ստեֆչովը. սակայն, մտաբերելով, որ խոհեմութիւն չէ հաւատ ընծայել այս շատախօս կոյսին, աւելացրեց.—Այսինքն ոստիկանութիւնը հետամուտ կը լինի և կը գտնի… Միայն—լռութիւն։

—Բայց մի՞թէ դու ինձ չես ճանաչում։

—Գիտեմ այդ պատճառով էլ ասում եմ—լռութիւն։

Այդ միջոցին դրսից ոտնաձայներ լսուեցան։ Ստեֆչովը լուսամուտից նայեց և ուրախութեամբ բացագանչեց.

—Մերդվենջիևն է գալիս։ Դէ՜հ, ի՞նչ,—հարցրեց նա երգչին։

—Մուկը թակարդի մէջ է,—պատասխանեց Մերդվենջիևը։

—Ի՞նչպէս, ի՞նչ արաւ նա։

—Սփրթնեց, կանաչեց, դողաց… Այդ—նա՛ է։

—Իսկ ի՞նչ ասաց։

—Խնդրեց ինձ տալ կարդալու։ Այդ առաջին

անդամն էր. մինչև այդ ժամանակ նա արհամարհանքով էր նայում թէ լրագրին, թէ ինձ։

Ստեֆչովն ուղղուեց և ձեռքերը խփեց միմեանց։

—Ի՞նչ կայ,—հարցրեց հաջի Րովոաման սարսափած, անհանգստութեամբ՝

—Եւ նա վտանգից երկիւղ չունի՞,—հարցրեց Ստեֆչովը։

—Ամենևին... Ես ձևացրի, թէ կարդում եմ, ոչինչ չեմ տեսնում և բոլորը տեսայ. արաջը քնում է, բայց ականջը պահապան է դնում,—հպարտութեամբ աւելացրեց Մերդվենջիեւը։

—Բրա՜վօ, իսկ և իսկ Մերդեվեն են։ Եւ երգիծաբանութիւնն էլ վարպետութեամբ է գրուած։ Սքանչելի՜ խմբագիր։

—Միայն չմոռանաք ինձ յետոյ էլ... Դու կը հոգաս տեղի մասին, որը շուտով կը բացուի։

—Միամի՛տ եղիր։

Երգիչն ըստ Թրքական սովորութեան ձեռքով շնորհակալութիւն յայտնեց նրան։

—Ես մտածում եմ մի կերպ և այդ Պոպովի տակը փորել... գայլի նման է նայում քեզ և հաւանական է, որ նա էլ Կրալիչի երամիցն է։

—Այդ ի՞նչ Կրալիչ է,—հարցրեց նորից հաջի Րովոաման, զարմացած, որ մի բան չը գիտէ ինքը։

Ստեֆչովն առանց նրան պատասխանելու, իւր մտածմունքներով զբաղուած նայում էր լուսամուտից։

Բայց գիտէ՞ս, երէկ ուսումնարանական խորհուրդ կար,—ասաց Մերդվենջիեւը։

—Իսկ ո՞վ կար այնտեղ։

—Բոլորն այնտեղ էին... Միխալակին առաջարկեց նրան դուրս անել։ Բայց միւսները պաշտպանում էին։ Ամենից աւելի—Մարկօ Իվանովը... Որոշեցին միայն նկատողութիւն անել նրան երգի համար։ Մի խօսքով, ոչինչ դուրս չեկաւ։

—Բաց Մարկօն սիրահարուել է այդ Կրալիչի վրայ. բայց երբևիցէ նա դառնապէս կը զղջայ... Եւ ի՞նչ է մէջ ընկել այդ միամիտ մարդը։ Է՜, իսկ Միչօ՞ն։

—Բայց Միչօն էլ Օգնեանովի կողմն է։

—Դէհ, հասկանալի է... ագռաւն ագռաւի աչքը չի հանիլ. Միչօն էլ, Մարկօի նման, ուր մտնում է, կառավարութեանն է հայհոյում։

—Կուժը ջրի ճամփին կ՚կոտրուի,—ասաց հաջի Րովոաման։

—Իսկ Գրիգո՞րը, իսկ Պենկօ՞վը։

—Նրանք էլ նոյն դաշտի պտուղն են։

—Թող ես սատանայի բաժին լինիմ, եթէ չփակեմ նրանց դպրոցը... եթէ միայն բուեր և բուէններ չապրեն այնտեղ,—կատաղաբար գոչեց Ստեֆչովը, արագ-արագ յետ ու առաջ վազելով խցի մէջ։

—Այդպէս, այդպէս. «կապիր տէրտէրին, որ ձիերը հանգստանան»։ Այդ դպրոցից են դուրս գալիս բոլոր ապականուած, խառնակիչ երգերը,—

ձայն տուեց կոյսը:—Բայց ո՞վ է այդ Կրալիչը, Կիրիա՛կ:

—Կրալի՞չը. Թագաւոր է, Բուլղարիայի ապագայ Թագաւորը,—պատասխանեց նա ծաղրելով:

Մերդվենջիեւը գլխարկն առաւ և բաց արաւ դուռը:

—Այդպէս ուրեմն, չմոռանաս իմ գործի մասին, Կիրիա՛կ,—ասաց նա աղերսական ձայնով: Խեղճ երգիչը կարծում էր, թէ գործը վերաբերում է միայն Օգնեանովին ուսուցչութիւնից արձակելուն, որի պաշտօնը հրապուրում էր նրան:

—Դա վճռուած հարց է...

Ստեֆչովը միայնակ մնաց կոյսի հետ միւս կարևոր գործի մասին խօսելու համար, այսինքն իւր նշանադրութեան մասին՝ Լալկայի հետ... Երբ մթնեց, նա ճանապարհ ընկաւ դէպի կոնակ:

Պիտերկոտեան փողոցում նա պատահեց Միխալակին:

—Գիտե՞ս, «Դունայը» ձգեց Օգնեանովի դիմակը, նա ամբողջովին նկարագրուած է այնտեղ: Այդ մարդը Դիարբէքիրից փախստական է և ամեն տեղ որոնում են նրան... Ես պատրաստ եմ երդուելու, որ այդ նա՛ է... Նրա անունն էլ ուրիշ է...

—Իսկ ի՞նչ ես մտածում անել, Կիրիա՛կ: Նա վտանգաւոր մարդ է և կորստեան կը մատնէ անմեղ մարդկանց էլ... Ես դեռ երեկ առաջարկեցի վռնդել դպրոցից, նա մեզ հարկաւոր չէ: Բայց ո՞ւր ես գնում: Այդ մասին յայտնի՛ր բէյին, որ նա միջոցներ ձեռք առնի:

—Այդ իմ գործը չէ, ինձ մօտ լրագիր էլ չկայ. Մերդվենջիեւի մօտ է և Մերդվենջիեւը գիտէ...—պատասխանեց Ստեֆչովը. նա կամենում էր մատնութեան կասկածներից հեռու մնալ և նենգաբար ստուէր էր ձգում Մերդվենջիեւի վրայ, չարամտութեամբ նրա անունն յիշելով:

—Յայտնի՛ր, յայտնի՛ր, դու մեծ ծառայութիւն մատուցած կը լինիս ազգաբնակութեանը,—կրկնեց Միխալակին բոլորովին հասարակ և բնական կերպով, կարծես Ստեֆչովին ուղարկում էր բազար ձուկ գնելու:—Հա՛, իսկ մենք վաղը հաջիի հետ կը գնանք Իւրդան պապի մօտ... Ես քեզ այժմէնից արդէն շնորհաւորում եմ... Կապը կապուած է:—Եւ Միխալակին սեղմեց նրա ձեռքը:

—Մ ե ր ս ի՛, մ ե ր ս ի...

Արդէն բոլորովին մթնեց: Ստեֆչովն ու Միխալակին մի քիչ էլ շշնջեցին մթութեան մէջ և բաժանուեցան:

Ստեֆչովն իւր սիրած Թուրքերէն երգը երգելով ճանապարհը շարունակեց: Նա գնում էր Կոնակ:

ԻԱ.

ՏԷՐ-ՍՏԱՎՐԻԻ ՀԻՒՐԵՐԸ

Սքանչելի երեկոյ էր, երբ Սոկոլովն ու Օգնեանովը տէր-Ստավրիի մօտ հիւր գնացին:

Տէր-Ստավրին ապրում էր համարեա քաղաքի ծայրում: Երկու բարեկամները անխօս անցան մի

քանի փողոց։ Նրանք երկուսն էլ խորասուզուած էին իրենց մտքերի մէջ։ Օգնեանովը ոչնչացրել էր «Դունայ» լրագիրը և դրա համար քիչ հանգստացել էր։ Նա երրորդ անգամ տեսել էր Մերդվենջիևին և դարձեալ ոչ մի կասկածելի բան չէր նկատել նրա դէմքի վրայ։ Այնուամենայնիւ կասկածի մի փոքրիկ ամպ պղտորում էր Օգնեանովի հոգին։ Բժշկապետն ի հարկէ նրանից պակաս հոգսի մէջ չէր ընկած։

Քանի նրանք հեռանում էին քաղաքի կենդրոնից, երթևեկութիւնն այն չափով պակասում էր։ Նեղ, ծուռումուռ փողոցները խուլ և ամայի էին դառնում։ Միայն շների հաչոցն էր աւելանում։

—Պա՜հ, այն ի՞նչ է այնտեղ,—հարցրեց բժշկապետը, ցոյց տալով մի մարդկային ստուեր, որը պահուել էր պատի յետևը։ Այդ իսկ ակնթարթում անծանօթ ոգին սկսեց փախչել։

—Վախեցաւ այդ պարոնը։ Արի՛, հասնենք նրան և հարցնենք, թէ ինչո՞ւ չի ուզում բարևել մեզ հետ,—ասաց Օգնեանովն ու ընկաւ նրա յետևից։

Բժշկապետը, որն իւր մտքերով էր զբաղուած, տրամադրութիւն չունէր մի այդպիսի վարժութիւն անել, բայց և այնպէս նա էլ վազեց Օգնեանովի յետևից։

Անծանօթն արագութեամբ փախչում էր։ Ըստ երևոյթին, նա մի չարամիտ մարդ էր կամ կարծում էր, թէ չարամիտ մարդիկ են ընկած իւր յետևից։ Շուտով նա իւր հալածողներից առաջ անցաւ, որովհետև եթէ համարձակութիւնը թիկուն-

քին է թևեր տալիս, երկիւղը տալիս է թևեր ոտքերին։ Շուտով բարեկամները տեսան, որ իրենք քամու յետևից են ընկած։ Անծանօթը մի պարտիզի դռնակով ներս սլկուեց և այլևս ոչինչ չէր լըսւում։ Երկու բարեկամները ծիծաղեցան։

—Ինչո՞ւ ենք մենք ընկել այս խեղճ մարդու յետևից,—հարցրեց բժշկապետը։

—Ես կարծում էի, թէ դա Ստեֆչովի մի որ և է գործակալն է... Նրանք երեկոները երգիծաբանութիւններ են ցրում։ Դրա համար էլ ես կամենում էի բռնել նրան։

Սոկոլովը նորից խորասուզուեց իւր մտածմունքների մէջ։

—Ո՞ւր ես գնում, բժշկապետ։ Չէ՞ որ ահա այս է տէրտէրի տունը,—կանչեց նրան Օգնեանովը և դուռը բաղխեց։

Մտազբաղ բժշկապետն յետ դարձաւ։

Դուռը բացուեց և այնտեղ երևաց տէր-Ստավրիի մթին կերպարանքը։

—Բաղխեցէք և բացցի ձեզ... Համեցէք, բժշկապետ, կոմս,—ուրախութեամբ ողջագուրեց նրանց տէր-Ստավրին։

Ինչպէս մենք արդէն ասել ենք, Օգնեանովի վրայ մնաց «կոմս» անունը. միայն բէյը նրան «կոնսուլ» էր կոչում։ Այն կարեկցութիւնը, որը գրգռեց Գենովէվայի ամուսինը թատրոնում, մնաց նաև ներկայացումից յետոյ։ Երեխաները փողոցներում նրան «կո՜մս, կո՜մս» աղաղակներով էին ուղեկցում և վազում մօտը, որ նա շփէ իրենց գլուխ-

ները։ Տէր-Բաբան, որն սկզբում Օգնեանովի դէմ էր, ներկայացումից յետոյ վճռապէս նրա կողմն անցաւ։

Վերեւ՝ սենեակից սրնգի ձայներ էին լսւում։ Երբ տէրտէրը ներս տարաւ հիւրերին, այնտեղ արդէն բազմաթիւ ժողովուրդ կար։ Ի միջի այլոց ներս մտնողները նկատեցին Կանդովին, Նիկոլայ Նեստկովիչին եւ Կոյրին։ Գանչօն, տէր-Ստաւրիի որդին եւ Բոյչօի ընկերը, էլի արաղ եւ մ է զ է բերեց, որը պատրաստուած էր մանր չարդած կանաչ բանջարեղէններից, վրան ձէթ եւ պղպեղ ցանած։ Սրինգը լռեց։

—Կոլչօ՛,—ձայն տուեց Նիկոլայ Նեստկովիչը,—մի բան ածի՛ր։

Կոլչօն նորից սկսեց եւ մեծ յաջողութեամբ նուագեց միքանի եւրոպական եղանակներ։

—Է՜յ, արաղ եւ մէզէ տուէ՛ք, որ լարիս ձայնն ուղղեմ. դուք ինձ մոռանում էք,—ասաց նա, ընդհատելով նուագածութիւնը։

—Լաւ ես անում, Կոլչօ. խնդրողն իրեն յարգն իմանում է,—ասաց տէրտէրը։

Օգնեանովը լցրեց եւ անխօս տուեց նրան։

Կոյրը շօշափեց նրա ձեռքը եւ ասաց.

—Բայ Օգնեանով, դո՞ւ ես։ Շնորհակալ եմ... ուրիշները քեզ կոմս են անուանում, բայց ես՝ մի չնչին պատճառով՝ չկարողացայ թատրոնում քեզ կոմսի դերի մէջ տեսնել։

Հիւրերը ծիծաղելով միմեանց երեսը նայեցին։

—Բայ Կոլչօ, երգի՛ր, խնդրեմ, մեր եկեղեցական տաղը։

Կոլչօն հանդիսաւոր կերպարանք ընդունեց, հազաց եւ սկսեց երգել, իւր ձայնը եւ շարժուածքները նմանեցնելով եկեղեցու ժերունի փոխասաց հաջի Աթանասինին։

—Օրհնեա՛, Տէր, զսուրբս Քո՝ զտիրուհի Սերոֆիմա եւ զխոնարհ Խերոֆիմա, զսեւերես Սօֆիա եւ զսպիտակադէմ Րիբսիլիա, զթանձրամիս Մագդալինէ եւ զչորչրիկ Իրինէ, զտիրուհի Պարասկեվա —զանօխակալ կոյս եւ զհաջի Րովսամա—զանմեղ մադամ...

Կոլչօն մինչեւ վերջը հաշուեց բոլոր կոյսերին, նրանց իսկական արժանաւորութիւններին բոլորովին հակառակ յատկանիշներ տալով։

Խումբը ծիծաղից թուլացաւ։

—Հայդա՜, հայդա՜, սեղան նստեցէք։ Ամօթ չէ՞, որ ծիծաղում էք Աստուծոյ կոյսերի վրայ,—կատակ անելով գոչեց Իրիցկինը։

Տէր-բաբան օրհնեց սեղանը եւ հիւրերն սկսեցին սովորական պատիւը տալ նրան։ Սոկոլովը միայն անուշադիր ուտում էր։ Տէր-բաբայի առաջ դրած էր սաթի գինով լի մի հսկայական շիշ եւ նա աջ ու ձախ լցնում էր այդ աստուածային պարգեւը։

—Գինին ուրախնում է մարդու սիրտը եւ կազդուրում մարմինը,—ասում էր նա եւ կարգով լցնում բաժակները։—Կո՛մս, խմի՛ր։—Նիկոլչօ՛, լաւ օգնիր։—Կա՛նդով, կուլ տուր, դու ռուս մարդ ես։—Բժշկապե՛տ, շա՛տ վերցրու, սա դեղ չէ, այլ աստուածային պարգեւ։—Կոլչօ՛, ծծի՛ր, ծծի՛ր, որդիս,

իսկ յետոյ մեզ համար ռումինական «Լինօ, Լինօ, արի մեզ մօտ» երգը կերգես...

Այսպիսի ինքնուրոյն կառավարութեամբ տէր-բաբան յագեցնում և նորից գրգռում էր հիւրերի ծարաւը և բաժակները հանդիպում, դիպչում էին միմեանց ու պտտւում սեղանի շուրջը։

Ընթրիքից յետոյ խօսակցութիւններն աւելի կենդանի և բազմակերպ դարձան։ Խօսում էին, ի հարկէ, Գենովեվայի, Սաեֆչովի «չվուոցի» մասին, որի հասցէին տէր-բաբան առանց քաշուելու զովասանքներ շռայլեց։ Օգնեանովը ճարպկութեամբ խօսակցութիւնը փոխեց աւելի անշառ բաների վրայ և ի միջի այլոց սկսեց խօսել զանազան գինիների արժանաւորութեան մասին։ Այս բանը տէր-բաբայի մասնագիտութեանն էր վերաբերում և նա հաշուեց բոլոր գինիների արժանաւորութիւնները։ Պիկլոնդոլեան գինին շամպանեան գինիներից ամենալաւը դատաւ նա։

—Նա տաքացնում է որպէս արեգակ, լուսաւորում՝ որպէս ոսկի, վառվռում՝ որպէս քէհրիպար, կտրում՝ որպէս ածելի։ Այդ գինուց Դաւիթ մարգարէն էլ կը ջահելանար... Տասր կաթիլն այդ գինուց մարդուն փիլիսոփայ է դարձնում, յիսունը—թագաւոր, հարիւր կաթիլը—սուրբ,—ճոռոմաբանում էր տէր-Ստավրին այնպիսի հիացմամբ, որ արևելքի ճգնաւորի բերնի ջուրն անգամ կը վազէր։

Շուտով խօսակցութիւնն ընդհանուր դարձաւ. Յանկարծ փողոցից մի ուրախ երգի ձայն լսուեց։ Մի ինչ որ պատանի բարձր ձայնով երգում էր.

«Իսկ ո՞վ կը գնի համայիլ
«Սիրուն Միլկա Տուդուրկինին,
«Արծաթապատ, լա՜ւ համայիլ։
«Կը գնի ինձ Կիրիակը,
«Եւ ես ընդ միշտ կը կրեմ դա,
«Իսկ նա դրանով կուրախանայ։
«Իսկ ո՞վ կը գնի պարեգօտ
«Սիրուն Միլկա Տուդուրկինին,
«Սպիտակ, ատլաս լաւ պարեգօտ։
«Կը գնի ինձ Կիրիակը,
«Եւ ես ընդ միշտ կը կրեմ դա,
«Իսկ նա դրանով կուրախանայ...»

Երգի ձայնն հետզհետէ հեռանում էր և վերջապէս լռեց մօտակայ փողոցում։ Բայց դա մի ընդհանուր խօսակցութիւն առաջ բերեց Միլկա Տուդուրկինայի—տէր Ստավրիի մօտիկ դրացուհու մասին։ Միլկան մի գեղեցիկ, բայց թեթևամիտ աղջիկ էր, որի մասին բազմաթիւ զրոյցներ էին շրջում քաղաքում և նրա համբաւն օրէցօր տարածւում էր։ Շուտով և մի նոր երգ սկսեցին երգել Միլկայի արկածների մասին։ Քաղաքի այդ մասի պատուարժան հայրերը աղմուկ բարձրացրին իրենց աղջիկների համար—վատ օրինակը փոփոխական է։ Նրանք խորհուրդ էին տալիս Միլկայի ծնողներին պսակել աղջկան Բաչօ Լիլով Բակիրջիչի հետ, որը խելագարի նման սիրում էր նրան։ Սակայն վերջինի ծնողները համաձայն չէին այդ պսակին։ Ո՞վ կը համաձայնի իւր որդու համար լկտի աղջիկ առնել։

—Բայց ինչո՞ւ Լիօ Բակիրչեւը Միլկայի անունն անգամ լսել չի ուզում,—ասաց երէցկինը.—հապա ո՞ւմ հետ է ուզում պսակել իւր մօծակ Ռոչկօին, չորբաչո՞ւ, թէ՞ իշխանի աղջկայ: Միլկան նորահաս, գեղեցիկ աղջիկ է... Էհ, յիմարութիւնից մեղանչել է, բայց չէ՞ որ միշտ այդպէս չի մնալ: Տարիների հետ խելքն էլ կը գայ... Եթէ արդէն սիրում են միմեանց, ուրեմն թող պսակուեն... Եւ թող ապրեն սիրով, ինչպէս որ Աստուած կամեցել է: Մի՞թէ այսպէս մնալն աւելի լաւ է:

—Բայց տղան էլ յիմարի մէկն է, սատանաները հանգիստ չեն թողնում նրան—ձայնակցեց տէր-բաբան.—ուր որ շրջմոլիկներ են հաւաքւում, այնտեղ խօսքը նրա մասին է, ինչ երգ որ կայ, նրա վրայ է... Ի՞նչ պէտք է անես: Մարդիկ մէկը հարիւր են շինում, լուն—ուղտ: Միլկա Տուգուրիչինայի անունն էլ հռչակուած է: Ես ասել եմ նրա հօրը, որ բռնէ Ռաչօին, երբ նա կը գայ աղջկայ մօտ եւ պսակել տայ—եւ գործը կը վերջանայ: Պսակից յետոյ ամեն բան կը մոռացուի:

—Իսկ առաջ ասում էին, թէ Ստեֆչովի որդին ուզում էր նրան առնել,—նկատեց մի կին.—այն ժամանակ դեռ աղջիկն էլ մաքուր էր:

—Էհ, քանիսի՜ մասին խօսեցին... Բոլորն էլ դատարկ խօսքեր դուրս եկան,—ձայն տուեց մի ուրիշը:

—Բայց գիտէ՞ք, Ստեֆչով Կիրիակը վաղը Լալկա Իւրդանովայի համար խնամախօսներ է ուղարկում,—նկատեց երրորդը:

Այդ խօսքերը սաստիկ ցաւ պատճառեցին բժշկապետին:

—Այո՛, յայտնի է, որ Ստեֆչովն ագահ աչքեր ունի...—ասաց տէր-Ստավրին:

—Իսկ Միլկան հաւանո՞ւմ է Ռաչկօին,—խօսակցութիւնը փոխելու համար հարցրեց Օգնեանովը:

—Ի՛նչպէս ասեմ ձեզ... Ժաժուկ գնում է աղջկայ մօտ, նշանակում է նա նրան հաւանում է: Էլ ինչո՞ւ են ծգծգում. թող պսակեն նրանց, եւ մարդիկ ձայները կը կտրեն: Տէ՜ր իմ, Յիսուս Քրիստոս... Մեղանչում ենք մենք աշխարհային հրապոյրներով... Իսկ վաղը ս. Անդրէասի տօնն է. Գանչօ, մի-մի բաժակ գինի լցրո՛ւ, հարկաւոր է կոկորդներս թրջել, թէ չէ չորացան... Անկօ, Միխալչօ, գնացէք քնելու, դուք դեռ փոքր երեխաներ էք...

Յանկարծ դուռը բացուեց եւ Գանչօն ներս մտաւ:

—Միլկայենց տանը սարսափելի աղմուկ կայ,—ասաց նա:

—Ի՞նչ աղմուկ:

—Լաւ չգիտեմ,—ասաց Գանչօն կակազելով.—բայց ինձ թւում է, թէ Լիլօվն է բռնուած: Բազմաթիւ ժողովուրդ է հաւաքուել:

—Եթէ այդ Ռաչկօն է, տեսնենք ինչ դուրս կը գայ,—ասաց տէր-բաբան:—Հայդա՜, զաւակներս, գնանք... գուցէ ձեր տէր-բաբան էլ հարկաւորուի այնտեղ: Առանց քահանայական օրհնութեան ոչինչ գլուխ չի գալ...

Բոլորը դուրս գնացին:

ԻԹ.

ՍՈՒՐԻՇՆ Է ԸՆԿՆՈՒՄ ԹԱԿԱՐԴԸ

Միլկա Տուգուրիչինան ապրում էր տէր-Ստավրիի տան մօտ: Նեղ գաւթում, սանդուխի մօտ լսւում էին միքանի տասնեակ ձայներ: Իրարանցումն րոպէ առ րոպէ սաստկանում էր: Նորանոր հետաքրքիր հարեւանները մեծացնում էին ժողովրդի թիւը. այնտեղ փայլփլում էին երկու-երեք լապտեր: Միլկայի հայրը գոռում էր. մայրը, ձայնը ձգել և վախեցած հաւի նման՝ այս ու այն կողմն էր վազվզում: Շուտով եկաւ և Րաչկօի հայրը, մի կողմ հրեց ժողովրդին և աշխատում էր ներս մանել դռնով, որդուն այնտեղից դուրս բերելու համար... Սակայն մի քանի ուժեղ ձեռքեր նրան յետ մղեցին:

—Այս ի՞նչ իրարանցում է, բարեկամներ,—գոռում էր նա և նորից վազում դէպի դուռը:

—Բայ Լիլօ, հանգիստ կանգնի՛ր,—կանչեց նրան մէկը.—չե՞ս տեսնում, թէ գործն ինչումն է:

—Իմ որդի՜ս,—ճւում էր Լիլովիցան.—ես իմ որդուս այդպիսի աղջիկ չեմ առնիլ,—և յարձակւում էր իրեն բռնողների վրայ:—Բայց ի՞նչ պէտք է անէք դուք նրան: Կախաղա՞ն պէտք է բարձրացնէք:—Ո՞ւմ է սպանել նա:—Եւ նորից հերարձակ և խելակորոյս վազում էր դէպի դուռը:

—Մենք նրան, ինչպէս որ հարկաւոր է, կը պսակենք:

—Ես այդպիսի հարս չե՛մ ուզում:

—Քո որդին նրան ուզում է—մենք էլ կը պսակենք:

Մայրը չգիտէր, թէ ինչ անէր: Նա զգում էր, որ ոչինչ չէր կարող անել այս հասարակական դատաստանի դէմ:

Նա սկսեց բարձր ձայնով լաց լինել և ասել. «Սպանեցին զաւակիս: Իմ կեանքը թունաւորեցին: Ժանտախտն սպանէ այն մարդուն, ով կախարդել է որդուս»:

Ժողովրդի հետ իրարանցումն էլ աւելանում էր: Ընդհանուր խառնակութեան մէջ մի քանի աւելի բարձր ձայներ էին լսւում և նրանք բոլորը զանազան բաներ էին ասում:

—Պսակենք, պսակենք: Երեք օրից յետոյ ամեն ինչ կը մոռացուի,—գոչում էր մէկը:

—Ահա՛, ժանդարմը գալիս է,—աղաղակեցին:

Շէրիֆ-աղան և երկու ոստիկան ամբոխին յետ էին հրում:

—Այժմ կը պսակենք նրանց,—գոռաց մի մարդ:

—Մարդ ուղարկե՞լ էք քահանայի յետեւից,—հարցրեց Գեանչօ Ստոեանովը:

—Ես այստեղ եմ,—ձայն տուեց տէր-բաբան և իւր հիւրերի հետ առաջ շարժուեց:—Միամիտ կացէք, տէր-բաբան գիտէ քրիստոնէական օրէնքը... Գա՛նչօ, գնա փորուրարս և մաշտոցս բե՛ր:

Այդ միջոցին դուռը բացուեց:

—Դուրս եկէ՛ք,—գոչեց ժանդարմը:

—Միլկա՛, Րաչկօ՛, դուրս եկէք,—գոչեցին և

ուրիշները։ Ամբոխը շրջապատեց ժանդարմին։ Բոլորն աշխատում էին տեսնել երիտասարդին և օրիորդին, կարծես առաջ երբեք չէին տեսած նրանց։ Լապտերները բարձրացան և լուսաւորեցին բաց դուռը։ Առաջինը երևաց Միլկան։ Նրա աչքերը ցած էին թողուած։ Օրիորդը բոլորովին շփոթուած էր և ոչինչ չէր պատասխանում իւր մօրը, որն ինչ որ դժուար հասկանալի բան էր ասում։ Բայց յանկարծ նա աչքերը բարձրացրեց և զարմացած ու վախեցած նայեց շուրջը։ Միլկան այժմ աւելի գեղեցիկ էր երևում և նա իւր կողմը գրաւեց բարկացած դրացիներին։ Շատերի դէմքին կարելի էր ներումն կարդալ։

—Սքանչելի կին կը դառնայ,—խօսեց մէկը։

—Արդէն ինչպիսին որ լինելու է, կը լինի... միայն թէ նրանք երջանիկ ապրեն,—ասաց Նեստոր Ֆրիկալցէն։

Տէր-Ստաւրին իւր հիւրերի հետ ամենից առաջն էր կանգնած. նրանց մէջ կային այնպիսիները, որոնք դեռ չէին տեսած Միլկային։

—Ռաչկօ, դու էլ դուրս արի,—կանչեց տէրբաբան, դռնից մութ սենեակ նայելով։

—Մի՛ ամաչիր, տղա՛յ, դուրս արի,—ասաց միւրիշը.—մենք քեզ արդէն ամեն ինչ ներում ենք և դեռ տէր-բաբան էլ յաւիտեանս յաւիտենից կը միացնէ ձեզ։

Երիտասարդը դուրս չէր գալիս։

—Նա նե՞րսն է։ Ինչո՞ւ դուրս չի գալիս,—հարցրեց տէրտէրը Միլկային։

Նա դրական կերպով շարժեց գլուխը և զարմացած դէպի դուռը նայեց։

Անհամբերութիւնը տիրեց ժանդարմին։

—Դո՛ւրս արի։

Միւսներն էլ կանչում էին Ռաչկօին։ Ամբոխը մօտեցաւ դռանը։ Հետաքրքրութիւնը աւելանում էր։ Սակայն ոչ ոք չէր երևում։

Այն ժամանակ ժանդարմը ներս մտաւ, իսկ ամբոխը վազեց նրա յետևից։ Անկիւնում կանգնած էր երիտասարդը—բոլորովին անշարժ։

Բայց դա Ռաչկօ Բակիրջիյչէն չէր։

Դա Ստեֆչովն էր։

Բոլորը շփոթուեցան։ Ժանդարմն յետ ու յետ քաշուեց։ Նա իւր աչքերին չէր հաւատում։ Իրենց աչքերին չէին հաւատում և միւսները։ Տէր-Ստավրին հանեց իւր փորուրարը. Նրա հիւրերը շուարած միմեանց երես էին նայում։ Ստոյլովն իւր ոխակալ, յաղթական հայեացքը չռեց հակառակորդի վրայ. չարախնդաց ժպիտը փայլում էր նրա երեսին և նա զուարճութեամբ դիտում էր այս կործանիչ խայտառակութեան տեսարանը։ Ստեֆչովը՝ տանջուած, ամօթահար եղած, հողի հետ հաւասարուած՝ ինքն իրեն չէր նմանում։ Նա երկիւղով նայում էր իւր շուրջը։ «Ստեֆչո՞վն է, Ստեֆչո՞վը, Ստեֆչո՞վը», շշնջում էին չորս կողմը նրա անունը։ Նա նորից յետ նայեց, կարծես, թաքնուելու տեղ որոնում լինէր, և կամ ուզում լինէր շուտով մի կերպ դեռնի տակ մտնել...

Ի՞նչպէս էր նա այստեղ ընկել... Հանգամանքների դժբաղդ կուտակման շնորհիւ:

Այդ երեկոյ, Միխայլակուց բաժանուելով, նա շարունակեց իւր ճանապարհը դէպի կոնակ: Բայց երբ հասաւ կոնակի դռանը, նա անվճռականութեամբ կանգ առաւ: Որքան էլ սևացած և անզգայացած էր նրա հոգին, այնուամենայնիւ բուլղարացու հայրենասիրութիւնն գլուխ բարձրացրեց նրա մէջ և բողոքեց: Նա սարսափեց իւր արարքից և որոշեց յետաձգել այդ մինչև առաւօտ—առաւօտն իրիկունից աւելի իմաստուն է: Ստեֆչօվն ուղևորուեց իւր մի ազգականի մօտ, որն ապրում էր քաղաքի ծայրում, բայց նրան տանը չգտնելով՝ վերադարձաւ: Ճիշտ այդ ժամանակ նրա դէմից գալիս էին բժշկապետը և Օգնեանովը, որոնք տէր-Ստավրիի մօտ էին գնում: Ստեֆչօվը ճանաչեց նրանց և վախենալով խուլ փողոցում պատահել այդ մարդկանց, սկսեց յետ փախչել: Բայց երբ տեսաւ, որ յետևից են ընկել, անմիտ երկիւղը սրտում՝ նա սկսեց վազել, որքան ոյժը պատում էր: Հասնելով Միլկայենց զաւթի ծանօթ դռնակին, նա անգիտակցաբար ներս մտաւ այնտեղ և թաքնուեց խիտ կանաչների մէջ: Երբ դրսի աղմուկը դադարեց, Ստեֆչօվն արդէն պատրաստւում էր դուրս գալ իւր ապաստանարանից. բայց այդ միջոցին զաւթով անցկացաւ մի կանացի կերպարանք և սանդուխներով վեր բարձրացաւ: Ստէֆչօվը քայլուածքից ճանաչեց Միլկային: Նա մի ժամանակ Միլկային հրապուրողներից առաջինն էր եղել և յետոյ թողել նրան:

Ստեֆչօվն այժմ անհանգստութեամբ մտաբերեց, որ Միլկայի մօտ կային իւր գրած միքանի նամակները, որոնց օգնութեամբ նա կը կարողանայ վրէժխնդիր լինել, երբ լսէ իւր նշանադրութիւնը: Թշնամիներից մէկը կարող է գրգռուած աղջկան հեշտութեամբ տրամադրել այդ բանն անելու: Եւ նա որոշեց, եթէ յաջողուի, հենց այս գիշեր, խաբէութեամբ դուրս առնել այդ նամակները: Նա կամացուկ մօտեցաւ դռանը և ներս մտաւ օրիորդի մօտ:

Միլկայի խորթ հայրը, որը դարան մտած Ռաչկօին էր սպասում՝ նրա հետ դրացիների խորհրդի համաձայն վարուելու համար, այդ բանը նկատեց: Մթութեան մէջ նա Ստեֆչօվին Ռաչկօի տեղն ընդունեց և սենեակի դուռը փակեց՝ նրան Միլկայի հետ միասին այնտեղ թողնելով: Յետոյ նա վազեց մօտիկ հարևաններին կանչելու և այսպիսով արդէն յայտնի իրարանցումն ընկաւ:

. . . .

Ժանդարմն իսկոյն գլխի ընկաւ, թէ ինչպէս պէտք է վարուել:

—Է՜յ, հեռացէք. ես պարոնին ոստիկանատունը հարցափորձ կանեմ,—կոպտաբար գոռաց նա ամբոխին: Ամբոխը աղմուկ բարձրացրեց:

—Հարկաւոր չէ, հարկաւոր չէ ոստիկանատուն տանել: Ինչ որ հարկաւոր է այստեղ կանենք,—ձայն տուեց մի մարդ, որն հաւանականաբար չգիտէր, թէ Ռաչկօի փոխարէն Ստեֆչօվն էր բռնուած:

—Հա, այդ Ստեֆչօվն է,—ասացին միքանիսը:

—Ստեֆչօ՞վը, ի՞նչպէս...

Աղմուկը մեծացաւ։

—Ի՞նչ անենք թէ չորբաջու որդի է,—կանչում է մէկը.—Նրա հետ էլ պէտք է վարուել այնպէս, ինչպէս Բաչկօի հետ. Նա առանձին իրաւունքներ չունի։

—Միևնոյն է, պսակենք նրանց,—կանչում էր մի ուրիշը։

Օգնեանովը ցած ձայնով ասաց ժանդարմին.

—Շէրիֆ-աղա՛, շուտով տար այդ պարոնին. տե՛ս, որքան ժողովուրդ է նայում նրան... չէր որ դժուար է։

Նա մոռացել էր իւր թշնամուն և ամօթից ճնշուած մի զոհ էր տեսնում իւր առաջ։ Բոյչօն այլ ևս չէր կարող մարդկային անարգանքի այս տեսարանը դիտել։

Ժանդարմը կասկածով նայեց Օգնեանովին։

—Թո՛ղ դրան, ի՞նչ ես ուզում, թո՛ղ կարմրի,—քաշեց նրա թևից քինախնդիր Սոկոլովը։

Ստեփչովն այժմ միայն նկատեց իւր երկու հալածողներին։ Նրա գլխովն անցկացաւ, թէ դրանք են իւր խայտառակութեան սկզբնապատճառը. Նա նկատեց նրանց ժպիտը... Կատաղի զայրոյթ երևաց նրա հոգու մէջ, և այն հայեացքը, որն Ստեփչովը ձգեց նրանց վրայ, անշուշտ կը սարսափեցնէր Բոյչօին և Սոկոլովին, եթէ նկատէին այդ...

Ժանդարմը բռնեց Ստեփչովի ձեռքից և տարաւ նրան։

—Ճանապա՛րհ,—գոչեց նա.—սա ձեր գործը չէ... Դուք այստեղ Բակիրչիյչէին էիք որոնում։ Մի կո՛ղմ, պարոններ։

Ամբոխը թողեց նրանց։

—Ի՞նչպէս պատահեց այս բանը,—կամացուկ, կարեկցաբար հարցրեց Շէրիֆ-աղան։

—Օգնեանովն ու Սոկոլովը մատնեցին ինձ,—շշնջեց Ստեփչովը։

Ամբոխը խռնուեց նրանց յետևից։

ԻԳ.

ԵՐԿՈՒ ՈՒՐՈՒԱԿԱՆ

Հետևեալ օրը տօն էր։ Վանահայր Նաթանաէլը կանգնած էր եկեղեցում դրակալի առաջ և շարական էր երգում։ Մի մարդ դիպաւ նրան և նա յետ դարձաւ։

Այնտեղ կանգնած էր Մունչօն։

—Ի՞նչ ես ուզում, Մունչօ։ Գնա՛ այստեղից,—ասաց նրան վանահայրը և դարձեալ սկսեց իւր շարականը...

Բայց Մունչօն երկրորդ անգամ և աւելի ուժեղ սեղմեց նրա արմունկը և բաց չէր թողնում։ Վանահայրը նորից բարկացած յետ դարձաւ և այն ժամանակ նկատեց, որ Մունչօն սաստիկ գրգռուած է—նրա աչքերը փայլում ու սարսափ էին արտայայտում և ամբողջ մարմինը դողդողում էր։

—Ի՞նչ է պատահել քեզ, Մունչօ,—խստութեամբ հարցրեց վանահայրը։

Մունչօն զարհուրելի կերպով պտտցրեց գլուխը, չռեց աչքերը, փքուեց և դժուարութեամբ ասաց.

—Ռուս-սսի-ացց-ին... չր-բաղ-ղաց-ցի մմօտ...

Թթուր-ըքքերը...—և փոխանակ իւր ասելիքը վերջացնելու, նա սկսեց ձեռքը շարժել, որպէս թէ գետին էր փորում:

Վանահայրն սկզբում կասկածանքով նայեց Մունչօին, յետոյ յանկարծ մի զարհուրելի միտք ծագեց նրա գլխում: Մունչօն երևի գիտէ, որ ջրաղացի մօտ թաղուած են Թուրքերը. իսկ որովհետև նա «ռուսիացու» անունն էլ յիշեց, ուրեմն, հաւանական է, որ գիտէ և բոլոր գաղտնիքը: Ի՞նչպէս—նա չհասկացաւ... Հայր Նաթանաէլը ենթադրեց միայն այս, որ գաղտնիքն արդէն յայտնի է իշխանութեանը:

—Բոյչօն կորա՜ծ է,—յուսահատութեամբ փրնթփրնթաց Նաթանաէլը. նա մոռացաւ շարականն էլ, երգեցողութիւնն էլ և չէր տեսնում հ. Գեդէոնին, որը միւս գրակալի մօտ կանգնած՝ գլխով և աչքերով յուսահատ նշաններ էր անում, որ հասկացնէ, թէ երգելու հերթը նրանն է:

Նաթանաէլը նայեց դէպի սեղանը, որտեղ Վիկենտին պատարագի արարողութեամբ էր զբաղուած. հայր Գեդէոնի կամքին թողեց կարգադրել, ինչպէս ուզում է, երգեցողութիւնը, և դուրս գնաց եկեղեցուց: Մի վայրկեան յետոյ նա գոմումն էր, մի վայրկեան և—սլաքի նման թռչում էր դէպի քաղաք:

Այդ օրը սաստիկ ցուրտ էր: Գիշերը եղեամ էր բռնել և սպիտակացրել խոտերն ու ծառերի ճղները: Վանահայրն անդադար աշտանակում էր իւր սև ձիուն, որի ռունգներից գոլորշին ամպի նման

բարձրանում էր: Նա շտապում էր ազատել Օգնեանովին, եթէ միայն դեռ ժամանակ կայ: Այն սուտ լուրին, որը նա առաջ տարածել էր Թուրքերի սպանութեան բոլոր կասկածները վերացնելու համար, ամենքն էլ հաւատացել էին: Սակայն այժմ ո՞վ էր դրդել ոստիկանատան անգործունեայ գլխաւորին: Չէ, այստեղ խառն է մատնութիւնը: Նա չէր հաւատում, որ այդ բանը Մունչօն արած լինի—եթէ նա իրօք գիտէ գաղտնիքը.—չէ՞ որ ապուշն այնքան սիրում էր Օգնեանովին... մի՞թէ նա անգիտակցաբար է մատնել Բոյչօին... Սակայն, յամենայն դէպս, մատնութիւնը պէտք է որ եղած լինի: Եւ դա սոսկալի հետևանքներ կարող էր ունենալ Օգնեանովի համար:

Սովորական տասնևհինգ րոպէի փոխարէն, չորս րոպէի մէջ վանահայրը քաղաք հասաւ: Ձին ամբողջովին փրփուրի մէջ էր: Վանահայրը ճանապարհին նրան թողեց եղբոր մօտ և ոտքով շտապեց Օգնեանովի տուն:

—Այստե՞ղ է արդեօք Բոյչօն,—հարցրեց նա անհանգիստ կերպով:

—Դուրս է գնացել: Ձեզանից քիչ առաջ երեք ոստիկան էլ եկան և որոնեցին նրան տան բոլոր տեղերը:—Ի՞նչ են ուզում այդ անիծուածները: Կարծես, մարդ է սպանել,—պատասխանեց բարկացած տանտէրը:

—Ո՞ւր գնաց նա:

—Չգիտեմ:

—Վա՜տ է, բայց դեռ յոյս կայ,—ասաց ինքն

քրէն վանահայրը և վազելով գնաց Սոկոլովի մօտ։ Նա գիտէր, որ Օգնեանովն այնքան էլ սիրով եկեղեցի չէր յաճախում, ուստի և մտքովն անգամ չանցկացաւ նրան այնտեղ որոնելու։ Գանկօի սրրճատան մօտով անցնելիս, այնտեղ էլ նայեց, բայց Օգնեանովը այդտեղ չէր։

—Տանը մարդ կա՞յ,—Սոկոլովի գաւիթը վազելով, հարցրեց նա։

—Ոչ ոք չկայ, ձերդ սրբազնութիւն,—պատասխանեց մի պառաւ, վայր ձգելով աւելը, որ մօտենայ վարդապետի աջն առնելու։

—Ո՞րտեղ է բժշկապետը,- հարցրեց նա զայրացած։

—Չգիտեմ, հա՛յր իմ,—պատասխանեց կինը կակազելով և շփոթուած վայր նայելով։

—Ա՜խ...—հառաչեց վանահայրը և յետ դարձաւ։

—Կա՛ց, կա՛ց,—կանչեց նրա յետևից պառաւը։

—Ի՞նչ ես ուզում,—անհամբերութեամբ հարցրեց վանահայրը։

Պառաւը խորհրդաւոր կերպարանք ընդունեց և ցած ձայնով ասաց.

—Նա այստեղ է, միայն պահուել է. Նրան անիծուած Թուրքերը որոնում էին... Ներէ՛ր, հա՛յր սուրբ։

—Ինձանից նա չի թաքնուիլ. ինչո՞ւ դու ինձ իսկոյն չասացիր,—ասաց վանահայրը և շտապով վազեց դէպի դուռը։ Նրա հարուածին իսկոյն դուռը բացուեց և բժշկապետը երևաց։

—Ո՞ւր է Բոյչօն,—եղաւ վանահօր առաջին խօսքը։

—Ռադայի մօտ է... Ի՞նչ կայ։—Սոկոլովը հասկացաւ, որ իսկոյն մի սոսկալի բան պէտք է լսէ։ Նա գունատուեց։

—Ջրաղացի շուրջը փորում են։ Մատնութիւն է եղած։

—Ա՜խ, Օգնեանովը կորա՛ծ է,—յուսահատ կերպով բացագանչեց բժշկապետը։—Անհրաժեշտ է նրան իսկոյն իմաց տալ...

—Ոստիկանութիւնը նրան որոնել է, բայց չէ գտել,—յուզուած կերպով շարունակեց վանահայրը. ես ձիով շտապեցի, որ շուտով նրան նախազգուշացնեմ... Աստուա՛ծ իմ, ի՞նչ է գալու այդ երիտասարդի գլխին. կորստեան մատնեցին նրան... Ո՞ւր ես գնում դու,—հարցրեց նա զարմացած։

—Վազեմ Բոյչօի մօտ... Հարկաւոր է նրան ազատել, եթէ դեռ ուշ չէ,—ասաց բժշկապետը, դուռը բանալով։

Վանահայրն աւելի մեծ տարակուսանքով նայեց նրան։

—Բայց մի՞թէ քեզ էլ չեն որոնում։ Աւելի լաւ է ես գնամ...

—Անկարելի է։ Ռադայի մօտ կայ եկեղեցի. գնալդ կարող է աչքի ընկնել և մինչև անգամ գայթակղութիւն առաջ բերել։

—Բայց դու նրանց ձեռքը կընկնես։

—Գուցէ, սակայն այսպէս թէ այնպէս, անհրաժեշտ է յայտնել նրան։ Բոյչօին մեծ վտանգ է սպառնում։ Ես խուլ փողոցներով կը գնամ։

Եւ Սոկոլովը վազեց։

Վանահայրն արտասուքն աչքերին օրհնեց նրան։

Բժշկապետը գիտէր, որ այս առաւօտ Օգնեանովը օրիորդաց դպրոցում պէտք է լինէր, որտեղ նա տեսակցութիւն էր նշանակել Պ.-եան յեղափոխական մասնաժողովի մի պատգամաւորի հետ։ Մի քանի րոպէից յետոյ նա հասաւ եկեղեցու գաւիթը, վազելով բարձրացաւ դպրոցի սանդուխներով և քամու նման թռաւ Ռադայի սենեակը։ Սոկոլովի անսպասելի գալուստը և այն, այսպիսի վաղ ժամին, զարմացրեց Ռադային։

—Բոյչօն այստեղ եղե՞լ է,—հարցրեց նա հեւալով և բարևը մոռանալով։

—Հենց նոր դուրս գնաց,—պատասխանեց Ռադան։—Ի՞նչ պէտք է անես։

—Ո՞ւր գնաց։

—Եկեղեցի... Բայց ի՞նչ է պատահել քեզ, Աստուած իմ։

—Եկեղեցի՞,—բացագանչեց Սոկոլովն առանց պատասխանելու և բաց արաւ դուռը եկեղեցի վազելու։ Բայց իսկոյն էլի յետ քաշուեց։ Նա տեսաւ ժանդարմին, որը պահապաններ էր կանգնեցնում եկեղեցու դռան մօտ։

—Ի՞նչ է պատահել քեզ,—գոչեց վարժուհին՝ վտանգ նախազգալով։

Սոկոլովը լուսամուտից ցոյց տուեց նրան ոստիկաններին։

—Տեսնո՞ւմ ես։ Բոյչօին են սպասում։ Նրան

մատնել են, Ռադա՛։ Որոնում են և ինձ։ Ա՜խ, դըժբաղդութի՜ւն, դժբաղդութի՜ւն,—ասում էր նա, գլուխը ձեռքերի մէջ առած։

Ռադան ուժասպառ ընկաւ նստարանի վրայ։ Նրա կլորիկ դէմքը, որ երկիւղից գունաթափուել էր, սև թաշկինակի մէջ աւելի ևս գունաթափ էր երևում, կարծես մարմարից շինուած լինէր։

Սոկոլովը մօտեցաւ լուսամուտին։ Նա չէր կարող ոստիկանութեանը երևալ և հայեացքով մի հաւատարիմ մարդ էր որոնում, որը յանձն առնէր նախազգուշացնելու Օգնեանովին վտանգի մասին։ Յանկարծ նա տեսաւ Ֆրատիւին, որն անց էր կենում լուսամուտի մօտից՝ եկեղեցի գնալու համար։

—Ֆրա՛տէ, Ֆրա՛տէ,—ցած ձայնով ասաց նա.—մօտ արի։

Պարոն Ֆրատիւն կանգնեց քիչ հեռու։

—Ֆրա՛տէ, դու եկեղեցի՞ ես գնում։

—Այնտեղ, իհարկէ,—պատասխանեց նա։

—Աղաչում եմ քեզ, ասա՛ այնտեղ Բոյչօին, թէ ոստիկանութիւնն սպասում է նրան դռների մօտ. թող մի միջոց ձեռք առնի։

Պարոն Ֆրատիւն մի անհանգիստ հայեացք ձգեց դէպի եկեղեցին, և տեսաւ, որ նրա բոլոր երեք անցքերը ոստիկանութիւնը գրաւել է։ Նրա փոքրիկ դէմքի վրայ յիմար երկիւղ ձևակերպուեց։

—Ուրեմն կասե՞ս,—անհամբերութեամբ հարցրեց բժշկապետը։

—Ե՞ս... Լաւ, կասեմ,—ակներև տատանումով

պատասխանեց ուշիմ Ֆրատիւն։ Յետոյ կասկածանքով աւելացրեց.

—Բայց ինչո՞ւ դու չես ասում նրան, բժշկապետ։

Ինձ էլ են որոնում,—շշնջեց բժշկապետը։

Պարոն Ֆրատիւի դէմքն աւելի ևս փոխուեց։ Նա շտապեց շուտով հեռանալ այս վտանգաւոր խօսակցից։

—Ֆրատէ, շո՛ւտ, լսո՞ւմ ես,—նրա յետևից ասաց Սոկոլովը։

Պարոն Ֆրատիւն դրական կերպով շարժեց գլուխը, դարձեալ միքանի քայլ արաւ եկեղեցու ուղղութեամբ և յանկարծ շտապով դարձաւ դէպի կուսանաց վանքը։

Բժշկապետը տեսաւ այդ և գլխի մազերն էր պոկոտում։ Նա գիտէր, որ քիչ յետոյ նախազգուշութիւնն արդէն ուշ կը լինի և այն ժամանակ միմիայն հրաշքը կարող էր փրկել Օգնեանովին։

Մատնութիւն իրաւ եղել էր։ Այդ իսկ գիշեր Ստեֆչովը, կոնակ տարուելով, բէյին պատմել էր իւր բոլոր ենթադրութիւններն ու կասկածները Օգնեանովի անձնաւորութեան վերաբերմամբ։ Նոյն իսկ պատմութեան միջոցին յանկարծ մի միտք ծագեց նրա գլխում։ Ստեֆչովը մտաբերեց Եմեքսիզիշան դէպքը, որը վաղուց արդէն նրան պատմել էր Շէրիֆ-աղան։ Ո՛չ նա, ոչ էլ ժանդարմը այն ժամանակ խորամուխ չէին եղել այդ պատմութեան մէջ։ Այժմ նրա համար ամեն ինչ պարզ էր։ Ինչո՞ւ համար շունն այնպէս եռանդով փորում էր

այնտեղ գետինը։ Ի՞նչ պատճառով նա այնպիսի կատաղութեամբ յարձակուել էր Օգնեանովի վրայ։ Այս բանի մէջ արդեօք չէ՞ թաքնւում երկու թուրքի անյայտանալու գաղտնիքի բացատրութիւնը։ Իսկ չէ՞ որ նրանք անյայտացան ճիշտ այն ժամանակ, երբ քաղաքում լոյս ընկաւ Օգնեանովը։ Անպատճառ այդ բանն Օգնեանովի ձեռքի գործն է։ Ստեֆչովի ոխակալ միտքը կայծակի արագութեամբ համակերպեց այս բոլորը և ապացոյցները նրա աչքում յաղթելի ույժ և իրականութիւն ստացան։

Ստեֆչովը խորհուրդ տուեց իսկոյն փորել հին ջրաղացի շուրջը։ Բէյը ծանր կերպարանք ընդունեց և հենց իսկոյն տուեց հրամանը։ Նա որոշեց առաւօտը վաղ կալանաւորել Օգնեանովին, որ նա չկարողանայ մի կերպ պահուել և նոր սպանութիւններ կատարել...

Այդ իսկ առաւօտ գտնուեցան դիակները և Օգնեանովի կորուստը որոշուած էր արդէն։ Նրան սպասում էին եկեղեցու մուտքերի մօտ, որպէս գազանի։ Ժանդարմը լաւ համարեց սպասել դռների մօտ և ոչ թէ ձերբակալել նրան նոյն իսկ եկեղեցում։ Այս բանը կարող էր անհաճոյ յուզմունք առաջ բերել և Օգնեանովին կը ստիպէր յուսահատ դիմադրութիւն ցոյց տալ։ Նրան յանկարծակի բռնելն աւելի յարմար էր երևում։

Այն միջոցին, երբ Սոկոլովը վշտանում էր սենեակի մի անկիւնում, իսկ Ռադան անզգայ պառկած էր միւսում, սանդուխների վրայ ծանր քայլերի ձայներ լսուեցան։

Բժշկապետը վեր թռաւ և սկսեց ականջ դնել։ Քայլերը գաւազանի թըխթըխկոցի հետ մօտենում էին և վերջապէս դադարեցան դռան մօտ։ Եւ մի մարդ եկեղեցական ներդաշնակութեամբ սկսեց երգել կոյսերի յայտնի տաղը—«Օրհնեա՛, Տէր, զսուրբս քո՝ զտիրուհի Սերոֆիմս և զխոնարհ Խերոֆիմս, զսեւերես Սոֆիա և զպիտակադէմ Րիպսիմէս, զթանձրամիս Մագդաղինէ և զչորչրիկ Իրինէ, զտիրուհի Րովոամա, որը բնաւ տանը չի մնայ»...

—Կոլչօ՞ն է,—գոչեց բժշկապետն ու դուռը բաց արաւ և կոյրը ներս մտաւ հաստատ քայլերով։

—Եկեղեցո՞ւց ես գալիս, Կոլչօ։

—Եկեղեցուց...

—Տեսա՞ր այնտեղ Օգնեանովին,—անհամբերութեամբ հարցրեց Սոկոլովը։

—Աչքերս դեռ Ամերիկայից չեն եկել, այնպէս որ ես չտեսայ։ Բայց գիտեմ, որ նա այնտեղ, առաջը կանգնած է։

Բժշկապետը լուրջ ձայնով ասաց նրան.

—Կոլչօ, կատակը մի կողմ թող։ Օգնեանովին ոստիկանութիւնը որոնում է և ժանդարմը նրան սպասում է եկեղեցու դռների մօտ։ Նա ոչինչ չի կասկածում և կորած է, եթէ անմիջապէս նրան նախազգուշացնող չլինի։

—Ես գնում եմ...

—Աղաչում եմ քեզ, Կոլչօ,—ձայն տուեց Րադան, որի մէջ յոյսը կենդանացել էր։

—Ես ինքս կըգնայի, բայց ինձ էլ է ոստի-

կանութիւնը որոնում, իսկ քեզ վրայ ուշադրութիւն չեն դարձնիլ, ասաց բժշկապետը։

—Օգնեանովի համար, եթէ պահանջուի, ես իմ դժբաղդ կեանքս կը տամ... Ի՞նչ ասեմ նրան,—եռանդուն մասնակցութեամբ հարցրեց կոյրը։

—Այս խօսքերն ասա նրան՝ «Ամեն ինչ բացուած է. ոստիկանութիւնն սպասում է քեզ եկեղեցու դռների մօտ. ազատի՛ր դու քեզ, ինչպէս կարող ես».—յետոյ նա տրտմութեամբ աւելացրեց.

—Եթէ միայն արդէն մարդ չեն ուղարկել՝ խաբէութեամբ նրան եկեղեցուց դուրս կանչելու համար։

Կոլչօն երևակայեց, թէ որքան թանկ էր իւրաքանչիւր րոպէն և շտապով դուրս գնաց։

ԻԴ.

ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ ԴԺՈՒԱՐԱՆՈՒՄ Է

Կոլչօն շօշափելով և գաւազանը թըխկթըխկացնելով իջաւ սանդուխից և մեծ վստահութեամբ անցաւ գաւիթը. եկեղեցի մտնելիս նրա ականջին դիպաւ Շէրիֆ-աղայի ձայնը և նա կանգ առաւ ու սկսեց գրպանները խառնել, ցոյց տալով, որ իբր թէ թաշկինակն է փնտռում, բայց իսկապէս ժանդարմի խօսքերը լսելու համար։

—Հասան-աղա՛,—ցած ձայնով ասում էր նա,—գնա՛ և հրամայի՛ր, որ աչքերը չորս անեն... Եթէ դիմադրութիւն ցոյց տայ, թող առանց իմ հրամանի սպանելու հրացան արձակեն...

—Նենկօ, գնա՛, տղաս, կանչիր շուտով կոմսին, Օգնեանով վարժապետին. ասա՛ նրան, թէ մի մարդ կանչում է,—ասում էր Ֆիլչօ ոստիկանը մի ինչ որ մանուկի, ինչպէս ձայներից եզրակացրեց Կոլչօն։

Երկիւղ կրելով, որ մի գուցէ նրան դուրս կանչեն, Կոլչօն շտապեց եկեղեցի։ Հաջի Անաստասը վերջին քերովբէականն էր երգում և շուտով ժողովուրդը պէտք է սկսէր ցրուել։ Իսկ եկեղեցում ժողովուրդ շատ կար։ Ամբոխը չափազանց բազմամարդ էր, որովհետև այդ օրը պէտք է միքանի հոգեհանգիստ կատարէին և շատերն էլ ուզում էին հաղորդուել։ Այսպիսով, ճանապարհը դէպի եկեղեցու ներսը փակուած էր։ Կոյրն իսկոյն կորաւ այս անթափանցելի և նրա համար ընդմիշտ գիշերուայ նման խաւար ամբոխի մէջ։ Բնազդումն ուղիղ ճանապարհ էր ցոյց տալիս նրան. սակայն ի՞նչպէս ճեղքէր միմեանց սեղմուած ձեռքերից, կողքերից, կուրծքերից, ոտքերից կազմուած այս պատը... Նա փոքր էր ու տկար և երբէք չէր կարող հասնել Օգնեանովի մօտ, որը կանգնած էր սեղանի առաջ։ Այս գործը մի հսկայի համար անգամ դժուար էր։ Կոլչօն հրելով քիչ առաջ գնաց և ուժասպառ եղած կանգ առաւ։ Նա մի փորձ էլ արաւ—աջ, ձախ, բայց ո՛չ, հնարաւորութիւն չկար աւելի առաջ գնալու—պատը, իրեն շրջապատող գիշերուայ նման, անթափանցելի էր։ Շատերը մինչև անգամ սկսեցին բարկութեամբ տրտնջալ նրա վրայ, որ առաջ չըգնայ, եթէ ո՛չ նրան կը խեղդեն, կամ կը ճմլեն։ Միքանի երկաթեայ արմունկներ դիպան նրա թոյլ կողոսկրներին

և սպառնում էին խորտակել։ Կոլչօն շնչասպառ էր լինում։ Մի քանի րոպէից յետոյ կը հնչէ «Երկիւղիւ և հաւատով առաջ մատիք»-ը և հեղեղատը յետ կըխուժէ, իւր հետ տանելով Կոլչօին էլ, և այն ժամանակ Օգնեանովը կորած է... Ո՞վ գիտէ, գուցէ այդ իսկ վայրկենին մանուկը հասել է Բոյչօին ուրիշ, աւելի հեշտ ճանապարհով և նա իսկոյն, թակարդից կասկած չունենալով, դուրս կը գնայ եկեղեցուց։ Գուցէ մանուկն անցնում էր իւր մօտով, գուցէ մինչև անգամ հրում է իրեն, որ առաջ գնայ, իսկ նա չի կարող տեսնել։ Եւ Կոլչօի ձեռքը բնազդմամբ շօշափում է իւր շուրջը, թէ արդեօք չի դիպչիլ մի մանկական իրանի։ Ահա նա, իսկապէս, շօշափելով գտաւ մի իրան, որն ըստ երևոյթին, երեխայի պէտք է լինէր, և Կոլչօի սարսափած երևակայութեանը թւում է, թէ իսկևիսկ սա է այն զարհուրելի մանուկը, որին ուղարկել են Օգնեանովին կանչելու։ Զայրացած, բոլոր ուժով նա սեղմում է այդ երեխայի ձեռքը, քաշում նրան իւր մօտ և անգիտակցաբար գոչում՝ «այս դո՞ւ ես արդեօք, տղա՛յ. ի՞նչ է անունդ, տղա՛յ, յետ գնա՛, տղա՛յ...». բայց իսկոյն ամբոխը իւր ճնշումով բաժանեց նրանց։ Կոլչօն յուսահատութեան մէջ էր։ Նրա խղճալի հոգին սոսկալի տանջանքներ էր կրում։ Նա սարսափով զգում էր, որ Օգնեանովի կեանքը մազից է կախուած և այդ մազն ինքը—Կոլչօն է, այս նուազ, աննշան, մարդկային ծովի մէջ կորած կոյրը։ Իսկ քերովբէականն արդէն վերջանում է... Ա՜խ, այդ հաջի Աթանա՜սը. նա սովորաբար այնպէս դանդաղ

է երգում և երկարացնում իւր երգեցողութիւնը, իսկ այժմ այսպէս սոսկալի կերպով արագ... Ի՞նչ անէր: Կրիտիքական վայրկեաններում ամենավերջին վճիռների են դիմում: Եւ Կոլչօն յուսակտուր ձայնով գոչեց՝ «ճանապարհ տուէ՛ք, թողէ՛ք պարոններ. մեռնում եմ, մեռնում, շունչս կտրւում է, մա՜յր իմ»,—և բոլոր ոյժով սկսեց հրել առաջը կանգնողների մէջքերը: Այս աղաղակները ստիպեցին իւրաքանչիւրին, ում որ նա հրում էր, ահագին ջանքերով մի կողմ քաշուել՝ սեղմելով իւր հարևաններին և այսպիսով ճանապարհ բանալով դըժբաղդ, մեռանող կոյրի համար: Դրա շնորհիւ Կոլչօն շուտով կիսամեռ հասաւ սեղանին, որտեղ գտընւում էր Օգնեանովը: Նա մի անգամից—այսպէս է տեսողութիւնից զրկուածների բնազդման հրաշալի զօրութիւնը—գուշակեց, առանց ո՛չ ոքի հարցնելու, թէ որտեղ է Օգնեանովը, վստահութեամբ բռնեց նրա փէշից և ցած ձայնով հարցրեց.

—Այս դո՞ւ ես, բայ Բոյչօ՛:

—Ի՞նչ կայ,—պատասխանեց Օգնեանովը:

—Թեքուի՛ր:

Օգնեանովն ականջը մօտեցրեց նրա շրթունքներին: Երբ գլուխը բարձրացրեց, նա բոլորովին գունատուած էր: Մի րոպէ նա մտածման մէջ ընկաւ: Քունքերի սաստիկ փքուած երակները ցոյց էին տալիս, որ Բոյչօն մտաւոր ժանր աշխատութեան մէջ է:

Նա նորից թեքուեց և մի ինչ որ բան փսփըսաց Կոլչօի ականջին:

Յետոյ իջաւ դասից, հրելով առաջ անցաւ և իսկոյն կորաւ սեղանի մօտ սպասող հաղորդուողների մէջ:

Այդ իսկ վայրկենին աւագ դռները բացուեցան և տէր Նիկոդիմոսը հաղորդութիւնը ձեռքին բարձրաձայն երգեց՝ «Երկիւղիւ Աստուծոյ» և պատարագը վերջացաւ:

Ամբոխը՝ ամբարտակը քանդող հեղեղի նման յետ վազեց դէպի դռները: Կէս ժամից յետոյ վերջին հաղորդուող պառաւներն էլ դուրս եկան և եկեղեցին դատարկուեց:

Միայն սեղանի մօտ դեռ կանգնած էր քահանան և իւր լօդիկն էր հանում:

Այդ միջոցին եկեղեցի մտան ոստիկանները և ժանդարմը: Շէրիֆ-աղան կատաղել էր, որ Օգնեանովը դեռ դուրս չէր եկել եկեղեցուց: Նշանակում է, նա թաքնուել է այնտեղ: Դռները ներսից փակուեցան և խուզարկութիւնն սկսուեց: Միքանիսը բարձրացան վերև—կանանց բաժինը, միւսները մնացին ներքևը. ուրիշները կողքի դռներով սեղան բարձրացան: Ամեն բան դարձրին, նայեցին բոլոր թաքստոցները, որտեղ կարող էր պահուել Օգնեանովը, բարձրացան ամբիոնը, նայեցին սեղանի յետևը, քահանայական զգեստների պահարանը, հին պատկերներով լի արկղները, լուսամուտների փոսերը, սակայն ո՛չ մի տեղ չգտան: Օգնեանովը կարծես գետնի տակ էր անցել: Եկեղեցու սպասաւորն անձամբ ցոյց էր տալիս բոլոր կասկածաւոր տեղերը. մինչև անգամ և տէր-Նիկոդիմոսը շուարած

այս ու այն կողմն էր ընկել։ Նա սկսեց մինչև անգամ գրքերն ու սեղանի իրերը ուշադրութեամբ հաւաքել… Նոյն իսկ ժանդարմը զարմացաւ քահանայի այս ջերմեռանդութեան վրայ, իսկ Մլալ ոստիկանը նկատեց, թէ ոչ միայն մարդ, այլև մի հաւի ճուտ էլ չի կարող թագնուիլ սեղանի վրայ։

—Ի՛նչպէս… Ես ուրիշ բան եմ որոնում,—պատասխանեց քահանան զարմացած։

—Ի՞նչպէս թէ ուրիշ բան։

—Իմ կարճ մուշտակս, կամիլավկաս և կապոյտ ակնոցներս չկան։

Խեղճ տէրտէրն արդէն դողում էր ցրտից։

—Ա՜, այժմ հասկացայ, Շէրիֆ-աղա,—գոչեց բայ Մլալը։

Շէրիֆ-աղան հեւալով և քրտնաթոր մօտեցաւ նրան։

—Շրջամոլիկ—շրջմոլիկ էլ կը մնայ միշտ,—ծածուկ ուրախութեամբ աւելացրեց ոստիկանը.—գողացել է տէրտէրի հագուստը։

Շէրիֆ-աղան ապշած մնաց։

—Այդ ի՞նչպէս, տէրտէ՛ր։

—Մուշտակս, կամիլավկաս և կապոյտ ակնոցներս չկան, ոչ մի տեղ չեմ կարող գտնել։

—Այո՛, նա է գողացել դրանք,—ասաց Շէրիֆ-աղան, ինչպէս մի մարդ, որը մի մեծ գիւտ է անում։

—Էլ ի՞նչ խօսք։ Կոմսը հագել է մուշտակը, գլխարկը դրել և փոխուած դուրս է գնացել, այնպէս որ մենք չենք ճանաչել նրան,—բացատրեց ոստիկանը։

—Այդպէս է, այդպէս,—հաստատեց տէրտէրը.—երբ ես հաղորդութեամբ եմ զբաղուած եղել, մէկը վերցրել է դրանք։

—Ճշմարիտ է, ես դռան մօտ մի տէրտէր տեսայ կապոյտ ակնոցներով,—ձայն տուեց ոստիկաններից մէկը։

—Եւ դու չը բռնեցի՞ր նրան, յիմա՛ր,—բարկացաւ նրա վրայ գլխաւորը։

—Ես ի՞նչպէս կարող էի գլխի ընկնել։ Մենք սպասում էինք ոչ թէ տէրտէրի, այլ մի աշխարհականի,—ինքն իրեն արդարացնում էր ոստիկանը։

—Ուրեմն այդ նա՛ էր, մա՜յր իմ,—զարմացմամբ բացագանչեց բայ Մլալը.—ա՛յ թէ ինչու նա փաթթուեց և ծածկուեց այնպէս, որ միայն ակնոցներն էին երևում… Հարազատ հայրն անգամ չէր ճանաչիլ նրան…

Դուռը սաստիկ բաղխեցին։ Շէրիֆ-աղան հրամայեց բաց անել։

Ներս մտան Միլչօ ոստիկանը և ծառան։

—Շէրիֆ-աղա՛, կոմսը թակարդի մէջ է,—կանչեց Միլչօն։

—Կուսանաց վանքումն է թագնուել, նրան տեսել են,—աւելացրեց ծառան։

—Շուտով—վանքը։

Եւ բոլորը վազեցին այնտեղ։

ԻԵ.

ԱՆԿՈՉ ՀԻՒՐԵՐ

Մի րոպէ յետոյ ոստիկանութիւնը հասաւ կուսանց վանքի դռներին։ Շէրիֆ-աղան երկու ոստիկան կանգնեցրեց դռների մօտ մերկացրած սրերով և լցրած ատրճանակները ձեռքերին։

—Ո՛չ ոքի չթողնել ո՛չ դուրս, ո՛չ ներս,—հրամայեց նա և մնացած ստորադրեալների հետ մտաւ գաւիթը։

Նրանց արշաւանքը վանքում մեծ իրարանցում ձգեց և երկիւղը տարածուեց բոլոր խցերում։ Կոյսերը դուրս թռան, իրար անցան, նրանց յետեւից դուրս վազեցին և հիւրերը. գոռում-գոչիւն, աղմուկ և աններեւակայելի խառնակութիւն բարձրացաւ։ Իզուր էր ժանդարմը ձեռքը շարժում, որ չվախենան, և Թուրքերէն մի բան էր ասում նրանց,—կոյսերը ոչինչ չէին լսում և աւելի քիչ էին հասկանում։ Այնինչ ոստիկանները ձերբակալեցին բոլոր այնտեղ եղած քահանաներին և միքանի ակնոցներ (թէեւ ո՛չ կապոյտ) կրող մարդկանց, մինչև անգամ և երկու Բոյչօ անունով հոգու և բոլորին միասին փակեցին մի սենեակի մէջ։ Ձերբակալուածների մէջ էին նաև Կանդովն ու Բրզոբէզունեօկը։ Սակայն վերջինիս Շէրիֆ-աղան իսկոյն արձակեց և սկսեց բացարձակ կերպով ներողութիւն խնդրել, որովհետև նա րայա չէր, այլ աւստրիական կայսեր հպատակ։

Կանդովը իւր բանտի լուսամուտից եռանդուն կերպով բողոքում էր իւր ազատութիւնն այսպէս յանդուգն կերպով բռնաբարելու դէմ և սաստիկ բարկանում էր. նրա ընկերները հանդարտ կանգնած էին, որովհետև նրանք ծանօթ էին Թրքական կառավարութեան եղանակին։

—Ինչպէս երեւում է, դու առաջուց չէիր ճանաչում Թուրքերին, Կանդո՛վ,—ասաց մի քահանայ։

—Բայց սա բռնաբարութիւն, կամայականութիւն, անօրէնութիւն, մարդկային սուրբ իրաւանց խանգարումն է...

—Այսպիսի կամայականութեանը և անօրէնութեանը աղաղակներով չեն պատասխանում. մի՞թէ Շէրիֆ-աղայի յիմար գլուխը կը հասկանայ դրանք. այլ ահա՛ թէ ինչով,—ասաց մսավաճառ Բոյչօն, դանակը ցոյց տալով։

Աճապարելով՝ Շէրիֆ-աղան չմտածեց տեղեկանալ, թէ ով էր տեսել Օգնեանովին վանք մտնելիս և թէ ինչ հագստով էին տեսել նրան, այլ իսկոյն և եթ սկսեց խուզարկել վերին յարկը, որտեղ թագնուել էր փախստականը։ Այս վերնայարկում գտնւում էր և հաջի Րօվօամայի խուցը։ Կոյսերը, որոնք արդէն առաջի երկիւղից սթափուել էին, սկսեցին ձայն բարձրացնել, բողոքել, վիրաւորուել, որ կասկածում են, թէ նրանք կառավարութեան դէմ ապստամբող մարդու են թագցրել։ Բոլորից շատ վրդովւում էր հաջի Րօվօաման և այնպէս բղաւեց ժանդարմի վրայ—նա Թուրքերէն գիտէր,—որ վերջինս ստիպուած էր խայտառակութեամբ

ցետ քաշուել։ Այնուամենայնիւ, միւս խուզերը եռանդով խուզարկում էին—ամեն տեղ որոնում էին Օգնեանովին. որոշել էին, ինչ էլ որ լինի, նրան ա- վանքում բռնել։ Շէրիֆ-աղայի հրամանին համաձայն ջանասիրութեամբ խառնում և խուզարկում էին բոլոր պահարանները, արկղները, անկիւնները, թաքուն տեղերը։ Ժողովուրդը սարսափահար սպասում էր, թէ այս է, կոմսին դուրս կը քաշեն մի որ և է մահճակալի տակից։

Յանկարծ լսուեցան չարագուշակ «բռնեցի՜նք» աղաղակներ։ Բայց դուրս եկաւ, որ պարոն Ֆրատիւին էին բռնել, որը մտել էր կոյս Նիմփորոդայի թախտի տակ. նրան իսկոյն բաց թողին։

Ռադան սանդուխի ճաղերին յենուած՝ հիւանդոտ ուշադրութեամբ հետևում էր խուզարկութեան ընթացքին։ Երկիւղից նա գունատուել էր, որպէս մահ։ Դէմքը ցոյց էր տալիս, որ Ռադան սիրում է Օգնեանովին։ Կոյսերը թշնամական հայեացքներ էին ձգում նրա վրայ, սակայն Ռադան ամենևին ուշադրութիւն չէր դարձնում նրանց կողմը։ Ժամանակ առ ժամանակ զսպուած արտասուքները դուրս էին ցայտում և առատօրէն հոսում նրա աչքերից։

Մի կողմում երկու կոյսեր փսփսում և աչքերով հաջի Դարիայի—Սոկոլովի մօրաքրոջ և Բոյչօի պաշտպանի—խուցն էին ցոյց տալիս։ Հաւանականաբար, Բոյչօն այժմ այնտեղ է. իսկ խուզարկութիւնն արդէն մօտենում էր հաջի Դարիային։ Ռադայի սիրտը ճմլւում էր։ Սարսափը նրան շղ-

ջթայել էր իւր տեղում... Աստուա՜ծ իմ, ի՞նչ պէտք է լինի...

Կոլչօն մօտեցաւ նրան. նա ձայնից ճանաչեց Ռադային և կամացուկ ասաց նրան.

—Ռադկէ՛ս, մենա՞կ ես այստեղ։

—Մենակ եմ, բայ Կոլչօ,—արտասուքների միջից պատասխանեց նա։

—Անհանգիստ մի՛ լինիր,—շշնջեց կոյրը Ռադային։

—Ի՞նչպէս, բայ Կոլչօ. եթէ նրան գտնե՞ն։ Չէ՛ որ նա այստեղ է... Դու ինքդ էիր ասում, որ նրան այստեղ տեսել են։

—Կարծում եմ, որ նա այստեղ չէ, Ռադկէ։

—Իսկ բոլորը կարծում են, որ այստեղ է։

—Այդ լուրը ես եմ տարածել... Բոյչօն ինքը եկեղեցում պատուիրեց ինձ այդ անել։ Թող ոստիկանութիւնը նրան այստեղ որոնէ։ Իսկ Բոյչօն ազատ է, որպէս լեռների գայլ...

Խեղճ աղջիկը քիչ մնաց որ գրկախառնէր կոյրին։ Նրա դէմքը պարզուեց և փայլեց, որպէս երկինք՝ փոթորկից յետոյ։

Հանգիստ և ուրախ մտաւ նա հաջի Ռովոամայի մօտ, որն իսկոյն նկատեց այդ փոփոխութիւնը և դժգոհութեամբ մտածեց.

—Չլինի՞ այս անիծուածը լսել է, որ նա վանքում չէ։

Յետոյ մի հետաքննին հայեացք ձգելով Ռադայի վրայ, ասաց.

—Ռադա, լա՞ց ես եղել. շա՜տ գեղեցիկ, շա՜տ

գեղեցիկ. մարդկանց ծաղրի առարկան դարձիր, լաց եղի՛ր այդ հայդուկի և արիւնարբուի համար։

Ռադայի սիրտը թրթռում էր երջանկութիւնից։

—Լաց կը լինիմ,—յանդգնութեամբ պատասխանեց նա.—գոնէ թող մէ՛կը լաց լինի, երբ բոլորն ուրախանում են...

Այս համարձակ պատասխանը կոյսին չափազանց անվայել երևաց։ Նա սովոր չէր այդպիսի պատասխաններ լսել։

—Անամօ՜թ,—գոչեց նա։

—Ես անամօթ չեմ։

—Անամօթ և ցնդած ես։ Քո անիծուած մարդասպանն այսօր և եթ կախաղան կը բարձրանայ։

—Եթէ միայն բռնեն նրան,—կծու կերպով պատասխանեց Ռադան։

Հաջի Ռովոաման կատաղեց։ Անմիտ զայրոյթը խեղդում էր նրան։

—Դո՛ւրս այստեղից, անիծուած։ Չհամարձակուես այլևս իմ շէմքից ոտքդ ներս դնել,—գոչեց հաջի Ռովոաման և դուրս հրեց նրան խցից։

Ռադան նորից դուրս եկաւ բակը։ Նրա համար ի՞նչ նշանակութիւն ունի հաջի Ռովոամայի արհամարհանքը, նրա խցից արտաքսուելը։ Նա հանդիստ էր, սիրտը հանդարտ էր բաբախում։ Նրան մինչև անգամ հաճելի էր, որ ընդմիշտ ազատուեց իր խստասիրտ խնամակալուհուց։

Վաղը, բայց գուցէ և այսօր, նրան կարտաքսեն դպրոցից, և նա կը մնայ բաց երկնքի տակ, անտուն, առանց մի կտոր հացի։ Բայց ի՞նչ նշանա-

կութիւն ունի այս բոլորը Ռադայի համար։ Նա գիտէ, որ Բոյչօն ազատ է, ազատ՝ որպէս լեռների գայլ, ինչպէս Կոլչօն ասաց։ Աստուա՜ծ իմ, որքան բարի է այդ Կոլչօն։ Ո՜րպիսի քնքոյշ սրտացաւ հոգի է. կարեկից է դէպի ուրիշները, իսկ իր սեպհական վիշտը նա չի տեսնում, մոռանում է. խե՜ղճ։ Քանի՜ քանի տեսողութիւն ունեցող մարդիկ դիտմամբ փակում են աչքերը և խստասրտութեամբ վերաբերւում դէպի ուրիշների տանջանքները։ Այդ Ստեֆչովն էլ.—այդ գազանը ո՛րպիսի անհամբերութեամբ է սպասում Օգնեանովի կորստեանը։ Բայց Բոյչօն այժմ հեռու էր վտանգից... Թշնամիները չեն ուրախանալ, իսկ ազնիւ մարդիկ գոհ կը լինին։ Սակայն ոչ ոք, ոչ ոք չկայ, որ այնքան երջանիկ լինի, որքան նա՛ է...

Այդ մտածմունքներով և զգացմունքներով յափշտակուած՝ Ռադան յանկարծ տեսաւ Կոլչօին, որը կամաց-կամաց ցած էր իջնում սանդուխից։

—Կոլչօ՛,—կանչեց նա, առանց գիտնալու թէ ինչու։

—Ռադկէ, դու ինձ կանչո՞ւմ ես.—և Կոլչօն յետ դարձաւ։

—Աստուած իմ, ինչո՞ւ կանչեցի. ուժից կընկնի խեղճ մարդը,—շշնջեց նա կարմրելով։

Յետոյ վազելով նրա մօտ, կանգնեցրեց և ասաց նրան.

—Բայց Կոլչօ, ոչինչ հարկաւոր չէ... տո՛ւր, սեղմեմ ձեռքդ.—և նա սրտագին ու երախտագիտաբար սեղմեց նրա ձեռքը։

Խուզարկութիւնը շարունակւում էր։ Շէրիֆ-աղան ուրիշին նշանակեց նրա վրայ հսկելու, իսկ ինքը յոգնած՝ գնաց բռնուած կամիլավկաների և ակնոցների մօտ. միայն այժմ նրա միտքն ընկաւ նրանց արձակել։

Կանդովը նորից սկսեց բողոքել իւր անձնաւորութեան դէմ բռնութիւն գործ դնելու, արդարութիւնը ոտնակոխ անելու համար։

Շէրիֆ-աղան զարմացած խնդրեց թարգմանել այդ բարկացած պարոնի խօսքերը։

—Նորից ասա՛, Կանդով, ես կը թարգմանեմ ժանդարմին,—ասաց Բենչօ Դերմանը, որ թուրքերէն գիտէր։

—Ասա նրան, խնդրում եմ ձեզ, որ իմ անձնական անբռնաբարելի իրաւունքներս և իմ մարդկային արժանաւորութիւնս, ամենայն օրինաւորութեան և սկզբնական արդարութեան հիմունքների հակառակ...

Բենչօ Դերմանը յուսահատ կերպով ձեռքերը թափահարեց.

—Բայց այդպիսի խօսքեր անգամ չկան թուրքերէն լեզուի մէջ։ Թո՛ղ այդ, բայ Կանդով։

Վերջապէս վանքն ազատուեց անախորժ հիւրերից։ Նրանք այժմ սկսեցին խուզարկել ամբողջ քաղաքը և շրջակայքը։

ԻԶ.

ԹԱՓԱՌԱՇՐՋԻԿԸ

Հոգու անվեհերութիւնն այս անգամ էլ փրկեց Օգնեանովին։

Հենց որ քաղաքից դուրս եկաւ, նա քահանայական զգեստները կոխեց թփերի մէջ և ինքը դիմեց դէպի լեռները։

Ձեան բուքը, որն օգնեց նրան աննկատելի կերպով անցնել դատարկուած փողոցներով, այստեղ աւելի ևս կատաղութեամբ էր փչում։

Որոշ նպատակ չունենալով, Օգնեանովը դարձաւ դէպի արևմուտք և սկսեց առաջ գնալ խաղողի այգիների միջով, որոնք ընդհատւում էին ծործորակներով և չորացած հեղեղների խռուչներով։ Նա նստեց մի ծածուկ տեղ և սկսեց մտածել իւր դրութեան մասին։ Դա շատ մթին էր։ Մի ինչ որ չար ճակատագիր, անկասկած Ստեֆչովին իւր հետ դաշնակից ունենալով, անգթաբար հալածում էր նրան։ Մի ժամուայ մէջ նա աւերուած տեսաւ այն բոլոր շինութիւնը, որն այնպիսի սիրով, այնպիսի ոգևորութեամբ էր շինում նա։ Օգնեանովը տեսնում էր սարկաւագին, բժշկապետին, Ստոեան պապին և միւս մօտաւոր ու անձնուէր ընկերներին —բանդում, Ռադային—վշտահար, թշնամիներին—ուրախացած։ Նա գուշակել չէր կարող իւր թշնամիների լարած բոլոր որոգայթները։ «Դունայի» յօդուածը և երգչի սուտ մատնութիւնը հզօր զէնք տուին նրանց ձեռքը։ Նրա աչքերի առաջ պատկե-

րացան այդ մտանութեան բոլոր կորստաբեր հետեւանքները։ Ուրեմն, ամեն ինչ անդառնալի կորա՜ւ։ Այդ կորուստն արդեօք նոր, աւելի վատ դժբաղդութիւններ առաջ չի՞ բերիլ։ Փախուստն այժմ նրան ստորութիւն էր թւում։ Բոյչօն պարտաւոր է յետ դառնալ համոզուելու համար, թէ որ աստիճան անուղղելի է աւերումը. իւր մասին նա այժմ ամենից քիչ էր մտածում... Սակայն պարզ էր, որ այսուհետեւ Օգնեանովն անճանաչելի պէտք է լինէր։ Այս կշռադատութիւնն ստիպեց նրան շարունակել ճանապարհը։ Մեր թափառաշրջիկը որոշեց գնալ Օվչերի—նրա ամենահաւատարիմ գիւղը, որտեղ նա յաճախ այցելում էր քարոզչութեան նպատակով կատարած ճանապարհորդութիւնների ժամանակ։ Դէլկօ ծերունու մօտ նա հեշտութեամբ կարող էր հարկաւոր հագուստներ ձեռք բերել։ Սակայն Օվչերի ճանապարհը, որն յաճախ կտրատւում էր ձորերով ու փոսերով, Օգնեանովի համար շատ վտանգաւոր էր, որովհետեւ անցնում էր թրքական գիւղերի մօտով։ Դիակների գտնուելու լուրը կայծակի արագութեամբ կը տարածուէր այս կիսավայրենի բներում։ Եւ եթէ նրան չբռնէին, որպէս մի կասկածելի անձնաւորութեան, գոնէ կը սպանէին՝ որպէս անհաւատի. իւրաքանչիւր օր այս տեղում մի-քանի սպանուած բուլղարներ են գտնում։ Քաղաքացու հագուստն աւելի եւս մեծացնում էր գնդակահար լինելու հաւանականութիւնը։ անխոհեմութիւն կը լինէր յաղթահարել երկիւղը և դիմել դէպի անխուսափելի մահը։ Օգնեանովը որոշեց սպա-

սել մինչեւ գիշեր։ Այդ նպատակով նա Հին-Լեռան լանջով աւելի վեր բարձրացաւ, որտեղ խիտ ծառատունկերը և մացառները կարող էին թաքցնել նրան։

Երկու ժամ փլատակների և ամայի դաշտավայրերի վրայով մեծ դժուարութեամբ ճանապարհ կտրելուց յետոյ, նա հասաւ առաջին ծառատունկին։ Ձոր ցախերի մէջ պահուելով, Օգնեանովը պառկեց մէջքի վրայ և պատրաստւում էր քնել կամ գոնէ հանգստանալ։ Երկինքը բոլորովին պարզել էր և շողշողացնում ջրի կաթիլները, որոնք գոյացել էին գիշերուայ եղեամի հալուելուց։ Սակաւաթիւ ճնճղուկները թռչում էին նրա մօտով և իջնում նեղ ճանապարհներին՝ կերակուր ճարելու համար։ Բալկանների արծիւը բարձր սաւառնում էր երկընքում՝ Օգնեանովի գլխի վերեւը։ Արդեօք մօտակայքում մի որ և է ո՞րս էր նկատել նա, թէ նոյն իսկ Օգնեանովին էր որսի տեղ ընդունում... Այս միտքն էր պտտում նրա գլխում և Օգնեանովն աւելի եւս տխրեց։ Արծիւն այժմ մի չարագուշակ նշան էր թւում նրան։ Դա կարծես Բոյչօի անողորմ բաղդի կենդանի պատկերն էր. նորան թւում էր, որ այս գիշակեր թռչունը պատրաստում է իւր արիւնալի ճաշը, որ յետոյ ցած իջնէր կապոյտ բարձունքներից։ Իսկ ամեն ինչ կարելի էր։ Այս խուլ վայրը, ուր յաճախ այցելում են բուն աւազակ թուրք-որսորդները, շատ հեռու էր անվտանգ լինելուց։ Եւ Օգնեանովն անհամբերութեամբ սպասում էր արեւի մայր մտնելուն ու մի քանի անգամ փոխեց ապաստանարանը՝ աւելի լաւ թաքնուելու համար։

Յանկարծ մի հրացանի պայթիւն Օգնեանովին իսկոյն սթափեցրեց ցնորքներից։

Նա շուրջը նայեց։ Բալկանների արձագանքը կրկնեց ձայնը և լռեց։

—Երևի որսորդներն են հրացան արձակում, —ասաց նա ինքն իրեն։

Օգնեանովը հանգստացաւ, բայց ո՛չ երկար ժամանակ։ Միքանի րոպէ յետոյ շան հաչոց լսուեց և այն էլ նրանից ո՛չ հեռու։ Ակամայից Օգնեանովի միտքն ընկաւ Եմեքսիզի շունը. այդ աւազակի բնակավայրը հեռու չէր այդտեղից։ Այդ հաչոցը նրան շատ ծանօթ երևաց։ Հաչոցը նորից լսուեց—աւելի մօտ և աւելի պարզ, մացառները խշշացին, կարծես քամի դիպաւ նրանց, և երկու շուն, մռութները ցած թողած՝ դուրս վազեցին թփերի միջից։

Օգնեանովն ազատ շունչ քաշեց։

Եմեքսիզ-Փահլէվանի շունը չէր այդ, որին տէրը սովորեցրել էր բացի վայրենի կենդանիներից և թռչուններից, մարդկանց նաև որսալ... Այդ անիծւած կենդանին չափազանց յիշաչար էր... Շները ցախերի միջից մի ինչ որ բանի հոտ առնելով, վազեցին այն կողմը, հոտոտեցին և առաջ գնացին... Յանկարծ Օգնեանովը լսեց, որ մարդկային քայլեր են մօտենում։ Նա սկսեց առանց յետ նայելու փախչել պահուած տեղից. երբ հրացանի ձայն լսուեց. Նա զգաց որ մի բան դիպաւ ոտքին և եռապատկեց փախուստի արագութիւնը։

Հալածո՞ւմ էին նրան, ի՞նչ էին շինում այնտեղ յետևը,—նա չգիտէր։ Ճանապարհին մի առուակ

պատահեց. Օգնեանովը թակ կացաւ կաղնու անտառի մէջ, որը բուսած էր նրա ափերում։ Որսորդները, հաւանականաբար, աչքից կորցրին նրան։ Երկար ժամանակ ականջ էր դնում Օգնեանովը, սակայն ոչինչ չէր լսում և նա սկսեց հանդարտուել։ Այն ժամանակ միայն նա զգաց, որ մի ինչ որ տաք բան է հոսում ոտքի վրայով։ «Ես վիրաւորուա՞ծ եմ», վախեցած ասաց ինքն իրեն, տեսնելով, որ կօշիկը լիքն է արիւնով։ Նա հանեց կօշիկը և համոզուեց, որ ոտքը վիրաւորուած է։ Վէրքը երևում էր ձկան երկու կողմից—գնդակը ծակել էր և դուրս թռել։ Բոլչօն իւր շապկից մի կտոր կտրեց և կապեց ոտքը։ Ցաւը սաստկացաւ, իսկ նա դեռ երկար և դժուար ճանապարհ ունէր կտրելու։ Արիւնհոսութիւնը սաստիկ թուլացրել էր խեղճ երիտասարդին և բացի դրանից, այդ օրը նա դեռ ոչինչ չէր կերել։ Շուտով բաւական մթնեց և նա թողեց իւր ապաստարանը։ Մթութեան հետ միասին սաստկանում էր և ցուրտը։

Առաջին թրքական գիւղը, որը պատահեց նրան ճանապարհին, բոլորովին մեռած էր թւում։ Թրքական գիւղերը լռում և իսկոյն դատարկւում են՝ աղջամուղջն սկսուելուն պէս։ Միայն սրճատանը դեռ ևս աղմուկ էր լսւում։ Սակայն Օգնեանովը չէր համարձակւում դուռը բախել, թէև քաղցածութիւնից գիտակցութիւնը կորցնում էր։ Դարձեալ երկու ժամ առաջ գնաց նա, անցաւ երկրորդ գիւղը և դրանից յետոյ մի ինչ որ սպիտակին տուող բան տեսաւ... Դա Սոբեշան էր։ Մեծ դժուարու-

թեամբ գետանցքով անցաւ միւս ափը և նստեց այնտեղ, որովհետև ջրից նրա ոտքերը փետացել էին և վէրքն աւելի սաստիկ էր ցաւում։ Տեսնելով որ ոտքն ուռեց, նա բորբոքումից վախեցաւ, որը թոյլ չէր տալ նրան ուր էլ որ լինի հասնել։ Բոյչօն վեր կացաւ, ափի մօտից մի եղէգ կտրեց, հանեց անդրավարտիքը, և սկսեց լուանալ վէրքը այն ձևով, որը գործ էր ածւում ապստամբութիւնների ժամանակ։ Նա երկար խողովակով փչում էր ջուրը վէրքի մի ծակից, որը դուրս էր գալիս միւսով։ Այսպէս կրկնեց նա միքանի անգամ։ Յետոյ վէրքը կապելով, Օգնեանովն առաջ գնաց Միչլին-Լեռան վրայով, որի լանջի վրայ էր գտընւում նա...

Գիշերային խաւարը թանձրանում էր... Օգնեանովն Օվչերի գիւղն էր որոնում, սակայն ո՛չ մի կերպ չէր կարող գտնել։ Շուտով համոզուեց, որ ճանապարհը կորցրել է. նա իրեն գտաւ մի անծանօթ անտառում... Օգնեանովը վրդովուած կանգ առաւ և սկսեց ականջ դնել։ Մարդկային ձայների մի հազիւ լսելի, խուլ աղմուկ հասաւ նրա ականջին։ Նա եզրակացրեց, որ այս կէս գիշերային ժամում ոչ ոք այստեղ չէր կարող լինել, բացի ածխագործներից։ Բոյչօն մտաբերեց և այն կարմիր բոցը, որը նկատել էր հեռուից։ Բայց ի՞նչ ածխագործներ էին—բուլղա՞ր, թէ՞ թուրք։ Նա մոլորուել, մրսել, ույժից ընկել էր։ Եթէ դրանք քրիստոնեաներ են, ուրեմն յոյս կայ, որ կը խղճան իր վրայ։ Օգնեանովը բարձրացաւ ծառը և այնտեղից դար-

ձեալ նկատեց կրակը աւելի պարզ։ Եւ նա դիմեց դէպի կրակը։ Ծառերի ճղների միջից նա պարզ որոշում էր կրակի շուրջը բոլորուած մարդկային կերպարանքներ. վերջապէս թափառաշրջիկի ականջին հասան մի քանի բուլղարերէն խօսքեր։ Բայց ի՞նչպէս մօտենար նրանց։ Նա ամբողջովին արեան մէջ էր։ Իր տեսքով Բոյչօն կարող էր վախեցնել և փախցնել այդ բուլղարներին. կարող էր դեռ աւելի վատ հետևանքներ էլ ունենալ նրա համար... Ածխագործներն երեք հոգի էին,—մէկը վերմակի մէջ փաթաթուած պառկած էր, միւս երկուսը զրոյց էին անում թեժ կրակի մօտ։ Նրանցից ո՛չ հեռու կապած էր մի ձի. նա խոտ էր ուտում։ Օգնեանովն սկսեց ականջ դնել։

—Է՛լի փայտ ձգիր, շատախօսութիւն մի՛ անիր... Իսկ ես քիչ էլ խոտ տամ մաքենին,—ասաց հասակաւորն ու վեր կացաւ։

—Հա՛, ես ճանաչում եմ այս վերդովցուն։ Սա Նենկօն է, Իվան պապի որդին,—ուրախութեամբ ասաց ինքն իրեն Օգնեանովը։

Վերդովօն, որ Միչլին-Լեռան քամակին մի գիւղ էր, նոյնպէս ծանօթ էր Օգնեանովին։

Նենկօն մօտեցաւ ձիուն և խոտ հանեց պարկից։ Այդ միջոցին Օգնեանովը մօտ գնաց և ասաց նրան.

—Բարի երեկոյ քեզ, բայ Նենչօ։—Նենչօն վախեցած վեր թռաւ։

—Ո՞վ ես դու։

—Չե՞ս ճանաչում ինձ, բայ Նենչօ։

Խարոյկի թոյլ լոյսը լուսաւորեց Օգնեանովի դէմքը։

—Այս դո՞ւ ես, վարժապե՛տ։ Արի՛, արի՛, մերոնք այստեղ են... Մեր Ցվէտանը, բայ Դոյչինը...

Աստուած իմ, դու բոլորովին սառել ես,—ասաց գիւղականը, Օգնեանովի հետ խարոյկին մօտենալով։

—Ցվէտանչէ, փայտ շատ ձգի՛ր, թող կրակը թեժանայ... Թող չորացնէ ու տաքացնէ մեր քրիստոնէին... ճանաչո՞ւմ ես սրան։

—Վարժապե՜տ...—ուրախութեամբ գոչեց պատանին.—բայց ո՞րտեղից ես գալիս.—և նա մի քիչ չոր ցախ առաջարկեց որ Օգնեանովը նստի։

—Բարև, Ցվէտանչէ։

—Գնդակով խփել են նրան այդ գազանները,—բարկութեամբ խօսեց Նենչօն.—բայց փառք Աստուծոյ, վտանգաւոր չէ։

—Պա՞հ։

—Դոյչինէ պապի, վեր կաց, հիւր ունինք,—ձայն տուեց կամ, աւելի ճիշտն ասած, բրթեց Նենչօն քնածին։

Շուտով մի մեծ կրակ բոցավառուեց նրանց մօտ։ Աշխատաւորները կարեկցութեամբ նայում էին Օգնեանովի գունաթափուած դէմքին. Բոյչօն համառօտակի պատմեց իւր արկածները։ Նա սկսեց զգալ կրակի բարերար ազդեցութիւնը—սառած անդամները տաքացան և վէրքն այնքան սաստիկ չէր ցաւում։ Դոյչին պապը պարկից քիչ հաց և մի գլուխ սոխ հանեց ու տուեց Օգնեանովին։

—Ունեցածներով գոհ ենք. տաքութեամբ,

Աստուծոյ շնորհով, թագաւորից էլ հարուստ ենք։ Ճաշակի՛ր, վարժապե՛տ...

Օգնեանովն իրեն աւելի լաւ զգաց։ Նրա հոգին լցուեց մի նոր, մեծ զուարճութեամբ։ Այս գեղեցիկ, ոսկեգոյն վէհանձն կրակը, դէմուդէմի խորհրդաւոր լեառը, այս պարզ, սևացած, կոշտ դէմքերը, որոնց վրայ սիրալիր բարեկամական հայեացք էր փայլում, և այս կոշտացած սև աշխատաւոր ձեռքերը, որոնք նրա՛ն բուլղարի հիւրասիրութեան համեստ գրաւականը տուին,—այս բոլորը նրան չափազանց սրտաշարժ երևաց։ Եւ եթէ որ ֆիզիքական ցաւ չզգար, Օգնեանովը հաւանականաբար հիմացմամբ կերգէր՝ «Լե՛առ դու, ով կանաչապատ լեա՛ռ»... երգը։

...Լուսաբացին Նենկօն՝ յետևից քաշելով իւր ձին, որի վրայ նստած էր Օգնեանովը, Վերգովօում մի դուռ բաղխեց։ Գաւթում շները հաջեցին և Մարին պապը դուռը բաց արաւ։ Այսպէս սովորականից վաղ դռան ձայնը լսելով, նա իսկոյն գուշակեց, որ արտասովոր հիւր եկած կը լինի։

Բարևեցին և իսկոյն բացատրեցին, թէ գործն ինչումն է։

—Աստուած փչացնէ այդ անպիտաններին, սատանի բաժին լինի՛ն նրանց հոգիները...—ասում էր Մարին պապը, զգուշութեամբ վար առնելով Օգնեանովին, որի վէրքը ճանապարհի անհանգստութիւնից աւելի սաստիկ էր ցաւում։

Բոյչօին տեղաւորեցին կողքի սենեակում, որտեղ նա մի անգամ արդէն գիշերել էր։

Մարին պապն ուշադրութեամբ նայեց և կապեց վէրքը:

—Շուտով կը կազդուրուես,—նկատեց նա:

ԻԷ.

ՎԵՐԳՈՎՕՈՒՄ

Օգնեանովի բժշկութիւնն առաջ էր գնում յաջող, թէև ոչ այնքան արագ, ինչպէս ասել էր Մարին պապը: Նրա հիւրասէր ընտանիքն ամեն կերպ աշխատում էր հիւանդին հաճոյանալ, որ դրանով գոնէ մի քիչ թեթևացնէ նրա տանջանքները: Բժիշկն ինքը—Մարին պապն էր (նա քիչ-շատ հասկանում էր), իսկ Մարինիքա տատն աշխատում էր իւր հմտութիւնը ցոյց տալ խոհարարական արուեստի մէջ: Բաց արին սպիտակ միջնալեռեան գինու մի տակառ. իւրաքանչիւր օր մի ճուտ էր մորթւում Օգնեանովի սեղանը զարդարելու համար, որն առանձին էր ճաշում, քանի որ Ծննդեան պահոց ժամանակն էր:

Բուլղարական ընտանիքի այդ տեսակ սիրալիր ուշադրութեամբ և պատրաստակամութեամբ շրջապատուած՝ Օգնեանովը երբ շաբաթ պառկեց. օրէցօր առողջութիւնը վերականգնում էր: Նրան տանջում էր միայն անբացատրելի անհամբերութիւնը շուտով տեղեկանալու, թէ ինչ են անում Սպիտակ-Եկեղեցում, ինչ դրութեան մէջ են Ռադան, ընկերները և գործը: Նա աղաչում էր Մարին պապին մի մարդ ուղարկել տեղեկութիւն բերելու, սակայն Մարին պապը չէր համաձայնւում:

—Ո՛չ, եկող շաբթի ես ինքս կը գնամ տօների համար մի բան գնելու, իսկ ուղարկել մէկին—չեմ կարող: Սպասի՛ր մինչև այն ժամանակ, որդեա՛կ... Միայն հանգիստ եղիր և շուտով կը կազդուրուես: Աստուած ողորմած է:

—Բայց եկող շաբթի ես ինքս էլ կը կարողանամ գնալ:

—Արդեօք թո՞յլ կտամ քեզ... Այդ իմ գործն է: Ես եմ բժիշկը և ինձ պէտք է հարցնես...—որդեսէր խստութեամբ նկատեց ծերունին:

—Գոնէ հարկաւոր է իմաց տալ Ռադային, որ ես կենդանի եմ:

—Վարժուհին գիտէ, որ դու կենդանի ես և Թուրքերի ձեռքին չես...

Օգնեանովն ստիպուած էր հպատակել:

Մի քանի հաւատարիմ դրացիներ այցելում էին նրան. շատ խնդրելուց յետոյ նրանք ծերունուց թոյլտուութիւն ստացան այցելել հիւանդին: Նրանց հոգիները փափագում էին լսել «վարժապետի» զօրեղ խօսքը և ամեն անգամ առողջ դէմքերով ու լուսաւորուած հայացքներով էին դուրս գալիս նրա մօտից:

Ամենապատ եղումուս ունէր տեղական յեղափոխական մասնաժողովի նախագահ տէր-Յովսէփը: Նա այժմեանից արդէն զօրապետ էր ընտրուած և յեղափոխական դրօշակը պահում էր եկեղեցում՝ քահանայական զգեստների մէջ: Գալիս էր նմանա-

պէս Մինա պապը, վաղեմի ուսուցիչը։ Օգնեանովը համոզուած էր, թէ բացի դրանցից և Մարին պապի ընտանիքից, գիւղում ուրիշ ոչ ոք չը գիտէ իւր այստեղ գտնուելը։ Այնինչ նա նկատում էր, որ սեղանն օրէցօր աւելի ճոխանում էր—տապակած ճուտեր, իւղով պատրաստած ձուեր, բրնձով կաթնապուր, շատ անգամ էլ նոյն իսկ վայրի կաքաւներ և նապաստակներ... զանազան գիներ էին տալիս նրան ճաշին։ Այս ճոխութիւնն Օգնեանովին անհանգստութիւն էր պատճառում. Նրա համար ամօթ էր իւր տանտէրերին մեծ ծախսերի տակ ձգել։ Մի անգամ դուրս գնալիս նա տեսաւ, որ հաւանոցը բոլորովին դատարկուել է և ասաց Մարին պապին.

—Մարինէ պապի, չէ՞ որ դու կաւերուես։ Եթէ շռայլութիւնդ չթողնես, ես կը հրաժարուեմ քո աղ ու հացից և ինձ համար հաց ու լոռ կը գնեմ գիւղացիներից... ինձ այդ էլ բաւական է։

—Քո գործը չէ, կաւերուե՞մ թէ ո՛չ։ Ես քո բժիշկն եմ և գիտեցածիս համեմատ էլ բժշկում եմ քեզ։ Օտարի տանը—տիրոջը լսի՛ր... Մի՛ խառնուիր ուրիշի գործի մէջ։

Օգնեանովն յուզուած լռեց։

Նա չգիտէր, որ ամբողջ գիւղն էր մասնակցում սիրելի վարժապետի հիւրասիրութեան գործին։

Դա հասարակական գաղտնիք էր։

Սակայն մատնութիւն մտքից անգամ չէր կարելի անցկացնել։

Օգնեանովն այժմ բոլոր գիւղականների բուռն

համակրութեան առարկան էր։ Այն լուրը, թէ նա երկու թուրք էր սպանել, ամենաանտարբեր մարդկանց աչքերում անգամ բարձրացրեց նրան։

Բայց վէրքը շղթայել էր նրան մի տեղում։ Այցելուների մէջ նրա տանջանքները թեթևացնողը բարի Մինա պապն էր։ Օգնեանովը իւրաքանչիւր օր միքանի ժամ նրա հետ էր անցկացնում։ Նա այնպէս ընտելացել էր այդ մարդուն, որ առանց նրան մի օր չէր կարող անցկացնել։ Մինա պապը իւր տեսակի մի ա ն թ ի ք ա էր—կենդանի մնացորդ էր անցած սերնդին ժամագիրք և սաղմոսարան ուսուցանողներից, որոնք առաջին անգամ Բուլղարիայում հիմնեցին նշանաւոր վանական դպրոցները։ Նա արդէն մօտաւորապէս եօթանասուն տարեկան էր. ծերութեան հասակում դեռ պահպանել էր իւր լայն թիկունքները և ման էր գալիս առոյգ, թէև գաւազանով։ Երկար ժամանակեայ թափառական կեանքից յետոյ, Մինա պապն իւր կեանքի խարիսխը ձգել էր այս խուլ գիւղում և խաղաղ էր անցկացնում իւր ծերութեան տարիները։ Նա չէր կարող այլևս ուսուցչութիւն անել և իւր համագիւղացիներին ծառայութիւն էր անում՝ եկեղեցում անվարձ երգելով. նորութիւններն այնտեղ մուտ գործել չէին կարող։ Գիւղացիք տօն օրերը նրան իրենց մօտ էին կանչում և բերանները բաց լսում ծերունու սքանչելի պատմութիւնները, որոնք աւելի նմանում էին քարոզների, որովհետև նրանց մէջ յաճախ պատահում էին քաղուածքներ Ս. Գրքից։ Օգնեանովը հրճւում

էր այդ հնութեամբ և լսում հինաւուրց մշակի խելացի դատողութիւնները, որպէս արձագանք մոռացուած ժամանակների։

Երբ Մինա պապն առաջին անգամ այցելեց հիւանդին անկողնում, խստութեամբ արտասանեց.

—Դարձեա՛լ մի քրիստոնեայ ղոհ... Դարձեա՛լ անմեղ թափուած արիւն... Մինչև ցե՞րբ բարձրանայ թշնամին ի վերայ իմ... Մի դարձուցանէր զերեսս քո յինէն... Արի՛, Տէ՜ր, օգնեա՛ մեզ...

Եւ նա բարևեց ու սկսեց կարեկցաբար հարց ու փորձ անել։ Օգնեանովը, դառնալ ուզենալով, շարժողութիւնից առաջ եկած սաստիկ ցաւից հառաչեց։

—Պի՛նդ կաց, զաւակս։ Երանի սգաւորաց, զի նոքա մխիթարեսցին։

—Ա՜խ, Մինա՛ պապի, տանջանքները հենց մեզ համար են գրուած... իզուր չենք մենք առաքեալներ անուանւում,—ժպտալով ասաց Օգնեանովը։

Ծա՛նր է, դժուա՛ր է ձեր գործը, վարժապե՛տ. բայց լաւը և գովելին այն է, որ Աստուած ինքն է միտք տուել ձեզ ծառայել ժողովրդին.— Դուք էք լոյս աշխարհի, ո՛չ կարէ քաղաք թագչիլ, որ ի վերայ լերին կայցէ... Զէ՞ որ Ինքը՝ Քրիստոսն է ասել իր առաքեալներին. Հունձք բազում են, և մշակք սակաւ... Երթա՛յք, ահա առաքեմ զձեզ զգառինս ի մէջ գայլոց։

Այս պարզ խօսքերը մխիթարութիւն և աշխուժութիւն ներշնչեցին Օգնեանովի հոգուն։

Վերջապէս Մարին պապը ճանապարհ ընկաւ դէպի Սպիտակ-Եկեղեցի։ Օգնեանովն անհամբերութեամբ սպասում էր նրա վերադարձին։ Վատ մտածմունքները մէկը միւսի յետևից շրջում էին նրա գլխում։ Արդէն մի ամսից աւելի էր, որ նա չգիտէր, թէ ինչ է պատահել իր ամենամօտ մարդկանցը։

Ճշմարիտ ուրախութեամբ ընդունում էր նա Մինա պապին, որի հետ նա կարող էր բաժանել իր ծանր մտածմունքները։ Մինա պապը հոգատարութեամբ լսում էր նրան։

—Յուսա՛, վարժապե՛տ, յոյսդ դիր Աստուծոյ վրայ. մի՛ վհատուիր։ Ամենաբարձրեալը չի թողնում տանջուողներին։

Վերադարձաւ Մարին պապը։

Օգնեանովը սարսափով աշխատում էր մի որ և է բան կարդալ նրա դէմքին։

—Բարի երեկոյ։ Կա՛ց, կա՛ց, վարժապե՛տ։ Թող որ պատմեմ և շատ մի շարժուիր դու...—ասաց նա վայր ձգելով իր ծանր բեռը։

—Ձեր քաղաքացիք,—շարունակեց Մարին պապը,—զարմանալի ժողովուրդ են. Նրանց, ոտուերի նման, չես կարող ձեռք ձգել մի բան հարցնելու համար...

—Բայց ինչո՞ւ դու ուղղակի բժշկապետի մօտ չգնացիր։

—Նա բանտարկուած է։

—Իսկ սարկաւագի՞ մօտ, վա՛նքը։

—Սարկաւագը թաքնուել է։

—Իսկ Ստոեան պապին գտա՞ր դու:

—Աստուա՜ծ ողորմի նրա հոգուն. կեանքը քեզ է բաշխել: Այն գիշերը, երբ նրան բանտարկել են, մեռել է կաթուածից. ասում են, խեղճը տանջանքների տակ պատմել է բոլորը:

—Դժբա՜ղդ Ստոեան պապի... Իսկ Ռադկա՞ն, Ռադկա՞ն...

—Նրան ես չկարողացայ տեսնել:

—Ի՞նչպէս, ի՞նչ է պատահել Ռադկային:— Օգնեանովը գունաթափուեց:

—Նա այնտեղ է, մի՛ տխրիր. բայց նրան արտաքսել են դպրոցից:

—Ուրեմն կոյս Ռովոամայի մօտ նայէիր,—անհանգստութեամբ բացականչեց Օգնեանովը:

—Վռնդել է նրան անխիղճ կոյսը:

—Աստուա՜ծ իմ, ուրեմն նա անպաշտպան է մնացել... Նա վշտից սպանուած է...

—Զորբաջի Մարկօն նրան տարել է իւր մի ազգականի մօտ. ես ժամանակ չգտայ նրա մօտ գնալու, որովհետև ընկերներս շտապում էին: Բայց ես հարցրի, օրիորդն առողջ է...

—Երբէք չպէտք է կարողանամ այդ բայ Մարկօի պարտէզի տակից դուրս գալ: Իսկ իմ մասին ի՞նչ են խօսում:

—Քո մասի՞ն: Բայց քեզ զանազան անուններ են տալիս... մինչև հասկացայ՝ մազերս ճերմակեցին:

—«Կո՞մս» էին անուանում:

—Հա՛, կոմս. կոմսի մասին ասում են, թէ որսորդները խփել են նրան Այեվլի անտառում...

—Այդ ճիշտ է:

—Ո՛չ բոլորովին. դու կենդանի ես, այնինչ քեզ բոլորը մեռած են համարում: Դա աւելի լաւ է,—ասացի ես ինձ:

Օգնեանովն յանկարծ, խայթուածի նման, վեր թռաւ:

—Ի՞նչպէս, ուրեմն նա՞ էլ ինձ սպանուած է համարում: Միայն այդ էր պակաս դժբաղդին:

Նա սկսեց քայլել սենեակում, կարծես ոտքերի ոյժը փորձելու համար:

—Մի՛ ման գար, ցաւը կը վերանորոգուի:

—Ես արդէն կարող եմ ճանապարհ ընկնել,— վճռական կերպով ասաց Օգնեանովը:

—Ո՞ւր,—վախեցած հարցրեց Մարին պապը:

—Սպիտակ-Եկեղեցի:

—Դու խելքդ թռցրե՞լ ես:

—Ո՛չ. բայց կը թռցնեմ, եթէ այստեղ գոնէ մի օր էլ մնամ: Ինձ համար հագուստ ձեռք բեր. ինձ մի ձի կը տա՞ս:

Մարին պապին յայտնի էր Բոյչօի կամակորութիւնը և դրա համար մինչև անգամ չփորձեց արգելել նրան:

—Հագուստ էլ, ձին էլ վեր առ. միայն ափսոսում եմ քո երիտասարդ հասակին,—ասաց նա վրդովուած. — ճանապարհներին թափառում են թուրքերը, աւազակութիւններին ու սպանութիւններին հաշիւ չկայ... դու քեզ չե՛ս ափսոսում...

—Մի՛ վշտանար, ես դեռ կը վերադառնամ քեզ մօտ ողջ և առողջ, որպէս բազէ: Միայն դու ինձ

չե՞ս վռնտիլ,—կիսակատակ կերպով աւելացրեց Օգնեանովը։

Ծերունին յօնքերը կիտած նայեց նրան։

—Ո՛չ. այստեղից չես շարժուիլ դու,—ասաց նա վճռաբար։—Ես ամբողջ գիւղը կը հաւաքեմ և նրանք քեզ զօրով կարգելեն։ Դու մեզ հարկաւոր ես, որպէս սուրբ հաղորդութիւնը, իսկ եթէ գնաս՝ քեզ կը սպանեն։ Ես չեմ ցանկանում որ յետոյ մարդիկ ասեն, թէ Մարին պապը թողեց Բոյչօ վարժապետին, մեր առաքեալին, որ գնայ, զոհուի,—բարկութեամբ գոչում էր Մարին պապը։

—Կամա՛ց, Մարինէ պապի. չէ՞ որ փողոցում ձայնդ լսւում է,—նկատեց նրան Օգնեանովը։

Ծերունու դէմքին փայլեց ժպիտը։

—Է՜հ, Աստուած պահէ քեզ, վարժապետ։ Ո՞ւմնից ես թագնւում դու։ Ամբողջ գիւղը, թէ մեծ, թէ փոքր, գիտէ որ դու ինձ մօտ ես... Քո սեղանի մասին բոլորը հոգում էին... Մենք հասարակ մարդիկ ենք, բայց քրիստոնեաներին չենք մատնում, իսկ ինչ վերաբերում է քեզ, հոգիներս էլ կը տանք։ Այժմ Օգնեանովն էլ էր ժպտում, իմանալով, որ նրա գաղտնիքը հասարակութեան ժառանգութիւն էր դարձած։

Երկար վիճաբանութիւնից յետոյ, Օգնեանովը փարատեց տանտիրոջ երկիւղը և նրա գնալը որոշուեց։

ԻԸ.

ԱՆՀԱՆԳԻՍՏ ԳԱԳԱԹ

Շուտով Վերգովօից դուրս եկաւ մի ձիաւոր թուրք, աւելի ճիշտ ասած, մի չ ի թ ա կ [30])։

Պատառոտուած, գեղին, բոլորովին գունաթափուած չալման՝ քաշուած էր մինչև յօնքերը. ժոծբակը—մաքուր ածելուած էր. չթի բաճկոնումը պոկտուած կոճակներով, կուրծքը բաց, պատառոտուած վերարկուն՝ զգզուած թևերով, գօտիկից կախուած կեղտոտ պատեանը միջի կայծաքարի հրացանով և կարճ շշով, Սոպոտի դաշոյնը և չիբուխը, մաքրած անդրավարտիքն ու հողաթափները,—այս բոլորը հին և մաշուած էին։

Այս դրութեամբ Օգնեանովն անճանաչելի էր։

Ձմեռն արդէն սկսել էր գործադրել իւր իրաւունքները և սպիտակ վարագոյրով ծածկել էր սար ու ձոր. միայն Հին-Լեռան ժայռոտ կողերը սևին էին տալիս հորիզոնի վրայ։ Բնութիւնը լուռ և տխուր էր։ Ժամանակ առ ժամանակ ագռաւների խիտ երամները թռչում էին դաշտերի վրայով և արթնացնում նիրհող շրջակայքը։

Սպիտակ-Եկեղեցու ուղիղ ճանապարհը գնում էր դէպի արևելք, սակայն Օգնեանովն այդ կողմով չգնաց. հարկաւոր էր անցնել Եմեքսիդ-Փանկեվանի գիւղով, որը նրան սարսափ էր ազդում։ Նրա միտքն ընկաւ ատելի թուրքի շունը, որի մէջ կարծես մարմնացել էր սպանուածի հոգին՝ մահից յետոյ էլ

նրան հալածելու և հետևելու համար։ Եւ Օգնեանովը որոշեց գնալ ուղղակի դէպի հիւսիս—Կարնաբէի խանը (պանդոկ), իսկ այնտեղից Հին-Լեռան ստորոտով ճանապարհը շարունակել դէպի արևելք՝ ուղղակի Սպիտակ-Եկեղեցի։ Այս շրջակայ ճանապարհն անհամեմատ աւելի երկար էր, բայց անվրտանգ, թէև անցնում էր Թուրքական գիւղերով։ Երբ Օգնեանովը հասաւ առաջին գիւղին, ձիւնը թափւում էր մեծ քուլաներով և ծածկում ամէն ինչ նրա աչքերից։ Ցուրտը սաստկանում էր և նրա անդամները սառել էին. նա հազիւ կարողանում էր սանձը բռնել և միայն բնազդումն էր ձիուն ճանապարհը ցոյց տալիս, որովհետև ամէն բան ծածկուած էր ձեան միակերպ սաւանով։ Հանգարտ մտաւ նա գիւղի փողոցները,—ոչ մի տեղ կենդանի հոգի չէր երևում,— և կանգ առաւ խանի առաջ, մզկիթի հանդէպ։ Նա կամենում էր հանգիստ տալ դժուար ճանապարհից սաստիկ յոգնած ձիուն և ինքն էլ տաքանալ էր ուզում։ Մի մանուկ ձին բռնեց և Օգնեանովը բաղխեց խանի դուռը, որն, ըստ երևոյթին, բոլորովին դատարկ էր։ Ներս մտնելով, նա ակամայ յետ քաշուեց—խանը լիք-լիքն էր Թուրքերով։ Յետ դառնալ արդէն չէր կարելի։ Նա Թրքական սովորութեան համեմատ բարևեց. Թուրքերը քաղաքավարութեամբ պատասխանեցին նրա բարևին։ Շատ տարիներ Թուրքերի մէջ ապրելով, Օգնեանովը կարողացել էր լաւ ծանօթանալ նրանց սովորութիւնների և լեզուի հետ։

Թուրքերը կօշիկները հանած, չիբուխները ձեռ-

քերին նստել էին փոքրիկ գորգերի վրայ։ Ծխախոտի թանձր ծուխը լցրել էր խանը։

—Սո՛ւրճ,—խստութեամբ ասաց նա ղայֆէճիին։

Եւ նա պատիրոս շինեց իրեն համար, գլուխը բոլորովին ցած թողնելով, որ գոնէ մասամբ ծածկէ իւր դէմքի գծագրութիւնը։ Այդ միևնոյն դրութեամբ էլ նա սկսեց սուրճ խմել, բարձր ֆրռֆրռացնելով և խօսակցութիւններին ականջ դնելով։ Սկզբում Օգնեանովն անտարբերութեամբ էր լսում նրանց զրոյցները, բայց շուտով լարեց լսողութիւնը—խօսակցութիւնն երկու Թուրքի սպանութեանն էր վերաբերում։ Այդպիսի դէպք վաղուց արդէն այդ կողմերում չէր պատահած և դրա համար մինչև այժմս էլ զբաղեցնում և գրգռում էր Թուրքերին։ Յուզմունքն իսկոյն տիրեց սրճատան՝ մինչև այդ ժամանակ թմրած և սառնարիւն հասարակութեանը։ Լսուեցան հայհոյանքներ, անէծքներ և արիւնալից սպառնալիքներ բուլղարների հասցէին։ Օգնեանովը շարունակում էր ֆրռֆրռացնել սուրճը և սարսափելի կերպով կրճռոտել էր դէմքը, ցոյց տալու համար որ ընդհանուր զայրոյթը նրան էլ է յուզում։ Խօսքը վերաբերում էր և սպանողին և նա զարմացմամբ նկատեց, թէ ո՜րքան ժողովրդական էր դարձել իւր անունն ու անձնաւորութիւնը մինչև անգամ և այստեղ։ Ահագին առասպելներ էին ստեղծուել նրա մասին։

—Այդ անհաւատ կոնսուլին չի կարելի ոչ բռնել, ոչ ճանաչել,—ասաց ներկայ եղողներից մէկը։

—Նրան երևի սատանան է օգնում. մի տեղ նա վարժապետ է, քահանայ, ուրիշ տեղ՝ գիւղացի, իսկ երբեմն էլ՝ Թուրք. նա իւր կերպարանքն իսկոյն փոխում է. տեսնում ես այդ կոնսուլն անբեխ է և սեւաչեայ, քիչ ժամանակ անցած՝ շէկ է և ահագին բեխերով։ Դէ՛հ, արի՛ ու բռնի՛ր նրան։ Ահմէդ աղան պատմում էր ինձ, որ մի անգամ նրա հետքը գտել են և ընկել յետևից Թեքէի ծառաստանում, բայց յանկարծ հալածողները տեսնում են իրենց առաջ մի ագռաւ. ո՛չ գիւղացի կայ, ո՛չ էլ սատանայ... Բոլորը հրացաններն արձակել են, բայց թռչունն անհետացել է, միայն կռկռոցն է լսելի եղել...

—Էհ,—ձայն տուին միքանիսը կասկածանքով.

—Անհաւատ, այսպէս թէ այնպէս, մեր ձեռքը կընկնի, միայն թէ իմացուի նրա բոյնը, որտեղ թաղնւում է,—բացագանչեց մի ուրիշը։

—Բայց ես ձեզ ասում եմ, որ այդ անհաւատը ձեռք ընկնելու բան չէ,—վրայ բերեց առաջին ճառախօսը։—Նա չի էլ թաղնւում, բայց ի՞նչպէս կարող ես ճանաչել... Գուցէ հենց այժմս էլ նա մեր մէջ, սրճատանն է, իսկ մենք չգիտենք որ այդ նա է։

Այդ խօսքերի վրայ ներկայ եղողները մեքենայաբար աչքերը վեր բարձրացրին և նայեցին միմեանց. միքանի հայեացքներ հետաքրքրութեամբ ուղղուեցան դէպի Օգնեանովը։

Սա այժմ աւելի բարձրաձայն էր ֆռֆռացնում սուրճի երրորդ բաժակը և բոլէ առ բոլէ

ծուխի ամպեր էր բաց թողնում, որը նրան ծածկում էր իւր ալիքներով. սակայն Օգնեանովն զգում էր իւր վրայ յառած հայեացքները և քրքրանքի կաթիլները սահում էին նրա քունքերից։ Նա երկար չէր կարող տանել այդ լարուած դրութիւնը և յարմար առիթ էր որոնում դուրս գալ սրճատնից մաքուր օդ ծծելու։

—Աստուած յաջողայ, ո՞ւր ես գնում,—հարցրեց նրան մէկը։

Կինոսուրա, Աստուած յաջողայ—պատասխանեց Օգնեանովը, հանդարտ բանալով ծալծլուած քիսան, սուրճի գինը վճարելու համար։

—Այս ձեանը և վատ եղանակի՞ն... Դու լաւ կանես, որ այստեղ գիշերես. առաւօտն էլ կարող ես բազար հասնել։

—Ճամպան-ճամպորդին, ճահիճը-գորտին[31]),—ասաց Օգնեանովը ժպտալով։

—Դու կանացի հէքիաթներ ես պատմում, Ռահման-աղա. քո գեավուրը ոչ դև է և ոչ ագռաւ, այլ մի հասարակ խռովարար, ինչպէս բոլոր խռովարարներն են լինում։

—Դէ՛հ, բռնի՛ր նրան։

—Եւ կը բռնենք... Նրա բոյնը մենք գտել ենք։

—Միայն թէ մեր ձեռքն ընկնի՜ նա,—բացագանչեցին միքանի հոգի արիւնարբու հայեացքներով։

—Գլուխս կտրելու կը տամ, որ եթէ ոչ այսօր, գոնէ վաղը խռովարար Բոյչօն թակարդի մէջ չընկնի։

—Իսկ ո՞րտեղ են որոնում այդ շանը։

—Թաղնուել է Միջին-Լեռան գեավուրների մի գիւղում. տաք տեղ է գտել։ Երեկ Բանիւի վրայով մի քանի ոստիկաններ գնացին այնտեղ, իսկ միւսները—Աբրաշլարի մարգագետիններով. վաղը կը որսանք նրան...

—Ուրեմն դո՞ւ էլ նրա համար ես գնում։

—Հենց դրա համար. Վերդովօում կը հաւաքւենք և այնտեղից կը գնանք։

Այժմ միայն Օգնեանովը տեսաւ, որ խօսողը ոստիկան էր, որին նա առաջ անկիւնում չէր նկատել։ Նրան աւելի ևս սկսեց խեղդել այդ սրճատունը և չնայելով ներկայ եղողների կասկածոտ հայացքներին, նա գլուխ տուեց և հեռացաւ։

Իրեն նորից մաքուր օդի մէջ ու բաց երկնքի տակ գտնելով, նա ազատ շունչ քաշեց և թռաւ ձիու վրայ։

Երեք ժամ յետոյ, ձիւնով ծածկուած և ցրտահար Բոյչօն կանգ առաւ Կարնարեի պանդոկի առաջ։

ԻԹ.

ՍԻՐԵԼԻ ԾԱՆՕԹԸ

Կարնարեի պանդոկը Տրոեանի բարձր ճանապարհի կայարանն էր։ Այստեղ ճանապարհորդները գիշերում, կերակուր և հանգիստ են վայելում և ուժերի նոր պաշարով շարունակում ճանապարհը Հին-Լեռան զառիվայրով։ Սակայն իւրաքանչիւր

ձմեռ, երկու շաբաթ շարունակ, ոչ ոք պանդոկը չէր մտնում, որովհետև քամիները ձեան շեղջերով լցնում էին հին հռովմէական ճանապարհը դէպի Բալկանի գագաթը և անանցանելի դարձնում։ Այն ժամանակ Թրակիայի և Դունայեան Բուլղարիայի մէջ ամեն մի հաղորդակցութիւն կտրւում է, մինչև որ Տրոեանի կիրաջիները (պանդոկներում ծառայողները) անհաղին ջանքերով մի նեղ շաւիղ են բաց անում։ Այժմ իսկ ճանապարհը փակուած էր և պանդոկը դատարկուել էր։ Բուլղար պանդոկապետը, որը փոքրիկ, մշտական ժպիտը երեսին մի բթամիտ մարդ էր, չափազանց քաղաքավարի կերպով դիմաւորեց իւր հիւրին և ներս տարաւ մի մեծ սենեակ, որը նշանակուած էր այցելուների և ամեն տեսակ իրերի համար։ Կրակը վառւում էր և Օգնեանովն սկսեց ծխել։

—Մարդ կա՞յ այստեղ,—հարցրեց նա պանդոկապետին։

—Ո՛չ ոք չկայ։ Բալկանը փակուելուն պէս փակւում է և իմ պանդոկը... Իսկ դու ո՞ւր, աղա՛, —հարցրեց պանդոկապետը, հետաքրքրութեամբ նայելով հիւրին։

—Կարո՞ղ ես ինձ համար սուրճ եփել,—պատասխանի փոխարէն հարցրեց Օգնեանովը։

—Կարող ենք, կարող. ի՞նչպէս չենք կարող... Իսկ դուք ո՞ւր էք գնում, աղա՛,—պնդեց պանդոկապետը։

—Տրոեան։

—Ո՞րտեղից։

—Սպիտակ-Եկեղեցուց եմ գալիս... Է՜հ, ճանապարհն էլ...

—Ես էլ այնտեղացի եմ. բայց Տրնեան դու չես կարող գնալ... Ես քեզ ասում եմ, հաւատա՛ ինձ,—դուրս էր տալիս պանդոկապետը, սուրճը տալով և ակնապիշ Օգնեանովին նայելով, կարծես աշխատում լինէր նրան ճանաչել:

Օգնեանովն յօնքերը կիտեց, որ խորշի այդ ձանձրալի հայեացքներից: Պանդոկապետը մի կողմնակի հայեացք էլ ձգեց և ծիծաղեց քթի տակ:

—Պանդոկապե՛տ, դու ինձ քաղցր սուրճ ես տուել [32]),—խստութեամբ ասաց Օգնեանովը և բաժակը վայր դրեց:

—Ներե՛ր, ես կարծում էի, թէ դու շաքարով ես խմում: Ես քեզ համար ուրիշը կը պատրաստեմ...

—Հարկաւոր չէ՛:

—Չէ՛, խմի՛ր, խմի՛ր, ասում եմ քեզ, սուրճը շատ լաւն է:

—Ի՞նչ նորութիւններ կան:

—Արհաւիրք, սպանութիւններ, աւարառութիւններ իւրաքանչիւր օր... Անցորդներ չկան, Բալկանը փակուած է, ես վնասւում եմ... Այն ժամանակից, երբ գտան Եմեքսիզ-Փահլեվանի դիակը, —չէ՞ որ դու նրան ճանաչում ես,—Թուրքերն սկսել են զարհուրելի գազանութիւններ անել... Իբրև թէ որսում են խռովարարներին, այնինչ անմեղներին են մորթոտում... Ես քեզ ուղիղն եմ ասում, հաւատա՛ ինձ...

Օգնեանովը զարմացաւ պանդոկապետի համարձակութեան վրայ—այդպէս կարելի էր խօսել միայն բուլղարացու մօտ: Այդ պատճառով, իբր Թուրքի դերում, նա մի թթու դէմք ցոյց տուեց:

Զօրբաջի՛, դու չափազանց շատ ես դուրս տալիս. տես, որ քեզ էլ չհասնի:

—Ես գիտեմ ում մօտ եմ խօսում, աղա՛,—մտերմական ձևով ասաց պանդոկապետը:

Օգնեանովն աւելի մեծ զարմանքով նայեց նրան և խստութեամբ ընդհատեց պանդոկապետին.

—Գեա՛ւուր, դու կարծես հարբած ես:

—Կո՛մս, մի՛ բարկանար, որ ես էլ «Գէնովկվային» լաց եմ եղել,—պատասխանեց պանդոկապետն արդէն բուլղարերէն լեզուով, և բռնելով Օգնեանովի ձեռքը, բարևեց:

Օգնեանովը տեսաւ, որ իրեն ճանաչեցին: Նա սաստիկ տխրեց: Բացի դրանից, պանդոկապետի դէմքն ու լպիրշ շարժուածքները նրան զզուելի էին թւում: Բոյչօն մի հայեացքով չափեց նրան և հարցրեց:

—Ո՞րտեղից ես դու, ձերդ ողորմածութիւն...

—Սպիտակ-Եկեղեցուց, Ռաչկօ Պերդլէ,—ներկայացաւ պանդոկապետը և նորից մեկնեց ձեռքը, որն օդի մէջ կախուած մնաց:

Սակայն Ռաչկօն չվիրաւորուեց:

—Ինչո՞ւ ես վախենում ինձանից, կո՛մս... կամ դուցէ դու ամաչո՞ւմ ես իմ անունից: Այդ անունը ես հօրիցս եմ ժառանգել և պարծենում եմ դրանով... Անունն այստեղ գործ չունի: Անունը ոչինչ

է. եթէ մարդն ազնիւ է, ուրեմն նրա անունն էլ գեղեցիկ է... Հարցրու Սպիտակ-Եկեղեցում, ում ուզում ես. Պեպլէի մասին քեզ ամենքն էլ կասեն... Ես տուն եմ պահում և ունիմ երեք որդի—Աստուած քեզ էլ զաւակներ պարգևէ—և բոլորն էլ ինձ յարգում են... Իսկ մարդս ինչո՞վ է ապրում—պատուով և անունով...

—Ճշմարիտ է ասածդ, բայ Րաչկօ. խելօք ես խօսում դու...

—Ճշմարիտ եմ ասում. իսկ դու մի՛ նայիր, որ ես այսպէս եմ—ես խելացի մարդ եմ... Ինչքա՜ն մարդ եմ տեսել այստեղ... Հենց որ քեզ տեսայ, ասացի ինքս ինձ, տեսնենք կը ճանաչէ՞ ինձ կոմսը։

Օգնեանովը չէր կարող մտաբերել, որ երբ և իցէ տեսած լինէր այդ նշանաւոր մարդուն։

—Վաղո՞ւց է որ դու այս պանդոկը պահում ես։

—Մի տարի ու կէս է, միայն «Գենովէվայէն» Սպիտակ-Եկեղեցումն էի, դու կոմսի դերումն էիր։

—Բայց ուտելու մի բան կարո՞ղ ես տալ ինձ։

—Ինչ որ Աստուած տուել է, այն էլ կը տամ։ —Եւ Րաչկօն մի կեղտոտ փայտեայ չանախի մէջ լցրեց մի քիչ բակլայ՝ կարմիր պղպեղով, թթու կաղամբ և հաց։

—Ես էլ քեզ հետ կընկերանամ,—սիրալիր կերպով աւելացրեց Րաչկօն, նստելով սեղանի մօտ, Օգնեանովի հետ ճաշելու համար։

Օգնեանովն անխօս ուտում էր։ Այդ Րաչկօն իւր լիրբ վարմունքով և ինքնակոչ ընկերակցու-

թեամբ նրա վրայ վատ տպաւորութիւն էր գործել։

«—Ի՜նչ կոպիտ պանդոկապետ է, և որքա՜ն չիմար»,—մտածում էր նա։ Կարծես նրա միտքը հաստատելու համար՝ Րաչկօն երկու բաժակ լցրեց և ասաց.

—Արի՛ բաժակներս չրխկացնենք. Հարշ-մարշ, ողջ լինիք,—և նա կուլ տուեց իւր թթու գինու բաժակը։ Ես քեզ ախար մի անգամից ճանաչեցի։ Քանի անգամ ես այստեղ ընդունել եմ Լևսկուն և մենք բաժակներս խփել ենք միմեանց... Մենք բարեկամներ էինք... Ես էլ ազգային մարդ եմ. դու ինձ մի աչքով մի՛ նայիր...

Օգնեանովը նրա խօսքերի մէջ անհամապատասխանութիւն, կամ աւելի ճիշտն ասած, ստութիւն նկատեց, որովհետև Լևսկին երեք տարի առաջ էր վախճանուել։ Այս բանն աւելի սաստկացրեց նրա կասկածը։

—Դէ՜հ, խմի՛ր գինիդ։ Ի՞նչպէս, դու չե՞ս խըմում։ Տո՛ւր, ես կը խմեմ։—Րաչկօն կուլ տուեց և Օգնեանովի բաժակը և խմած քացախից զարհուրելի կերպով ծամածռեց դէմքը։ Ճաշը, ուրախացած Րաչկօի ցանկութեան հակառակ, շուտով վերջացաւ։

—Կա՛ց, ինչո՞ւ ես շտապում։ Մի՞թէ չես մնալ ինձ մօտ գիշերելու։ Ես քեզ մի կարճ ժամանակ կուշացնեմ... Ուզում եմ Կարնարի գնալ... դու ինձ սպասի՛ր։ Կա՛ց այստեղ այս գիշեր... կը խօսենք... Ես ինքս էլ ազգային մարդ եմ։

—Շնորհակալ եմ, բայ Րաչկօ. պատրաստի՛ր

իմ ձին, ես կը շարունակեմ ճանապարհս։

—Բայց ճանապարհը վատ է… Ճշմարիտ եմ ասում, դու ինձ լսիր… Գլուխս կը կտրեմ…

—Ինձ հարկաւոր չէ այդ,—սառնութեամբ պատասխանեց Օգնեանովը. յետոյ անհամբերութեամբ աւելացրեց.— Ձիս տուր ինձ։

Պանդոկապետը դուրս գնաց։

Օգնեանովն ուշադրութեամբ դիտեց սենեակը և մօտակայ տեղերը։ Նա ակամայ մտաբերեց Կակրինի պանդոկապետին, որը մատնել էր Լևսկուն։

Թրքական գիւղերում պանդոկապետները մեծ մասամբ բուլղարներ են. բայց Թուրքերի հետ բարեկամանալու կարիքն ու սովորութիւնը նրանց վտանգաւոր մարդիկ են դարձրել։ Իսկ այսպիսի շատախօսը, ինչպէս Ռաչկօն է, կարող էր ամենաանմեղ կերպով էլ գործը փչացնել։

—Ձին քեզ է սպասում. միայն Տրոյեանի ճանապարհը վատ է,—ներս մտնելով ասաց Ռաչկօն։

—Ո՞րքան պէտք է վճարեմ ինձ և ձիուս համար։

—Չէ՛, կոմս, ների՛ր, դու իմ հիւրն էիր։

—Ո՛չ, ասա՛, թէ որքան է հարկաւոր վճարել. իսկ հիւրասիրութեանդ և մանաւանդ գինուդ համար շատ շնորհակալ եմ քեզանից,—ժպտելով ասաց Օգնեանովը։

—Այո՛, գինին ինչն է… միայն ես քեզանից ոչինչ չեմ առնիլ, ո՛չ գինու, ո՛չ կերակուրի, ո՛չ էլ խոտի համար… Ես այդպիսի բարեկամներից եմ։

—Եթէ այդպէս է, շնորհակալ եմ քեզանից,

բայ Ռաչկօ,—ասաց Օգնեանովը շուրջը նայելով։—

—Ուրիշ մարդ կա՞յ այստեղ։

Միայն ես և որդիս ենք, կոմս. բայց որդուս ուղարկել եմ Սոփոտ-Եկեղեցի, նա այսօր երեկոյեան կը վերադառնայ։ Իսկ այժմ ես ուզում եմ գիւղ գնալ։ Մարդ չկայ, որ այստեղ թողնեմ։ Դէ՜հ, կա՛ց։

Օգնեանովը նայեց առաստաղին նեցուկ դրած սիւներից մէկին։ Յետոյ բռնելով պանդոկապետի ձեռքը, բարեկամաբար ասաց նրան.

—Համբերի՛ր մի քիչ, բայ Ռաչկօ. ես քեզ պէտք է կապեմ։—Եւ Օգնեանովը մի ձեռքով վեր առաւ պատից կախած սանձը, իսկ միւսով պանդոկապետին սեղմեց պատին։

Պանդոկապետը կատակի տեղ ընդունեց այդ բանը։

—Ուզում ես կապե՞լ ինձ։ Կապի՛ր,—ուրախ-ուրախ ասաց նա։

Օգնեանովը հանգարտ կերպով փաթաթեց թոկը սեան և պանդոկապետի շուրջը։ Ռաչկօն Օգնեանովի գործողութեան լրջութիւնը տեսնելով, սկզբում զարմացաւ և յետոյ բարկացաւ։

—Կատակ մի՛ անիր։ Մի՞թէ ես հայդուկ եմ, որ ինձ կապում ես։—Եւ Ռաչկօն ցնցուեց։

Օգնեանովն սպառնալի կերպով ասաց նրան.

—Եթէ ձայն հանես, փորդ կը թափեմ դանակով։

Պանդոկապետը վախեցած նայեց նրա զէնքին… Նա հասկացաւ, որ կոմսը կատակ չի անում և երեխայի նման հեզաբարոյ դարձաւ։

—Ես աւելի լաւ էի համարում քո լեզուն կապել, բայց որովհետև այդ անկարելի է, դրա համար էլ քեզ եմ կապում,—ժպտալով ասաց Օգնեանովը, նրան պինդ կապելով սեանը: Յետոյ հարցրեց.

—Ե՞րբ կը վերադառնայ քո մանուկը:

—Երեկոյեան...—Բաչկօի սիրտը դողում էր:

—Դէ՛հ, ուրեմն նա էլ քեզ կ՚արձակէ: Մնաս բարև, բայ Բաչկօ, ես գնում եմ Տրոյեան: Յիշիր կոմսին—բայց միայն մաքումդ...

Եւ քիչ փող դնելով պանդոկապետի մօտ, Օգնեանովը թռաւ ձիու վրայ և ճանապարհը շարունակեց:

Ն.

ԵՐԵԿՈՅԹՆ ԱԼՏԻՆՈՎՈՒՄ

Փոխանակ Սպիտակ-Եկեղեցի գնալու, Օգնեանովը դարձաւ դէպի Ալտինովօ գիւղը, որը գտնւում էր ձորակի արևմտեան անկիւնում: Թէև մինչև այստեղ ընդամէնն երկու ժամում կարելի էր հասնել, բայց ճանապարհը դժուար էր և ձին հոգնած, այնպէս որ միայն երեկոյեան նա գիւղ հասաւ՝ շրջապատուած գայլերի ոռնոցով:

Օգնեանովը մտաւ բուլղարական թաղը (այստեղ ազգաբնակութիւնը բաղկացած էր թուրքերից և բուլղարներից) և շուտով կանգ առաւ բայ Ցանկօի դռան մօտ:

Բայ Ցանկօն, որը ցեղով Կլիսուրցի էր, բայց

վաղուց արդէն բնակւում էր Ալտինովօում, մի պարզամիտ, ուրախ բնաւորութեան տէր, Բուլղարիան ւաստիկ սիրող գիւղական էր: Սրա մօտ յաճախ հիւր էին լինում «առաքեալները»: Ցանկօն ուրախ-ուրախ դիմաւորեց Օգնեանովին:

—Լա՛ւ արիր, որ ինձ մօտ եկար... Այսօր իսկ մեր տանը երեկոյթ կայ, աղջիկներ կը տեսնես, սիրտդ քիչ կը բացուի,—ժպտալով ասաց Ցանկօն և ներս տարաւ նրան սենեակը:

Օգնեանովն շտապով հաղորդեց նրան, որ իրեն որոնում են և ի՛նչ պատճառով:

—Լսել ենք, մենք էլ լսել ենք,—ասաց բայ Ցանկօն:—Դու կարծում ես, թէ այստեղ փոսի մէջ ապրելով, մենք չգիտե՞նք, թէ ինչ է կատարւում լոյս աշխարհում:

—Ես վտանգաւոր չե՞մ լինիլ ձեզ համար:

—Անհանգիստ մի՛ լինիր, ասում եմ քեզ. տե՛ս, այսօր երեկոյեան կարող ես դրօշակը կրելու համար մի աղջիկ ընտրել,—կատակով ասաց Ցանկօն. —ահա այս լուսամուտից դու բոլորին էլ լաւ կը տեսնես...

Օգնեանովն իրեն գտաւ մի փոքրիկ, մութ սենեակում. փոքրիկ լուսամուտից կարելի էր տեսնել այն ամենը, ինչ որ անում էին հարևան մեծ սենեակում, որտեղ այժմ հաւաքուել էին գիւղի ամենալաւ, աչքի ընկնող երիտասարդները և հարսնացուները, Ցանկօի դստեր—Դոնկայի օժիտը գործելու և կարելու համար: Կրակն ուրախ-ուրախ վառւում էր և լուսաւորում պատերը, որոնք զար-

զարդուած էին միմիայն Որլեան Ս. Յովհաննիսի պատկերներով և զարակների վրայ շարուած նկարներով լի կաւէ ամանեղէններով: Կարասիները նոյնն էին, ինչ որ բոլոր աւելի հարուստ տներում—նըստարաններ, լուացարան, ահագին մեծութեան պահարան՝ Դոնկայի օժիտով, և մի սեղան: Այծի բըրդից պատրաստուած գորգերի և խսիրների վրայ նստած էին հիւրերը: Բացի վառարանի կրակից, սենեակը լուսաւորում էին զարձեալ երկու նաւթի ճրագներ, որոնք այդ իրիկուայ զարդն էին կազմում:

Օգնեանովը վաղուց արդէն ներկայ չէր եղած մի այդպիսի հետաքրքիր երեկոյթի: Մութ սենեակում թագնուած, նա ուշադրութեամբ դիտում էր գիւղական կեանքի պարզ տեսարանները:

Դուռը բացուեց և սենեակը մտաւ Ցանկոյի կինը, որը մի շատախօս և բամբասասէր պառաւ էր: Նա նստեց Օգնեանովի մօտ և սկսեց ցոյց տալ նրան ամենագեղեցիկ աղջիկներին, միևնոյն ժամանակ կարևոր բացատրութիւններ տալով:

—Տեսնո՞ւմ ես այն կարմրաթուշ, հաստ աղջկան. դա Ստայկա Զոնինան է... Տե՛ս, ինչ խեղճխեղճ է նայում նրան Իվան Բորիմեչկան: Նա, երբ որ ցանկանում է այդ աղջկան զուարճացնել, սկըսում է իսկական հովուի շան նման հաչել... Ստայկան շատ աշխատող, ճարպիկ և մաքուր աղջիկ է: Միայն օրէցօր հաստանում է խեղճը. բայց երբ մարդու գնայ, կը նիհարի... Իսկ ձերոնք, ընդհակառակը, պսակուելուց յետոյ են հաստանում... Նրանից դէպի ձախ—Ցվէտա Պրոդանովան է. նա սի-

րահարուած է ա՛յ, այն ցից բեխեր ունեցող երիտասարդի վրայ: Տե՛ս, ինչ անհանգիստն է. շարունակ աչքերով սլաքներ է արձակում չորս կողմը: Բայց ընդհանրապէս բարի աղջիկ է. իսկ նրա մօտ նստած է տէրտէրի աղջիկը—Րայկան: Ես դրանց քան ֆիլիպպոպոլցի թուրք աղջիկների հետ չէի փոխիլ. նայի՛ր, ինչ սպիտակ պարանոցներ ունին, կարծես կաքաւի լինին: Մեր Ցանկօն մի անգամ ասաց, որ եթէ թոյլ տային դրանցից մէկի կզակը կծել, նա իւր խաղողի այգին, որը գտնւում է Պամիդեւում, Մալ-Թէփէի վրայ, ուրախութեամբ կը տայ. իսկ ես այդ անառակին նրա խօսքերի համար անթրոցով մի լաւ խփեցի: Իսկ տեսնո՞ւմ ես դու նրան, որ նստած է հաստլիկ Ստայկայի աջ կողմը: Դա Կարէ-Վէլիւլի, մեր հարուստի դուստրն է: Հինգ ամենալաւ երիտասարդներ ուզեցին նրան, բայց հայրը չտուեց...

Օգնեանովը մի բան լսում, մի բան բաց էր թողնում ականջի մօտով. նա ամբողջովին յափշտակուած էր տեսարանով և ոչ նրա խօսակցութեամբ: Աւելի համարձակ աղջիկները կատակներ էին անում երիտասարդների հետ, խորամանկութեամբ ծաղրում էին նրանց և ուրախ քրքջում: Տղամարդիկ էլ, նոյնպէս, բարձրաձայն ծիծաղում էին՝ կատակներ անելով և նետեր արձակելով դէպի շատախօս կանանց բաժինը:

—Դէ՞հ, հերիք ծիծաղեցիք, այժմ մի բան երգեցէք,—գոչեց տանտիկինը, դուրս գալով Բոյչօյի մօտից, որ գնայ կրակի վրայից յետ առնի պտուկ-

ներով կերակուրները:—Բաղկօ, Ստանկէ, երգեցէք, ամաչացրէք մեր երիտասարդներին. նրանք անատամ սանր էլ չարժեն...

Բաղան և Ստանկան նոր հրաւէրի չսպասեցին և սկսեցին երգել, իսկ նրանցից յետոյ բոլոր մնացածները: Երգողները երկու մասի բաժանուեցան. առաջին խումբը մի տուն երգելով, լռում էր, այն ժամանակ երկրորդ խումբը կրկնում էր միևնոյն տունը: Առաջին խումբը, որտեղ գտնւում էին առաջնակարգ երգիչները, տենոր էր երգում, երկրորդը—աւելի ցած նոթայով:

«Դոբրա լէ[33]), երկու ջահէլներ, Դոբրա լէ, սիրահարուեցան,
«Դոբրա լէ, սիրահարուեցան, Դաբրա լէ, փոքր հասակում.
«Դոբրա լէ, և անհ միմեանց, Դոբրա լէ, երեկ իրիկուան,
«Դոբրա լէ, նրանք հանդիպան, Դոբրա լէ, փողոցի միջում.
«Դոբրա լէ, այնտեղ փողոցի, Դոբրա լէ, մի անկիւնում,
«Դոբրա լէ, նստեցին նրանք, Դոբրա լէ, խօսելու համար.
«Դոբրա լէ, լուսնեակի արգէն, Դոբրա լէ, պողն է երեւում,
«Դոբրա լէ, աստղեր անհամար, Դոբրա լէ, լի են երկնքում.
«Դոբրա լէ, իսկ ջահէլները, Դոբրա լէ, դեռ չեն վերկենում,

«Դոբրա լէ, դեռ չեն վերկենում, Դոբրա լէ, խօսում են խօսում...
«Դոբրա լէ, սառցով ծածկուեց, Դոբրա լէ, ջուրը տակառում,
«Դոբրա լէ, ջրի լծակը, Դոբրա լէ, չինարի ծաղկեց,
«Դոբրա լէ, իսկ ջահէլները, Դոբրա լէ, նստած են խօսում...»

Երբ աղջիկները վերջացրին երգը, գովասանքներ լսուեցան երիտասարդների կողմից. Նրանցից իւրաքանչիւրին սիրելի էր մտածել, թէ այդ երգն իրեն էր վերաբերում: Իվան Բորիմեչկան հայեացքներ էր ձգում Ստայկա Զոնինայի վրայ, կարծես ուզում էր ուտել նրան, իսկ նա, իբրև թէ ոչինչ չէր նկատում և կատակներ էր անում:

—Այս երգը նշանադրութեան ժամանակ է երգւում,—որոտաց Բորիմեչկայի հնչիւն ձայնը:

Բոլոր երիտասարդները ծիծաղեցան, նմանուելով աղջիկներին, որոնք խորամանկութեամբ նայում էին Բորիմեչկային:

Նա իւր հասակով սարի նման էր. սակայն, չնայած այս հասակին և հերքուլէսեան ուժին, դէմքը լղար էր, ծաղկից փչացած և բաւական յիմար: Նա չափազանց սիրում էր երգեցողութիւն և իւր հասակի համեմատ էլ ձայն ունէր:

Բորիմեչկան բարկացաւ: Նա աննկատելի կերպով մի կողմ քաշուեց և քիչ յետոյ յանկարծ հովուի շան նման սկսեց հաչել ներկայ եղողների գլխավերեւ. փախեցած աղջիկները յուսահատ աղա-

ղակներ բարձրացրին, յետոյ ծիծաղեցին։ Վրէժը լուծելու համար, սկսեցին ծաղրել նրան։ Մէկը երգեց․

«Իվանէ, սիրուն աղաւնի,
«Իվանէ, բարալիկ սօսի։

Ծիծաղ։
Միւսը վրայ բերեց․

«Իվանէ, ո՜վ նիհար աղջիկ,
«Իվանէ, երկար անթրօցիկ»։

Նորից քրքջոց, ծիծաղ։ Բորիմեչկան զայրոյթով լցուեց։ Նա յիմար զարմանքով նայեց հաստաթուշ Ստայկային, որը վերջին քաղցր խօսքերն էր երգել իւր երկրպագուի հասցէին, բացեց բերանը, որ նման էր գաղանի երախի և սկսեց բառաչել։

«Տատը Պէյկին ասում էր,—
«Պէյկա՛, դուստր իմ, Պէյկա՛,
«Այսպէս ասում են մարդիկ,
«Մօտիկ մարդիկ, դրացիք,
«Թէ դու, Պէյկա՛, գիրցել ես…
«—Տատիկ, սիրուն իմ տատիկ,
«Թող պատարկ դուրս տան մարդիկ,
«Մօտիկ մարդիկ, դրացիք․
«Չէ՞, ես հաստ ու կարմիր եմ,
«Այսքան գէր ու կլորիկ,
«Միայն իմ հօր լաւ հացից,
«Սպիտակ, ցորենի հացից,
«Որը մինչև եփում եմ,

«Մի մեծ կթոց լաւ խաղող
«Լիք-լիք ես միշտ ուտում եմ,
«Մի չափ գինի խմում եմ»։

Այս կոպիտ կատակից Ստայկան բոլորովին փոխուեց․ Նրա այտերն աւելի ես կարմրեցին, բայց աչքերը ցած իջան և կուրծքը բարձրացաւ։ Ընկերուհիների չարամիտ քրքիջը այրում էր նրա սիրտը։ Ծաղրողներից միքանիսը կեղծ պարզամտութեամբ հարցրին․

—Այդ ի՞նչպէս. մի՞թէ կարելի է միևնոյն ժամանակ համ խաղող ուտել, համ գինի խմել։ Այդ երգը սուտ է խօսում։

—Այո՛, երևում է—կամ երգն է սուտ խօսում, կամ աղջիկը։

Այս խորամանկ կրիտիկան աւելի զայրացրեց Ստայկային։ Նա մի ոխակալ հայեացք ձգեց յաղթանակը տանող Բորիմեչկայի վրայ և բարկութիւնից դողդողացող ձայնով սկսեց երգել․

«Պէյկէ, պարտիզի ծաղկիկ,
«Թող այդ երկար քո հիւսեր,
«Եւ իմ վաղուայ նշանիկ,
«Տայ Աստուած, որ չկորչէր․
«Արի՛, Պէյկէ, պսակուենք…
«—Ինկօ, դու սև գործաւոր,
«Եթէ որ սիրէր Պէյկան
«Խողարածի, քեզ նման,—
«Խողարածի տիրունի
«Եւ տիրական սարուկի,—

«Պատանիներ կը կանչէր,
«Դուդը կը շրջափակէր,
«Քեզի, Իոնկօ, կը բերէր,
«Շէմքի տեղ քեզ կը դնէր.
«Եւ երբ հորթեր դուրս անէր
«Ու ոտները կեղտոտէր,
«Քեզ կը քսէր, կը մաքրէր»:

Սոսկալի վրէժխնդրութիւն արիւնալից անարգանքի դէմ: Ստայկան հպարտութեամբ իւր շուրջն էր նայում: Նրա դանակը դիպել էր առողջ մսի: Իվան Բորիմէչկան, կայծակահար, աչքերը լայն բացած, անշարժ կանգնել էր: Յանկարծ թրնդաց մի սոսկալի, անզուսպ ծիծաղ: Ամբողջ խումբը քրքջում էր՝ հետաքրքիր հայեացքներ ուղղելով դէպի խեղճ Իվանը: Ամօթից և վիրաւորուած ինքնասիրութեան անտանելի ցաւից՝ արտասուքներ երեւացին նրա աչքերում: Այդ բանն աւելի ևս մեծացրեց երիտասարդների ծիծաղը: Տանտիկինը բացագանչեց.

—Ինչո՞ւ էք այդպէս ծաղրում: Մի՞թէ լաւ է, որ աղջիկներն այդպէս վարուեն երիտասարդների հետ, փոխանակ խօսելու և աղաւնիների նման քաղցր վարուելու:

—Այո, այո,—նկատեց մի ծաղրասէր,—ինչպէս աղաւնի, միայն երկու կողմից կուց ունի:

Դարձեալ քրքիջ բարձրացրին ուրախ աղջիկները:

—Առհասարակ միմեանց սիրողները միշտ ծաղրում են իրար և զուարճանում,—հաշտեցուցիչ եղանակով ասաց Ցանկօն:

Իվան Բորիմէչկան բարկացած դուրս գնաց, կարծես Ցանկօի նկատողութեան անարդարութիւնը ցոյց տալու համար:

—Իսկ որոնք սիրում են միմեանց, նրանք յարմար ընկերներ են,—ասաց Նեդա Լեագովիչինան:

—Նեդօ, գիտե՞ս, Աստուած անարգուածներին էլ է օգնում,—ձայն տուեց Կոնօ Հորանը—Բորիմէչկայի եղբայրը:

—Տղերք, լաւ կանէք, որ մի որևէ հին հայդուկի երգ երգէք. թող սրտները բացուի,—հրաւիրեց Ցանկօն:

Երիտասարդներն սկսեցին միաբերան երգել.

«Խղճալի Ստոեան, ա՜խ, խղճալի,
«Երկու ճամփում էլ նրան սպասեցին,
«Երրորդի վրայ խեղճին բռնեցին,
«Պինդ-պինդ թոկերով նրան փաթաթեցին,
«Եւ տխտանական ձեռքերն կապեցին:

«Ու բերին Ստոեանին
«Տէր-Երինի առաջին:

«Տէրտէրն ունէր երկու աղջիկ
«Եւ մի հատ էլ Ռուժա-հարսիկ:
«Ռուժան պարտիզի ճաղերի մօտին
«Հանդարտ կանգնած էր, հարում խնոցին.
«Իսկ աղջիկները աւելն ձեռքերին
«Այսպէս խօսքերով դարձան Ստոեանին.—
«—Աւա՜ղ, խղճալի պարոն Ստոեան,

«Քեզ պիտի կախեն շատ վաղ-առաւօտեան
«Լայն բաղի միջին Թագաւորական.
«Իւր զաւակներով և մեր Թագուհին
«Պէտք է նայէ քո այդ նախատինքին»:

«Ստոեանն յուզուած՝
«Ռուժային ասաց.

«—Ռուժօ, տէրտէրի դու համեստ հարսիկ,
«Կեանքը ոչ մի գին չունի աչքերիս,
«Սիրելի չէ ինձ այս լոյս-աշխարհիկ,
«Քաջը չի զղջում և ոչ էլ լալիս:
«Միայն դու, Ռուժիկ, աղաչում եմ քեզ,
«Վերցուր և մաքուր լուա իմ շապիկ,
«Երկար մազերս սանրի՛ր դու կոկիկ.
«Թանկ է ինձ համար այն րոպէն, Ռուժա,
«Որ կախաղանից երբ մարդուն կախ տան,
«Թող նրա շապիկը սպիտակին տայ,
«Երկար մազերը քամուց փրփռան...»

Օգնեանովը լարուած ուշադրութեամբ լսեց այդ երգի վերջը:

—Այդ Ստոեանը,—մտածեց նա,—առասպելական բուլղար հայդուկի տիպ է, որը մթին, խաղաղ հայեացք ունի մահուան վրայ: Ո՛չ մի խօսք ցաւակցութեան, զղջման յուսոյ... Նա ուզում է միայն մեռնելիս գեղեցիկ երևալ... Եթէ որ այդ հերոսական ոգին բնակուէ՞ր ներկայ բուլղարների մէջ... Օ՜, այն ժամանակ ես հանդիստ կը լինէի կռուի վախճանի վերաբերմամբ... Այդպիսի կռիւ եմ երազում ես և այդպիսի ոյժեր որոնում... Կարողանալ մեռնել—դա յաջողութեան գրաւականն է:

Այդ իսկ միջոցին լսուեց սրնգի ձայն: Սկզբում մեղմ և մելամաղձոտ նուագը հետզհետէ զօրեղանում, բարձրանում էր. նուագողի աչքերը փայլում էին, դէմքը այրւում ոգևորութիւնից, խտակ ձայները հնչում էին և լցնում գիշերը լեռնային հրաշալի մեղեդիով: Այդ հնչիւնները լսողների հոգին սլացնում էին դէպի բալկանների գագաթները և ժայռերը, նրանք յիշեցնում էին մերթ ստուերախիտ ժայռերը, որոնց տակ հանգչում են հովիւներն իրենց հօտերով, մերթ լեռնային հոտաւէտ շուշանները, ժայռերի արձագանքը և սիրային հառաչի լալող ձայնը հովտում... Սրինգը—Բալկանեան լեռների և հովիտների տաւիղն է...

Բոլորը նստել և զմայլած լսում էին՝ զուարճանալով այս երաժշտական պոէզիայի հարազատ և հասկանալի հնչիւններով: Լսում էր և տանտիկինը, ուղիղ կանգնած տաք վառարանի առաջ և ձեռքերը կողերին յենած: Սակայն կատարեալ հրճուանքի մէջ էր Օգնեանովը, որը քիչ էր մնում ծափահարէր:

Աղմկալի խօսակցութիւններն ու ծիծաղը վերանորոգուեցան: Օգնեանովը լսեց իւր անունը և սկսեց ականջ դնել: Պեօտր Օվչարովը, Րայչէնը, Սպիրիդոնչէն, Իվան Ծուէնը և ուրիշ միքանիսը խօսում էին ապագայ ապստամբութեան մասին:

—Ես արդէն բոլորովին պատրաստ եմ հարսանիքի համար, միայն սպասում եմ ատրճանակի—Ֆիլիպպոպոլից: Հարիւր երեսուն գրօշ եմ ուղարկել դրա համար—երեք ոչխար ծախեցի,—ասաց

Պետր Օվչարովը—տեղական յեղափոխական մաս-նաժողովի նախագահը։

—Մենք միայն չգիտենք, թէ երբ պէտք է դրօշակը բարձրանայ։ Մի քանիսն ասում են,—Աւետ-մանը կարինոտենք դանակներս, ուրիշները—ս. Գէորգին, խսկ Բոժիչ հօրեղբայրը յետաձգում է մինչև մայիսի սկզբները...,—ասաց Սպիրիդոնչէն, որը մի գեղեցիկ վայելչակազմ երիտասարդ էր։

—Դու նայիր, երբ կկուն կըսկսի կուկուալ և լեռները—աղմկել, այն ժամանակ... բայց ես այժմ էլ պատրաստ եմ—ո՜վ գիտէ, ե՞րբ ժամը կը խփի։

—Ա՜խ, մեր Հին-Լեառը... շա՜տ քաջեր է տե-սել նա և դեռ կը տեսնի,—ասաց Իվան Օստենը։

—Պետրէ, դու վարժապետի մասին ես ասում. նա երկու հոգի է սպանել, գիտե՞ս։ Կեցցէ՜ քաջը։

—Երբ նա մեզ մօտ գայ, ես այն ձեռքը կը պաչեմ, որն այսպիսի լաւ բան է արել,—նկատեց Բայչինը։

—Ինքը մեզ նախազգուշացրեց, բայց մենք էլ կաշխատենք նրա նման գործել։ Մենք էլ մի բան հաս-կանում ենք այդ արհեստից,—ասաց Իվան Օստէնը։

Իվան Օստէնը քաջ սրտի տէր էր և հազուա-գիւտ հրացանաձիգ։ Նրան էին վերագրում և ան-ցեալ տարուայ Դէլի-Ահմէդի սպանութիւնը։ Այդ պատճառով, տեղական թուրքերն, աշխատում էին սպանել նրան, սակայն մինչև այժմ նրանց փոր-ձերն անյաջող էին դուրս գալիս։

Երեկոյթին խմեցին նաև Օգնեանովի կենացը։

—Տայ Աստուած, որ մենք շուտով նրան ողջ-

առողջ տեսնենք... Նրանից օրինակ առէք, տղերք,—ասաց Ցանկօն, իւր գինու բաժակը դարձնելով։

—Ինչի վրայ ուզում էք, գրազ եմ գալիս,—ձայն տուեց Ցանկօի անհամբեր կինը,—որ եթէ ոչ այսօր, վաղը նա բազէի նման թռչելով մեզ մօտ կը հասնի։

—Ի՞նչ ես ասում, տանտիկին. խսկ ես հենց վաղը Կարլովո եմ գնում,—վշտացած բացագանչեց Բայչինը։—Եթէ գայ, չթողնէք նրան մինչև ծնունդը։ Մի լաւ ուրախութիւն կանենք այն ժամանակ։

—Այդ ի՞նչ աղմուկ է դրսում,—բացագանչեց Ցանկօն և դեռ գինին չվերջացած վեր կացաւ։

Ճիշտ որ դրսից տղամարդկանց և կանանց ձայներ էին լսւում։ Հիւրերը նոյնպէս վեր կացան։ Այդ միջոցին չափազանց վրդովուած կերպով ներս մտաւ տանտիկինը և յայտնեց.

—Գործը վերջացած է. Աստուա՜ծ օրհնէ նրանց։

—Ի՞նչ գործ, ի՞նչ։

—Բորիմեչկան Ստայկային փախցրեց։

Այդ նորութիւնից բոլորը սարսափահար եղան և խիստ զարմացան։

—Բռնեց նրան ուտաղակը և գարնանային գա-ռան նման ուսերին դրած՝ իրենց տուն տարաւ։

Լսուեցան ուրախ բացագանչութիւններ։

—Բայց ի՞նչպէս արաւ նա այդ բանը։ Ա՜, ոչ թէ ինչու նա շուտ գնաց, ինչպէս նրա յետևից էլ նրա եղբայր Հորանը։

—Դարան էր մտել և սպասում էր նրան դռան մօտ,—շարունակեց Ցանկովիցան.—յանկարծ բռնել

ու փախցրել է Ստայկային։ Անիծուած Բորիմեչկա, ո՜ւմ մօտից էր անցնում։

—Ճիշտ էինք ասում, թէ նրանք միմեանց յարմար են,—նկատեց մէկը։

—Ստայկան—սերբիական գեր խոզ է, իսկ Բորիմեչկան—ունգարական ձի,—ծիծաղեց մի ուրիշը։

—Թող ողջ և առողջ լինին. վաղը ռուեան գինի կը խմենք,—ասաց Ցանկօն։

—Ուրեմն ինձ էլ բաժին կը հասնի, ես իրաւունք ունիմ պահանջելու,—բղաւում էր նրա կինը.—ես եմ նրանց նշանել։

Կարճ ժամանակից յետոյ զուարճացած հիւրերը ցրուեցան։

ԼԱ.

ԹՐՔԱԿԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹԻՒՆ

Ցանկօն մտաւ մութ սենեակը, Օգնեանովի մօտ։

—Ի՞նչ է, Բոյչօ, դիւր եկաւ քեզ մեր երեկոյթը։

—Սքանչելի, հրաշալի է, բայ Ցանկօ։

—Իսկ երգե՞րը։

—Ես հիացմամբ լսում էի…

Ներս մտաւ Ցանկովիցան, ճրագը ձեռքին։

—Դուռը ծեծում են,—ասաց նա։

—Երևի դարձեալ Ստայկայի ծնողներն են. կարելի է մեզանից են աղջիկը պահանջում… Բայց մեր ի՞նչ գործն է։

Սակայն ներս մտաւ Դոնկան և ասաց, որ ոստիկաններն են դուռը ծեծում. նրանց Դէչկօ պապը—գիւղի տանուտէրն է բերել։

—Սատանան տանի նրանց՝ Դէչկօ պապի հետ միասին։ Ես ո՞րտեղ պահեմ դրանց, այդ խոզերին։ Այդ քեզ համար չեն գալիս,—հանգստացրեց նա Օգնեանովին.—այնուամենայնիւ թաքնուիր… Ա՛յ կին, վարժապետին մի տեղ ցոյց տուր…

Եւ Ցանկօն դուրս գնաց։ Կարճ ժամանակից յետոյ նա վերադարձաւ՝ իւր հետ բերելով երկու թուրք, որոնք փաթաթուած էին եափնչիների մէջ և ձիւնով ծածկուած։ Նրանք բարկացան։

—Ինչո՞ւ դու մեզ մի ժամ փողոցում թողիր, անհաւատ,—փնթփնթաց միականի ոստիկանը, իւր եափնջուց ձիւնը թափ տալով։

—Մեզ սառեցրեց՝ մինչև դուռը բաց արեց,—գոչեց միւսը, որն առաջինից փոքր էր և անբեխ։

Ցանկօն քթի տակ ներողութիւն խնդրեց։

—Ի՞նչ ես փնթփնթում։ Գնա՛, մի ճուտ մորթիր և իւղալի ձուածեղ պատրաստիր։

Ցանկօն ուզում էր մի ինչ որ բան ասել։ Միականի ոստիկանը գոռաց.

—Մի ուշանար, գեավուր. վազիր շուտով և տանտիկնոջն ասա՛, որ ընթրիք պատրաստէ։ Կամ գուցէ դու մտադիր ես մեզ քո շորներով և կակալի կեղևներո՞վ հիւրասիրել,—ասաց նա, արհամարհական հայեացք ձգելով խնճոյքի դեռ չհաւաքուած մնացորդների վրայ։

Ցանկօն ուղղուեց դէպի դուռը նրանց հրամանը կատարելու։ Անբեխը գոչեց նրա յետևից.

—Կա՛ց. ո՞ւր ուղարկեցիր աղջիկներին:

—Նրանք գնացին իրենց տները, արդէն ուշ էր,—պատասխանեց Ցանկօն, որից գինու ազդեցութիւնը բոլորովին անցել էր:

—Գնա՛, նրանց նորից կանչիր, թող մեզ հետ ընթրեն և մեզ մի-մի բաժակ գինի տան... Ինչո՞ւ թողիր, որ գնան:

Ցանկօն վախեցած նայեց:

—Ո՞ւր է քո աղջիկը:

—Արդէն պառկել է քնելու, աղա՛:

—Զարթեցրո՛ւ նրան, թո՛ղ մեզ ծառայէ,—ասաց միականին, կրակի մօտ իւր թաց ոտնամանները չորացնելով:

—Մի՛ վախեցնէք իմ դստերը, աղա՛,—աղերսական ձայնով ասաց Ցանկօն:

Ներս մտաւ տանուտէրը և խոնարհութեամբ կանգնեց դռան մօտ:

—Անասուն, և դու մեզ քսան տուն ման ածեցիր, որ մենք աղքատի նման դռները ծեծէինք. զօրով մեզ այստեղ բերիր: Ո՞ւր կորան ձեր...

Նա հայհոյական անուն տուեց աղջիկներին:

Բուլղարները կուլ տուին անպատւութիւնը: Նրանք սովորած էին այդ բանին: Ստրկութեան երկար դարերը մի առած էին ստեղծել՝ «խոնարհուած գլուխը սուրն էլ չի կտրիլ»: Ցանկօն աղաչում էր Աստծուն, որ նրանք իւր դստերը չկանչեն:

—Չորբաջի,—հարցրեց միականի ոստիկանը,—դուք ապստամբութի՞ւն էք պատրաստում:

Ցանկօն համարձակ կերպով ուրացաւ:

—Բայց ի՞նչ է անում այստեղ այս դանակը,—ասաց անբեխը, Պեօտր Օվչարովի դանակը վերցնելով, որը գորգի վրայ էր թողել:

—Ա՛, չորբաջի՛, ուրեմն դուք ապստամբութի՞ւն էք պատրաստում, հա՞,—չար ժպիտը դէմքին հարցրեց միականին:

—Չէ՛, աղա՛, մենք սուլթանի խաղաղ հպատակներ ենք,—պատասխանեց Ցանկօն, աշխատելով հանդիստ երևալ.—իսկ այս դանակը երևի հիւրերից մէկը մոռացել է:

—Ո՞ւմն է դա:

—Չգիտեմ, աղա՛:

Ոստիկանները նայեցին դանակի վրայի ինչ որ դեղին նշաններին: Երևում էր, որ դրանք բառեր են:

—Այս ի՞նչ խօսքեր են,—հարցրին նրանք Ցանկօյին:

Ցանկօն ուշադրութեամբ նայեց. դանակի բութ կողմի վրայ մետաղաթելով գրուած էր՝ «ազատութիւն կամ մահ», իսկ մի ուրիշ տեղում նշանակուած էր դանակի տիրոջ անունը:

—Սրանք խաղողի գամեր են,—խաբեց Ցանկօն:

Միականին ցեխոտ կօշիկով խփեց նրա դէմքին:

—Անհաւատ, դու տեսնում ես, որ ես մի աչք ունիմ, ուրեմն կարծում ես թէ կո՞յր եմ:

Ցանկօի պատասխանը նրանց մէջ կասկած ծնեցրեց:

—Գրագի՛ր, այստեղ արի:

Գրագիրը ներս մտաւ մի կարկանդակ ձեռքին, որը նա եփել էր Ցանկովիցայի մօտ: Ոստիկանների ձեռքում դանակը տեսնելով, նա երկիւղից դողաց:

—Կարդա՛ այս:

Գրագիրը կարդաց և շփոթուեց:

—Լաւ չեմ կարող որոշել, աղա՛:

Անբեխը վեր առաւ մորակը և խփեց: Խարաղանը շվվաց և երկու անգամ փաթաթուեց գրագրի վզովը: Նրա այտի վրայ արեան մի շաւիղ երևաց:

—Անիծուա՜ծ ժողովուրդ:

Գրագիրն անխօս սրբեց արիւնը:

— Կարդա՛, թէ չէ դանակը կոկորդդ կը խրեմ, —գոչեց ոստիկանը: Շփոթուած գրագիրը տեսաւ, որ չի կարող ազատուել: Ստիպուած էր հպատակուել:

—Պետր Օվչարով,—վհատմամբ կակազելով կարդաց նա:

—Դու ճանաչո՞ւմ ես նրան:

—Նա մեր գիւղիցն էր:

—Նրան Զօրան Պետրէ չե՞ն կանչում,—հարցրեց միականին. երևում էր, որ բուլղարերէն քիչ հասկանում է:

—Այդպէս է, աղա՛,—և գրագիրը նրան տուեց դանակը, մտքում գոհութիւն տալով ս. Երրորդութեանը, որ բաց թողեց միւս սոսկալի բառերը: Բայց ուրախանալը դեռ շուտ էր:

—Նայի՛ր միւս կողմն էլ,—ասաց ոստիկանը:

Գրագիրը վախեցած նորից թեքուեց դէպի դանակը. նա տատանւում էր: Այդ միջոցին նա իւր աջ աչքով նկատեց, որ անբեխը պատրաստւում է մի նոր հարուած տալ մորակով:

—«Ազատութիւն կամ մահ» է գրուած, աղա՛:

Միականին վեր թռաւ:

—Ազատութիւն է՞լ է գրուած,—չարագուշակ կերպով ժպտաց նա.—ո՞վ է շինել այս դանակը: Ո՞րտեղ է Զօրան Պետրէն, հա՞:

—Ո՞րտեղ պէտք է լինի, իրենց տանն է:

—Գնա՛, կանչի՛ր նրան...

Գրագիրը շարժուեց տեղից:

—Կա՛ց, ես էլ եմ գալիս քեզ հետ, սարսա՛խ:

Անբեխը եափինչին առաւ և նրա հետ դուրս գնաց:

—Այդպէս, հա՞, չօբանն էլ հայդուկների ցեղիցն է:

Այդ ժամանակ Յանկօն վազեց իւր կնոջ մօտ, որն անէծքներ թափելով, ընթրիք էր պատրաստում:

—Դոնկէ՛, գնա՛, զաւա՛կս, հօրեղբօրդ մօտ գիշերելու. ցանկապատով անցկացիր,—ասաց Յանկօն իւր դստերը, որը բոլորովին գունատուած երևաց դռան մէջ:

—Ո՞րտեղից դարձեալ քաշ տուեց նրանց Դէյկօն: Անցեալ շաբթու էլ նա մեզ մօտ դարձեալ երկու հոգի բերեց:

—Ի՞նչ անէր մարդը,—ասաց Յանկօն.—ամեն տեղ տարել է, չէ, մեր տունն են ուզելիս եղել, երդի ձայն են լսել. հինգ անգամ մորակել են խեղճի մէջքին:

Յանկօն նորից վերադարձաւ միականու մօտ:

—Չօրբաջի՛, ո՞ւր կորար դու. արագ և ուտելու բան բեր այստեղ:

—Չկայ չօբանը,—բարկութեամբ յայտնեց անբեխը, գրագրի հետ ներս մտնելով:

— Ամբողջ գիւղը պէտք է տակնուվրայ անել և գտնել այդ խռովարարին,— ասաց միականին, արաղը կուլ տալով։

— Առաջ նրա հօրը չփորձե՞նք,— կամաց հարցրեց անբեխը և յետոյ մի բան շշնջաց։ Միականին հաւանութիւն տուեց գլխով։

— Տանուտէ՛ր, գնա՛, ծերունուն բե՛ր, մենք նրան կը հարցնենք. այս էլ վե՛ր առ,— ասաց անբեխը և տուեց նրան արաղի դատարկուած շիշը։

— Գինետունն այժմ փակ է, աղա՛։

Պատասխանի փոխարէն միականին կօշիկով խփեց նրա երեսին։ Իւր ընկերոջից բնութեամբ հեզ լինելով, նա գազան էր դառնում միայն արաղ խմելուց յետոյ։

Քառորդ ժամ յետոյ եկաւ Ստոյչօ պապը։ Նա յիսունամեայ մի մարդ էր, աշխոյժ, ազդու դէմքով, որի վրայ կարելի էր կարդալ զօրեղ կամք և յամառութիւն։

— Ստոյչօ՛, ասա՛, ո՞րտեղ է որդիդ, չէ՞ որ դու գիտես նրա տեղը. տե՛ս, թէ չէ կուժը քո գլխին կը կոտրուի։

Այս ասելով միականին ագահութեամբ արաղի շշի բուկը բերանը դրեց։ Նրա միակ աչքը պէծին տուեց։ Ապա շիշը իւր ընկերոջը տուեց։

— Չգիտեմ որտեղ է, աղա՛,— պատասխանեց ծերունին։

— Դու գիտես, գեաւո՛ւր, գիտե՛ս,— չարամտութեամբ ասաց ոստիկանը։

Ծերունին նորից ասաց, որ չգիտէ։

— Դու մեզ կասե՞ս։

— Բոլոր ատամներդ կը փշրենք, կաշիդ զոլ-զոլ կը հանենք,— գոռաց անբեխը։

— Ի՛նչ ուզում էք, արէ՛ք. մի հոգի պէտք է առնէք, ուրիշ ոչի՛նչ,— հաստատ կերպով պատասխանեց ծերունին։

— Գնա՛ և մի քիչ մտածի՛ր... յետոյ կը զղջաս...,— կեղծ քաղցրութեամբ հրամայեց նրան միականին։ Նա ցանկանում էր Ստոյկա պապից փրկանք ստանալ, որի մասին ակնարկել էր նրան գրագիրը։

Սակայն Ստոյկա պապը տեղից չէր շարժւում։

Ոստիկաններն այդպիսի յանդգնութիւնից զարմացած, միմեանց երես նայեցին և միաժամանակ գազանային հայեացք ձգեցին ծերունու վրայ։

— Դու լսեցի՞ր, ծերո՛ւկ,— գոչեց միականին։

— Ես ոչինչ չունիմ մտածելու. թոյլ տուէք, որ տուն գնամ,— յօնքերը կիտած ասաց նա։

Ոստիկանները կատաղեցին։

— Գրագի՛ր, գետին գլորի՛ր այդ ծերունուն։— Եւ միականին մտրակն առաւ։

Գրագիրը և Ցանկօն սկսեցին աղաչել որ խնայէ ծերունուն։

Պատասխանի փոխարէն, միականին ծերունուն ոտքով հրեց։ Նա փռուեց գետին։

Սաստիկ հարուածները տեղացին։ Ստոյչօ պապըն առաջ գոռում, տնքտնքում, հառաչում էր, յետոյ ձայնը կտրեց։ Առատ քրտինքով ծածկուեց տանջողի դէմքը— նա աշխատանքից յոգնեց։

Ծեծուած ծերունուն սենեակից դուրս քաշեցին՝ ուշքի բերելու համար։

—Երբ ուշքի կը գայ, նորից բերէ՛ք. ես նրան կը ստիպեմ խօսել։

—Աղաչում եմ քեզ, Հաջի-աղա՛, խնայեցէք այս ծեր մարդուն. նա նոր տանջանքներ չի կարող տանել և կը մեռնի,—աղերսեց Ցանկօն։

—Միայն թէ սուլթանն ապրի, իսկ խռովարարները գրողի ծոցը,—յանկարծ բարկացաւ անբեխը...—Դու էլ իսկ և իսկ կախաղանի արժանի ես։ Դու քեզ մօտ խռովարարներ ես հաւաքում և գուցէ չօբանը քո տանն է թաքնուած։ Պէտք է որոնել այստեղ։

Ցանկօի դէմքն ակամայ փոխուեց։ Միխկանին, չնայելով որ շատ հարբած էր, նկատեց նրա շփոթմունքը։

Նա յանկարծ դարձաւ իւր ընկերոջը։

—Իւսուֆ-աղա՛, արի՛ որոնենք, այս գեավուրի մօտ մի բան կայ։—Եւ նա վեր կացաւ։

—Համեցէք,—խուլ կերպով ասաց Ցանկօն և լապտերը ձեռքին առաջնորդեց նրանց։

Նա ոստիկաններին տարաւ ամեն կողմ, բացի մութ սենեակից։ Վերջապէս, այնտեղ էլ լուսաւորեց։ Սեւացած առաստաղի վրայ մի ծակ կար։ Ծածկուած ժամանակ այդտեղ ոչինչ նկատելի չէր լինում։ Ցանկօն համոզուած էր, որ այդ ծակով Օգնեանովը բարձրացել էր վերնայարկը և իւր յետեւից խուփը ծածկել։ Այդ պատճառով նա հանգիստ սրտով ներս տարաւ թուրքերին և լուսաւորեց սենեակը։

Նրա առաջին հայեացքն ընկաւ առաստաղին։

Ցանկօն քարացաւ։ Թուրքերը զննեցին սենեակը։

—Այդ ի՞նչ ծակ է։

—Վերնայարկը բարձրանալու համար է,—շշնջաց Ցանկօն։ Նրա ոտները դողդողում էին և նա մէջքով յենուեց պատին։

Անբեխը նկատեց նրա երկիւղը։

—Լա՛ւ լուսաւորիր, ես կը բարձրանամ,—ասաց նա։ Բայց յանկարծ մի ինչոր անհաճոյ միտք ծագեց նրա գլխում և նա կանչեց իւր ընկերոջը։

—Հասան-աղա՛, դու ինձանից բարձր ես. գրագի՛ր, մէջքդ բե՛ր։

Սաստիկ հարբած Հասան-աղան բարձրացաւ գրագրի մէջքին։

—Զօրբաջի՛, տուր լապտերը, չի երևում։

Ցանկօն, գոյնը բոլորովին ձգած, մեքենայաբար մեկնեց լապտերը։

Միխկանին առաջ լապտերը ներս տարաւ ծակը, իսկ յետոյ էլ իւր գլուխը։ Նրա մարմնի շարժումներից երևում էր, որ գլուխը վերնայարկի չորս կողմն է դարձնում։

Յետոյ նա ցած իջաւ, թռաւ գետին և հարցրեց.

—Զօրբաջի՛, ո՞ւմ էիր պահել այստեղ։

Ցանկօն շուարած նայում էր։ Նա չգիտէր, թէ ինչ պատասխան տար։ Այդ գիշեր խեղճն այնքան տանջանք, երկիւղ էր կրել, որ նրան թւում էր, թէ դառանցանքի մէջ է։ Նրա միտքը խառ-

նում էր։ Երկրորդ հարցին նա ինչ որ մի բան փնթփնթաց։

—Այս խռովարարն աւելի պարզ պատասխան կը տայ Կլիսուրիում։ Այնտեղ շատ գեղեցիկ բանտ կայ... Իսկ այս գիշեր նա այստեղ կանցկացնէ...

Եւ ոստիկանները նրան փակեցին մութ սենեակում։ Ցանկօն այնքան յուզուած էր, որ միքանի րոպէ յետոյ ուշքի եկաւ։ Նա բռնեց իւր գլուխը, կարծես վախենում էր, թէ մի գուցէ խելքը կորցնէ։ Ամբողջովին ահ ու դողի մէջ ընկած՝ Ցանկօն տանջանքներից ընկճուած էր համարում իրեն։ Նա յուսակտուր ախ էր քաշում և հառաչում։

Դուռը բաղխեցին և Դէյկա պապի ձայնը լսուեց․

—Այժմ ի՞նչ ես մտադիր անել, Ցանկօ։

—Չգիտեմ, բայց Դէյկօ, խրատ տուր ինձ։

—Բայց յայտնի է Թուրքերի Թոյլ տեղը։ Աչքըդ խփի՛ր ու տուր․ դրանով միայն կ՚ազատուես... Եթէ ոչ, նրանք քեզ քաշ կը տան կոնակները և դատարանները, մինչև հոգիդ դուրս կը գայ։ Խեղճ Ստոյչօ պապ, նա էլ, եթէ մի բան տար, չէր գոհուիլ։ Արի՛, Ցանկօ, փողով անձդ ազատիր տանջանքներից։

Եկաւ տանտիկինն էլ՝ արտասուքն աչքերին։

—Ցանկօ՛, տանք, ոչինչ չխնայենք։ Այս չարագործների ձեռքից մարդ կենդանի չի պրծնիլ... Ստոյկա պապն արդէն մեռաւ... Ա՜խ, Աստուած իմ, ի՞նչեր ենք տեսնում...

—Բայց ի՞նչ տանք, ո՞չ կին։ Դու, ախր, գիտես որ մենք փող չունինք։

—Վրեվը[34]) տանք։

—Դոնկայի փողերից շինուած վրե՞վը։

—Հա՛, տանք այդ․ դրանով միայն կազատուենք... Տեսնո՞ւմ ես, նրանք այժմ Դոնկայի մասին են հարցնում․ անիծուա՛ծ զազաններ։

—Արա՛, ինչպէս ուզում ես, կի՛ն, իսկ ես արդէն խելքս կորցրել եմ...—հառաչեց Ցանկօն։

Ցանկովլիցան և Դէյկօն հեռացան։

Կարճ միջոցից յետոյ կրակը փայլեց և դուռը բացուեց։

—Ցանկօ, դուրս արի՛, ներեցին քեզ,—ասաց Դէյկօն․ աղաներն այժմ շատ բարի մարդիկ դարձան։ Դոնակն էլ կը տան քեզ, որ դու այլ ևս երկիւղ չունենաս։ Աժան պրծանք մենք։

Յետոյ Թեքուելով դէպի Ցանկօի ականջը, շշնջաց նրան․

—Երկար էլ սպասել անկարելի է... կամ մենք նրանց, կամ նրանք մեզ... Այսպէս ապրել անկարելի է...

ԼԹ․

ԱԿՆ ԸՆԴ ԱԿԱՆ՝ ԱՏԱՄՆ ԸՆԴ ԱՏԱՄԱՆ

Այդ իսկ միջոցին Օգնեանովը բաղխում էր Պեօտր Օվչարովի տան դուռը։ Ուժ չունենալով նայել այդ բոլոր չարագործութիւնների տեսարանին, որոնք նա տեսնում էր առաստաղի ծակից, անկարող լինելով զսպել իրեն արիւնալից վրէժ-

խնդրութիւնից, այս բոլոր գազանութիւնների փոխարէն, որքան էլ անխոհեմ լինէր այդ վրէժխնդրութիւնը և ինչ հետևանքներ էլ որ նա ունենար, Օգնեանովը խելագարի նման վազում էր փողոցով դէպի Ստոյկա պապի տունը։

—Ո՞ւր է Պեօտրը,—հարցրեց նա, մոռանալով որ ինքը ոչ ոքի չպէտք է երևար։

—Այս դո՞ւ ես, վարժապե՛տ,—հարցրեց լաց եղած մայրը։

—Ո՞ւր է ձեր Պեօտրը, Ստոյկովիցա։

—Ջանա՛կս, քիչ ցած, որ չլսեն... Պեօտրը Բորիմեչկայի մօտ է։

—Իսկ ո՞րտեղ է ապրում Բորիմեչկան, մա՛յր։

—Տէր-քաքայի տան մօտ. այնտեղ գիտե՞ս նոր փուռը։ Միայն զգո՛յշ կաց, որդիս։

Խեղճ կինը չէր կասկածում, որ Ստոյկօ պապն արդէն հոգին Աստծուն էր տուել։ Օգնեանովը սլացաւ։ Նա ո՛չ թէ վազում, այլ թռչում էր։ Երբ արդէն մօտեցել էր տէրտէրի տանը, մի աղմկալի խումբ երևաց։ Օգնեանովը ճանաչեց Պեօտրի ձայնը։ Նա կանգնեցրեց երիտասարդներին։

—Վարժապե՜տ,—ճանաչեցին նրան բոլորը։

—Ե՛ս եմ, եղբայրներ, ո՞ւր էք գնում։

—Մենք Բորիմեչկայի մօտն էինք,—պատասխանեց Պեօտրը.—այս գիշեր նա իրեն համար հարսնացու էր փախցրել, մենք էլ գնացել էինք նրա մօտ գինի խմելու... Մի տեսնես, թէ այժմ նրանք ինչպէս մէկ խօսք են եղել։ Կարծես միմեանց համար ծնուած լինէին... Բայց դու ե՞րբ ես եկել։

—Պետրէ՛, գնանք, ես քեզ մի երկու խօսք ունիմ ասելու։

Եւ երկուսը մի կողմ քաշուեցան։

Մնաք բարև, բարի գիշեր,—ասաց Պեօտրը իւր ընկերներին և շտապով հեռացաւ Օգնեանովի հետ։ Տուն հասան։

—Վերադարձա՞ւ հայրս,—հարցրեց նա իւր մօրը։

—Չէ՛ դեռ, զաւակս։

Օգնեանովը նրան չարդախը տարաւ։

—Լսի՛ր, Պետրէ,—ասաց նա.—հօրդ քո փոխարէն շատ ծեծեցին... Այդ անասունները կարող են աւելի մեծ վտանգ բերել Ցանկօի տանը։ Մենք ուրիշ կերպ անկարող ենք զսպել նրանց չարագործութիւններ անելուց, բացի զէնքից։ Ես ինքս կարող էի ջախջախել նրանց գլուխներն այնտեղ, միայն հետևանքից վախեցայ։ Մենք չպէտք է Ցանկօի մօտ գնանք։

—Ես ուզում եմ վրէժխնդիր լինել, եղբա՛յր։

—Ես էլ եմ ցանկանում վրէժ լուծել, Պետրէ, զարհուրելի՛ բայց մեզ համար անվտանգ վրէժ։

—Բայց այդ ի՞նչպէս պէտք է անել,—հարցրեց Պեօտրը, պատից վար առնելով հրացանը։

—Համբերի՛ր, կը մտածենք։

— Ես չեմ կարող մտածել, ես պէտք է գնամ տեսնելու, թէ ինչ են անում հօրս։

Օգնեանովը, չնայելով որ ինքն էլ սաստիկ յուզուած էր, այնուամենայնիւ բոլոր ուժով աշխատում էր յետ կանգնեցնել այդ կատաղի երիտա-

սարդին բնական՝ բայց կոպտաբեր վարմունքից: Եթէ Պետրը գնար Յանկօի տուն, արիւնհեղութիւն կը սկսուէր: Օգնեանովը կարծում էր, որ վճռական կռուի ժամը դեռ չէր հասել: Եւ նա ափսոսում էր այդ եռանդոտ երիտասարդին, որը կարող էր կորչել հա՛մ անժամանակ, հա՛մ անօգուտ:

Սակայն իզուր էին նրա բոլոր ջանքերը: Պետրը մռնչում էր.

—Ես պէտք է հօրս վրէժը լուծեմ, իսկ յետոյ թէկուզ ամբողջ աշխարհը տակնուվրայ լինի:

Նա ուժով մի կողմ հրեց Օգնեանովին, որն աշխատում էր արգելել նրան, և վազեց դէպի դուռը:

Օգնեանովն յուսահատութեան մէջ էր. բայց նա տեսնում էր իւր անզօրութիւնը՝ արգելելու այդ անզուսպ երիտասարդին:

Սակայն դեռ Պետրը դռան մօտ չէր հասել, երբ դրսից ձայն լսուեց: Նա պատրաստեց հրացանը և բաց արեց: Երեք բուլղար, Յանկօի հարևաններից, գորգի մէջ դրած բերում էին Ստոյկա պապին, աւելի ճիշտ ասած—նրա դիակը:

—Կեանքը քեզ բաշխեց, Պետր,—ասաց նրան մի գիւղական:

Գաւիթը լցուեց կանացի լաց ու կոծով: Ստոյկովիցան պատառում էր հագուստը և ընկնում իւր ամուսնու փէտացած մարմնի վրայ. Օգնեանովը բռնեց վշտից սպանուած Պետրի ձեռքը և նորից տարաւ նրան չարդախը: Արտասուքն աչքերին՝ նա աշխատում էր հանգստացնել դժբաղդ որդուն, որովհետև Պետրը, րոպէական տատանումից յետոյ,

որն առաջ եկաւ հօրն այս դրութեամբ տեսնելուց՝ այժմ աւելի կատաղի կերպով անյապաղ նրա վրէժը լուծել էր փափագում:

—Բայց մենք կը լուծենք այդ վրէժը, եղբայր, կը լուծենք,—ասում էր Օգնեանովը գրկելով նրան. —Թէ՛ քեզ և թէ՛ ինձ համար աւելի սուրբ պարտք չկայ, բացի այդ վրէժխնդրութիւնը:

—Արի՜ւն, արի՜ւն,—մռնչում էր զայրոյթից խելագարուած Պետրը:—Ա՜խ, հայր իմ, թշնամիները փշրեցին քո թոյլ ոսկորները... Ա՜խ, մայրիկ, ի՞նչ պէտք է անես դու այժմ:

—Կա՛ց, եղբա՛յր, զսպի՛ր քեզ, պինդ պահի՛ր սիրտդ, մենք սոսկալի կերպով կը պատժենք թըշնամիներին...

Քիչ ժամանակից յետոյ ճգնաժամն անցաւ: Պետրը համաձայնուեց տանը մնալ միայն այն ժամանակ, երբ Օգնեանովը, Օստէնն ու Սպիրիդոնչէն երդուեցին ս. պատկերի առաջ, որ կենդանի չեն թողնիլ երկու ոստիկաններին:

—Բորիմեչկան էլ ժամանակ գտաւ պսակուելու...—բարկութեամբ ասաց Օստէնը:—Մենք նրան էլ կը վերցնէինք. այդպիսի ոյժը մեզ կը հարկաւորուէր:

Վրէժխնդրութեան նախադիծն այսպէս էր— նրանք պէտք է դարան գործէին այն ճանապարհի մօտ, որը տանում է դէպի Կլիսուրի. դարանի տեղը նրանք ընտրեցին անտառախիտ ձորակը, որտեղից դուրս է հոսում Բէլեշչիցա գետակը և մօտակայքում թափւում Ստրէշկայի մէջ: Այնտեղ նրանք

պէտք է սպասէին թուրքերին և դանակներով յարձակուէին նրանց վրայ, որից յետոյ դիակները կարելի էր պահել խիտ ծառաստանում... Յամենայն դէպս որոշեցին վեր առնել նաև հրացաններ... Այս նախագիծը հիմնուած էր Դեչկօ պապի տուած տեղեկութիւնների վրայ—թուրքերը պէտք է վաղ վերկենային և ուղևորուէին Կլիսուրի, ուր շտապում էին հասնել. Նրանք հրամայել էին իրենց զարթեցնել աքաղաղների երկրորդ կանչին։

Աքաղաղներն առաջին անգամ կանչեցին և մեր փոքրիկ զօրախումբը թողեց դեռ ևս քնած գիւղն ու դաշտ դուրս եկաւ։ Ձիւնն առատօրէն թափւում էր։ Սպիտակ սաւանը ծածկել էր գետինը և լուսաւորել գիշերը։ Ճանապարհորդները, հրացաններն եափնջիների տակ թաքցրած՝ լուռ առաջ էին գնում խոր ձիւնի միջով։ Ձիւնն անդադար թափւում էր և լցնում ճանապարհը. այս բանը դանդաղեցնում էր զօրախմբի ճանապարհորդութիւնը, որը նրանք չէին նշմարում։ Բոլորը զբաղուած էին միևնոյն մտքով—վրէժխնդրութեան մասին։ Նրանց ընկերոջ, Պեօտրի յուսահատութիւնն ու մոլեգնութիւնը, նրա մօր և տնեցիների ուշաթափութիւնները երիտասարդների գլուխներից դուրս չէին գալիս. այդ նրանց սիրտ էր տալիս։ Այդ րոպէին նրանք միայն մի բանից էին վախենում—որ ձեռքերից բաց չթողնեն թուրքերին. միւս բոլոր երկիւղներն մի կողմն էին թողուած... Երկար ժամանակ նրանք առաջ էին գնում ձեան միջով, առանց մի խօսք անգամ միմեանց ասելու։

Յանկարծ մի շան հաչոց լսուեց նրանց յետևից և խանգարեց լռութիւնը։ Նրանք զարմացած յետ դարձան։

—Ո՞րտեղից է շունն այս ժամանակ այստեղ, —հարցրեց Բոչօն։

—Զարմանալի է,—անհանգիստ կերպով ասաց Սպիրիդոնչէն։

Հաչոցն աւելի բարձր կրկնուեց և, որքան կարելի էր որոշել, երևում էր, որ մի ինչ որ շանից բոլորովին տարբեր ահագին սև կերպարանք թռչկոտում և վազում էր ուղիղ դէպի նրանց կողմը. թւում էր, թէ վազում է մի հրէշ, մի ահագին արջ՝ յետին ոտքերի վրայ կանգնած։

Բոչօն և Սպիրիդոնչէն բնազդմամբ մի կողմ քաշուեցան և ծառի բնին յենուելով, պատրաստուեցան պաշտպանուելու։ Հրէշը մօտեցաւ։

—Բորիմեչկա,—բացագանչեցին բոլորը։

—Ո՞վ պէտք է լինի, բացի Բորիմեչկայից։ Դուք մոռացել էք նրան... Նրա մայրը մեռնի...

Ճիշտ որ սա Բորիմեչկան էր, իւր եափնջու մէջ փաթաթուած։ Փողոցում աղմուկ լսելով, նա վազել էր Պեօտրի խրճիթը և այնտեղ ամեն բան իմացել։ Առանց մի րոպէ կորցնելու՝ նա վերադարձել էր տուն, կնոջը յանձնել մօրը, կացինը գօտիկը խրել, վեր առել հրացանը և վազել ու ընկերներին հասել, որ մասնակցէ վրէժխնդրութեանը։

Այսպիսի ուժեղ օգնականի ներկայութիւնը աւելի ևս խրախուսեց ճանապարհորդներին։

—Այժմ առաջ,—ասաց Օգնեանովը։

—Սպասեցէ՛ք մի ուրիշին էլ,—կանգնեցրեց նրանց Բորիմեչկան։

—Ո՞ւմ,—հարցրին նրանք զարմացած։

—Պեօտրի եղբօրը, Դանայլին. նա էլ ինձ հետ եկաւ...

—Ինչո՞ւ վեր առար նրան։

—Պեօտրը նրան ուղարկեց, որ նա իւր աչքով տեսնի, թէ ինչ է լինելու։

—Ի՞նչպէս, նա մեզ չի՞ հաւատում։ Չէ՞ որ մենք երդուեցինք նրան...

—Հարիւր երդումը գրօշ չարժեն... ես էլ ձեզ չեմ հաւատում...

—Ինչո՞ւ համար։

—Առանց Բորիմեչկայի՞ էք գնացել։ Նրա մայրը մեռնի...

Բորիմեչկան այդ խօսքերը, համարեա իւրաքանչիւր նախադասութիւնից յետոյ կրկնում էր։ Դրանով նա ուզում էր իւր խօսքերն աւելի պարզ և զգացմունքներն—աւելի զօրաւոր դարձնել։

—Մի՛ բարկանար, Իվանէ՛,—ասաց Օստէնը.—մենք քո մասին մտածում էինք, միայն դու նորապսակ ես...

—Ա՜,—Ահա և Դանայլը։

Երիտասարդը, որ միայն մի երկար դանակ ունէր գօտիկը խրած, հեւալով կանգնեց նրանց առաջ։

Զօրախմբի անդամների թիւը դարձաւ հինգ։

Դարձեալ լուռ ճանապարհորդութիւնը շարունակուեց։ Նրանք առաջ էին գնում միջնալեռան մի անտառի եզերքով, որը շրջափակում է Բոզդա-

նի սարոտը. այդտեղից հոսում է նաև Բէլիչկի-ցան։ Մօտեցան վերջապէս և այս դետակին։ Տեղը, ճիշտ որ, շատ յարմար էր յարձակման համար։ Աջ կողմից Սարեշան էր, որը պէտք է անցնէին թուրքերը, ձախից—խորունկ ձորը, որի յատակն անհաւասար էր և անտառով ծածկուած, իսկ մնացած երկու կողմից—լեռներ։ Հենց այս ձորակում զօրախումբը կանգ առաւ։ Այստեղից մինչև Ալտինովո գիւղը աւելի քան մի ժամուայ ճանապարհ էր, նշանակում է հրացանի ձայնը, եթէ անհրաժեշտ լինէր դրան դիմել, լսելի չէր լինիլ գիւղում։ Երբ նրանք նստեցին մացառների մէջ, լոյսն արդէն ըս-կսում էր բացուել։ Ձիւնն աւելի առատօրէն էր թափւում։ Լաւ թաղնուելով, նրանք սկսեցին համբերութեամբ սպասել, աչքերն ուղղելով դէպի ա-րևելք, որտեղից պէտք է երևային ոստիկանները։ Սակայն առաջին ձայնը, որը հասաւ նրանց ականջին, գայլերի ոռնոցն էր։ Դա լսուեց նրանց յետևից, ոչ այնքան հեռու։ Հաւանականաբար գայլերը սարից ձորն էին իջնում՝ ուտելու բան ճարելու համար։

—Մեզ մօտ են գալիս,—ասաց Իվան Օստէնը։

—Հարկաւոր չէ հրացաններ արձակել։

—Դանակներով և հրացանների կոթերով գործենք, լսո՞ւմ էք,—ասաց Օգնեանովը։

Ընկերներն ականջ դրին։ Լեռնային մացառների յաճախակի խշշոցը ցոյց էր տալիս, որ մի ամբողջ վոհմակ է վազում։ Ոռնոցը կրկնուեց։ Լոյսն հետզհետէ բացւում էր։

—Անիծուած գայլեր. չլինի՞ թէ մեզ խանգարեն,—հառաչեց Օգնեանովը:

Այդ ակնթարթում միքանի գայլ դուրս թռան ձորակը, նրանց հանդէպ: Գայլերը կանգ առան: Նրանց սուր ձայները բարձրացան օդի մէջ և ոռնոց լսուեց: Դուրս եկան միւսները:

—Ութն են,—շշնջեց Բորիմեչկան.—ձեզ թողնում եմ չորսը, միւսներն—ինձ:

Որսի հոտ առնելով, քաղցած գազանները վազեցին դէպի մացառները: Դրանք այժմ դարձան մի ամրոց, որի վրայ յարձակւում էին գայլերը, իսկ պաշտպանում—մարդիկ: Դանակներն եռանդով գործում էին, հրացանները բարձրանում էին և իջնում: Ոռնոցը դադարեց. միայն ատամներն ու ճանկերն էին գործ կատարում այժմ: Գազաններից մի քանիսը շուտով գետին գլորուեցան, մնացածներն ընկան իրենց ընկերների վրայ և սկսեցին նրանց կենդանի-կենդանի լափել: Վերջապէս գազանները, որոնց դէմ Իվան Բորիմեչկան յաճախ յարձակումներ էր գործում, շան նման հաչում և աշխատում կացնով, սարսափած էին չեռ նահանջել:

Շուտով գայլերը փախուեցան գետակի միւս ափը. նրանք այնտեղ նստեցին և սկսեցին վէրքերը լիզել:

Բարեբաղդաբար, այդ կռուի ժամանակ ճանապարհի վրայ ոչ ոք չերևաց:

—Գայլերն այժմ այնտեղից չեն շարժուիլ,—ասաց Օգնեանովը:

—Թո՛ղ սպասեն, մենք նրանց դեռ ցոյց կը

տանք, որ յիշեն Բորիմեչկայի հարսանիքը,—վրայ բերեց Սպիրիդոնչէն:

—Նորա մայրը մեռնի,—ինքնաբաւական կերպով փնթփնթաց Բորիմեչկան:

Անց կացաւ էլի մի քիչ ժամանակ:

Թուրքերը չէին երևում, այնինչ աքաղաղներն արդէն երկրորդ անգամ կանչել էին: Բոլորովին լուսացաւ. ծառերը պարզ երևում էին դաշտում և արդէն կարելի էր առարկաները որոշել: Սրտնեղութիւնն սկսեց տիրել երիտասարդներին. ցուրտն յիշեցնում էր իւր ներկայութիւնը, իսկ թուրքերը դեռ ևս չկան: Նրանց թւում էր, թէ գուցէ, երբեք էլ չեն տեսնելու թուրքերին, թէ նրանք՝ առատ ձեան պատճառով, որը ծածկել էր բոլոր ճանապարհները, գուցէ և մի որ և է յարձակման երկիւղից, մի առ ժամանակ յետաձգել են իրենց դուրս գալը: Մի քիչ ժամանակ էլ—և օրը-ցերեկ կը լինի, երթևեկութիւնը կը սկսուի և այն ժամանակ արդէն ոչինչ անել չի կարելի... Այս մտքերն էին պտտում բոլորի գլխում. սոսկալի անհամբերութիւնն տեռում և անտանելի, տանջող էր դառնում: Օստէնն յուսահատ կերպով հառաչում էր:

—Մենք կը սպասենք, մենք չպէտք է այստեղից շարժուենք, մինչև նրանք չանցկենան,—խուլ կերպով ասաց Օգնեանովը:

—Իսկ եթէ ուրիշ ճանապարհորդներ երևա՞ն:

—Նրանք իրենց ճանապարհը կը շարունակեն. մեզ միայն երկուսն են հարկաւոր:

—Բայց այն ժամանակ մենք բացարձակ կերպով կը յարձակուենք։

—Եթէ չենք կարողանալ գաղտնի կերպով անել, այն ժամանակ յայտնի կերպով կանենք։

—Մենք այստեղից հրացանով կը խփենք, իսկ յետոյ—հայդա՛ լեռները... Այնտեղ մեզ ո՛չ ոք չի տեսնիլ,—ասաց Օստէնը։

—Միայն մի բանից եմ վախենում, տղերք,—ասաց Բոյչօն։

—Ի՞նչ կայ։

—Չլինի՞ նրանք ուրիշ ճանապարհով գնան...

—Անհանգիստ մի՛ լինիր,—ասաց Օստէնը.—ուրիշ ճանապարհ չկայ։

Բորիմեչկան ուշադրութիւնը լարեց. նա մի ինչ որ բան էր նկատել։

—Ինչ որ մարդիկ են գալիս,—ասաց նա և ցոյց տուեց դէպի արևելք։

Բոլորն այն կողմը նայեցին։ Ծառերի արանքից, որոնց մէջ գալարւում էր ճանապարհը, նկատւում էին երկու մարդ։

--Ձիաւորներ են,—ցաւալի կերպով բացագանչեց Օգնեանովը։

—Մերոնք չեն,—ասաց Սպիրիդոնը։

—Մերոնք հետևակ են,—նկատեց Օստէնը։

Օգնեանովը վրդովուած և բարկացած էր. նա անթարթ նայում էր ձիաւորներին, որոնք մի կարգով գալիս էին։ Նրանք այժմ գտնւում էին հարիւր քայլ հեռաւորութեան վրայ։

—Այդ մերո՞նք են,—ասաց նա խնդագին.—մերո՞նք են։

—Նրա՛նք են. ես եափնջաներից և դէմքերից ճանաչեցի... Միականին աջ կողմից է գալիս։

Բոլորը, հրացանները պատրաստ, նայում էին ոստիկաններին, որոնք հանդարտ շարունակում էին ճանապարհը։

—Ես ճանաչեցի Ցանկօի ձին,—ասաց Սպիրիդոնչէն։

—Իսկ միւսն իմս է —աւելացրեց Օգնեանովը։

—Նրանք զօրով են առել ձիերը։

Սակայն Օգնեանովի ուրախութիւնն յանկարծ անհետացաւ. նա հասկացաւ որ Թուրքերը հեշտութեամբ կարող էին փախչել... Գործել բացարձակ, միմիայն դանակներով, չէր կարելի. հարկաւոր էր պահուած տեղերից հրացաններով գործ տեսնել, միայն այդ էլ հեշտութեամբ կարող էր դաւաճանել. նոյն իսկ ձիերը կարող էին փախչել և մատնել նրանց...

—Ինչ որ լինելու է, կը լինի,—շշնջեց նա։

—Հրացաններո՛վ։

—Եղբայրնե՛ր, նայեցէք որ սկիզբն յաջող լինի...

—Ծառին հասնեն թէ չէ՝ խփենք,—ասաց Օստէնը։

—Ես միականուն եմ վերցնում,—ասաց Բորիմեչկան։

—Բորիմեչկան և Սպիրիդոնչէն—միականուն, ես և վարժապետը—երկրորդին,—կարգադրեց Օստէնը։

Ձիաւորները ծառերին հասան։ Հրացանների

բերանները մացառների միջից դուրս ցցուեցան և միահամուռ որոտը թնդացրեց շրջակայքը: Երիտասարդները ծխի միջից նայեցին: Ոստիկաններից մէկն ընկաւ, միւսը կախուեց մի կողմից:

Ձիերը փախան, յետոյ կանգնեցին:

—Ո՞րն է սպանել հօրս,—հարցրեց Դանաիլը, ամենից առաջ դուրս թռչելով ղարանից:

—Միականին, նա ընկաւ:

Դանաիլը վազեց դէպի ճանապարհը: Մի ակընթարթում նա արդէն այնտեղ էր և սկսեց եաթաղանով ջարդ ու փշուր անել իւր դժբաղդ հօր սպանողին:

Յանկարծ Օգնեանովն այդ դաժան կոյտի մէջ ոսկի փողեր նկատեց: Նա ցոյց տուեց Սպիրիդոնչէին:

—Վե՛ր առ, ժննդեանը մի որ և է աղքատի կը տաս:

—Անիծուա՛ծ, կողոպտել է մի բոլղարի: Կա՛ց, սա Դոնկայի վրէժն է: Այո՛ այն է...—բացագանչեց Սպիրիդոնչէն շփոթուած... Նա Դոնկայի փեսացուն էր:

—Երևում է, որ Դոնկան տուել է իւր վրէժն իւրև փրկանք հօր համար,—ասաց Օգնեանովը:

—Բայց այստեղ միայն մի կէսն է. միւսն էլ երևի այս գէշի մօտ է:

Եւ Սպիրիդոնչէն գլուանքով հրացանի շիշը ձեռքին սկսեց որոնել, բայց չգտաւ. դուրս եկաւ, որ դա անբեխի մօտ էր, որի հետ միականին եղբայրաբար բաժանել էր աւարը, ինչպէս և բաժանեց պատիժը:

Միևնոյն ժամանակը Բօրիմեչկան կացնով իւր հաշիւը վերջացնում էր երկրորդ թուրքի հետ: Դիակներն շտապով թփերի մէջ քաշեցին:

Ցանկօի ձին այդ միջոցին յետ փախաւ մինչև գիւղը: Երկրորդ ձին, գայլերի հոտն առնելով, անցկացաւ Սարէչկան և պոչը բարձրացնելով, սլացաւ դաշտի միջով...

—Ակն ընդ ական, ատամ ընդ ատաման,—անգիտակցաբար կրկնում էր Օգնեանովը:

Երբ երիտասարդները հեռացան, գայլերը մօտեցան: Բնութիւնն ու գազանները միացան որ անհետացնեն արդար վրէժխնդրութեան հետքերը:

Իսկ ձիւնը շարունակ թափւում էր:

Արդէն բոլորովին լոյս էր: Շրջակայքում ոչ ոք չէր երևում: Մարդու նշոյլ չէր նկատւում ոչ ճանապարհի վրայ, ոչ դաշտում, որը ծածկուած էր սպիտակ ծածկոցով: Վաղաժամ լինելը և տեղացող ձիւնը դեռ արգելել էր ճանապարհորդներին նրանց իջևանած տեղերում: Եւ այսպիսով, թուրքերի դատաստանը տեսնելիս, վկաներ չեղան: Սակայն զօրախումբը չէր կամենում, որ մի ոք նկատէր իրենց և գիւղ վերադառնալիս: Ճանապարհին ջրաղացներ կային: Խորհուրդ արին: Որոշուեց բարձրանալ Բալկանի հիւսիսային զառիվայրով, որը խիտ առ խիտ ծածկուած էր անտառով և մացառներով, և միւս կողմով իջնել գիւղ: Այս ճանապարհը շատ անյարմար, սակայն դրա փոխարէն ամայի էր: Դանաիլին ուղղակի գիւղ ուղարկեցին:

ԼԳ.

ԲՈՒՔԸ ԼԵՌՆԵՐՈՒՄ

Խոր ձիւնը ծածկել էր լեռների ղառիվայրները, որտեղից բարձրանում էին մեր երիտասարդները: Բորիմեչկան, որը լաւ ծանօթ էր այս տեղերին, հրացանն ուսին, առաջից էր գնում: Ձեան հիւսերով լցուած այս շաւիղներն համարեա անանցանելի էին դարձել. կէս ժամուայ ճանապարհորդութիւնից յետոյ, քրտինքը կարկտի նման թափւում էր նրանց դէմքերից, կարծես այս փորձուած երիտասարդներն արդէն երկար ժամեր մագլցում էին ժայռերի վրայ: Հասան մի գագաթի: Ձիւնը դադարեց. ամպերի միջից փայլեց արեգակը և իւր սպիտակ ճառագայթները սփռեց սարերի վրայ ու ձորերի մէջ: Ձիւնեղէն սպիտակ խանձարուրն աւելի ևս կուրացուցիչ դարձաւ: Նա բիւրաւոր փայլփլող կայծեր էր արձակում արեգակի տակ, կարծես ալմաստի աւազով ծածկուած լինէր: Հովտում արդէն քնից արթնացել էին, գիւղերից ծուխ էր բարձրանում, մրջիւնների նման շարժւում էին գիւղացիք, որոնք առաջին անգամ կտրատում էին ձիւնով ծածկուած անտառների և դաշտերի ճանապարհները: Ալտինովօ գիւղը պարզ երևում էր անտառի եզերքում: Այնտեղ շարժում էր նկատւում. երիտասարդներին երևում էր մի ինչ որ սև կոյտ—հաւանականաբար մարդկանց մի խումբ, որը շարժւում և առաջանում էր դէպի գիւղի ծայրը, այնտեղ, ուր գերեզմանատուն էր գտնւում—ըստ

երևոյթին, Ստոյկա պապի թաղումն էին կատարում. լսւում էին մինչև անգամ երկաթէ կոչնակի հարուածները...[35]) Սակայն անտառը և լեռները ամայի էին և արքայավայել կերպով դեռ ննջում էին իրենց կուսական սաւանի տակ:

Ճանապարհորդները երբեմն բարձրանում էին վերև, երբեմն կանգ առնում և անխօս դիտում ձմեռնային գիւթիչ տեսարանը: Պեօտրի վիշտը և նոր կատարուած վրիժառութեան հանդէսը դեռ չէին կորցրել իրենց ազդեցութիւնը: Հազուադէպ հատուկոտր խօսակցութիւնները վերաբերում էին ճանապարհին, որն անցնում էր ղառիվայրներով և դարափուլերով: Ժամանակ առ ժամանակ նրանցից մէկը կամ միւսը խրւում էր ձեան մէջ. նրան մեծ ջանքով էին դուրս քաշում: Բորիմեչկայի հերկուլեսեան ուժն այդ դէպքերում մեծ ծառայութիւն էր մատուցանում: Թէև նրանք յաճախակի դադարներ էին առնում, բայց և այնպէս ուժերը պակասում էին. առաջ քաղցն սկսեց նրանց տանջել, յետոյ դրան միացաւ և հիւսիսային ցուրտ քամին, որն այրում էր նրանց դէմքերը, և սառեցնում քթերը, ականջները, ձեռքերը: Իսկ մացառներն հետզհետէ աւելի յանդուգն և անհիւրասէր էին դառնում: Նրանք մի տեղ հասան և կանգնեցին,—ճանապարհի ոչ մի նշոյլ չէր երևում: Երիտասարդների հանդէպ կանգնած էր միայն մի խիտ անանցանելի անտառ՝ ձեան հիւսերով լցուած. իսկ քամին հետզհետէ սաստկանում էր:

Ճանապարհորդները շուարած իրար երես նայեցին:

—Յետ չդառնանք դէպի ձորը և այնտեղից գիւղի ճանապարհով տուն գնանք,—ասաց Սպիրիդոնչէն:

—Չէ՛,—վրայ բերեց Օստէնը,—ուրիշ ճանապարհ կը գտնենք, իսկ այնտեղից չենք գնալ:—Միւսներն էլ նոյն կարծիքին էին:

Կարճատև խորհրդածութիւնից յետոյ որոշեցին մի քիչ յետ դառնալ, իսկ յետոյ ծռուել դէպի աջ և մի յարմար տեղով անց կենալ անտառը, դուրս գալ գագաթի վրայ գտնուող բաց տեղը և միւս կողմից ցած իջնել:

—Դիկի գետնատունն այնտեղ է, մենք կաքանանք և քիչ հաց կուտենք,—ասաց Օստէնը:

—Ես էլ համաձայն եմ Օստէնի հետ,—խօսեց Օգնեանովը, մէջքը քամուն դարձնելով:—Կը գնանք գետնատունը, կը հանգստանանք և բացի դրանից կիմանանք, թէ ինչ են անում Ալտինովոում: Կոյր գկուրայն իջնել հարկաւոր չէ:

Օգնեանովը կարող էր աւելացնել և մի երրորդ պատճառ—իւր ոտքի ցաւը, որն առաջ էր եկել քայլելուց և ցրտից:

—Ճիշտ որ, Ցանկօի ձին վերադարձաւ գիւղ և կարող է աղմուկ բարձրացնել:

— Այդ մասին միամիտ եղէ՛ք,—ասաց Օստէնը:—Մինչև այդ ժամանակ գայլերն արդէն կերած կը լինին ոսախկանների վերջին ոսկորն անգամ... Եթէ Թուրքերը հանդիպեն նրանց, միմիայն հագուստները կը գտնեն: Իսկ ձիւնն այժմ ծածկած կը լինի արեան բոլոր հետքերը ճանապարհի վրայ:

Դուրս եկան մի ինչ որ բաց տեղ: Նրանք ըսկըսեցին նորից խորհրդակցել ուղևորութեան մասին:

Իվան Բորիմեչկան ուշադրութեամբ նայեց երկնքին: Ընկերները սպասում էին նրա կարծիքն իմանալ:

—Հայդա՛, շուտով գետնատունը, Ռիբորիցան ինձ չի տաքացնում: Նրա մայրը մեռնի,—ասաց նա լրջօրէն:

Այն ժամանակ ճանապարհորդները դարձան դէպի հիւսիս-արևելք և սկսեցին լեռը բարձրանալ: Քամին յուսահատօր շառաչում էր, բարձրացնելով նրանց հագուստը, մանելով օձիքից ներս, անդրավարտիքի տակ և ընդգրկելով նրանց մերկ մարմինը: Իւրաքանչիւր քայլափոխում քամին սաստկանում էր և աւելի կատաղի դառնում... Օգնեանովն հետզհետէ յետ էր մնում: Նա զգում էր, որ ույժերն իրենից հեռանում են. նրա ականջները թրշում էին, գլուխը պտըտում. կատարեալ նուաղումը վրայ հասաւ. սակայն նա չէր ուզում ձայն տալ որ սպասէին, և քամու ձայնից նրան լսող էլ չէր լինիլ...

Լեռների խոռոչները զօղանջում էին. բուքբորանի սառցային շունչն արիւնը երակների մէջ պաղեցնում էր. անդամները սառում էին: Օդը սառցային ծովի նման արգելում էր ճանապարհորդներին. արեգակի ճառագայթները ոչ թէ տաքացնում, այլ ասեղների նման ծակծկում էին երիտասարդների մարմինները: Շուտով դրանք անհետացան և

փոթորիկը խաղաց ձիւնաբեր կտոր-կտոր ամպերի հետ։ Մի ակնթարթ ևս—և ահա մրրիկը դժոխքի նման շառաչում էր, քամին ձեան լեռներ էր կազմում և պտտցնելով, սիւների նման, բարձրացնում դէպի երկինք։ Անհետացան արեգակը և լոյսը, երկինքն ու երկիրը խառնուեցան միմեանց և ձիւնեղէն քաոս կազմեցին, որը սաստիկ արագութեամբ պտտւում էր։ Եւ մրրիկը գոչում էր, հառաչում, սուլում, կարծես ամբողջ աշխարհը կործանուել էր։

Փոթորիկը երկու բոպէ տևեց։ Բալկանների մրրիկը սլացաւ դէպի միւս գագաթները և թողեց նրանց խաւարի մէջ։ Անգոյն երկնքի վրայ նորից փայլեց արեգակը իւր նսեմ լոյսով։

Ժայռի տակ թաքնուած ճանապարհները, որտեղ նրանք քիչ-շատ պահպանուել էին մրրկի առաջին սաստկութիւնից, մի ինչ որ հրաշքի զօրութեամբ ձիւնով ծածկուելուց ազատ էին մնացել։ Երբ մրրիկը հեռացաւ, նրանք մէկը միւսի յետևից սկսեցին վեր կենալ, կարծես արթնացան մահուան նման խոր քնից։ Նրանց մարմինները փայտ էր կտրել. ձեռքերը, ոտները դժուարութեամբ էին շարժւում։ Ցուրտը թմրեցրել, թուլացրել էր նրանց։ Այժմ իսկ վտանգը մեծ էր։ Ամենից առաջ Իվան Բորիմեչկան արթնացաւ։ Նա գոչեց.

—Դէ՜հ, վեր կացէք, քաջ տղերք, առաջ վազենք, թէ չէ կը սառենք։

Բոլորը ցնցուեցան, հրացանները դրին կռնատակները ու առաջ քայլեցին։ Բայց յանկարծ Բորիմեչկան նրանց կանգնեցրեց։

—Իսկ վարժապե՞տն ուր է։

Նրանք վախեցած շուրջը նայեցին։ Օգնեանովը չկար։

—Փոթորիկն է նրան տարել…

—Ձիւնն է նրան ծածկել…

Սկսեցին որոնել։ Անդունդը, որը նրանց առաջն էր, երիտասարդներին սարսափի մէջ ձգեց։ Նրանք չէին համարձակւում այնտեղ նայել…

—Ահա՛ նա,—գոչեց Օստէնը։

Խորխորատի նոյն իսկ եզերքում ձեան տակից երկու՝ կօշիկներ հագած ոտքեր էին ցցուած։ Փորեցին ձիւնը, Օգնեանովին դուրս քաշեցին։ Նա անկենդան էր, դէմքը կապտած, մարմինը փետացած։

—Նրա մայրը մեռնի,—փնթփնթաց կարեկցաբար Բորիմեչկան։

—Տրորեցէ՛ք սրան, եղբայրնե՛ր,—գոչեց Օստէնը և ինքն սկսեց ձիւնով տրորել նրա երեսը, ձեռքերը, կուրծքը…—Նա դեռ տաք է, տայ Աստուած, կազատենք։

Բոլորն իրենց մասին մոռացան և աշխատում էին փրկել մահամերձ ընկերոջը։ Սաստիկ տրորելը շուտով ուշքի բերեց Օգնեանովին. այդ բանը միւսների վրայ էլ բարերար ազդեցութիւն ունեցաւ—նրանց արիւնը խաղաց երակների մէջ, տաքացաւ։

—Տանենք դեանատունը,—բացագանչեց Օստէնը։ Նրանք բռնեցին Օգնեանովի ձեռքերից ու ոտքերից և ձեան լցրած տեղերով տարան նրան։ Այդ աշխատութեան մէջ ամենից շատ գործում էին Բորիմեչկայի ուժեղ մկանունքները։ Աներևակայելի

ջանքերից յետոյ նրանց յաջողուեց հասնել գետնատանը։

ԼԴ.

ԳԵՏՆԱՏԱՆԸ

Դիկլի գետնատունը գտնւում էր ձորի մէջ, մի հարթ տեղում. անտառի բարձր ծառերը նրան պաշտպանում էին քամուց։ Լայն շրջապարիսպի մէջ ղլզուած էին խոտի և տերևների բարդեր—ոչխարների և այծերի ձմրան պաշարը. անասունները տեղաւորուած էին պարսպի հիւսիսային մասում, մեծ և ցած տանիքի տակ։

Ծուխն քուլա-քուլա բարձրանում էր խրճիթից։ Ոչխարապահ շունը հաչելով յարձակուեց ճանապարհորդների վրայ, բայց և իսկոյն հանդարտացաւ՝ ճանաչելով Իվան Օստէնին։ Օգնեանովին ներս տարան տաք խրճիթը և նորից սկսեցին եռանդով տրորել։

Փոքրիկ հովիւը, որն ապրում էր այնտեղ, նոյնպէս օգնում էր երիտասարդներին. նա հանեց Օգնեանովի կօշիկները և ձիւնով նրա ոտքերն էր տրորում։ Երբ վերջապէս Օգնեանովը և նրա ընկերներն իրենց վտանգից ազատ զգան, բոլորը միասին գոհութիւն տուին Նախախնամութեանը։ Հովիւը դարձեալ փայտ ձգեց կրակի մէջ։

Երիտասարդները շարուեցան կրակի շուրջը, այնուամենայնիւ դեռ երկիւղ էին կրում տաքա-

ցնել իրենց ձեռքերն ու ոտքերը։ Իւր բնազդմանը հաւատարիմ շունը նստեց գետնատան մուտքի մօտ։

Օբրէյչօ, ո՞ւր է Կոլչօ հօրեղբայրդ,—հարցրեց Օստէնը։

—Երեկ երեկոյեան գիւղ իջաւ. այժմ նրան եմ սպասում։

—Պարկումդ ինչ որ կայ, հոգիս, բեր մեզ որ ուտենք։

Հովիւը պարկից հանեց բոլոր պաշարը—մի քանի քարթու հաճարի հաց, կանաչ պղպեղ և աղ։

—Արաղ չկա՞յ, Օբրէյչօ։

—Սատանան տանի, արաղը հարկաւոր էր վարժապետի համար,—ասաց Օստէնը Օգնեանովին նայելով, որը տրորում էր ձեռքերը և դէմքը ծամածռում ցաւից։

—Ոչի՛նչ, կանցնի, վարժապետ... Տեսնե՞ս ինչ չարաճճին է մեր Միջին-Լեառը։

—Դեռ փառք Աստուծոյ, որ ձեզ ոչինչ չեղաւ։

—Է՜հ, նա չէ դիպչում իւր հին բարեկամներին։

—Բայց տեսնո՞ւմ էք,—նկատեց Օստէնը.—այդ մրրիկը Հին-Լեռան կողմից եկաւ... Բորիմեչկան սուտ չխօսեց։

—Բորիմեչկան խոտ չի ուտում,—բարձրաձայն հաստատեց ինքը—Իվանը։ Շունը հաչեց։ Բորիմեչկայի որոտանման ձայնը դրդել էր նրան։

Օգնեանովը հետաքրքրութեամբ նայեց Բորիմեչկային։ Նա ակամայ մի համեմատութիւն արաւ նրա և նրա մականուան[36]) մէջ—դա շատ յարմար էր Իվանին։ Ուրիշ աւելի լաւ մականուն չէր կա-

րելի հնարել այդ մեծագլուխ, կոպիտ, կիսավայրենի հսկայի համար, որին աւելի համապատասխանում էր ասել, թէ արջի կաթով էր սնուած, քան թէ կնոջ։ Նա նայում էր այս արտասովոր-բարձր, ոսկրոտ, նիհար հասակին, ուժեղ մարմնին, այս կոպիտ, երկարաւուն, բրդոտ գլխին, նեղ ճակատին և մանր վայրենի աչքերին, վիթխարի քթին, ահագին բերանին, որն ազատ կարող էր կուլ տալ մի կենդանի նապաստակ (Բորիմեչկան ուտում էր և հում միս), և այս երկար, մազոտ, հաստաջիլ ձեռքերին, որոնք, թւում էր թէ կարող են առիւծին պատառոտել։ Նա ստեղծուած էր աւելի վայրենի գազանների հետ կռիւ մղելու, որոնց բնութիւնը նմանեցրել էր այդ մարդուն քան թէ այծեր արածացնելու համար, որը չափազանց հովերգական զբաղմունք էր նրա վերաբերմամբ։ Կարծես իբրև հակապատկեր Իվանի ահագին մարմնին, դէմքն արտայայտում էր հեզութիւն, մի ինչ որ ոչխարային յիմար միամտութիւն, որը ծիծաղելի էր դարձնում նրան։ Ո՛չ ոք չէր կարող ենթադրել, որ այս վայրենի, կոպիտ, ըստ երևոյթին, անզարգացած բնաւորութիւնն ընդունակ էր մտերմութեան և մարդկային քնքոյշ զգացմունքների։ Իսկ այդ այդպէս էր։ Նոյն իսկ Բորիմեչկայի ընկերակցութիւնը միւսների հետ, նրա համար կեանքի այս հանդիսաւոր շրջանում, ցոյց է տալիս այդ մարդու բարի և վեհանձն սիրտը։ Այդ երիտասարդն ընդունակ է անձնազոհութեան, մտածում էր Օգնեանովը նրան նայե-

լով և Բորիմեչկայի անճոռնի դէմքն սկսում էր նրան համակրելի ու մինչև անգամ բարի երևալ։

—Բայ Իվանէ, ո՞վ է քեզ այդ զարհուրելի անունը կնքել։

—Ի՞նչպէս, դու չգի՞տես, վարժապե՛տ,—ձայն տուեց Օստէնը·—Նա կռուել է արջի հետ...

—Ճի՞շտ։

—Նա զարմանալի որսորդ է... և սպանել է արջին։

—Բորիմեչկա, ինքդ պատմի՛ր, թէ ինչպէս էք արջի հետ միասին ժայռից ցած գլորուել,—ասաց Օստէնը։

—Ի՞նչպէս, դու արջի հետ կռուե՞լ ես,— հարցրեց զարմացած Օգնեանովը։

Պատասխանի տեղ Բորիմեչկան պարանոցը բաց արաւ։ Այն ժամանակ Բոյչօն նկատեց մի խոր, բայց արդէն առողջացած վէրքի հետքեր· յետոյ նա դարձրեց իւր թաւամազ ձեռքը և արմունկի մօտ ցոյց տուեց մի ուրիշ, դարձեալ առողջացած վէրք· կարծես երկաթէ կարթով խփած լինէին նրան։ Օգնեանովը սարսափահար նայում էր այդ նշանին։

—Պատմի՛ր, Բորիմեչկա, քո հանդիպումը արջի հետ... Չէ՞ որ դու նշանաւոր որսորդ ես,— ասաց նա։

Բորիմեչկան յաղթական կերպով էր նայում· նրա բթամիտ հայեացքը փայլում էր հպարտ յիշողութեամբ և նա սկսեց պատմել·

—Նրա մայրը մեռնի,— սկսեց Իվանը իւր սի-

րելի տնով։ Բայց շունն յանկարծ հաչեց և դուրս թռաւ խրճիթից։

—Ինչո՞ւ է հաչում Մուրզօն, Բորիմեչկան դեռ նոր է սկսում,—կատակ արաւ Օստէնը։

—Կալչօ հօրեղբայրս եկաւ,—բացագանչեց փոքրիկ հովիւը։

Կալչօն ներս մտաւ գաւազանը ձեռքին և պարկը ուսին ձգած։

—Էհէ՜, հիւրե՞ր եմ ունեցել ես։ Բարի լինի ձեր գալուստը,—ասաց նա մտերմաբար և վրայից վայր ձգեց բեռը։

—Տեղ բաց արէ՛ք, թող բայ Կալչօն տաքանայ։

—Է՜հ, սաստիկ ցուրտ է, բոլոր գայլերը սատակում են։ Բուքը ձեզ ո՞րտեղ բռնեց։

—Այստեղ, ոչ հեռու,—պատասխանեց Սպիրիդոնչէն։

—Բայց ինչո՞ւ էք այսպիսի ժամանակ որսի դուրս եկել. առաջին անգա՞մն էք Բալկաններում լինում դուք, որ չգիտէք թէ երբ են սկսւում բորանները։

—Մեզ, բայ Կալչօ, մի լաւ որս խաբեց, այստեղ բերեց… Արաղ բերե՞լ ես արդեօք,—հարցրեց Օստէնը։

—Արա՞ղ։ Բերել եմ։ Բայց ես արաղից աւելի լաւ բան էլ եմ բերել։

—Արաղից լաւ այժմ էլ ի՞նչ ունիս դու։

—Նորութիւն։—Բոլորն ականջները սրեցին։

—Գայլերն այսօր առաւօտ երկու կլիսուրցի ոստիկանների են կերել։

—Է՜, ի՞նչ ես ասում,—խորամանկութեամբ բացագանչեց Բորիմեչկան։ Շունը նորից հաչեց։

—Այնպէս են կերել, որ մի մազ անգամ չէ մնացել։ Թուրքերն անցել են մօտով և գտել—ոչ թէ նրանց, այլ միայն ոսկորներն ու հագուստը, Սարդանովի մօտ։ Հաջի-Իւմիր-աղան ասում է, թէ ոստիկանները ձիաների սանձերից են քաշկլիս եղել, երբ նրանց վրայ յարձակուել են գայլերը։ Նրանք սկսել են փախչել մի կողմ, իսկ ձիերը—միւս։ Մի ձի կորել է։ Գայլերը դուշակել են, որ ոստիկանների միսն աւելի քաղցր է և կերել են նրանց։ Անուշ լինի, աղէ՛րբ. թող այդ բոլոր քոսոտներն այդպէս վերջանան։ Շներին—շան մահ։

Եւ Կալչօն շիշը բարձրացրեց։ Այն ժամանակ միայն նա նկատեց Օգնեանովին, որին չէր ճանաչում։

—Իսկ այս բարեկա՞մը որտեղացի է,—ասաց նա մեկնելով շիշը Օգնեանովին։

—Կարա-Սարիլցի է. մենք լեռներում պատահեցինք… Նա էլ միևնոյն որսի յետևից էր ընկել,—պատասխանեց Սպիրիդոնչէն։

—Բաջ աղայ է դա. վարժապետի կենացը,—որոտաց Բորիմեչկան։ Շունը դարձեալ մռնչեց։

Կալչօն ժպտալով դարձաւ Բորիմեչկային.

—Յա՛ց. ա՛րջ, այդ ի՞նչ ես արել։

—Ո՛չինչ ոչ ոքի, Կալչօ։

—Մարդը մի աղջիկ է փախցրել և երկուսն էլ անյայտացել են… Երջանիկ լինի՛ք։ Բայց ո՞ւր է հարսանիքիդ որսը։

— Զօրումն եմ թողել, բայ Կալչօ,— գոռաց Բորիմեչկան։

Այս անգամ Մուրջօն լուրջ կերպով բարկացաւ։

— Բայ Իվանէ, դէհ պատմիր, թէ ինչպէս կռուեցիր արջի հետ։

— Սա՞,— ձայն տուեց Կալչօն և խորամանկութեամբ նայեց Բորիմեչկային.— աւելի լաւ է թող մեզ պատմէ թէ ինչպէս յաղթեց Ստայկային...

Բոլորը ծիծաղեցին։ Իվան Օստէնը, ցանկանալով համոզուել, թէ Թուրքերի սպանութիւնը ո՛չ մի կասկած չէ յարուցել, հարցրեց.

— Ուրեմն, այդպէս, հա՞։ Նրանց գայլերը լափել են։ Բայց Թուրքերը չե՞ն ասում, թէ բուլղարները սպանած կը լինին ոստիկաններին։

— Ի՞նչպէս։ Ամբողջ գիւղը գիտէ։ Ստոյկօ պապին, Աստուա՜ծ ողորմի նրա հոգուն,— ասաց Կալչօն, հարցը լաւ չհասկանալով։

— Այդ. մենք լսել ենք. բայց ես հարցնում եմ— Թուրքերը չե՞ն կասկածում, որ բուլղարներն սպանած կը լինին ոստիկաններին։

Կալչօն տարակուսուած նայեց։

— Այդ ո՞վ է ասում։ Ե՞րբ է եղել, որ մեր գիւղացի բուլղարը ոստիկան սպանէ... Ձեզ ասում եմ, որ գայլերն են այդ բարի գործը կատարել և Թուրքերը պատրաստւում են վաղը յարձակում գործել գայլերի վրայ... Այդ ինձ էլ օգուտ կը լինի... Այս ձմեռ այդ անպիտանների երեսից խրճթից դուրս հանելն անկարելի է։ Ո՛ղջ լինիք, աղէ՛րք. տայ Աստուած, որ ողջ և առողջ հասնենք ս. Ծնըն-

դեանը։ Իսկ յետոյ այնպէս կանէք, ինչպէս մեր Մեչկան... Խմի՛ր, ընկեր։— Եւ Կալչօն շիշը տուեց Օգնեանովին, որի աչքերը բարերար հեղուկի ազդեցութեան տակ վերադարձան։ Նա բարձրացրեց շիշը և յուզուած կերպով ասաց.

— Եղբայրնե՛ր, յիշենք Ստոյկօ պապին, Թրքական գազանութեան նահատակին։ Թող Աստուած երկնային հանգիստ պարգեւէ նրա արդար հոգուն, իսկ մեզ թող անվեհեր սիրտ և զօրեղ թիկունք տայ, որ կռուենք Քրիստոսի թշնամիների դէմ և հարիւրապատիկը նրանց վերադարձնենք... Աստուած թողութիւն տայ Ստոյկօ պապի մեղքերին։

— Աստուած թողութիւն տայ։

— Թողութիւն տո՛ւր, Տէ՜ր,— ասաց Կալչօն գլխարկը վերցնելով։ Յետոյ մտերմաբար դառնալով Օգնեանովին, ասաց.— Ընկե՛ր, դու սքանչելի խօսքեր ասացիր. թող քո բերանից լսէ Աստուած։ Մի քիչ էլ քաշ տանք և այն ժամանակ հրացաններս գործի դնենք... Ի՞նչպէս է անունդ. ծանօթ լինի՛նք. ինձ կանչում են Կալչօ Բոգդանով Բուկչէ,— և Կալչօն շիշը մեկնեց Օգնեանովին։

Օգնեանովը մի անուն տուեց իրեն և խմեց բարի ծանօթութեան համար։

Խումբը, Կալչօի սակաւ պաշարը խնայելով, քիչ կերաւ. մի քիչ յետոյ նա հրաժեշտ տուեց տանտիրոջը, որը մինչև դուռը գնաց ճանապարհ ձգելու։ Այստեղ նա նորից դարձաւ Օգնեանովին.

— Ընկե՛ր, գնաս բարեւ, մոռացայ քո անունը.

եթէ այս կողմերը գաս, ինձ հանդիպիր, կը խօսենք... Դու լաւ բաներ ես ասում... Բարի ճանապարհ:

Օգնեանովի մի քանի աշխոյժ խօսքերը սաստիկ յուզեցին խեղճ հօվուին: Դրանք նոր չէին Կալչօի համար. ատելութիւնը դէպի հարստահարիչները դեռ մանկութիւնից ծնունդ էր առել նրա մէջ, սակայն «ընկերը» մի քանի խօսք ասաց «կռուի» մասին և այդ խօսքերը նրա հոգու մէջ մի նոր լարի դիպան և զարթեցրին այն....

Խումբը շուտով անհետացաւ. —Նա իջաւ գիւղի մօտի ձորակը, երբ արդէն մութը կոխել էր:

ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻ

[illegible] ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ - им. СНР
им. [illegible] Мясникяна
[illegible] ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

1. «Չորբաջի»—կարողութեան տէր, հարուստ մարդ:
2. «Բայ», «Բաէ»—աւագ եղբայր. միշտ գործ է ածւում այն ժամանակ, երբ մէկն ուզում է արտայայտել միւսի առաւելութիւնը իրենից. սա քաղաքավարական մի ոճ է:
3. Ախիևո—Կարլովօ քաղաքի մօտ մի գիւղ է:
4. Կոնակ—ոստիկանատուն և ընդամին մի հասարակական կառավարութիւն, որտեղ ընտրուած բուլղարները առճկով խորհրդական էին կարգւում:
5. Թուրքերէն է, նշանակում է—մի՛ ընդդիմանար:
6. Մի քաղաք է Տաճկա-Հայաստանում, որտեղ ուղարկւում էին բուլղարացի քաղաքական յանցաւորները բանտարկութեան համար:
7. Ժողովրդական սովորութիւն է.—մի միջոց է վախի դէմ:
8. Աւագ-ոստիկան, տանուտէր:
9. Բուլղար ոստիկան:
10. Թիկնոցի մի տեսակ է, թեերով:
11. Աղաներ, պարոններ:
12. Շնորհակալ եմ:
13. Յունական խօսք է. նշանակում է «փառաբանեցէք»:
14. Սրբոց պատկերների պահարան:
15. Գրօշ—20 սանտիմ է. բուլ—թրքական մանր փող է:
16. Այսպէս է անուանւում թուրքերէն Սոպոտ քաղաքը, որտեղ պատահել է այս անցքը:
17. Հերցեգովինայի 1875 թ. ապստամբութեան առաջնորդը:
18. «Զորնիցա»—բողոքականների մի կրօնական լրագիր է, որը մինչև օրս էլ հրատարակւում է Կ.-Պոլսում:
19. Բուլղարներն ունեցել են մի թագուհի, Բոյնա անունով:
20. Բուլղարիայի դրօշի առիւծի ձևակերպութիւնն է:
21. Յեղափոխական երգ:
22. Նշանակում է—«կեցցէ Բուլղարիան, կեցցէ բալկանների հասարակապետութիւնը»:
23. Ապստամբութիւնների ժամանակ բուլղարներն առանձին հագուստ էին կրում:
24. Տէր, պարոն:

25. Չեխերէն է. նշանակում է—յարգելի պան Եանրոսլավ, խնդրում եմ ինձ նկարէք։
26. — Շատ լաւ, պան Եան։
27. Պարոն, տէր։
28. Բուլղարիայում ռուսներից էին սպասում ազատութիւն, որոնց անուանում էին «Իվան պապ»։
29. Կ.-Պոլսի տաճարը։
30. Ջիթակ—թուրք ազգաբնակութեան ստորին դասակարգ։
31. Թրքական առած։
32. Թուրքերը սուրճը շաքարով չեն խմում։
33. Դորրա—անուն է. լէ—մի մասնիկ է, որը ոչինչ չի նշանակում. այդ մասնիկը մեր մէջ էլ է գործ ածւում։
34. Վրէվ—փողերից շինուած մի զարդ է, նշանադրուած աղջիկների համար։
35. Բուլղարիայի փոքրիկ գիւղերում եկեղեցու զանգերի փոխարէն մետաղեայ տախտակներ են գործ ածւում։
36. Բորիմեչկա նշանակում է արջի հետ կռւող։

1516
25
ՀՀ Ազգային գրադարան
NL0323320